



Հարգելի՝ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները։ Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՆ

Հ. Ա. ԱՎԵՏԻՒՅՑԱՆ, Ո. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԶԵՇՆԱՐԿ

6-րդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍՏԱՏԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 2007

Ավետիսյան Հ. Մ., Ղազարյան Ռ. Ս.

Ա 791 Գրաբարի ճեղնարկ (Ուս. ճեղնարկ բուհերի համար): Երևանի պետ. համալս.- 6-րդ հրատ.- Եր.: Երևանի համալս. հրատ., 2007,- 300 էջ:

Ճեղնարկն ընդգրկում է գրաբարի հնչունաբանության, ձևաբանության շարահյուսության ամբողջական դասընթացը: Քերականական նյութերը տրվում են առանձին բաժիններով, որոնք ունեն համապատասխան վարժություններ ու բնագրեր ընթերցանության և թարգմանության համար:

Ճեղնարկին կցված են բառարան և 5-12-րդ դարերի մատենագրությունից բաղկած հատվածներ՝ լրացուցիչ ընթերցանության համար:  
Նախատեսված է բուհերի ուսանողների համար:

Ա 4602020100  
704(02) 2007 2007

ԳԱՄ-81.2Հ ց73

ISBN 5-8084-0389-8

© Հ.Մ. Ավետիսյան, Ռ.Ս. Ղազարյան, 2007 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա ճեղնարկի հիմնական բաժիններն են՝ «Հնչյունների արտասանությունը և գրությունը. հնչյունափոխություն», «Ձևաբանություն», «Շարահյուսություն», «Գրաբարի հատվածներ» և «Բառարան»: Ձևաբանության բաժնում տրված են նաև շրեթվող խոսքի մասերից մակրայք, շաղկապը և ծայնարկությունը:

Դասագրքում ընդգրկված նյութերը տրված են առանձին դասերով, ըստ որում յուրաքանչյուր դասում հաղորդվող տեսական գիտելիքներին անմիջապես հետևում են դրանց համապատասխան վարժություններ և ընթերցանության հատվածներ՝ քաղված գրաբարի միայն դասական շրջանի (5-րդ դար) ինքնուրույն և բարգմանական գրավանություններից: Տեղի խնայողության պատճառով նշված են միայն քերականական գիտելիքներին վերաբերող բնագրային օրինակների աղյուրները, իսկ վարժություններում բերված օրինակների աղյուրները չեն նշվում: Ընդհանուր առմամբ ամեն մի դասում բացարկվում են քերականական կամ այլ կարգի բոլոր այն երևոյթները, որոնց մասին նախապես ոչինչ չի ասվել: Դասերում ընդգրկված նյութերի ծավալը պայմանական է, ըստ այդմ էլ դրանք կարելի է անցնել մեկ կամ ավելի դասերի ընթացքում:

Ճեղնարկի հեղինակները նպատակահարմար են համարել խոսքի մասերի տառագումը սկսել բայից, որը, սակայն, չի խանգարում, որպեսզի ուսուցման ընթացքում այս կամ այն շափով խախտվի դասանյութերի հաջորդականությունը:

Շարահյուսության բաժնում քննվում են գրաբարի կապերի (նախողի և նախադրություն), հողերի, որ հարաբերականի կիրառությունը և շարահյուսական այլ հարցեր:

Բառարանում բացատրվող գրաբարյան բառերը տրվում են ոչ թե իրենց ունեցած բոլոր նշանակություններով, այլ այն իմաստներով, որոնք հանդիպում են դասագրքում:

## ՀԱՍՏՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ա. ածական

Ազ. Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909

Բոլգ. Փաւուսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912

գ. գոյական

դ. դերանուն

եր. եղանակիչ բայ

Եզնիկ, Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914  
Եղիշէ, Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957  
թ. բական

Թոռն., Թոռնեան Թ., Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց  
նախնեաց, Վիեննա, Ա. հ., 1891, Բ. հ., 1910

Խոր., Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913

Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941

Կր. կրավորական

հ. հասարակ բայ

ձ. ծայնարկություն

մ. մակրայ

ն. ներգործական բայ

նխ. նախդիր, նախադրություն

ՆԴԲ, Նոր բառզիրք Հայկագեան լեզուի, Վենետիկ, Ա. հ., 1836, Բ. հ., 1837

շ. շաղկապ

չ. չեզոք բայ

պր. պատճառական բայ

Փարավ. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904

Փիլ. փոխանակ

Մնացած համառոտագրությունները վերաբերում են 1929 թ. Վիեննայում  
հրատարակված Աստվածաշնչի համապատասխան գլուխներին:

## ԴԱՍ ԱՌԱՋԻՆ

1. ԳՐԱԲԱՐԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. 5-րդ դարից մեզ ավանդված գրաբարի այբուբենն ունի 36 տառ՝ ա, բ,  
գ, դ, ե, զ, է, ը, ժ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ո, ն, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ս, ւ, ր, ց, ւ  
(վյուն/հյուն), փ, ք:

ՈՒ-ն, իբրև ո և տառերի կապակցություն, այբուբենի մեջ տեղ չի գտնել,  
իսկ օ և ֆ տառերն ավելացել են միջին դարերում: Հին հայերենում ֆ հնչյուն  
չի եղել: Փոխառյալ բառերում այն փոխարինվել է փ-ով կամ հ-ով, ինչպես՝  
դաֆնէ-դափնի (փոխ. հունարենից), ֆրահանգ-հրահանգ (փոխ. պարսկերե-  
նից) և այլն:

§ 2. Գրաբարի ձայնավորներն են՝ ա, ե, է, ը, ի, ո, ու:

§ 3. 5-րդ դարում, երբ հայերենը գրի առնվեց, գրությունը ճշտորեն համա-  
պատասխանում էր արտասանությանը, այսինքն՝ ամեն մի հնչյուն ինչպես  
գրվում էր, այնպես էլ՝ արտասանվում: Հետագա դարերում գրությունը հիմնա-  
կանում մնում է նույնը, սակայն արտասանությունը, աստիճանաբար փոփո-  
խություններ կրելով, հեռանում է գրությունից, որի հետև անքով ձև ափորվում  
են արտասանության նոր կամ ավանդական կանոններ: Այժմ գրաբարյան  
բնագրերը կարդում ենք ոչ թե հին կամ գրային, այլ փոփոխված, ավանդա-  
կան արտասանությամբ: Գրաբար ճիշտ կարդալու և գրելու համար պետք է  
իմանալ ավանդաբար մեզ հասած արտասանության և ուղղագրության  
հետևյալ կանոնները:

§ 4. Յ-ն բառասկզբում, այլև բարդության և ածանցման մեջ արտասան-  
վում է հ, օրինակ՝ յայտնի = հայտնի, անյայտ = անհայտ, յատակ = հատակ,  
սալայատակ = սալահատակ:

Բառավերջում ա և ո ծայնավորներից հետո գլուխում է յ, բայց չի արտա-  
սանվում, օրինակ՝ արքայ = արքա, երեկոյ = երեկո: Բառավերջի յ-ն արտա-  
սանվում է մի բանի միավանկ բառերում բայ, գոյ, խոյ, հայ, ճայ, նայ (=խո-  
նավ, թաց), նոյ, վայ:

Բառավերջում ա և ո ծայնավորներից հետո յ չի գրվում՝ ա) բայերի բուն

հրամայականի եզակի 2-րդ դեմքում՝ ասա՛, ապրեցո՛, թ սա, ուս, նա դերանունների ուղղական, հայցական, սեռական և տրական, դու անձնական դերանվան սեռական (քո) հոլովածն երում, գ) ահա, ապա բառերում, դ) օտար հատուկ անունների ուղիղ ձև երում՝ Աննա, Յուղա, Եղեսիա, Կեսարիա և այլն:

§ 5. Ի (1) տառը գրփում է բառամիջում երկու ծայնավորների միջև և բառվերջում ա, ե, ի ծայնավորներից հետո, ինչպես նաև ու կապակցության մեջ և արտասանվում է վ, օրինակ՝ աւագ=ավագ, տալիդ=տավիդ, առաւել=առավել, մրգաւետ=մրգավետ, հարաւ=հարավ, տերեւ=տերեվ, անիւ=անիվ, ուկուվ=ոսկով:

Գրաբարում և տառով ոչ մի բառ չի սկսվում:

§ 6. Ետաղի փոխարեն բառավերջում միշտ գրփում է է, օրինակ՝ թէ, երէ, քազէ, ափսէ, բռպէ, իսկ բառամիջում գրփում է է այն դեպքում, երբ կարող է լինել է>ի և է>է հնչյունափոխություն, օրինակ՝ վէճ-վիճել, շէն-շինական, Մովսէս-Մովսեսի:

§ 7. Ու-ն բառամիջում ծայնավորից առաջ արտասանվում է վ՝ արուեստ=արվեստ, պատուէր=պատվեր, լեզուի=լեզվի, արծուոյ=արծվո:

ՈՒ-ն բառամիջում ծայնավորից առաջ ու է արտասանվում ՈՒ լծորդության բայերի անցյալ անկատարի ձև երում՝ թողուի, թողուիր, թողուաք, թողուիք, թողուին:

§ 8. Բացի հիշյալ կանոններից, պետք է իմանալ, որ զ նախորդ բաղաձայնից առաջ արտասանվում է լզ՝ զգեստ-լզգետ, զնամ=զնան:

§ 9. Յ, և ծայնորդների և ա, ե, ի, ո ծայնավորների կապակցությամբ կազմվում են երկրաբառներ և եռաբարբառներ: Գրաբարի երկրաբառներն ու եռաբարբառներն են՝ այ, ոյ, աւ, իս, եւ, եա, եաւ, եայ, տյ:

§ 10. Ոյ երկրաբառը բաղաձայնից առաջ արտասանվում է ույ՝ բռյուս=բռյուս, գոյն=գոյն, յոյս=հոյս: Ոյ կապակցությունը ույ է արտասանվում նաև ս, դ, ն, հոդերից առաջ՝ բռցոյ-բռցոյն=բռցոյն:

Այ երկրաբառը բաղաձայնից առաջ արտասանվում է օ և ընդհանրապես գրփում օ տառով՝ աւձ=օձ, աւր=օր, կարաւտ=կարօտ: Որպես բացառություն՝ աղամին և նաւը բառերում աւ-ն արտասանվում է ավ:

Իւ երկրաբառը բաղաձայնից առաջ արտասանվում է յու՝ կորին=կորյուն, սին=այուն, արին=արյուն:

Եւ երկրաբառն արտասանությամբ նույնացել է իւ երկրաբառին և գրության մեջ էլ հիմնականում արտահայտվում է իւ-ով, թեև մի շաբթ բառերում պահպանվում են այդ երկրաբառների գրության գորգահեռ ձև եր՝ ալեւր//ալիւր=ալյուր, հարեւր//հարիւր=հարյուր, եղեւր//եղջիւր=եղջյուր:

Ծանոթություն. Աւ, եւ, իւ կապակցությունների և պահպանում է բառա-

վերջի վ արտասանությունը հոգնակի ուղղականի ժ և հայցականի ս մասնիկ-ներից ու ս, դ, ն հոդերից առաջ՝ կաքաւք=կաքավք, պարգեսւ=պարգեսւ, հովլութ=հովլիվդ, հովլին=հովլիվն:

Եա երկրաբառն արտասանվում է յա՝ պատեան=պատյան, եղեամն=եղամն, սիրեա՛=սիրյա՛:

Եաւ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է յո և ընդհանրապես գրփում եօ տառերով՝ ընտանեար (ընտանեօք)=ընտանյոք, կոզեար (եօք)=կոզյոք:

Եայ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է յայ՝ հրեայր=հրյայր, անդեայր (=նախիր)=անդյայր, բառավերջում՝ յա՝ պաշտօնայ=պաշտոնյա:

Իոյ եռաբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է վոյ՝ պատանոյնն=պատանվույն, տեղույն=տեղվույն:

#### Վարժություն 1. Կարդալ ավանդական արտասանությամբ.

ա) յիշատակ, յարգեւ, յաղազս (=մասին, համար), յանցանք, անյայտ, յաճախ, յատուկ, անյուսալի, յորդ, անյապաղ, յուշարար, անյիշելի, յիսուն, յանդիման, յայտնի, յաղբանակ, յաջորդ, յաւէտ:

բ) երեխայ-երեխայր, կոփածոյ, արքայ-արքայի, պողոտայ, ճայ, անհանոյ, շղբայ-շղբայս, գոյ, Տիգրանայ, զետոյ, բայ, սկայ (հսկայ), բրածոյ, Վռամշապիոյ, վկայ, փեսայ-փեսայն, երեկոյ:

գ) աւագանի, շառաւիդ, անիւ, արմաւենի, կաւ, նաւ-նաւդ-նաւան-նաւար, լուսատոր, տիր (=ցերեկ), հաւ-հաւս-հաւթ, տալիդ, աւազ, տերեւ, խոնաւ, ագռաւ, սակաւ, արեւ, բնաւ:

դ) արուեստ, դժուար, նուիրական, պատուական, զինուոր, առեղծուած, զուարակ (=եզ, հորք), թշուառ, յունական, թունատոր, հովուական, նուազ, մեղուի, անուանել, սրուակ, կորուել, Դուին:

#### Վարժություն 2. Գրաբարյան ուղղագրությամբ գրել և կարդալ ավանդական արտասանությամբ:

Աբեղա, կոռածո, Տիգրանա, արտաքրո, ընծա, մեծարգո, բացակա, ներքո, փիլխոտիկա, արմաւոր, քուրա, զազանաբարո, նա, նոքա, նոցա, ասսա՛, պատմեա՛, Սառա, Անանիա, Երեմիա, Ասիա:

#### Վարժություն 3. Որոշել, թե վ հնչյունը գրաբարյան ուղղագրությամբ ո՞ր բառում ինչ տառով պետք է գրել՝ վ, և, թե՞ւ:

Արտասվել, գավառ, թիվ, սով, հարավ, թվական, վիրավոր, վճառ, անվանի, ազնիվ, անվախճան, կավիճ, հովիվ, քավ, լեզվի, անվարժ, բովանդակ, հարված, ավագան, կատվի, նվաճել, հոգվով, Դավթի, Աղվանք:

#### Վարժություն 4. Ավանդական արտասանությամբ կարդալ.

ա) աւագ, անբար, աւդ, ամաւթ, աւր, գաւառ, աւծ, կարաւտ, աւան, պաշտամ, ծնաւտ, հարաւ, տաւն, ցաւք, արաւտ, ծանաւթ, տաւթ, արաւք:

բ) ապացոյց, հաճոյանալ, դոյլ, գոյութիւն, օայրոյք, ուրոյն, բարոյական, ողկոյզ, նշոյլ, կոյտ, ախոյնան, քոյր, լոյս, առոյզ, ողջոյն, անյոյս, քոյս:

գ) նիւթ, քաջութիւն, սիւն, իրաքանչիլը, ծիւթ, անկիւն, հիւտիաի, իւդ, իւր, եիւր, աղիւս, միւս-մեւս, գիւտ, հարիւր-հարեւր, բեւր-քիւր, ալեւր-ալիւր:

դ) ցորեան, մատեան, լեան, մեհեան, դարձեալ, վայրկեան, որդեակ, անցեալ, ծննդեան, ահեակ (=ձախ), դեեակ, առաքեալ, կորեակ, Մամիկոնեան, առաքեա՛:

ե) պատանեաւք(եօր), ընտանեաւք, կարծեաւք, տեղեաւք, սիրելեաւք, հրեայ-հրեայք, քադեայ-քադեայք, պաշտօնեայք, լոենայն. տարտյն, երանելոյն, այգեստանոյն, հոգույս, այգույն:

#### Վարժություն 5. Գրաբարյան ուղղագրությամբ գրել.

ա) կապույտ, ճկույթ, անգույն, զգույշ, սառույց, համբույր, մակույկ, քոյն, երևույթ, քույն:

բ) արյուն, իյուսն, ոյուրին, իյութ, մրջուն, եղջուր, կորյուն, քազմություն, նյութ, իմաստորյուն, յուր, յուրովի, թյուր:

գ) մանյակ, այծյանն, յարդ, տասնյակ, կղզյակ, արքայության, Դիմարյան, իշխանության, արևելյան, տեսյալ, գրյա՛:

## 2. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՆՈՒԹՅՈՒՆ

§ 11. Գրաբարի շեշտադրությունը և շեշտից կախված հնչյունափոխությունը հիմնականում նույնն են, ինչ արդի գրական հայերենում:

Ծեշտը սովորաբար ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ հրաման, հրամանի, հրամանաց, հրամայել:

Եթե բառի վերջին վանկի ձայնավորն է չգրվող ը, ապա շեշտն ընկնում է վերջներ վանկի վրա, օրինակ՝ անտ(ը)դ, կարծ(ը)դ, ձմեն(ը)ն, հարցում(ը)ն:

Կազման բարդությամբ կազմված մի քանի բառերում շեշտվում է նախավերջին վանկի ձայնավորը, օրինակ՝ որպէս, նոյնակ, այսակի, ո՞շակի, ահաւասիկ և այլն:

§ 12. Եթե բառերը վերջից նոր վանկ են ստանում, շեշտն անցնում է այդ վանկի վրա. շեշտագրկված վերջին վանկի ի, ե, ու, է ձայնավորները, ոյ, եա, իւ երկրարբառները և եայ եռաբարբառը սովորաբար ենթարկվում են հնչյունափոխության:

Ի ձայնավորը փակ վանկում շեշտից գրկվելով՝ դառնում է ը, որը չի գրվում սիրտ-սրտի, խինդ-խնդալ:

Բազմավանկ բառերի վերջին վանկի ի-ն սղվում է՝ վերին-վերնոյ, մարմին-մարմնոյ, դաշտային-դաշտայնոյ, Դաւթի-Դաւթի:

Բազմավանկ բառերի վերջի ի ձայնավորը ո-ից առաջ դառնում է ւ, իսկ այց առաջ՝ ե, օրինակ՝ տարի-տարույ-տարեա:

Ե ձայնավորը սղվում է դ և ո քաղածայններից առաջ մի քանի քառերում ասեղն-ասղան, թիթեղն-թիթղան, Կիւրեղ-Կիւրղի, լիսեռն-լիսուան, թիթեռն-թիթղուն: Դեւ քառում այն փոխվում է ի-ի՝ դեւ-դիւի-դիւական,

Ու ձայնավորը փակ վանկում շեշտագրկվելով՝ փոխվում է ը-ի, որը չի գրվում հուր-հոյոյ, շուրբն-շրբան, կամ սղվում է՝ անասուն-անասնոյ, հեղով-հեղոյոյ:

Փակ վանկի է ձայնավորը փոխվում է ի-ի, իսկ որոշ դեպքերում՝ ե-ի՝ սերսիրեա, պարտէզ-պարտիզապան, էջ-իջանեւ, եղէգն-եղեգան, աղուէս-աղուէսու, Միքայէլ-Միքայէլ:

Ոյ երկրարբառը դառնում է ու՝ լոյս-լուսոյ, ողջոյն-ողջունեւ, կոյր-կուրանալ:

Իւ երկրարբառը ա ձայնավորից առաջ դառնում է՝ անկիւն-անկեան, մըրջին-մըրջեան: Բառավերջի իւ-ը դառնում է ու՝ անիւ-անուոյ, թիւ-թուոյ, պատիւպատուոյ:

Եա երկրարբառը դառնում է՝ մատեան-մատենագիր, սենեակ-սենեկապետ, պատեան-պատենագին:

Բառավերջի եայ եռաբարբառը դառնում է՝ պաշտօնեայ-պաշտօնէի, հրեայ-հրեական:

Վարժություն 6. Բացատրել, թե ինչ հնչյունափոխության են ենթարկվել ձայնավորներն ու երկրարբառները բերված բառերի փոփոխված ձևերում:

գարուն-գարնանային, ծուկն-ծկնորս, միրգ-մրգաբեր, տէր-տիրանալ, պատանի-պատանոյ, ամիս-ամսօրեայ, բարի-բարեա, վրէժ-վրիժառու, գետին-գետնափոր, թյուն-թունաւոր, յոյզ-յուզել, ատեան-ատենակալ, սիւն-սեւան, հաշիւ-հաշուել, սիսեռն-սիսուան, պճեղն-պճղան, հին-հնութիւն, անասուն-անասնական, թոշուն-թոշնոյ, էջ-իջական, թողով-թողլոյ, Կայէն-Կայէնի, վեպ-վիպասան, շիւ-շուոյ, կեանը-կենաց, վարագոյր-վարագուրել, մեծութիւն-մեծութեան, մեհեան-մեհենական:

# ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ

### ԴԱՍ ԵՐԿՐՈՐԴ

#### 1. ԴԵՐԲԱՑՆԵՐ

§ 13. Գրաբարում դերբայները չորսն են՝ անորոշ, ապառնի, անցյալ և ենթակայական (կամ ներկա):

§ 14. Անորոշ դերբայը կազմվում է -ալ, -ել, -իլ, -ու վերջավորություններով՝ աղայ, գրեն, խորիլ, քողով: Լ հմչյունին նախորդող ա, ե, ի, ու ծայնավորները կոչվում են խոնարհներ կամ լծորդ ծայնավորներ: Ըստ խոնարհիչների գրաբարում բայց ունի չորս լծորդություն՝ Ա, Ե, Ի, ՈՒ<sup>1</sup>:

Անորոշ դերբայում ի խոնարհիչը սովորաբար փոխվում է Ե-ի՝ խորիիլ-խորիել, ուսանիլ-ուսանել, թռչիլ-թռչել, մարտնչիլ-մարտնչել: Այդ է պատճառը, որ գրաբարում բայերն անվանելիս սովորաբար հիմք են ընդունում ոչ թե անորոշ դերբայի ծնը, այլ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի առաջին դեմքը՝ աղամ, գրեմ, խորիմ, քողով:

Ծանոթություն. Գրաբարի Ի և ՈՒ լծորդության բայերը ժամանակակից արև ելահայ գրական լեզվում հանդես են գալիս որպես Ե լծորդության բայեր, օրինակ՝ նայիմ-նայել, զարթնով-զարթել և այլն:

§ 15. Ըստ անորոշ դերբայի կազմության, բայերը լինում են պարզ և ածանցավոր: Գրաբարում բայական ածանցները բաժանվում են երեք խմբի՝ սոսկական, բազմապատկական և պատճառական:

Սոսկածանցներն են. ամ՝ գող-ան-ալ, հարց-ան-ել, ծն-ան-ել(իմ), եմ՝ յագ-ենա-ալ, մ՝ առ-ն-ու, չ՝ փախ-չ-ել(իմ), մ՝ երկ-նչ-ել(իմ), աչ՝ ճան-աչ-ել, անչ՝ մեղ-անչ-ել:

Բազմապատկական ածանցներն են. առ՝ խանձատել, ոտ՝ խոցոտել, ոտ՝

կրծտել:

Պատճառական ածանցն է ուցամ՝ հաս-ուցան-ել: Պատճառական բայերի մասին տես § 166:

§ 16. Յուրաքանչյուր լծորդություն ունի թե՝ պարզ, թե՝ ածանցավոր բայեր:

§ 17. Ապառնի դերբայը կազմվում է -ոց վերջավորությամբ, որը դրվում է անորոշ դերբայի վրա, օրինակ՝ ստանալ-ստանալոց, շարժել-շարժելոց, թռչել-թռչելոց: Ու լծորդության բայերում ու խոնարհիչը սղվում է՝ հեղուկ-հեղուց, ջեռնովլ-ջեռնուց:

Ապառնի դերբայն իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն դերբային՝ գրելոց=գրելու:

§ 18. Անցյալ դերբայը կազմվում է -եալ վերջավորությամբ և աշխարհաբար թարգմանվում է վաղակատար, հարակատար դերբայներով, անորոշ դերբայի գործիական հոլովով կամ դիմավոր բայով, օրինակ՝ գտեալ=գտել, գտած, գտնելով, գտավ:

§ 19. Ենթակայական դերբայը կազմվում է -ող (օղ) վերջավորությամբ և իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն դերբային ծնանող//ծնող=ծնող: Ենթակայական դերբայի իմաստ կարող են արտահայտել նաև.

ա) -իշ ածանցով բայանուն ածականներն ու գոյականները՝ այրիշ=այրող, անիծիշ=անիծող, տուիշ=տվող և այլն:

բ) Ներգործական սեռի բայերի անորոշ դերբայից -ի (հոգնակի՝ իր) մասնիկով կազմված բայանուն ածականներն ու գոյականները՝ ծնանելի=ծնող, կրելի=կրող, ուտելի=ուտող:

գ) Երկրորդական նախադասությունները որ հարաբերականով և դիմավոր բայով: Նման կիրառություններում բայի վրա սովորաբար դրվում է ն հոդը, օրինակ՝ որ սիրէ(ն) զքեզ=նա, որ սիրում է քեզ, կամ՝ քեզ սիրողը. որ ունենի=նրանք, ովքեր ունենին, կամ՝ ունեցողները:

§ 20. Դերբայները կրավորականի իմաստ արտահայտելու համար հատուկ ծև չունեն: Ներգործական սեռի բայերը նույն դերբայական ծևով կարող են արտահայտել նաև կրավորական նշանակություն, բացի ենթակայական դերբայից, որն արտահայտում է միայն ներգործական և չեզոք սեռի իմաստներ, օրինակ՝ տեսանել=տեսնել կամ տեսնվել. տեսանելոց=տեսնելու կամ տեսնվելու. տեսեալ=տեսել կամ տեսնվել, տեսած կամ տեսնված. տեսանող//տեսող=տեսնող:

<sup>1</sup> Գրաբարում մեկ բայ պահպանվել է ո խոնարհիչով՝ գոլ (=լինել, գոյություն ունենալ):

## 2. ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԲԱՅԵՐԻ ՄԵԶ

§ 21. Գրաբարում կամ բայեր, որոնք գուցահեռաբար հանդես են գալիս երկու կամ ավելի ծներով: Այդ ծներում փոխանցումը լինում է հետևյալ կերպ: ա) փոխվում են խոնարիշները, օրինակ՝ բնակեմ//բնակիմ, մոլորիմ//մոլորեմ, կիզում//կիզեմ. բ) ավելանում են ածանցներ կամ փոխվում են եղած՝ ածանցները, որոնց հետ միաժամանակ կարող են փոխվել նաև խոնարիշները, օրինակ՝ ըղձամ//ըղձանամ, թաքչիմ//թաքնում: Բայերի փոխանցված ծներից մեկը սովորաբար հիմն է և տարածված, իսկ մյուսը կամ մյուսները վկայված են համեմատաբար ուշ շրջանից և սակավ գործածական են: Նկատելի են հետևյալ հիմնական փոխանցումները.

1. Եմ, իմ, դադարեմ//դադարիմ, ճեպեմ//ճեպիմ, յաճախեմ//յաճախիմ, պատկառեմ//պատկառիմ, փայլեմ//փայլիմ և այլն:

2. Իմ, եմ, թաւալիմ//թաւալեմ, համարիմ//համարեմ, ճեմիմ//ճեմեմ, մոլորիմ//մոլորեմ և այլն:

3. Ում, եմ. արգելում//արգելեմ, գենում//գենեմ, յաւելում//յաւելեմ և այլն:

4. Եմ, եամ, ամ, իմ. ատեմ//ատեամ, խնայեմ//խնայեամ, ախորժեմ//ախորժամ, բովեմ//բովամ, գորովամ//գորովիմ և այլն:

5. Ամ, անամ. բաղծամ//բաղծանամ, երթամ//երթանամ, ծոլամ//ծոլանամ և այլն:

6. Եմ, անեմ. զատեմ//զատանեմ, մերկեմ//մերկանեմ, տարածեմ//տարածնեմ և այլն:

7. Եմ, ում, անեմ. դիզեմ//դիզում//դիզանեմ (այլն՝ դիզանամ), կիզեմ//կիզում//կիզանեմ, հերձեմ//հերձում//հերձանեմ և այլն:

8. Ում, անեմ, ում, անիմ. զերծում//զերծանեմ, հեղծում//հեղծանեմ//հեղծանիմ, հեղում//հեղանիմ և այլն:

9. Նում, անեմ, նում, անիմ. հերձնում//հերձանեմ, հեծնում//հեծանիմ, ջեռնում//ջեռանիմ և այլն:

10. Նում, չիմ. զարբնում//զարբչիմ, ոստնում//ոստչիմ, ուռնում//ուռչիմ և այլն:

11. Չիմ, նում. թոշիմ//թռնում, սառչիմ//սառնում, փախչիմ//փախնում և այլն:

## 3. ԲԱՅԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 22. Գրաբարում բայն ունի երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական: Ստորադասականը համապատասխանում է արդի հայերենի ըդական, պայմանական և հարկադրական եղանակներին:

§ 23. Բայի ժամանակներն ըստ կազմության լինում են պարզ և բարդադրյալ: Պարզ ժամանակները կազմվում են բայահիմքից՝ համապատասխան դիմային վերջավորություններով: Բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ ու ապառնի դերբայներով և եմ, լինիմ օժանդակ բայերով (տես § 175):

§ 24. Սահմանական եղանակի պարզ ժամանակներն են՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, ստորադասական եղանակինը՝ առաջին ապառնի, երկրորդ ապառնի, հրամայական եղանակինը՝ արգելական հրամայական, բուն հրամայական (կամ հրամ. եղանակի ներկա), հորդորական հրամայական (կամ հրամ. եղանակի ապառնի):

§ 25. Բայի պարզ ժամանակները կազմվում են երկու հիմքից՝ ներկայի և անցյալ կատարյալի: Ներկայի հիմքից կազմվում են ներկան, անցյալ անկատարը, առաջին ապառնին, արգելական հրամայականը, իսկ անցյալի հիմքից՝ անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, բուն հրամայականը, հորդորական հրամայականը:

## 4. ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 26. Բայի ներկայի հիմքը որոշելու համար պետք է նրա անորոշ դերբայից անջատել դերբայական վերջավորությունը: Այդ նշանակում է, որ ներկայի հիմքի կազմության մեջ մտնում են նաև բայածանցները: Այսպես, օրինակ՝ մնալ, իմանալ, գործել, անցանել, բազմել(իմ), մարտնչել(իմ), արգելով, ըմբեռով բայերի ներկայի հիմքներն են՝ մն, իման, գործ, անցան, բազմ, մարտնչ, արգել, ըմբեռն:

§ 27. Ներկայի հիմքից կազմվող ժամանակներով բայը խոնարիելու համար նրա ներկայի հիմքի վրա պետք է ավելացնել դիմային վերջավորությունները՝ համապատասխան խոնարիշների:

Ներկայի հիմքից կազմվող ժամանակների դիմային վերջավորությունները խոնարիշների հետ միասին տրվում են հետևյալ տախտակում:

Հօլորդութեան		Համապատական համար	Ժողովական համար	ՈՒՎ		ԹԻՎ		ԹԻՎ		ԹԻՎ		ԹԻՎ	
Ա	Բ			Ե	Ֆ	Ֆ	Ե	Ե	Ֆ	Ֆ	Ե	Ֆ	Ե
ՆԵՐԿԱ	ԺԱՄԱՆԱԿ	1-ին 2-րդ 3-րդ	ՆԵՐԿԱ	-ամ -աս -այ	-ամք -այք -այ	-եմ -ես -է	-եմք -եյք -էյ	-եմք -եյք -էյ	-իմ -իս -ի	-իմք -եյք -էյ	-իմ -իս -ի	-ում -ուս -ու	-ումք -ույք -ույ
ԱՐԵԱՆ ԱՆԿԱՏԱՐ	ԱՐԵԱՆ ԱՆԿԱՏԱՐ	1-ին 2-րդ 3-րդ	ԱՐԵԱՆ ԱՆԿԱՏԱՐ	-այի -այիր -այր	-այաք -այիք -այըն	-էի -էիր -էր	-էաք -էիք -էըն	-էիք -էր	-էի -էր	-էաք -էիք -էըն	-էիմ -էիր -էր	-ուի -ուիր -ույ	-ուաք -ուիք -ույն
ԱՐԵԱՆ ԱՐԵԱՆ	ԱՐԵԱՆ ԱՐԵԱՆ	1-ին 2-րդ 3-րդ	ԱՐԵԱՆ ԱՐԵԱՆ	-այցեն -այցեն -այցէ	-այցեք -այցէք -այցն	-իցեն -իցեն -իցէ	-իցեք -իցէք -իցն	-իցեն -իցեն -իցէ	-իցին -իցիս -իցի	-իցին -իցիս -իցի	-ուցում -ուցուս -ուցու	-ուցումք -ուցույք -ուցուն	-ուք
ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ		ՂՈՒԽՈՂՈՂՈ	

## 5. ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

§ 28. Գրաբարում կրավորական սեօի առանձին բայեր չկան:

Ներկայի հիմքից կազմվող ժամանակներում կրավորական իմաստն արտահայտվում է ներգործական սեօի բայերի խոնարհման ձևերում և լորրի փոփոխմամբ կամ նույն բայած երբով:

Երբ և լորրդության ներգործական սեօի բայերը գործածվում են կրավորականի իմաստով, ներկա ժամանակում, առաջին ապանիում (այս ժամանակում նաև Ա լորրդության ներգործական սեօի բայերը) և արգելական հրամայականում խոնարհման ձևերի վերջնավանկի և և է ծայնավորները փոխվում են *ի-ի*, օրինակ՝ սիրեմ=սիրում եմ, սիրիմ=սիրվում եմ. սիրէ=սիրում է, սիրի=սիրվում է. սիրիցեմ=սիրեմ, կսիրեմ, պիտի սիրեմ, սիրիցիմ=սիրվեմ, կսիրվեմ, պիտի սիրվեմ. աղայցէ=աղա, կաղա, պիտի աղա, աղայցի=աղացի, կաղացի, պիտի աղացի. մի՛ սիրեր=մի՛ սիրիր, մի՛ սիրիր=մի՛ սիրվիր և այլն:

Նշված ժամանակներում Ա, Ի, ՈՒ լորրդության, իսկ անցյալ անկատարում բոլոր լորրդությունների ներգործական սեօի բայերը խոնարհման նույն ձևերով կարող են արտահայտել թե՝ ներգործական, թե՝ կրավորական իմաստ: Այդ կարգի բայերի ներգործական և կրավորական նշանակությունները որոշվում են նախադասության արտահայտած իմաստով, օրինակ՝ դատի զնա=դատում է նրան. դատի ի նմանէ=դատվում է նրանից (նրա կողմից). այսպէս էլ՝ մոռանամ=մոռանում են կամ մոռացվում են. լնու=լցնում է կամ լցվում է. ծնանէր=ծնում էր կամ ծնվում էր և այլն:

## ՀԱՍ ԵՐՐՈՐԴ

### ՆԵՐԿԱ

§ 29. Խոնարհման պատկերն է՝

#### Եզակի

1-ին դ.	աղամ	գրեմ	նային	քողում
2-րդ „	աղաս	գրես	նայիս	քողուս
3-րդ „	աղայ	գրէ	նայի	քողու

## Հոգնակի

1-ին դ.	աղամք	գրեմք	նայիմք	թողումք
2-րդ „	աղայք	գրեք	նայիք	թողուք
3-րդ „	աղան	գրեն	նային	թողուն

§ 30. Ներկա ժամանակն իմաստով հիմնակամում համապատասխանում է արդի հայերենի սահմանական եղանակի ներկային՝ գրեմ=գրում եմ:

Սահմանական եղանակի ներկան համապատասխանում է նաև արդի հայերենի ըլձական և պայմանական եղանակների ապառնում՝ գրեմ=գրեն, կօրեմ: Օրինակ՝ Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդը կամաց քոց (Եղիշէ, 1-ին, էջ 9)=Երբ բոլորին արգելես ու պահես հեռավոր օտարության մեջ, կկատարվեն քո կամքն ու խորհուրդը:

## Վարժություն 7. Ներկա ժամանակով խոնարհել հետևյալ բայերը՝

ա) խաղալ, գողանալ, մնալ, իմանալ. բ) գործել, գտանել, ասել, իջանել. գ) քազմել(իմ), կորնչել(իմ), նստել(իմ), ուսանել(իմ). դ) կիզու, ջեռնու, հեղու, ընթեռնու:

## Կանոն

Եզակի հայցականը ձևով նման է եզակի ուղղականին: Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ ավելանալով ք վերջավորությունը, օրինակ՝ տուն-տունք (=տներ), այզի-այզիք: Հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ ք-ն փոխարինելով ս-ով՝ տունք-տունս (=տներ), այզիք-այզիք:

Որոշյալ առման դեպքում եզակի և հոգնակի հայցականը սկզբից ստանում է զ նախյիշը՝ զԱրշակ=Արշակին, զգետս=զետերը:

Գրաբարում որոշյալ ը հոդ չկա, այլ կա միայն ն, որն ունի արդի հայերենի ն կամ ը հոդի նշանակությունը:

## Վարժություն 8. Թարգմանել, որոշել ներկա ժամանակով դրված բայերի լծորդությունը, դեմքն ու թիվը:

Իբրև տեսանել զգային զի գայ, թողու զոշխարսն և փախչի: Չուրք զիող երկրի ողողանեն և ապականեն: Սուտ խօսիս լու: Ծիչանին լապտերը մեր: Յայնժամ խաւարի արեգակն: Ոչ պատրիմք իբրև զտղայս, և ոչ մոլորիմք

իբրև զանտեղեակս, և ոչ խարիմք իբրև զտղէտս: Այժմ հաւատո՞յք: Առաքեմ առ ձեզ մարզարէս և իմաստունս և դայիրս: Ոչ գիտենք յո երթաս: Իբրև հաւատոյ՝ սիրէ. և իբրև սիրէ՝ յուսայ. և իբրև յուսայ՝ արդարանայ: Զաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք: Ծնանի զորդի իր զԱմասիա: Ոչ նորոգի, զի ոչ հնանայ, ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ: Ահաւասիկ տեսանեմք զի արեգակն գնայ. լուսին և աստեղը ընթանան. ամաք պլացեալք տարածանին: Տիկըն պատառին և գինին հեղու:

իբրև - երբ, ինչպես  
զի - որ, որովհետու

յայնժամ - այն ժամանակ  
ոչ պատրիմք - չենք խարվի

## Վարժություն 9. Խմբավորել 8-րդ վարժության պարզ և ածանցավոր բայերը և որոշել դրանց ներկայի հիմքը:

## Վարժություն 10. Կազմել 7-րդ վարժության բայերի ապառնի դերքայր:

Օրինակ՝ գործել, ապառնի դերքայ՝ գործելոց:

## Կանոն

Գրաբարում հատկացուցիչը սովորաբար դրվում է հատկացյալից հետո՝ տունք մեր=մեր տները, զիրամանս քազաւորի=քազավորի հրաման-մերը:

Հատկացուցիչ և հատկացյալի կապակցության մեջ հոդը դրվում է հատկացուցիչի վրա, իսկ եթե հատկացուցիչը հատուկ անուն է՝ հատկացյալի վրա, օրինակ՝ պարիսապ քաղաքին, վաշտն գնելոյ:

## Վարժություն 11. Թարգմանել գրաբար:

Հրամայում է շինել քաղաքներ և ավաններ: Սիրում ենք մեր բարեկամներն: Հայրը խրատում է որդուն: Երեխանները խաղում են և ուրախանում: Ինչո՞ւ (ընդէ՞՞ր) եք դատում անմեղներին: Մարդը ծնվում է և մեռնում: Սիրամարդի փետուրները գեղեցիկ են: Աչքեր (աչս) ունես, բայց չես տեսնում (ոչ տեսանես), ականջներ ունես, բայց չես լսում, լեզու ունես, բայց չես խոսում: Ընթերցում են քազավորի հրովարտակը: Գետերը ոոզգում են դաշտերը:

դատել - դատել(իմ)  
ծնվել-ծնանել(իմ)  
մեռնել-մեռանել(իմ)

յանենալ-ունել(իմ)  
խոսել-խօսել(իմ)  
ընթերցել-ընթեռնու

## ԵՐԳ. ԵՐԳՈՅՑ

Ահաւաղիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւաղիկ կաս գեղեցիկ, աչք քո աղանձիք, վարսք քո իբրև զերամակս այծից<sup>1</sup>, որք երևեցան ի լեռնէն Գաղաղուն<sup>2</sup>: Ատամունք քո իբրև զերամակս կտրելոց<sup>3</sup>, որք ելանեն ի լուալեաց<sup>4</sup>: Իբրև զբել որդան են շրբունք քո, և խօսք քո գեղեցիկը. իբրև զկեղին նոան են այտք քո, իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո: Երկու ստիճնք քո իբրև զերկուս ուլս երկուորիս այծենան<sup>5</sup>, որք արածին ի մէջ շուշանաց: Ամենն ին զեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ<sup>6</sup>: Սրտակաք արարեր զմեզ<sup>7</sup> միով ակամք քով<sup>8</sup> և միով քառամանեկաւ պարանոցի քո: Մեղր կարեցանեն շրբունք քո, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քո իբրև զիոտ կնորկի:

(Երգ Երգոյց. 2, 1-11)

- <sup>1</sup> իբրև զերամակս այծից -  
այծերի հոտի նման (են)
- <sup>2</sup> ի լեռնէն Գաղաղուն - Գաղաղու լորից
- <sup>3</sup> իբրև զերամակս կտրելոց - խոռած
- <sup>4</sup> ոչխարհերի հոտի նման (են)
- <sup>5</sup> ի լուալեաց - լողարանից (լվացարանից)
- <sup>6</sup> իբրև զերկուս ուլս երկուորիս այծենան-

- այժյամի համածին (Երկվորյակ)
- երկու ծագերի նման (են)
- <sup>6</sup> արատ ինչ ոչ գոյ ի քեզ - որնէ  
արատ չկա քա մեջ
- <sup>7</sup> սրտակաք արարեր զմեզ - ջերմ  
սիրով համակել ես մեջ
- <sup>8</sup> միով ակամք քավ - քո մի նայվածքով

## ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ

### ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

§ 31. Խոնարհման պատկերն է՝

#### Եզակի

1-ին դ.	աղայի	գրեի	նայէի	քողովի
2-րդ „	աղայիր	գրեիր	նայէիր	քողովիր
3-րդ „	աղայր	գրեր	նայէր	քողովր

#### Հոգմակի

1-ին դ.	աղայաք	գրեաք	նայէաք	քողովաք
2-րդ „	աղայիք	գրեիք	նայէիք	քողովիք
3-րդ „	աղային	գրեին	նայէին	քողովին

Ծանոթություն. Ե լծորդության բայերն անցյալ անկատարի եզակի 3-րդ դիմքում երբեմն ունենում են իր վերջավորությունը կրավորականի իմաստով՝ կոչիր=կոչվում էր, գտանիր-գտնվում էր:

§ 32. Անցյալ անկատար ժամանակն իմաստով իիմնականում համապատասխանում է արդի հայերենի սահմանական եղանակի անցյալ անկատարին՝ աղայի=աղում էի: Սահմանական եղանակի անցյալ անկատարը հաճախ գործածվում է նաև.

ա) Պատմական ժամանակի իմաստով, որն աշխարհաբար բարգմանվում է անցյալ կատարյալ կամ ներկա ժամանակներով՝ հարցանէր=հարցրեց կամ հարցնում է: Օրինակներ. Իսկ իբրև առաօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոց ի բանակն արքունի (Բուզ., 4-րդ, ԺԵ)=Իսկ երբ լույսը բացվեց, Գնելի խոմքը հասավ արքունի բանակը: Ապա ժողովէր (=հավաքում է) զօրավարն Հայոց Վասակ զամենայն զօրում Հայոց (Բուզ., 4-րդ, Խ):

բ) Ըղձական և պայմանական եղանակների անցյալ ժամանակով՝ կարեր=կարողանար, կլարողանար: Օրինակներ. Նոյնակն և վիշապն ոչ մի անգամ օճածն երնէր, և միւս անգամ մարդակերպ (Եզնիկ, 1-ին, ԻԵ)=Այսպես էլ վիշապը մի անգամ օճածն չէր երնա, մի այլ անգամ՝ մարդակերպ: Բայց թէ զիտէի... մեծապես մեծարանօր արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն (Բուզ., 4-րդ, ԺԴ)=Բայց երեւ զիտենայի... շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կարծակէի իր աշխարհը:

Վարժություն 12. Անցյալ անկատար ժամանակով խոնարհել հետևյալ բայերը՝

ա) զքալ, ստանալ, ջանալ, մերձենալ. բ) բերել, հատանել, երգել, հասանել, գ) հայել (իմ), մեռանել (իմ), խորիել (իմ), սնանել (իմ). դ) արգելու, լուս, հեծուլ, ոստնուլ:

#### Կառան

Գրաբարում եզակի սեռական և տրական հոլովները ունենում են ի, ու, ոյ, այ, աճ, իճ, եր, եղ, իսկ հոգնակի սեռական և տրական հոլովները՝ ից, ուց, ոց, աց, աճց, երց, եղց վերջավորությունները, օրինակ. Եզակի սեռ.-տր.՝ ծայնի, գանձու, ծառոյ, տիտանայ, ծկան, հալախն, դատեր, աստեղ. հոգնակի սեռ.-տր.՝ ծայնից, գանձուց, ծառոց, տիտանաց, ծկանց, դատերց, աստեղոյ:

Վարժություն 13. Թարգմանել, որոշել անցյալ անկատար ժամանակով դրված բայերի դեմքն ու թիվը:

Մանուկն աճեր և գորանայր: Քանզի վատասիրտքն լրանէին, քաջըն խիզախտին և նահատակըն գոչէին: Գնայր գայր և ուտէր: Վարդիք բազում և ժողովէիք սակա: Իսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմանէր գրազատքն Արշակ: Եթէ չեր շարագործ այրն այն, ապա ոչ մատնէար զնա քեզ: Վասն ճշմարտութեանն մինչն ի մահ մարտնչէր: Կամէին սպանանել զԱրտաշէս արքայ: Իբրև արևն ջեռնոյր, հալէր: Ազանէր կօշիկս ոսկեզօծս: Բնակի իբրև գրազատք ի մէջ գորականաց: Լնոյր գերկիրն Աղձնեաց վաներով: Չանքէր գալարէր իբրև զօն թունատր: Քանզի կոչէի, և ոչ լսէիք:

Վասն - համար

Վաներով - Վանքերով

**Վարժություն 14. 13-րդ վարժության անցյալ անկատարով գործածված րայերը փոխարիժնել ներկա ժամանակով՝ պահպանելով դեմքն ու թիվը:**

#### Կ ա մ ո ն

Ի և առ նախողիրները հաճախ գործածվում են հայցական հոլովի հետ, եթք վերջինս ցոյց է տալիս այն տեղը կամ առարկան, դեպի ուր, դեպի ուր կամ որի մոտ ուղղվում է գործողորթյունը (ուղևորման հայցական), օրինակ՝ Փութայր հասանել ի սահման բնակութեանն Հայկայ (Խոր., 1-ին, ԺԱ) = Ծոտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները: Կոչես զիս առ արքայ (Ա. Թագ., ԻԶ, 14) = Կանչում ես ինձ արքայի մոտ:

**Վարժություն 15. Թարգմանել գրաբար:**

Վարում էինք դաշտերը և տնկում այգիներ: Զաղոսմ էի ծառերի (ծառոց) պտուղները: Վերցնում էր քնարը և նվազում: Կամենում էին սպանել նրան (զնա): Ասում էինք, և չեիք լսում (ոչ լսէիք), կանչում էինք, և չեիք գալիս: Թողնում էին ավարը և փախչում: Ինքը (ինքն) չեր շարժվում և չէր փոփոխվում: Ինչ որ (զօր ինչ) Որմիզդն էր ստեղծում, բարի էր և լավ: Ֆանում էինք, հնձում և լցում շտեմարանները: Յուղով օծում էին հիվանդներին: Գալիս հասնում էին Հայոց սահմանները:

Վերցնել-առնուլ  
կամենալ-կամել(իմ)  
սպանել-սպանանել  
կանչել-կոչել  
բողնել-բողով

փախչել-փախչել(իմ)  
ստեղծել-առնել  
լցնել-լնուլ  
օծել-օծանել  
հասնել-հասանել

#### ՎԱՍԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ

Եւ եղն ի վաղի անդր ետ հրաման<sup>1</sup> Չապուի արքայ, ածել զառաջեաւ իր զվասակ Մամիկոնեամ զգօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պատուիասել զնա, քանզի էր Վասակ անձամբ<sup>2</sup> փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Չապուի. «Աղուս, դու՝ էիր խանգարիչ՝ որ այսափ աշխատ արարիք զմեզ. դու՝ ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսափ ամս, և զի՞ գործես՝ զմահ աղուեսու սպանից զբեզ»<sup>3</sup>: Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. «Այժմ քո<sup>4</sup> տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զշափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առեծ էի, և արդ աղուս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի, մի ոտնս<sup>5</sup> ի միոյ լերին կայր<sup>6</sup>, և միս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ծախ ոտնս յենուի, զծախ լեառն ընդ գետին տանէի»: Ապա հարցաներ բազաւորն Պարսից Չապուի և ասէ. «Աղէ՝ տուր իմծ զիտել<sup>7</sup>, ո՞վ են լերինքն այնոքի՝ զորս դուն ընդ տանէիր»: Եւ ասէ Վասակ. «Լերինքն երկուք, մի դու էիր, և մի բազաւորն Յունաց....»:

(Փավստոս Բուզանդ, 4-րդ . ԾԴ)

<sup>1</sup> և եղն ի վաղի անդր ետ հրաման – իսկ մահով սպանեմ քեզ  
հաջորդ օրը հրաման տվեց (հրամայեց)

<sup>2</sup> այստեղ՝ մարմնով

<sup>3</sup> աշխատ արարիք – շարշարեցիր,  
նեղություն տվեցիր

<sup>4</sup> զի՞ գործես – ինչպե՞ս ես

<sup>5</sup> զմահ աղուեսու սպանից զբեզ – աղվեսի

<sup>6</sup> ենքական անցյալ դերքայի մոտ դրված  
է սեռական հոլովով՝ քո տեսեալ զիս

<sup>7</sup> – դու իմծ տեսնելով

<sup>7</sup> ս-ն ստացական եղող է

<sup>8</sup> ի միոյ լերին կայր – մի լեռան վրա էր

<sup>9</sup> զիտել տալ – զիտենալ տալ, իմացնել

#### ԴԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

#### ԱՌԱՋԻՆ ՍՊԱՌՆԻ

##### § 33. Խոնարհման պատկերն է՝

##### Եզակի

1-ին դ.	աղայցեմ	զիցեմ	նայիցիմ	թողուցում
2-րդ „	աղայցես	զրիցես	նայիցիս	թողուցուս
3-րդ „	աղայցէ	զրիցէ	նայիցի	թողուցու

## Հոգմակի

1-ին դ.	աղայցեմք	գրիցեմք	նայիցիմք	թողուցումք
2-րդ „	աղայցէք	գրիցէք	նայիցիք	թողուցուք
3-րդ „	աղայցեն	գրիցեն	նայիցին	թողուցուն

§ 34. Ստորադասական եղանակի 1-ին ապառնին իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնուն՝ նայիցիմ=նայեն, կնայեն, պիտի նայեն:

## Վարժություն 16. Առաջին ապառնի ժամանակով խոճարիկ հետևյալ բայերը՝

ա) ողբալ, զարմանալ, բանալ, յագենալ. բ) կաքաւել, սպանանել, հանել, մտանել. գ) կամել(իմ), սասանել(իմ), ծիծաղել(իմ), մարտնչել(իմ). դ) յաւելու երդնու, զգենու, գրունու:

### Կաճութ

Գրաբարում բացառական հոլովք սկզբից միշտ ունենում է մի նախորդ, սովորաբար՝ ի նախորդը, որը ծայնավորով սկսվող բարից առաջ փոխվում է յ-ի և գրվում բառին կից:

Եզակի բացառականը ունենում է է, ոյ, այ, իսկ հոգնակի բացառականը՝ *hg, ng, nɪg, ag, aնց, tṛg, tṇg* վերջավորությունները, օրինակ՝ ի ծայն=ծայնից, ի ծառոց, ի տիտանայ. ի ծայնից=ծայներից, ի ծառոց, ի գանձուց, ի ծկանց, ի ծկանց, ի դստերց, յաստեղ:

## Վարժություն 17. Թարգմանել, որոշել 1-ին ապառնի ժամանակով դրվագ բայերի դեմքն ու բիվը:

Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն: Եթէ հաւաստեալ խնդրիցեմք, գտանիցմք: Մեղք յորժամ գտանիցես, որդեակ, չափով կերիշիր, գուցէ յագիցիս և փսխիցես: Ո՞ւ սա, որ փրկից զմեա: Լինիցի՞ ինձ որդի Որդիզոյ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ: Ընդէ՞ր ոչ խորիշիցիմ և ասիցեմք: Յորժամ կամիցի՞ վառիցես և յորժամ կամիցի՞ խափուցանիցես: Համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ: Յորժամ դուստր զմայր անարդիցէ, և նու զկեսուր իր: Արդ առնուցում զիաց ին և զգինի ին: Քանի փողահարը ի մեջ զնդին ծայնիցեն: Զիա՞րդ բուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարեւը ոչխար և մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննուն և զինն ոչխարն ի լերինս, և երթիցտ խնդրիցտ զմոլորեալն:

զիա՞րդ-ինչպե՞ս, ինչո՞ւ  
ո՞-ո՞վ

ի նոցանէ-նրանիցից  
ի լերինս-նեռների վրա

## Վարժություն 18. Թարգմանել գրաբար:

Երբ (յորժամ) գայլերը տեսնեն հովիվներին, կրողնեն ոչխարները և կփախչնեն: Գարունը կզա և այզիները կծաղկեն: Ինչ (զինչ) ցանես, այն կինծես: Դու չես կարող ատել: Մի՞թ միշտ պիտի լրեմ և անսամ: Երբ զա և տեսնի այդ, չես կարող ատել: Մի՞թ պիտի ուտեք կամ ի՞նչ պիտի ըմպեք: Քաջությամբ կկովեն, կհաղթեն քշնամիներին և երբ մեռնեն, անուն և հիշատակ կրողնեն: Մեկին (զմին) կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարի: Չեն հանդգնի մերձենալ մեր սահմաններին:

կարողանալ - կարել  
տեսնել - տեսանել

սկսել - սկսանել(իմ)  
ծեծել - հարկանել

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ե՞րբ<sup>1</sup> առ մրջիւնն և նախանձեաց<sup>2</sup> ընդ ճանապարհ նորա և լեր<sup>3</sup> իմաստնագոյն և ս քան զնա: Զի նորա ոչ գոյ<sup>4</sup> հողագործութիւն և ոչ հարկադիր. և ոչ ընդ տերամբք է<sup>5</sup>, և պատրաստ ամարանի զկերակուր, և բազում համբարս դնէ ի հունաւ: Կամ ե՞րբ առ մեղուն և ուսի՞ր զիարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի: գորոյ զվաստակն բազաւորք և տնանկք ի թշկութիւն մատուցանեն: Ցանկալի է ամենեցուն և մեծարոյ<sup>6</sup>. զի թէպէտ և տկար է օգութեամբ, պատուեաց զիմաստութիւն և յարգեցաւ: Մինչև յե՞րբ յորսայսեալ կաս<sup>7</sup>, ո՞վ վատ, կամ ե՞րբ ի քնոյ զարթիցես: Փոքր մի ննջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրիցին, փոքր մի հանգուցանիցես զծենս քո ի վերայ լանջաց քոց<sup>8</sup>, ապա այսուհետև հասանիցէ ի վերայ քո ի իրեն զշար ուղևոր տնանկութիւն և կարօտութիւն իրեն զժիր սուրհանդակ: Ապա եթէ անդանդադ լինիցիս, հասանիցէ իրեն զարթեւը ամառն քո, և կարօտութիւն իրեն այր մի չար ինքնահալած լինիցի:

(Առակը, Զ. 6-11)

<sup>1</sup> եթք - զնա՛

<sup>2</sup> նախանձեաց - նախանձիք

<sup>3</sup> լեր - եղիք, դարձիք

<sup>4</sup> նորա ոչ գոյ - նա չունի

<sup>5</sup> և ոչ ընդ տերամբք է - ոչ է ներակա

<sup>6</sup> մեծարոյ - հարզի, հարզված, զնահատելի

<sup>7</sup> յորսայսեալ կաս - մեցքի վրա

պառկած մնաս

<sup>8</sup> ի վերայ լանջաց քոց - քո կրծքի վրա

## ԱԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

### ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

#### § 35. Խոնարհման պատկերն է՝

##### Եզակի

2-րդ դ. մի՛ աղար մի՛ գրեր մի՛ նայիր մի՛ քողով

##### Հոգմակի

2-րդ դ. մի՛ աղայր մի՛ գրեր մի՛ նայիր մի՛ քողով

**§ 36. Արգելական հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի նույն հրամայականին՝ մի՛ քողով=մի՛ թողնիր, մի՛ թողով=մի՛ թողներ:**

**Վարժություն 19. Արգելական հրամայականով խոնարհել հետևյալ բայերը՝**

ա) լաւ, լուսանալ, ջամալ, պանալ, բ) արշանել, զարկանել, հերկել, ցուցանել, զ) ողորմել(իմ), անկանել(իմ), շրջել(իմ), փախչել(իմ). դ) կասով, ընկենով, հեղձնով, ոստնով:

##### Կանոն

Գրաբարում եզակի գործիական հոլովք ունենում է իւ, ով, ու, աւ, եաւ, ամբ, երը, եղը վերջավորությունները, իսկ հոգմակի գործիականում այդ նույն վերջավորություններին ավելանում է ք՝ իւք, ովք, ուք, աւք (օք), եաւք (եօք), ամբք, երքք, եղքք, օրինակ՝ ծայնի=ծայնով, ծառով, զանձու, տիտանալ, կղզեալ, ծկամք, դստերք, աստեղք. ծայնիք=ծայներով, ծառովք, զանձովք, տիտանալք (օք), կղզեալք (եօք), ծկամքք, դստեղքք, աստեղքք:

**Վարժություն 20. Թարգմանել որոշել արգելական հրամայականով դրվագած բայերի լծորդությունը և թիվը՝ եզակին դարձնելով հոգմակի, իսկ հոգմակին՝ եզակի:**

**Օրինակ՝ մի՛ գողանար-մի՛ գողանայր, մի՛ քննեք-մի՛ քններ:**

Մի՛ արհամարհեր զծերութիւն մօր քո: Ամեննին ի մահուան մի՛ երկնչիք: Մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր: Մի՛ մոռանայր... զառատածեն պարզեն ուն, որ շնորհի ծեզ յարքունուստ: Եթէ աղաշից գրեզ թշնամին, և ի ծայն բարձր աղերսիցէ, մի՛ հաւատար նմա: Մի՛ արկաներ զմարգարիստ ծեր առաջի խոզաց: Զբարեկամ քո և զբարեկամ հայրենի մի՛ թողովր: Դուք մի՛ քննեք զգործն իմ: Սակայն և դու մի՛ անհծաներ այլոց: Մի՛ կարծեր, զի ոչ սուտ մեզ այրն այն: Ի պիշտու մի՛ մերձենայր: Զերդումն սուտ մի՛ սիրեք:

ի ծայն - ծայնով

նմա - նրան

##### Կանոն

**Ընդ նախդիրը, դրվելով հայցականի և եզակի տրականի վրա, արտահայտում է հետ իմաստը, օրինակ՝ Խոսի ընդ որմս (Եզնիկ, 2-րդ, ԻԱ), ընդ որմս=պատերի հետ: Մի՛ ուտիցես զիաց քո ընդ նմա (Առակ., ԻԳ, 8), ընդ նմա=նրա հետ:**

Մի շաբթ բայերի մոտ (նախանձել, զայրանալ, նայել(իմ) և այլն) ընդ նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է տրական հոլովի իմաստ, օրինակ՝ Նայեր ընդ պէսպէս ամբոխ գուանացն (Բուգ., 5-րդ, ԼԲ) =Նայում էր գուսանների խայտարդետ խմբին:

**Վարժություն 21. Թարգմանել գրաբար:**

Մի՛ մոռանա իմ պատվերները: Եթէ նա սուտ խոսի, մի՛ զարմանաք: Մի՛ անպատվիր և մի՛ անարզիր ծերերին: Եթէ քո երբայրը կամենա գալ քեզ հետ (ընդ քեզ), մի՛ արգելիր: Եթի առնեք քաղաքը, գերիներին մի՛ սպանեք: Մի՛ վախենա, որովհետև քեզ հետ եմ: Մի՛ խոսիր մեզ հետ: Մի՛ ուտիր և մի՛ ընպիր հարբեցողների հետ:

արգելել - արգելով  
առնել - առնով

վախենալ - երկնչել(իմ)  
հարբեցող-արբեցող

##### ԽՄԱՏՔ

Ա. Մի՛ ուտեր հաց ընդ առն<sup>1</sup> չարական, և մի՛ ցանկանար կերակրոյ նորա: Մի՛ մուծանիցես զնա առ քեզ և մի՛ ուտիցես զիաց քո ընդ նմա, զի նողկացուցանել զնա և ապական զբանս քո բարիս: Յականցս անզգամի աճենն իմ խոսիր, զի մի՛ անգունեսց զիմաստուն բան քո: Մի՛ փոխեր զահմանս յափտենականս. և ի ստացուածս որբոց մի՛ մտանիցես:

Մի՛ խնայեր խրատել զտղայ. զի թէ հարկանես զնա գաւազանալ՝ ոչ մեռա-

նի: Դու հարկանես զմա զաւազանաւ, բայց զանձն նորա փրկես ի մահուանէ: Որդեակ, եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես<sup>2</sup> և զիմ սիրտս: Լուր<sup>3</sup>, որդեակ, հօր որ ծնաւ գրեա, և մի՛ արհամարհեր գծերութիւն մօր քո: Զնշմարտութիւն ստացիր, և մի՛ բողով գիմաստութիւն և զիրատ:

(Առակը, ԻԳ, 6-23)

Բ. Որդեակ իմ, մի՛ նախանձիր ընդ չարս, և մի՛ ցանկանայցես կալ ընդ նուսա<sup>4</sup>, զի ստուրիւն խորիի սիրտ նոցա: Իմաստութեամբ շինի տուն և հանճարով կանգնի: Լաւ է իմաստուն քան զիզօր, և հանճարեն՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս: Մի՛ մատուցաներ զամպարիշտն յարօտս արդարոց, և մի՛ խարիբ լրութեամբ որովայնի: Մի՛ խնդար ընդ չարագործս, և մի՛ նախանձիր ընդ մեղաւորս: Մի՛ լինիր վկայ սուտ՝ ընկերի քում, և մի՛ խարեր շրթամբք քովք:

(Առակը, ԻՂ, 1-28)

<sup>1</sup> ընդ առն - մարդու հետ

<sup>2</sup> ուրախ արասցես - կուրախացնես

<sup>3</sup> լո՛տ - լսի՛ր

<sup>4</sup> ընդ նոսա - նրանց հետ

## ԱՍՏ ՑՈԹԵՐՈՐԴ

### 1. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

§ 37. Անցյալ կատարյալի հիմքն ըստ կազմության լինում է՝ ա) պարզ կամ արմատական, բ) բաղադրյալ կամ ցոյական:

§ 38. Պարզ կամ արմատական հիմքը համընկնում է բայարմատին, օրինակ՝ հասանել, ծնանել(իմ), մարտնչել(իմ), բռուլ, ջեռնուլ բայերի անցյալ կատարյալի հիմքերն են՝ հաս, ծին (անշեշտ՝ ծն), մարտ, բռոլ, ջեռ:

Արմատական հիմք ունեն Ե, Ի լծորդության ածանցավոր և ՈՒ լծորդության բայերն ընդհանրապես, օրինակ՝ անցանել-անց, ելանել-ել, հատանել-հատ, իջանել-էջ(իջ), տեսանել-տես, մտանել-մուտ(մուտ), անկանիմ-անկ, մեռանիմ-մեռ, ազանիմ-ազ, բուսանիմ-բոյս(բոյս), բռչիմ-բռ, երկնչիմ-երկ, արգելով-արգել, զենով-զեն, հեղով-հեղ, բողով-բող, կիզով-կէզ(կիզ), հեծնով-հեծն, զարթով-զարթ, ուստոնվ-ուստ, ցամնով-ցաս և այլն:

§ 39. Բաղադրյալ կամ ցոյական հիմքը կազմված է լինում:

ա) Բայարմատից և աց ածանցից: Այսպիսի հիմք ունեն Ա լծորդության պարզ և ան ածանցավոր բայերը՝ գրալ-գրաց, դողալ-դողաց, լալ-լաց, խաղալ-խաղաց, մնալ-մնաց, սգալ-սգաց, գողանալ-գողաց, զարմանալ-զարմաց, հեռանալ-հեռաց, ստանալ-ստաց և այլն:

բ) Բայարմատից և եաց (անշեշտ՝ եց) ածանցից: Այսպիսի հիմք ունեն Ե լծորդության պարզ և բազմապատկական, Ի լծորդության պարզ և Ա լծորդության եւ ածանցավոր բայերը՝ առաքել-առաքեաց, գործել-գործեաց, կարծել-կարծեաց, շարժել-շարժեաց, սիրել-սիրեաց, երգել-երգեաց, վազել-վազեաց, խոցոտել-խոցոտեաց, դատիմ-դատեաց, խորհիմ-խորհեաց, նայիմ-նայեաց, շրջմ-շրջեաց, ողորմիմ-ողորմեաց, ծիծաղիմ-ծիծաղեաց, յագենալ-յագեաց, մերձենալ-մերձեաց և այլն:

գ) Բայարմատից կամ կատարյալի ցոյական հիմքից և ոյց (անշեշտ՝ ուց) ածանցից, օրինակ՝ բարոյց, ուսոյց, հեռացոյց: Այսպիսի հիմք ունեն պատճառական բայերը (տեսն § 167):

§ 40. Նշված կանոններից նկատելի են հետևյալ շեղումները.

ա) Ա լծորդության բառնալ, դառնալ, բաճալ, բաճալ (=բրջել) բայերի անցյալ կատարյալի հիմքերն են՝ բարձ, դարձ, բաց, բաց. բ) Ե լծորդության հինգ պարզ բայեր ունեն աց բաղադրիչով անցյալ կատարյալի հիմք՝ ասել-ասաց, գիտել-գիտաց, կարել (=կարողանալ) - կարաց, մարթել-մարթաց, մերկել-մերկաց, իսկ չորս պարզ բայեր ունեն արմատական հիմք՝ ածել-ած, բերել-բեր, համել-համ, հեղուսել (=զամել, միացնել) - հեղոյս. զ) Ի լծորդության նստիմ, զգածիմ (=հագնվել) պարզ բայերն ունեն արմատական հիմք՝ նիստ (նստ), զգած, իսկ դիպիմ պարզ բայց գործածվում է և՝ ցոյական, և՝ արմատական հիմքերով՝ դիպեաց (դիպեց), դիպ. դ) ՈՒ լծորդության վեց բայեր ունեն ցոյական հիմք՝ լընենով-լըներց, լընենով-լընկեաց (եց), զգենով-զգեաց (եց), լնով-լնց (լց), խնով-խից (խց), յենով-յեց:

### 2. ԽՈՆԱՐՀՄԱՆ ՏԻՊԵՐՆ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

§ 41. Ինչպես նշվել է (տեսն § 25), անցյալ կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, երկրորդ ապանին, բուն հրամայականը, հորդորական հրամայականը:

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում բայերը խոնարիվում են ներգործածն, կրավորածն և խառն վերջավրություններով: Ըստ այդմ բայց ունի երեք տիպի խոնարիում՝ ներգործածն, կրավորածն և խառն: Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակների խոնարիման վերջավրությունները տրվում են հետևյալ տախտակում:

### § 42. Ներգործածն խոնարհում ունեն.

ա) Ե լծորդության պարզ և ածանցավոր բայերը: Բացառություն են կազմում յանցանել և մեղանչել բայերը, որոնցից առաջինը խոնարհվում է խառն ձևով (յանցեայ, յանցեար, յանցեաւ և այլն), իսկ երկրորդը՝ անցյալ կատարյալում և երկրորդ ապառնու եզակի առաջին դեմքում կըսավորածե, մնացած ծներում՝ խառն վերջավորություններով (անց. կատ.՝ մեղայ, մեղար, մեղաւ, 2-րդ ապ.՝ մեղայց, մեղիցես, մեղիցէ և այլն):

բ)Ա լծորդության պարզ բայերը: Բացառություն են կազմում գրալ, փութայ, յուսալ բայերը, որոնք (բացի բուն հրամայականի եղակի 2-րդ դեմքից) խոնարհվում են միայն կրավորածն՝ գրացայ, փութացայ, յուսացայ: Խսկ միշարք բայեր, անկախ սեղից, կարող են խոնարհվել զուգահեռաբար՝ և՛ ներգրծածն, և՛ կրավորածն, օրինակ՝ եռալ-եռացի/եռացայ, գոռալ-գոռացայ/գոռացի, դրդալ-դրդացայ//դրդացի, ողբալ-ողբացի//ողբացայ, հոգալ-հոգացայ//հոգացի, որսալ-որսացայ//որսացի, ջանալ-ջանացայ//ջանացի, սգալ-սգացայ//սգացի և այլն:

գ) Ու լծորդության պարզ բայերը:

### § 43. Կրավորածն իսկնարհում ունեն.

ա) Ի լծորդության պարզ և ան ածանց ունեցող բայերը:

թ)Ա լծորդության ածանցավոր բայերը: Բացառություն են կազմում ներգործական սեղի մի քանի բայեր՝ բանալ, բառնալ, բանալ, լուսանալ, մերկանալ, որոնք կարող են խոնարհվել և ներգործածն, և կրավորածն: Սոռանալ, իմանալ, ընթանալ բայերը բուն իրանայականի եզակի 2-րդ դեմքում մոռացիր, իմացիր, ընթացիր կանոնավոր ծն երից բացի, ունենում են նաև իմա//իմաց, մոռա, ընթա//ընթաց ծն երը:

զ) Ու լծորդության այն ածանցավոր բայերը, որոնք չունեն փոխանցումներ, օրինակ՝ յենու-յեցայ, զգենով-զգեցայ, ընկինով-ընկլայ և այլն: Բացառություն են կազմում ներգործական սեռի մի քանի բայեր՝ առնուլ, զնկենուլ, լուսու, խնձու որոնք կարող են խոնարհել և ներգործածն, և կյավորածն: ՈՒ լծորդության նում-անեմ, նում-անիմ փոխանցումով ածանցավոր բայերը, օրինակ՝ կնում-կլայ, գրօնում-գրօսայ և այլն:

§ 44. Խաղն խոնարհում ունեն. ա) Ի լծորդության չ և նշ ածանցավոր բայերը. բ) ՈՒ լծորդության նում-շիմ փոխանցումով ածանցավոր բայերը, օրինակ՝ զարբնում-զարբեայ, ոստնում-ոստեայ, ցանում-ցանեայ, քահցնում-քահցեալ և ալլն:

§ 45. Πειραιάς έναντι της πειραιώς, πριν ανέρχεται στην πειραιώς λιμνούλης ή μεταξύ της πειραιώς και της πειραιώς λιμνούλης.

Ներգործական սեղի այն բայերը, որոնք խոնարհվում են միայն կրավո-

րածե, նույն վերջավորություններով կարող են արտահայտել թե՝ ներգործական, թե՝ կրավորական սեղի իմաստ: Այդ կարգի բայերը կոչվում են հասարակ (= ընդհանուր) բայեր, որոնց ներգործական և կրավորական սեղի նշանակությունները որոշվում են նախադասության արտահայտած իմաստով, օրինակ՝ դատեցայ զնա=դատեցի նրան, դատեցայ ի ննան= դատվեցի նրանից (նրա կողմից):

**§ 46.** Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներով բայը խոնարհելու համար նրա անցյալ կատարյալի հիմքի վրա պետք է ավելացնել համապատասխան դիմային վերջավորությունները:

**Ծանոթություն.** Գրաբարի հնչյունափոխության կանոնների համաձայն, վերջավորություններից առաջ կատարյալի հիմքի շեշտագրկված եա երկրարառը դառնում է ե՛ զրեաց+ի=զրեցի, բազմեաց+այ=բազմեցայ, ու և ի ծայնավորները դառնում են ը, որը չի զրվում մուտ+ի=մտի, ծին+այ=ծնայ, և ծայնավորը դառնում ի՛ էց+ի=իջի, շէց+այ=շիջայ:

### ԱՍՍ ՈՒԹԵՐՈՐԴԴ

#### ԱՆՑԱԱԼ ԿԱՏԱՐՅԱԱԼ

**§ 47.** Անցյալ կատարյալի վերջավորություններն են՝

Ներգործածն		Կրավորածն		Խառն	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
1-ին դ. -ի	-աք	-այ	-աք	-եայ	-եաք
2-րդ „ -եր	-էք,-իք	-ար	-այք, -արուք	-եար	-եայք
3-րդ „ -	-ին	-աւ	-ան	-եաւ	-եան

**§ 48.** Ներգործածն խոնարհման եզակի 3-րդ դեմքում բայը որևէ վերջավորություն չունի. չհնչյունափոխված կատարյալի հիմքը հանդիս է զայիս որպես դիմավոր ծն, ըստ որում երե կատարյալի հիմքը միավանկ է, բաղաձայնից առաջ կարող է ստանալ ե, իսկ ծայնավորից առաջ՝ և նախահավելվածը, օրինակ՝ անց. կատ. հիմք՝ սիրեաց, զիտ, անց, անց. կատ. եզակի 3-րդ դեմք՝ սիրեաց, զիտ կամ եզիտ, անց կամ էանց:

**§ 49.** Խոնարհման օրինակներ.

### 1. Ներգործածն խոնարհում

աղալ	գրել	անցանել	քողով
<b>Եզակի</b>			
1-ին դ. աղացի	գրեցի	անցի	քողի
2-րդ „ աղացեր	գրեցեր	անցեր	քողեր
3-րդ „ աղաց	գրեաց	անց, էանց	քող, երող

1-ին դ. աղացաք	գրեցաք	անցաք	քողաք
2-րդ „ աղացեք	գրեցեք	անցեք	քողեք
աղացիք	գրեցիք	անցիք	քողիք
3-րդ „ աղացին	գրեցին	անցին	քողին

### 2. Կրավորածն խոնարհում

հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջեռնուլ
<b>Եզակի</b>			
1-ին դ. հեռացայ	նայեցայ	ուսայ	ջեռայ
2-րդ „ հեռացար	նայեցար	ուսար	ջեռար
3-րդ „ հեռացաւ	նայեցաւ	ուսաւ	ջեռաւ

1-ին դ. հեռացաք	նայեցաք	ուսաք	ջեռաք
2-րդ „ հեռացայք	նայեցայք	ուսայք	ջեռայք
հեռացարուք	նայեցարուք	ուսարուք	ջեռարուք
3-րդ „ հեռացան	նայեցան	ուսան	ջեռան

### 3. Խառն խոնարհում

փախչել(իմ)		զարքնուլ	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
1-ին դ. փախեայ	փախեաք	զարքեայ	զարքեաք
2-րդ „ փախեար	փախեայք	զարքեար	զարքեայք
3-րդ „ փախեաւ	փախեան	զարքեաւ	զարքեան

**§ 50. Անցյալ կատարյալ ժամանակն իմաստով համապատասխանում է արդի հայերենի անցյալ կատարյալին, օրինակ՝ աղացի=աղացի:**

**Վարժություն 22. Խոնարհել անցյալ կատարյալ ժամանակով հետևյալ բայերը**

ա) որսալ, գողանալ, կարդալ, մոռանալ, բանալ. բ) սիրել, ասել, գտանել, առաքել, ածել. զ) խորհել(իմ), բազմել(իմ), աճկանել(իմ), բռչել(իմ), երկնչել(իմ). դ) կիզուլ, արգելուլ, հեծնուլ, ոստնուլ, լնուլ:

**Վարժություն 23. Թարգմանել որոշել անցյալ կատարյալ ժամանակով դրված բայերի դեմքն ու թիվը:**

Խաղացաք գնացաք յերկիրն Յունաց: Իբրև զաշս ի վեր երարձ՝ հայեցա լըն բազմաւորն, սկսաւ խօսել ընդ նմա: Մեծարեցաւ ի նմանէ բազում պատուվ: Թողեր, լքեր զմեծապատի շրեղաշուր ուսկիակուր զաքոռն քո հայրենի: Աղ և քացախ խառնեցին և արկին ի վերայ մարմնոյ: Փրկեցան սիրելիք քո: Ես բազում անզամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց: Զարքեաւ ի քնոյ իրմէ: Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց: Երկեա՞ր դու ի ծերունի հօրէ բունմէ: Սպանաւ ի զօրացն Յունաց: Անկան կործանեցան ապարանք նոցա: Ես եմ որ փախեայ այսօր ի պատերազմէն: Աքսորեաց զնոսա և լմկէց յաշխարիս օտարա: Ուստի՞ օճն՝ զոր սատանայ կոչէք իմացաւ զհանգամանս շարին: Ես զամնենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա և արգել զնա ի բազում բարկուրենէն: Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գելեցիկի:

ընդ նմա - նրա հետ

ի...հօրէ քումմէ - քո հորից

**Վարժություն 24. Կազմել 23-րդ վարժության բայերի անոյտշ դերբայը և անցյալ կատարյալի հիմքը:**

**Օրինակ՝ երարձ - անորոշ դերբայ՝ բառնալ, անց. կատարյալի իիմք՝ բարձ:**

**Վարժություն 25. 23-րդ վարժության ներգործական սեռի բայերը խոնարհել կրավորածն՝ պահպանելով դեմքն ու թիվը:**

**Վարժություն 26. Որոշել 23-րդ վարժության բայերի սեռը և խոնարհման ծևը:**

**Վարժություն 27. Թարգմանել գրաբար:**

**Քաջությամբ մարտնչեցին և հաղթեցին: Տիկը լցրեց ջրով: Գրավեցին և պերեցին Տիգրանակերտ քաղաքը: Սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրենությունը: Փրկեցիր մեզ մահից (ի մահուան): Թողեցիք հայրենի ջաղարը և փախսաք: Ինչո՞ւ (ընդէ՞ր) պատուեցիր քո հանդերձները: Գնացի և տեսա իմ սիրելիներին: Ուրացավ և ասաց: «չեմ ծանաչում նրան» (զնա): Արդարությամբ դատեց մեղավորներին: Ծնվեց նոր արքա:**

մարտնչել - մարտնչն(իմ)  
հաղթել - յաղթել

գրավել - առնուլ  
պատուել - պատառել

## ՄՇԱԿՔ ԱՅՋԻՌՅՆ

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա<sup>1</sup> հնձան և շինեաց աշտարակ, և ետ զնա ցմշակս<sup>2</sup> և զնաց ի տար աշխարի<sup>3</sup>: Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնով զպտուս նորա: Եւ կալեալ մշակացն<sup>4</sup> զծառայս նորա զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն բարկուծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. «Ժերսս ամաշեսցեն յորդոյ աստի իմնէ»<sup>5</sup>: Իսկ մշակըն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. «Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա և կալցուք զժառանգութիւն սորա»: Եւ առեալ համին զնա արտարյո քան զայզին<sup>6</sup> և սպանին: Արդ՝ յորժամ եկեսցէ<sup>7</sup> տէր այգույն, զի՞նչ արացէ<sup>8</sup> մշակացն այնոցիկ: Ասեն ցնա. «Զշարսն շարաւ կորուսցէ և զայզին տացէ<sup>9</sup> այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուս ի ժամու իւրեանց»:

(Մագրեւու, ԻԱ, 33-41)

<sup>1</sup> ի նմա - նրա մեջ

<sup>2</sup> նու ... ցմշակս - տվեց մշակներին

<sup>3</sup> ի տար աշխարի - օտար՝ հեռավոր երկիր

<sup>4</sup> կալեալ մշակացն - մշակները բռնելով

<sup>5</sup> ամաշեսցեն յորդոյ աստի իմնէ - ամաշեն իմ այս որդոյց

<sup>6</sup> կալցուք - տիրենք

<sup>7</sup> արտարյո քան զայզին - այգուց

<sup>8</sup> եկեսցէ - զսա

<sup>9</sup> արացէ - կանի

<sup>10</sup> տացէ - կտա

## ՀԱՅ ԽՆՆԵՐՈՒԹՅ

### ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻ

**§ 51. Երկրորդ ապառնու վերջավորություններն են՝**

<b>Ներգործածն</b>						<b>Կրավորածն</b>		<b>Խառն</b>		<b>Եզակի</b>	
<b>Եզակի</b>		<b>Նոգմակի</b>		<b>Եզակի</b>		<b>Նոգմակի</b>		<b>Նոգմակի</b>		<b>Եզակի</b>	
1-ին դ.	-ից	-ցուք	-այց	-ցուք	-եայց	-իցուք	1-ին դ.	հեռացայց	նայեցայց	ուսայց	ջնուայց
2-րդ „	-ցես	-ջիք	-ցիս	-ջիք	-իցես	-իջիք	2-րդ „	հեռասցիս	նայեսցիս	ուսցիս	ջնուցիս
3-րդ „	-ցէ	-ցեն	-ցի	-ցին	-իցէ	-իցեն	3-րդ „	հեռասցին	նայեսցին	ուսցին	ջնուցին

**§ 52. Ներգործածն և կրավորածն խոնարհումների դեպքում անցյալ կատարյալի հիմքի ց-ն վերջավորությունների ց և ջ հեշյուններից առաջ դառնում է ս, օրինակ՝ շարժեաց+ցես=շարժեսցես, շարժեաց+ջիք=շարժեսջիք։ Եթե կատարյալի հիմքի ց-ն արմատի կամ նրա տարրերակի հնչյուն է, չի դառնում ս, ինչպես՝ հարց+ցես=հարցցես, հարց+ջիք= հարցջիք։**

**§ 53. Խոնարհման օրինակներ.**

### **1. Ներգործածն խոնարհում**

աղալ	գրել	անցանել	բողով	Եզակի
1-ին դ.	աղացից	գրեցից	անցից	բողից
2-րդ „	աղացես	գրեսցես	անցցես	բողեսցես
3-րդ „	աղացէ	գրեսցէ	անցցէ	բողեսցէ
				<b>Նոգմակի</b>
1-ին դ.	աղացուք	գրեսցուք	անցցուք	բողուք
2-րդ „	աղասջիք	գրեսջիք	անցցջիք	բողեսջիք
3-րդ „	աղասցեն	գրեսցեն	անցցեն	բողեսցեն

### **2. Կրավորածն խոնարհում**

հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջնունով
---------	-----------	-------------	---------

1-ին դ.	հեռացայց	նայեցայց	ուսայց	ջնուայց
2-րդ „	հեռասցիս	նայեսցիս	ուսցիս	ջնուցիս
3-րդ „	հեռասցին	նայեսցին	ուսցին	ջնուցին

### **Նոգմակի**

### **3. Խառն խոնարհում**

#### **փախչել(իմ)**

#### **զարքնով**

Եզակի	Նոգմակի	Եզակի	Նոգմակի
1-ին դ. փախեայց	փախիցուք	զարքեայց	զարքիցուք
2-րդ „ փախիցես	փախիչիք	զարքիցես	զարքիչիք
3-րդ „ փախիցէ	փախիչից	զարքիցէ	զարքիչից

**§ 54. Ստորադասական եղանակի 2-րդ ապառնին իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղծական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնում, օրինակ՝ բողից=բողնեմ, կրողնեմ, պիտի բողնեմ։**

**Ծանոթություն.** Երկրորդ ապառնին կարող է թարգմանվել աշխարհաբար նաև սահմանական եղանակի ապառնի ժամանակով՝ մտից=մտնելու եմ։ Սահմանական ապառնու իմաստը, սակայն, գրաբարում մեծ մասնամբ արտահայտվում է ապառնի դերբայով և եմ օժանդակ բայօվ կազմված բաղադրյալ ժամանակով՝ գալոց եմ=զարլ եմ, դատելոց եմ=դատելու եմ։

**Վարժություն 28. Խոնարհել երկրորդ ապառնի ժամանակով հետևյալ բայերը՝**

ա) խաղալ, լալ, գոհանալ, զարմանալ, բ) վազել, ելանել, շարժել, հատանել, գ) հայել(իմ), նատել(իմ), սկսանել(իմ), մարտնչել(իմ). դ) զենուլ, հեղուլ, ընթեռնուլ, զբունուլ։

**Վարժություն 29. Թարգմանել, որոշել երկրորդ ապառնի ժամանակով դրվագը բայերի դեմքն ու թիվը։**

Եւ իջից անդր և խօսեցայց ընդ քեզ: Զենցես զխոյն և պքեալ զարիսն նորա հեղոցն շուրջ զւեղանովն: Խոցին բերանք այնոցիկ ոյք խօսէին զանիրատիրին: Եւ առցես յիւղոյ անտի օծման, և արկցես ի զլուխ նորա և օծցես զնա: Անոն քաջութեան յերկիր թողոցոր: Մարտիցուր իբրև զիսկայս և մի՛ կորիցուր իբրև տկարք: Տէ՛ր, լոյս իմ և կեանք իմ, ես յումնէ՞ երկեայց: Երէ քաղաքն այն շինեսցի և պարիսաք նորա կանգնեսցին, հարկս քեզ ոչ ոք տայ: Եւ հրապարակք քաղաքին լցցին պատանեկօր և աղջկամբք որ խաղայցեն ի հրապարակս նորա: Ելցեն այսուհետո գունքը ձեր տակ ընդ նմա պատերազմ: Ես արկից զրեզ ի տանջան: Երէ ես զրեզ յաղբահարեցից: Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն, և երէ դու ինձ յաղբեսցես՝ մեր կեանքս քեզ նուանեսցին: Գտչից զնոսա առ եզեր գնուոյն: Հրաման տուր նժոյգ մատուցանել, բռոյ հեծայց: Յարձակեսցուք ի վերայ թշնամեսցն: Եւ մտցուք ի քաղաքն և եցուք: Խզեսցուք զկապան նոցա, և ընկեսցուք ի մէնց զլուծ նոցա: Լսելով լուիջիք և մի՛ իմասչիք, և տեսանելով տեսչիք և մի՛ տեսչիք: Ոչ թողացուցից ձեզ, մինչև կատարեսչիք զամենայն կամս հրամանաց իմոց:

յումնէ՞ - ումի՞ց  
առ եզեր - եզերին, ափին

ի մէնջ - մեզնից  
լուիջիք - կլսեք

**Վարժություն 30.** 29-րդ վարժության քայերի 2-րդ ապառու ծները փոխարինել 1-ին ապառինով՝ պահպանելով դեմքն ու թիվը:

**Վարժություն 31.** 29-րդ վարժության կրավորածն խոնարինան Ելծորության քայերը խոնարինել ներգործածն:

**Վարժություն 32.** Թարգմանել գրաբար:

Ծրով և պատվով կմտնենք քաղաքը: Տրտուրյամբ կծնես որդիներ: Անրիվ զորքեր կոտարկեն ձեր աշխարհը: Ձեզ կինտրենք և կգտնենք: Ոչ որ չի զտնվի, որ փրկի մեզ: Ձեր անունները չեն մոռացվի: Գինով (զինեա) կլցնեք ձեր ամանները: Երբ (յորժամ) տեսմեն ձեզ, կվախենան և կփախչեն: Դանապարին (ի ճանապարհի) կմոլորքի և կկորչի: Չենք բռղնի, որ նրանք (նոքա) մոտենան մեզ (առ մեզ): Իմ կյանքը (զկեանս) այսի պատմեմ քեզ:

Ժնել - ծնանել(իմ)  
Քմտրել - խնդրել  
գտնել - գտանել

փախչել - փախչել(իմ)  
կորչել - կորնչել(իմ)  
մոտենալ - մերժենալ

## ՎԱՍՆ ԹՈՂԱՐՅ ԶԲԻՒԹԱՐՆ

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն քազաւորի<sup>1</sup>, որ կամեցաւ համար առնուլ<sup>2</sup> ի մէջ ծառայից իւրօց: Եւ իբրև սկսաւ առնուլ մատուցաւ<sup>3</sup> առ նա

պարտապան մի քեւր քանքարոյ: Իբրև ոչ ուներ հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա և զորդիս և զամենայն, որ զինչ և ունիցի, և հատուցանել: Եւ ամկեալ ծառայան երկիր պազաներ նմա և ասէր. «Երկայնամիտ լեր առ իս<sup>4</sup>, և զամենայն հատուցից քեզ»: Գրացեալ տէր ծառային այնորիկ՝ արծակեաց զնա և զփոխս եթող նմա: Եւ ելեալ ծառայան այնորիկ ի ծառայակցաց իւրօց, որ պարտէր նմա հարեւը դահենկան, և կալեալ զնա<sup>5</sup> խեղիք և ասէր. «Հատո՞<sup>6</sup> ինձ, զոր պարտիսայ»: Այդ ամկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. «Երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ»: Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ<sup>8</sup> արկ զնա ի բանտ, մինչ հատուցէ զպարտսն:

Իբրև տեսին ծառայակիցըն նորա, որ ինչ եղնն՝ տրտմեցան յոյժ և եկեալ ցուցին տեառն իւրեանց<sup>9</sup> զամենայն, որ ինչ եղննն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. «Ծառայ շար, զամենայն զպարուսն բողի քեզ, վասն զի աղանցեր զիս: Խսկ արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմնել<sup>10</sup> ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ»: Եւ բարկացեալ տէրն նորա մատնեաց զնա դահճաց, մինչև հատուցէ զամենայն զպարտսն:

(Մագրեւս, Ժ. 23-24)

<sup>1</sup> առն քազաւորի - քազավոր մարդու

<sup>6</sup> հատո՞ - հատուցի՞ր, վճարի՞ր

<sup>2</sup> համար առնուլ - հաշիվ տեսնել

<sup>7</sup> զոր պարտիսա - ինչ որ պարտը ես

<sup>3</sup> մատուցաւ - մօտ քերկեց, մոտեցավ

<sup>8</sup> չոգաւ - զնաց

<sup>4</sup> երկայնամիտ լեր առ իս - համբերող

<sup>9</sup> տեառն իւրեանց - իրենց տիրոց

<sup>5</sup> եղիք իմ նկատմամբ

<sup>10</sup> ո՞չ էր պարտ և քեզ ողորմնել - դու է չափի՞ խոճայիր

<sup>6</sup> կալեալ զնա - բռնելով նրան

## ԴԱՍ ՏԱՄՆԵՐՈՐԴ

### ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

(Հրամայական նորանակի ներկա)

§ 55. Բուն հրամայականն ունի միայն 2-րդ դեմք, եզակի և հոգնակի թիվ: Այս ժամանակի վերջավորություններն են՝

Ներգործածն

Կրավորածն

Խառն

Եզակի Ռոգմակի

Եզակի Ռոգմակի

Եզակի Ռոգմակի

2-րդ դ.

-էք

-իր -այր, -արուր

-իր -եայր, երուր

§ 56. Ներգործածն խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքը վերջավորություն շունի. անցյալ կատարյալի հիմքը շեշտված հանդես է գալիս որպես դիմավոր ծն, օրինակ՝ սպանանել, անց. կատ. հիմք՝ սպան, բռն հրամ. եզակի թիվ՝ սպան, հատանել - հատ, մտանել - մուտ, իջանել - էջ, քողով - քո՞ն, հեղով - հե՞ն և այլն:

Այս և եաց ածանցներով անցյալ կատարյալի հիմքի ց-ն եզակի թվի 2-րդ դեմքում ընկնում է, օրինակ՝ աղալ-աղաց-աղյա, ասել-ասաց-ասա՛, շարժեցարծեց-շարժեա՛: Եթե ց-ն արմատի կամ նրա տարբերակի հնչյուն է, չի ընկնում, օրինակ՝ բանալ-բա՛ց, լուով-լի՛ց, խոնով-խի՛ց և այլն:

§ 57. Կրավորածն խոնարհման դեպքում և և և և լծորդության պարզ քայերը եզակի թվում -իր վերջավորություն չեն ստանում. անցյալ կատարյալի հիմքը շեշտված հանդես է գալիս որպես դիմավոր ծն, օրինակ՝ սիրել-սիրեաց-սիրեա՛ց, խորիմ-խորիեաց-խորիեա՛ց, խոսիմ-խոսեաց-խոսեա՛ց, նստիմ-նիստ-նի՛ստ և այլն:

Ծանոթություն. Ի լծորդության պարզ քայերի կատարյալի հիմքի եաց ածանցի ց-ն եզակի թվում հաճախ կարող է ընկնել, օրինակ՝ համարիմ-համարեա՛ց կամ համարեա՛, ողորմիմ-ողորմեա՛ց կամ ողորմեա՛, խոսիմ-խոսեա՛ց կամ խօսեա՛, նայիմ-նայեա՛ց կամ նայեա՛ և այլն:

§ 58. Խոնարհման օրինակներ.

### 1. Ներգործածն խոնարհում

	աղալ	գրել	անցանել	քողով
	Եզակի			
2-րդ դ.	աղա՛	գրեա՛	անց	քո՞ն
	Հոգնակի			
2-րդ դ.	աղացէ՛ք	գրեցէ՛ք	անցէ՛ք	քողէ՛ք

### 2. Կրավորածն խոնարհում

	հեռանալ	նայել(իմ)	ուսանել(իմ)	ջեռնուլ
	Եզակի			
2-րդ դ.	հեռացի՛ք	նայեա՛ց	ուսի՛ք	ջեռի՛ք

2-րդ դ.	հեռացայիք հեռացարո՞ւք	նայեցայիք նայեցարո՞ւք	ուսացայիք ուսարո՞ւք	ջեռացայիք ջեռարո՞ւք
---------	--------------------------	--------------------------	------------------------	------------------------

### Հոգնակի

### 3. Խոնարհում

փախչել(իմ)	զարքնուլ
------------	----------

Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
2-րդ դ.	փախի՛ք	փախեա՛յք փախերո՞ւք	զարքի՛ք զարքերո՞ւք

§ 59. Բուն հրամայական խմասուվ համապատասխանում է արդի հայերնի նույն հրամայականին, օրինակ՝ գրեա՛=գրի՛ք, զարքի՛ք=զարքնի՛ք, զարքեա՛յք=զարքերո՞ւք=զարքնեցնե՞ք:

### Վարժություն 33. Խոնարհել բուն հրամայականով հետևյալ քայերը՝

ա) գրալ, որսալ, ստանալ, մերձննալ, խմանալ. թ) խնդրել, երգել, մտանել, սպանանել, հանել. զ) ողորմել(իմ), քազմել(իմ), փախչել(իմ), մարտնչել(իմ), կորնչել(իմ). դ) արգելով, առնով, գենով, ցանով, լուրենով:

### Վարժություն 34. Թարգմանել, փոխել բուն հրամայականով դրված քայերի թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակիմ՝ եզակի:

Օրինակ՝ էջ - իջէ՛ք, յիշեցէ՛ք - յիշեա՛:

Յիշեցէ՛ք զամենայն օրավարսն զառաջիմսն: Խից զականջու քո: Ընտրեա՛ դու քեզ արս օրաւարս: Զարքի՛ք, ընդէ՞ր ննջես: Է՞ջ ի տուն քո և լուացուս քո: Ողորմեա՛ց ինձ, ողբեակ իմ: Զգեա՛ զտուք քո և խոցեա՛ զիս դրվալ: Փշեցէ՛ք, ընկեցէ՛ք զաղեղունս ծեր: Վաճառեա՛ զինջ քո և տուր աղքատաց: Ա՞ռ դու ինձ սակաւ մի ջուր ամանով: Մուտ ի շտեմարան քո, փակեա՛ զդուրս քո, թաքի՛ք առ ժամանակ մի: Զաջաղեցարո՞ւք, սիրելիք իմ, զի ահա մոռացայք զվշտայի կեանսով: Խորիեա՛ց ընդ միտս քո թէ զինչ գործեսցես: Ա՞ռ երկան, աղա՛ աղեւր, ընկեա՛ զքուք քո... քա՛ց զարունս քո, ա՞նց ընդ գետս:

դովաւ - դրամով

ընդ միտս - մտքում

**Վարժություն 35.** 34-րդ վարժության բուն հրամայականով դրված բայերը փոխարինել արգելական հրամայականով՝ պահպանելով թիվը:

### Վարժություն 36. Թարգմանել գրաբար:

Խոսեցե՛ք, իմչո՞ւ” (զի՞) եք լուս: Պատվի՛ր քո հորն ու մորը: Սիրեցե՛ք ձեր հայրենիքը: Չորր ժողովի՛ր, գունդ կազմի՛ր, շարժվի՛ր գմա՛ Ըուշանների (Ըուշանաց) երկիրը: Բերե՛ք ոչխարը և մորթեցեր: Նստի՛ր և գրի՛ր նամակ: Սովորեցե՛ք նրանցից (ի նոցան) արդարություն և ճշմարտություն: Մոռացի՛ր իմ ասածները (զասացեալս): Թաքնվի՛ր, մինչև անցնի քո հոր բարկությունը: Անցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք երկիրը:

շարժվել - խաղալ  
մորթել - զենուլ  
նստել - նստել(իմ)

սովորել - ուսանել(իմ)  
թաքնվել - թաքնել(իմ)  
անցնել - անցանել

### ՎԱՍՆ ԶՏԱՂԱՆՏՄՆ ՏԱԼՈՅ

Այր մի զնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իր և ետ նոցա զինչս իր: Ումենմն ետ<sup>1</sup> իինգ քանքար, և ումենմ՝ երկուս, և ումենմ՝ մի, իրաքանչիր ըստ իրում կարի<sup>2</sup>, և զմաց: Չոզաւ վաղվաղակի որ առ զիննգն, գործեաց նորքը և շահեցաւ այլ և ս իինգ: Նոյնակու և որ գերկուսն՝ շահեցաւ այլ և ս երկուս: Եւ որ զմին առ՝ զմաց, փորեաց գերկիր և թաքոյց զարծար տեառն իրոյ: Ձես բազում ժամանակի զայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս<sup>3</sup> ի մէջ նոցա: Եւ մասուցեալ, որ զիննգ քանքարն առ՝ մատոյց այլ և ս իինգ քանքար և ասէ. «Տէ՛ր, իինգ քանքար ետուր ցիս<sup>4</sup>, արդ ահաւասիկ, իինգ այլ և ս քանքար ի վերայ շահեցայ»: Ասէ ցնա տէրն իր. «Ազնի<sup>5</sup>, ծառայ թարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես<sup>6</sup>, ի վերայ բազմաց կացուցից, զրեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քո»: Մատուցեալ և որոյ գերկուս քանքարսն առնալ էր<sup>8</sup>, և ասէ. «Տէ՛ր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս և ս այլ քանքարս, զոր ի վերայ շահեցայ»: Ասէ ցնա տէրն իր. «Ազնի, ծառայ թարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զրեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քո»: Մատուցեալ և որոյ զմի քանքարն առնալ էր, և ասէ. «Տէ՛ր, զիտէի, զի այր մի խիստ ես, հնծես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփուցեր: Երկեայ, զմացի և թաքուցի զքանքարն քո յերկրի. արդ ահաւասիկ քոյդ զրեզ»: Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. «Ծառայ շար և վատ, զիտէիր, եք հնծես՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովես՝ ուստի ոչ սփուցի. պարտ էք զեզ արկանել զարծարդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն: Արդ՝ առէ՛ք ի դման<sup>10</sup>

զքանքարդ և տո՛ք այնմ<sup>11</sup>, որ ունիցի զտասն քանքարն: Զի ամենայնի<sup>12</sup>, որ ունիցի՝ տացի և յաւեցի. և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ քարձցի ի նմանէ: Եւ գծառայդ անպիտան հանեք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրօնել ատամանց»:

(Մարդեւո, ԻԵ, 14-30)

- |   |   |
|---|---|
| <sup>1</sup> ումենն ես - մեկն տվեց              | <sup>7</sup> կացուցից - կրօնեմ, կնշանակեմ         |
| <sup>2</sup> իրաքանչիր ըստ իրում կարի -         | <sup>8</sup> որոյ ... առնալ էր - նա, որ առնել էր  |
| <sup>3</sup> յուրաքանչյուրին իր կարողության շափ | <sup>9</sup> ժողովես՝ ուստի ոչ սփուցեր - ժողովում |
| <sup>4</sup> առնէ համարս - հաշիվ է տեսնում      | <sup>10</sup> ես այնտեղից, ուր շցանեցիր           |
| <sup>5</sup> նորուր ցիս - տվեցիր ինձ            | <sup>11</sup> ի դմանէ - դրանից                    |
| <sup>6</sup> ազնի - շատ լավ, շատ ապրես          | <sup>12</sup> այնմ - նրան                         |
| <sup>7</sup> ի սակաւուդ հաւատարիմ ես -          | ամենայնի - ամեն մեկի                              |
| <sup>8</sup> զիշ քաների մեջ հավատարիմ ես        |   |

### ԴԱՍ ՏԱՄՆԱՑԿԵՐՈՐԴ

#### ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

##### (Հրամայական եղանակի ապառնի)

§ 60. Հորդորական հրամայականն ունի միայն 2-րդ դեմք, եզակի և հոգնակի թիվ: Այս ժամանակում ներգործածն և կրավորածն խոնարիկող քայերն ունեն եզակի -ջիր, հոգնակի -ջիր ընդիմանուր վերջավորությունները, իսկ խառն ծևով խոնարիկող քայերը՝ համապատասխանաբար -իջիր, -իջիր: -Ջիր, -ջիր վերջավորություններից առաջ անցյալ կատարյալի հիմքի ց-ն, եթե արմատի կամ նրա տարբերակի հնչյուն չէ, դառնում է ս, օրինակ՝ առաքեաց+ջիր=առաքեսցիր, բազմեաց+ջիր=բազմեսցիր, լից+ջիր=լցջիր:

§ 61. Խոնարիման օրինակներ.

աղալ	զրել	նայել(իմ)	բողով
		Եզակի	
2-րդ դ.	աղասացիր	զրեսացիր	նայեսացիր
		Հոգնակի	
2-րդ դ.	աղասացիք	զրեսացիք	նայեսացիք

Գալուստիկ		գարքնուլ		Առաջ ՈՐՈՇԱՆ
Եղակի	Հոգմակի	Եղակի	Հոգմակի	
2-րդ դ.	Գալուստիկի բարձրական	Գալուստիկի բարձրական	գարքնուլի բարձրական	գարքնուլի բարձրական
<b>§ 62. Հորդորական հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղծական, պայմանական, հարկադրական եղանակների ապահովում և բուն հրամայականին, օրինակ՝ գրեսից=գրես, կզրես, պիտի գրես, գրի:</b>				
<b>Վարժություն 37. Խոնարհել հորդորական հրամայականով հետևյալ բայերը</b>				
ա) գրալ, փութալ, մոռանալ. բ) սիրել, շարժել, տեսանել. գ) բազմել(իմ), բարչել(իմ), ուսանել(իմ). դ) կիզուլ, խնուլ, ոստնուլ:				
<b>Վարժություն 38. Թարգմանել, փոխել հորդորական հրամայականով դրված բայերի թիվը՝ եղակին դարձնելով հոգմակի, իսկ հոգմակին՝ եղակի:</b>				
Թաքիչիր և նստիչիր ի բարստեան: Եւ արդ գիտասչիք, եթէ սրով և սովով և մահուամբ սատակեսչիք: Մեծարեսչիր զնա պատուով ըստ առաջին կարգին: Սիրեսչիք զնահաղութիւն խնամագուր սիրովն: Թօրափեսչիք զփոշին յոտից ծերոց: Զծերն մի՛ պատուհասիցես, այլ միսիքարեսչիր ի իր զիայր: Ցատովք և տրտմութեամբ որդիս ծնչիր: Չամենայն ծառ զազնի կոտորեսչիք, և զամենայն աղբերս ջրոց խցչիք:				
<b>Վարժություն 39. 38-րդ վարժության հորդորականի հրամայականով դրված բայերը փոխարինել բուն հրամայականով՝ թիվը բողմելով նույնը:</b>				
<b>Վարժություն 40. Թարգմանել գրաբար:</b>				
Ծոտապի՛ր զալ ինձ մոտ (առ իս): Իմացած եղի՛ր, որ քեզ սիրում եմ: Կզրունես ծաղկապետ հովիտներում (ի հովիտս): Կկործանեք մեհյանները և կփշտեք կուռքերի (կոռց) արծանները: Զեր քաջությամբ պիտի հաղթեք նրանց (զնոսա): Պիտի դատվեք ծեր գործերի համեմատ (ըստ գործոց ծերոց): Կփախեք և կբաքնվեք անտառներում (յանտառս):				
շտապել - փութալ իմացած լինել - գիտել	գրունել - գրունուլ բարչել - բարչել(իմ)			

Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յազարակի իրում: Եւ ի քուն լինել մարդկան<sup>1</sup> եկն քշնամի նորա և ցանեաց ի վերայ որումն ի մեջ ցորենոյն և զնաց: Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուու, ապա երևեցաւ և որումնն: Մատուցեալ ծառայք տանուտեառն՛ ասեն ցնա. «Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յազարակին քում, արդ ուստի<sup>2</sup> ունիցի զորումնն»: Եւ նա ասէ ցնոսա. «Այր քշնամի արար զայն»: Ասեն ցնա ծառայքն. «Կամի՞ս զի երիցուք, քաղեսցուք զայն ի բաց»<sup>3</sup>: Եւ նա ասէ ցնոսա. «Մի<sup>4</sup>. գուցէ մինչ քաղիցէք զորումնն և զցորեանն ընի նմին<sup>5</sup> ի բաց խիցէք<sup>6</sup>: Թոյլ տուգ երկոցունց աճել ի միասին մինչն ի հունծու, և ի ժամանակի հնձոց ասացից ցինձողսն. քաղեցէք նախ զորումնդ, և կապեցէք զայդ ի խրծունս առ ի յայրել, և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ»:

(Մագրելու, ԺԳ, 24-30)

<sup>1</sup> ի քուն լինել մարդկան - երբ մարդիկ քնած էին

<sup>2</sup> ուստի - ո՞րտեղից

<sup>3</sup> քաղեսցուք ... ի բաց - քաղենք դեն զցենք

<sup>4</sup> մի - ոչ

<sup>5</sup> ընդ նմին - նրա հետ

<sup>6</sup> ի բաց խիցէք - դուրս հանեք. պոկեք

<sup>7</sup> երկոցունց - երկուսն էլ

<sup>8</sup> առ ի յայրել - այրելու համար

## ՎԱՍՆ ՏԱՄՆ ԿՈՒՄԱՆԱՑ

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ<sup>1</sup> զլապտերս իրեանց՝ եկն ընդ առաջ փեսային և հարսին: Հինգմ ի նոցան յիմարք էին, և հինգմ ի հմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և ծէր ընդ իրեանս ոչ բարձին: Իսկ իմաստունքն առին ծէր ամանովք ընդ լապտերս իրեանց: Եւ ի յամել փեսային<sup>2</sup>, նիրիեցին ամեներեան և ի քուն մտին:

Եւ ի մէջ զիշերի եղև բարբառ. «Ահա փեսայ զայ, արիք<sup>3</sup> ընդ առաջ նորա»: Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունքն. «Տուք մեզ յիսլոյդ ծերմէ, զի ահա շիշանին լապտերս մեր»: Պատախանի ետուն իմաստունքն և ասեն. «Գուցէ ոչ ի հետ մեզ և ծեզ բարեկան, այլ երբայք ի վաճառականս և զնեսչիք ծեզ»: Երբև նոքա գնացին գնել եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռն: Յետոյ զան և այլ կուսանքն և ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, բաց մեզ»: Նա պատախանի ետ և ասէ. «Ամէն<sup>4</sup> ասեմ ծեզ, թէ ոչ զիտեմ զնեզ: Արբո՞ւն կացէք, զի ոչ զիտեք զօրն և ոչ զժամն»:

(Մագրելու, ԽԵ, 1-13)

<sup>1</sup> որոց առեալ - որոնց վերցնելով

<sup>2</sup> ի յամել փեսային - երբ որ փեսան ուշացավ

<sup>3</sup> արիք - վեր կացեք

<sup>4</sup> ամէն - առույգ, ճիշտ, արդարն

## ԴԱՍ ՏԱՄՆԵՐԿՈՒԹԵՐՈՐԴ

### 1. ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

§ 63. Անցյալ դերբայի վերջավորությունն է -եալ, որը դրվում է հիմնականում անցյալ կատարյալի, մասսամբ էլ՝ ներկայի հիմքի վրա:

§ 64. Անցյալ կատարյալի հիմքից կազմվում է. ա) Ա լծորդության թե պարզ, թե ածանցավոր բայերի անցյալ դերբայը՝ աղաղ-աղաց-աղացեալ, գրալ-գրաց-գրացեալ, զարմանալ-զարմաց-զարմացեալ, լուանալ-լուաց-լուացեալ և այլն. բ) Ե լծորդության ածանցավոր բայերին՝ անցանել-անցանցեալ, գտանել-գիտ-գտեալ, հաստանել-հատ-հատեալ, տեսանել-տես-տեսեալ և այլն. գ) Ի լծորդության ամ ածանց ունեցող բայերինը՝ ծնանիմ-ծին-ծնեալ, անկանիմ-անկ-անկեալ, բուսանիմ-բուս-բուսեալ, մեռանիմ-մեռ-մեռեալ, ուսանիմ-ուս-ուսեալ և այլն. դ) ՈՒ լծորդության թե պարզ, թե ածանցավոր բայերին՝ արգելու-արգել-արգելեալ, թողով-թող-թողեալ, կիզով-կեզ-կիզեալ, հեծնով-հեծ-հեծեալ, լնով-լից-լցեալ և այլն:

§ 65. Թե՛ անցյալ կատարյալի և թե՛ ներկայի հիմքերից կազմվում է Ե և Ի լծորդության պարզ բայերի անցյալ դերբայը, ըստ որում Ե լծորդության բայերինը հիմնականում կազմվում է ներկայի հիմքից, իսկ Ի լծորդության բայերինը՝ հավասարապես թե՛ ներկայի, թե՛ անցյալ կատարյալի հիմքերից. օրինակ՝ հանել-հանեալ, ածել-ածեալ, սիրել-սիրեալ//սիրեցեալ, գործել-գործեալ//գործեցեալ, բազմիմ-բազմեալ//բազմեցեալ, խորիիմ-խորիեալ//խորիեցեալ, հայիմ-հայեալ//հայեցեալ և այլն:

§ 66. Ի լծորդության չ, մշ ածանցավոր և ՈՒ լծորդության նում-չիմ փոխանցումով բայերի անցյալ դերբայը կազմվում է այդ նույն բայերի պատճառականի անցյալ կատարյալի հիմքից, օրինակ՝ մատչիմ, տպատճառականի անց. կատ. հիմք՝ մատոյց, անց. դերբայ՝ մատուցեալ, մարտնչիմ-մարտոյց-մարտուցեալ, ցասնով-ցասոյց-ցասուցեալ և այլն:

Բացառություն է կազմում քաղցնով բայը, որի անցյալ դերբայն է՝ քաղցեալ:

### Վարժություն 41. Կազմել հետևյալ բայերի անցյալ դերբայը՝

ա) փութալ, սգալ, ստանալ, պանալ. բ) առաքել, զարդարել, արկանել, իջանել. գ) կամել(իմ), նստել(իմ), ուսանել(իմ), անանել(իմ). դ) գենով, հեղու, ընթեռնով, խնով:

### 2. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

§ 67. Ենթակայական դերբայի վերջավորությունն է ող (կամ՝ օղ<ատ>), որը դրվում է հիմնականում անցյալ կատարյալի, մասսամբ էլ՝ ներկայի հիմքի վրա:

§ 68. Անցյալ կատարյալի հիմքից կազմվում է Ա և ՈՒ լծորդության բայերի ենթակայական դերբայը. օրինակ՝ լալ-լացող, գնալ-գնացող, ցանկանալցանկացող, գենով-զենող, արգելու-արգելող և այլն:

Բացառություն Են կազմում որսալ, մուրալ, յուսալ, հոգալ բայերը, որոնց ենթակայական դերբայը կարող է կազմվել նաև ներկայի հիմքից՝ որսող, մուրող, յուսող, հոգող. սրանք սովորաբար գործածվում են իբրև գոյական:

§ 69. Որոշ բացառություններով ներկայի հիմքից կազմվում է Ե և Ի լծորդության պարզ բայերի ենթակայական դերբայը. օր.՝ զրկել-զրկող, գնել-գնող, յաղթել-յաղթող, ասել-ասացող (կամ՝ ասող), խօսիմ-խօսող, կամիմ-կամեցող (կամ՝ կամող) և այլն:

§ 70. Զուգահեռաբար թե՛ ներկայի, թե՛ անցյալ կատարյալի հիմքից կարող է կազմվել Ե և Ի լծորդության ամ ածանցավոր բայերի ենթակայական դերբայը. օրինակ՝ տեսանել-տեսող//տեսանող, սպանանել-սպանող//սպանանող, ծնանիմ-ծնող//ծնանող, ուսանիմ-ուսող//ուսանող և այլն:

§ 71. Ի լծորդության չ, մշ ածանցավոր և ՈՒ լծորդության նում-չիմ փոխանցումով բայերից ենթակայական դերբայ չի կազմվում:

### Վարժություն 42. Կազմել հետևյալ բայերի ենթակայական դերբայը՝

ա) խնդալ, բարկանալ, աղալ, ստանալ. բ) շիմել, հատանել, սիրել, հարցանել. գ) բազմել(իմ), շիջանել(իմ), հայել(իմ), պատերազմել(իմ). դ) առնով, ընթեռնով, հեղու:

### 2. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 72. Գրաբարում բայի ժխտական խոնարհման ծևերը կազմվում են ոչ ժխտականով և չ մասնիկով, օրինակ՝ Հաց ոչ ուտեն (Մարկ., Լ, 3)=Հաց չեն ուտում: Ոչ եթե չկարեմ առնել բարի ինչ, այլ չկամիմ (Եղմիկ, 2-րդ, Ը)=Ոչ թե բարի բան ստեղծել չեմ կարողանում, այլ չեմ կամենում:

Արգելական իրամայականը ստանում է մի՛ բառ-մասնիկը, որը ժխտական խմատով կարող է դրվել նաև ապառնի ժամանակների, երբեմն էլ անորոշ դերբայի վրա. օրինակ՝ Մի՛ երդուցու սուտ (Մատք., Ե, 33)=Սուտ չերդիւս: Չի մի՛ արհամարհենցէ զեղբարսն (Թոռն., Բ, էջ 432)=Որ չարհամարհի եղ-

բայրներին: Մի՛ հպարտանալ ի մեծութիւն սնուտի (Ա Տիմ., Զ, 17)=Չհպարտանալ (չախտի հպարտանալ) սնուտի մեծությամբ:

Ոչ ժխտականը և մի՛ արգելականը հաճախ բաժանվում են բայերից ուրիշ բառերով, օրինակ՝ Ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր (Եզնիկ, 1-ին, իԵ)=Երբեմն կնոջ կերպարանքով չեր երևա: Զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո (Մատք., Դ, 6-7)=Որ երբեր քո ուրքը շխփես քարի:

## ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Առն միոց էին երկու որդիք<sup>1</sup>: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. «Հա՛յր, տո՛ւ ինձ բաժին, որ անկանի յընչիցը»<sup>2</sup>: Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդույն՝<sup>3</sup> զնաց յաշխարի հեռի և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարիին յայնմիկ<sup>5</sup>, և սկսաւ ինքն չքատրել: Եւ զնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացոց<sup>6</sup> աշխարիին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս: Եւ ցանկայր լնով զորովայն իյր յեղցերեն, զոր խոզքն ուտեին, և ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր ասէ. «Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր ինոյ հացալիցք, և ես ասս սովամահ կորնչիմ: Յարուցեալ զնացից առ հայր իմ և ասացից ցնա. Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո<sup>8</sup>, և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց»: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռազոյն էր, ետես զնա հայրն և զքացաւ, յարեաւ<sup>9</sup> և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանցան նորա և համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո»: Ասէ հայրն ցծառայս իւր. «Վաղվաղակի հանե՛ք զպատուճանն առաջին և ազուցէ՛ նմա»<sup>10</sup>, և տո՛ւ<sup>11</sup> զմատանին ի ձեռս նորա և կօշիկս յոտս նորա: Եւ ածէ՛ք զեզն պարարակ, զենեք. կերիցուր և ուրախ լիցուր: Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց<sup>12</sup>, կորուսեալ էր և գտաւ»: Եւ սկսան ուրախ լինեն:

Եւ էրէց որդի նորա յագարակի<sup>13</sup>. և մինչդեռ զայր և մերձ եղև ի տունն, լուաւ<sup>14</sup> զծայն երգոց և զպարուց: Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցմ՝ հարցաներ, թէ զի՞նչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. «Զի երբայր քո եկեալ է, և եգեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա»: Բարկացաւ և ոչ կամէր մտանել, և հայրն եկեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ և ասէ ցհայրն. «Այս քանի՛ ամք են, զի ծառայեմ քեզ և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի»<sup>15</sup>. ուլ մի երբէք ոչ ետուր<sup>16</sup> ինձ, զի ուրախ եղէց<sup>17</sup> ընդ բարեկամս իմ: Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր<sup>18</sup> զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա<sup>19</sup> զեզն պարարակ»: Եւ ասէ ցնա. «Որդեակ, դու հանապազ ընդ իս<sup>20</sup> ես, և ամե-

նայն որ ինչ իմ է՝ քո է: Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի երբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»:

(Նուկաս, ԺԵ, 11-32)

<sup>1</sup> առն միոց էին երկու որդիք -

մի մարդ ուներ երկու որդի

<sup>2</sup> յընչից - քո ունեցվածքից

<sup>3</sup> յետ ոչ բազում աւուրց - ոչ շատ օրերից հետո

<sup>4</sup> ժողովեալ ... որդույն - որդին ժողովելով

<sup>5</sup> յաշխարիին յայնմիկ - այն աշխարիում

<sup>6</sup> յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացոց -

քաղաքացիներից մեկի մոտ մտավ

<sup>7</sup> եկեալ ի միտս իւր - խեթի զալով

<sup>8</sup> մեղայ յերկինս և առաջի քո -

մեղավոր եմ երկնքի և քո առջն

<sup>9</sup> յարեաւ - վեր կացավ

<sup>10</sup> ազուցէ՛ նմա - հազցրէ՛ նրան

<sup>11</sup> տո՛ւր - տվե՛ք (հազցրէ՛)

<sup>12</sup> եկեաց - կենդանացավ

<sup>13</sup> յազարակի - ազարակում

<sup>14</sup> լուաւ - լսեց

<sup>15</sup> զպատուիրանաւ քով ոչ անցի -

քո պատվերից դուրս չեկա

<sup>16</sup> ոչ ետուր - չտվեցիր

<sup>17</sup> եղէց - լինեմ

<sup>18</sup> եկեր - կերակ

<sup>19</sup> դմա - դրան, դրա համար

<sup>20</sup> ընդ իս - ինձ հետ

## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

### ՀԱՅ ՏԱՄՆԵՐԵԶԵՐՈՐԴ

#### ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 73. Գրաբարում հոլովկում են գոյական անունները, դերանունները, ածականները, թվականները, ինչպես նաև անորոշ, անցյալ և ենթակայական դերբայնները:

§ 74. Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական և գործիական: Ներգոյական հոլովի իմաստը դրսենում է տրական ու հայցական հոլովներով և ի նախորդու (տե՛ս § 90):

§ 75. Անունները հոլովկում են համապատասխան հոլովիններով, որոնք գործածկում են թեք հոլովներում և ցույց են տալիս հոլովումը: Գրաբարում հոլովինները իինզն են՝ ա, ե, ի, ո, ու:

## 1. ՊԱՐՉ ԵՎ ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 76. Գրաբարում անոները հոլովվում են մեկ կամ երկու հոլովիչով: Ըստ այդմ հոլովումը լինում է պարզ և խառն:

§ 77. Պարզ հոլովման դեպքում բառը եղակի և հոգնակի թվի բոլոր թեր հոլովերում ունենում է մեկ հոլովիչ: Գրաբարն ունի հինգ պարզ հոլովում՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ:

Խառն հոլովման դեպքում բառն ունենում է երկու հոլովիչ, որոնցից մեկը հանդես է գալիս եղակի սեռական, տրական և բացառական հոլովերում, իսկ մյուսը՝ եղակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեր հոլովերում:

Գրաբարն ունի երկու խառն հոլովում՝ Ի-Ա, Ո-Ա:

Այսպիսով, գրաբարում կա յոր հոլովում Ա, Ե, Ի, ՈՒ, Ի-Ա, Ո-Ա:

Գրաբարում, եթե հաշվի շառնենք մի քանի դեպքեր, ապա որոշակի կանոններ չկան իմանալու համար, թե որ բառը որ հոլովմանն է պատկանում: Դրա համար պետք է դիմել գրաբարի բառարաններին, որտեղ ամեն մի հոլովող անվան դիմաց միշտ տրվում են նրա եղակի և հոգնակի սեռական կամ եղակի սեռական և գործիական հոլովածները:

## 2. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՁԻՆ ԹԵԶՈՒՄ

§ 78. Անոները հոլովվում են կամ արտաքին, կամ ներքին թերմամբ:

Ծանոթություն. Արտաքին ու ներքին թերում անվանումներից բացի, գրաբարի դասագրերում գործածվում են այլ անվանումներ՝ ձայնավոր և բաղադայն, վերջադրական և ներդրական, հետմասնկավոր և միջմասնկավոր հոլովումներ:

Արտաքին թերման դեպքում հոլովիչը դրվում է բառի վերջում, օրինակ՝ ծայն -ի, գանձ -ու, արմատ -ոյ: Ներքին թերման դեպքում հոլովիչը դրվում է բառի վերջին բաղադայնից առաջ, օրինակ՝ գագարն - գագարան, աստ - աստեղ, հարսն - հարսին:

Ի, Ո, ՈՒ պարզ և Ո-Ա խառն հոլովումներն ունեն միայն արտաքին, Ե պարզ հոլովումը՝ միայն ներքին, իսկ Ա պարզ և Ի-Ա խառն հոլովումները՝ և արտաքին, և ներքին թերում:

## 3. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 79. Եղակի ուղղականը բառի ուղիղ, սկզբնական ձևն է, օրինակ՝ տիտան, սիրտ, արմատ, ծով, ծուկն, գառն, ոսկը, աստղ, նահանգ, պատանի:

§ 80. Հոգնակի ուղղականը կազմվում է եղակի ուղղականից՝ ք հոլովա-

կերտ մասնիկով, օրինակ՝ տիտանը, սիրտը, արմատը, ծովը, նահանգը, պատանիք:

Ներքին թերման ենթարկվող այն բառերը, որոնք վերջանում են (ը)ն, (ը)ր, (ը) բաղադայններով, հոգնակի ուղղականում այդ բաղադայններից առաջ ստանում են ու, ի, ե ձայնավորները, ըստ որում ն-ից առաջ՝ ու կամ ի, իսկ ր-ից և դ-ից առաջ՝ ե, օրինակ, ծուկն - ծկունք, գառն - գառինք, ոսկը - ոսկերք, աստղ - աստեղք:

Գրաբարում կան ք մասնիկով կազմված բառեր, որոնք համապատասխան եղակի ծև չունեն և կոչվում են անեղական անուններ, օրինակ՝ աշք, բարք, կառք, խելք, չարիք, զարմանք, Հայք, Վիրք, Ջուշանք և այլն: Անեղական բառերը հոլովվում են հոգնակի թվով և իմաստով ըմբռնվում են որպես եղակի կամ հոգնակի:

Ծանոթություն. Գրաբարում գործածվում են հոգնակիություն նշանակող այլ կարգի մասնիկներ, որոնք դրվելով մի շարք բառերի վրա, արտահայտում են հավաքական իմաստ:

Հավաքական-հոգնակերտ մասնիկներն են՝ ա) -ակամ զօրական (=զինվորներ), գուսանական, բ) -աճ ծիան, իշան կամ իշանք (=էշեր). գ) -աճի՛ աւագանի, երիցանի, ազատանի, նամականի, դ) -եաճ նախարարեան, բերդան, բրենան, մոգեան, խոգեան (=խոզեր), ե) -եար, -եր՝ վանեար//վաներ (=վանքեր), բանեար (=խոսքեր, բանավեճ), զ) -իկ՝ մարդիկ, է) -մեար՝ նաւկնեար (=նավակներ), բարձկնեար (=բարձիկներ), ը) -ուժի՝ ուկրոտի (=ուկորներ), փորոտի, թ) -որեայ, որայ՝ արտորեայ//արտորայ (=արտեր), վանորեայ//վանորայ (=վանքեր), ժ) -տի՝ մանկիտի (=մանուկներ):

§ 81. Եղակի հայցականը ծևով ննան է եղակի ուղղականին, իսկ հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականից՝ ք-ն փոխարինելով և հոլովակերտ մասնիկով, օրինակ՝ սիրտը - ծկունք, ծովը - ծուկն, աստեղը - աստեղք:

Որոշյալ առման դեպքում հայցական հոլովը սկզբից ստանում է զ նախողիք՝ գտղայ - գտղայս:

§ 82. Եղակի սեռականը կազմվում է եղակի ուղղականից:

Արտաքին թերման դեպքում եղակի սեռականը ստանում է ի, ու, ու ա հոլովիչները, ընդ որում ու ա հոլովիչների վրա ավելանում է նաև յ, օրինակ՝ սիրտ - սրտի, նահանգ - նահանգի, ծով - ծովի, արմատ - արմատոյ, պատանի - պատանոյ, տիտան - տիտանայ:

Ներքին թերման դեպքում եղակի սեռականը բառի վերջին բաղադայնից (ն, թ, յ) առաջ ստանում է ա, ի, ե հոլովիչները, ըստ որում ն-ից առաջ՝ ու կամ ի, իսկ ր-ից և դ-ից առաջ՝ ե, օրինակ, ծուկն - ծկանք, գառն - գառինք, ոսկը - ոսկերք, աստղ - աստեղ:

§ 83. Հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ ց հոլովակերա մասնիկով, որից առաջ բառավերջի յ-ն ընկնում է, օրինակ՝ սրտի-սրտից, ծովու-ծովուց, ձկան-ձկանց, ոսկեր-ոսկերց, արմատոյ-արմատոց, տիտանայ- տիտանաց:

Խառն հոլովումների դեպքում եզակի սեռականի ի և ո հոլովչները հոգնակի սեռականում փոխարինվում են ա հոլովչով՝ նահանգի - նահանգաց, գաղին- գաղանց, պատաճոյ - պատաճեաց:

§ 84. Եզակի տրականը հիմնականում կազմվում է եզակի սեռականի նման: Տարբերությունն այն է, որ Ո-Ա խառն հոլովման մի քանի քառեր եզակի տրականում ոյ վերջավորությունից բացի, ունենում են նաև ոյ վերջավորությունը, օրինակ՝ տեղույ կամ տեղուց, այգույ կամ այգուց: Բացի այդ, Ո հոլովման որոշ անուններ եզակի տրականում ստանում են ում հոլովակերա մասնիկը՝ հիմ-հնում, աջ-աջում, իմ-իմում, մի-միում և այլն:

§ 85. Հոգնակի տրականը ծնով նման է հոգնակի սեռականին:

§ 86. Բացառական հոլովը սկզբից ունենում է ստվորաբար ի նախողիր (այլն՝ զ, առ, ընդ, ըստ նախողիրներ), որը ծայնավորով սկսվող բառից առաջ դառնում է յ և զրվում բառին միացած:

Եզակի բացառականը կազմվում է եզակի տրականից: Արտաքին թեքման Ա, Ո և Ո-Ա հոլովումների դեպքում եզակի բացառականը կազմվում է եզակի տրականի վրա սկզբից ի նախողիր ավելանալով՝ տիտանայ-ի տիտանայ, արմատոյ-յարմատոյ, պատաճոյ-ի պատաճայ:

Մյուս հոլովումների դեպքում եզակի բացառականը սկզբից ունենում է ի նախողիրը, իսկ վերջից՝ է հոլովակերտ մասնիկը, ընդ որում է-ից առաջ ի և ո հոլովչները աղկում են՝ ձկան-ի ձկան, աստեղ-յաստեղ, սրտի-ի սրտ, նահանգ-ի նահանգ, ծովու-ի ծովէ:

Ու հոլովչը որոշ դեպքերում պահպանվում է՝ ի խրատուէ, ի զարդուէ:

Ծանոթություն. Եզակի տրականում ոյ-ով և ում-ով վերջացող բառերը եզակի բացառականում ստանում են է՝ տնդուց-ի տնդուցէ, աջում-յաջմէ:

§ 87. Հոգնակի բացառականը կազմվում է հոգնակի տրականի վրա սկզբից ի նախողիր ավելանալով՝ սրտից-ի սրտից, ծովուց-ի ծովուց, արմատոյ-յարմատոյ, տիտանաց-ի տիտանաց, ձկանց-ի ձկանց, աստեղց-յաստեղց, նահանգաց-ի նահանգաց, պատաճանաց-ի պատաճանաց:

§ 88. Եզակի գործիականը կազմվում է եզակի սեռականից՝ և, զ, ք հոլովակերտ մասնիկներով: Եզակի սեռականում ա և ո հոլովչներից հետո եղած յ ընկնում է:

ւ-ը որպիս է ա և ի հոլովչներից հետո՝ տիտանայ, սրտի, վ-ն՝ ո հոլովչից հետո՝ արմատով, բ-ն՝ ն, թ, ո բաղաձայններով վերջացող իմքի վրա, ընդ որում

բ-ից առաջ ն-ն դառնում է մ՝ ձկան-ձկանք, ոսկեր-ոսկերք, աստեղ-աստեղք:

Ու հոլովման դեպքում եզակի գործիականը որևէ հոլովակերտ մասնիկ չի ստանում. սեռ՝ ծովու, գործ՝ ծովու:

Խառն հոլովումների դեպքում ի և ո հոլովչները փոխարինվում են ա-ով՝ նահանգի-նահանգաւ, գաղին-գաղամք, պատաճոյ-պատաճեաւաւ:

§ 89. Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականից՝ ք հոլովակերտ մասնիկով՝ սրտի-սրտիք, արմատով-արմատովք, ծովու-ծովուք, ձկամք-ձկամքք, տիտանայ-տիտանայք(օք), աստեղք-աստեղքք, պատաճանայ-պատաճանայք(եօք):

§ 90. Եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է ի(յ) նախողով և եզակի տրականով՝ ի նահանգի=նահանգում, ի տան, ի ծովու, ի դստեր, յաստեն:

Արտաքին թեքման Ա, Ո և Ո-Ա հոլովման բառերի եզակի ներգոյականի իմաստը դրսնորվում է ի(յ) նախողով և եզակի անորոշ հայցականով՝ ի տիտանայ-տիտանի մեջ, ի գետ, ի փոշի:

Ծանոթություն. 1. Ո հոլովման մի շարք բառեր եզակի ներգոյականի իմաստն արտահայտելու համար ընդունում են ի հոլովչը՝ ի բղրի=բղրում, ի տղմի, յերազի:

Հոգնակի ներգոյականի իմաստն արտահայտվում է ի(յ) նախողով և հոգնակի անորոշ հայցականով՝ ի տունս=տներում, ի ծովս, յազարակս, ի պատաճնի:

Գրաբարում հատուկ անունների ներգոյականի իմաստը մեծ մասամբ դրսնորվում է ի(յ) նախողով և հայցական հոլովով՝ ի Տարօն, յԱրշակ, ի Ծոփի:

§ 91. Ներգոյականի իմաստն արտահայտող ի(յ) նախողով տրականը և հայցականը գրաբարի որոշ թերականներ համարել են առանձին հոլով՝ ներգոյական: Բացի ներգոյականից, գրաբարի հին թերականներից ունաց ընդունել են նաև պատմական, պարապական և կոչական հոլովներ, որոնք, սակայն, հոլովական հատուկ վերջավորություններ չունեն:

Պատմական հոլով էր համարվում բացառականի հետ զ նախողի գործածությունը, որն արտահայտում է շուրջ կապի իմաստը՝ զՄուշեղ=Մուշեղի մասին, զնոցանէ=նրանց մասին:

Պարապական հոլով էր համարվում գործիականի հետ զ նախողի գործածությունը, որն արտահայտում է շուրջ կապի իմաստը՝ զՄայիս=Մայիսի մասին, զպարսպատ(օք)=պարխապների շուրջը:

Կոչական հոլով էր համարվում ուղականի հետ ով միջարկության գործածությունը՝ ով կին, ով մարդիկ, ով փիլիսոփայք:

**Վարժություն 43.** Կազմել հետևյալ բառերի հոգնակի ուղղականն ու հայցականը:

ա) Արտաքին թերում՝ ամպ, ժամանակ, պատաճի, այծ, գերի, արքայ, զեն, ձայն, գետ, զարդ, սահման:

բ) Ներքին թերում՝ Ա հղովան - ատամն (ատամունք), շուրթն, ուսումն. Ե - դրաստր, տարր. անզ. Ի-Ա - անձն (անձինք), զառն, դաշն:

**Վարժություն 44.** Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգնակի սեռական ու տրականը:

ա) Արտաքին թերում Ա- Արշակ, Հայկ, Տիգրան (միայն եզակի). Ի- հաց, նետ, սիրտ. Ո- թռչուն, արծաթ, խոտ. ՈՒ- գանձ, կաքավ, առեւծ. Ի-Ա- ազարակ, հրաման, պատերազմ. Ո-Ա- պատանի (պատանոյ-պատանեաց), կենդանի, աղաւնի:

բ) Ներքին թերում Ա- ծովն, զագարն, հարցումն. Ե-աստղ, ուկը, վազը. Ի-Ա- մասն, հարսն, բեռն:

**Վարժություն 45.** Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգմակի բացառականը:

ա) Արտաքին թեզում՝ Ա-Վարդան, Երասխ, Սահակ (միայն եգալի). Ի-բախտ, խորշ, սրահ. Ո-արջառ, բոյս, հողմ. ՈՒ-դաս, ճակատ, հաւ. Ի-Ա-նախարար, զաւառ, քաղաք. Ո-Ա-քշնամի, զարի, բգենի:

բ) Ներքին թերում՝ Ա-քաջութիւն, արիւն, սկիզբն. Ե-ազդը, կոճի, եզր. Ի-Ազան, հարսն, մատն:

**Վարժություն 46.** Կազմել հետևյալ բառերի եզակի և հոգմակի գործիականը:

ա) Արտաքին թերում՝ Ա- Արամ, Վորամ, Անահիտ (միայն եզակի). Ի-փայտ, ծառայ, բազէ. Ո- գործ, ճաշ, սուր. ՈՒ- նախանձ, վրէժ, ուղտ. Ի-Ադաշտ, գազան, կտակ. Ո-Ա- ապակի, եղևնի, հայրենի:

բ) Ներքին թերում Ա- տուն, երդումն, քաջնորդիւն. Ե- համբ, ուստր, շիզը (=կոճակ, զարդ). Ի-Ա - ափն, եզն, ողն:

**Վարժություն 47.** Հետևյալ բառերը դնել տրական ու հայցական հոլովները և ի՞նչ ճախորով՝ եզակի և հոգնակի ներքոյականի նշանակությամբ:

ա) Արտաքին թերութ՝ ի- բանտ, ճառագայթ, որովայն. Ո- գետ, ջուր, գուր. ՈՒ- ծով, ցուլ, առաւօտ. Ի-Ա- գերեզման, ճանապարհ, աշտարակ. Ո-Ա- այգի (յագլոց), կղզի, գինի:

բ) Ներքին թերում Ա- շարժումն, կայծակն, եղեգն. Ե- վազը, արկդ, դրւառը Ի-Ա- մասն, անձն, դաշն:

### Կամու

Եթե գրաբարում գոյականն ունի նախադաս լրացում, նրա նախողին ները սովորաբար դրվում են վերջինիս վրա, օրինակ՝ Ատրուշան շինուին ի բազում տեղիս (Բուզ., 4-րդ, Ծթ): Թողայր գրադի և գրնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց (Փարպ., 1-ին, Է):

### Վարժություն 48. Թարգմանել, որոշել գոյական անունների հոլովն ու թիվը

Ամենայն գետը և վտակը ի ծով մտանեն, և ծով ոչ լնու: Որպէս երլը զի այրէ զանտառ, որպէս բոց որ կիզու զերինս: Զի ոչ երեք տեսար՝ թէ կովը էշն ծնան, և էշը՝ եզինս, և ոչ զայլ մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ աղիւը ծիս, և ոչ ծիք օսս: Հրամայէ զսահմանն զիտից և ազարակաց որոշել: Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնիք լինել բանիցն պատզամատրացն բազարին Պարսից Չապիոյ: Մի՞թէ քաղցեն ի վիշոց խաղող, կամ ի տատապէ բուզ: Հրաման տայր այնունեսն արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց և ի խառնադանց գաւառաց իշխանութեան իւրոց ժողովել մանկունս: Առաք հրեշտակս առ Արայն գերեցիկ՝ ընծայիք և պատարագօք, բազում աղազանօք և խոսումամբ պարզեւաց: Կերակրեցի զնոսա հազիւ և ջրով: Յաւանն և յագարակս շինէր եկեղեցիս: Յանդիման եղն բազարուին Խոսրովու յ՛Ուտի գաւառի, ի Խաղիսադ քաղաքի, ի ճմերոց արքայութեան Հայոց:

### ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԱՑՆ ՌԱՅՈՅ ԱՐԵՐԵԼՈՅ

Եւ յետ այսորիկ<sup>1</sup> եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զարդիսապ նորա. առին անտի զգաննու մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունյ<sup>2</sup> յերկրէն Պաղեստինացոց. և քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին: Եւ զամենայն շինուած քաղաքին հրծիգ արարին զիայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսապն ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հինունա ապականեցին, և ոչ բողին մի, և ոչ բողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և քափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին:

Առնուին և զՎարաշապատ քաղաք. քամուին բրկին զքաղաքն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ և քաղաքէ<sup>3</sup> ինն տասն երդս հա-

զար<sup>4</sup>: Ընդ ամենայն քաղաքն<sup>5</sup> ոչ բողին ամեննին շինած. զի զամենայն տապալէին, քակեալ քանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին. և զբերդս ամենայն բազաւրին Հայոց կալան<sup>6</sup>, և լցեալ բազում ամբարոք՝ բերդակալս թողուին: Առնուին և զմեծ քաղաքն զերուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին: Ապա առնուին և զքաղաքն Բագրևանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ուր հազար երդ Հրեայ. և զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին: Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատը՝ որ էր ի գաւառին յԱղոյիովտի, չորեթասան հազար<sup>7</sup> երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա ի հիմանց քանդեալ պապականէին: Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տողբայ. և հրծիգ արարեալ, քակեին զիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ուր և տասն հազար երդս Հրեայս:

### (Փաւարու Բուզանդ. 4-րդ, ԾԵ)

<sup>1</sup> յետ այսորիկ - սրանից հետո, այնուհետև

<sup>2</sup> ածեալն էր գերի Տիգրանայ արքայի

Արշակունյ - Արշակունի Տիգրան  
բազավորը գերի էր բերել

<sup>3</sup> խաղացուցանէին յայնմ և ս քաղաքէ -

այն քաղաքից էր գերի տարան

<sup>4</sup> փիս. իննետասն հազար երդս -

տասնինը հազար տուն

<sup>5</sup> ընդ ամենայն քաղաք -  
ամբողջ քաղաքում

<sup>6</sup> կալան - առան

<sup>7</sup> չորեթասան հազար - տասնչորս հազար

### 4. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎԱԾԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

§ 92. Գրաբարում կան բառեր, որոնց գուգահեռաբար հոլովվում են մեկից ավելի հոլովմամբ, օրինակ՝ գանձ-զանձու/զանձի, զանձից. խաղ-խաղոյ/խաղոյ, խաղով/խաղի, խաղից, կամ եզակիում հոլովվում են մի հոլովիչով, իսկ հոգնակիում՝ այլ հոլովիչով՝ քար-քարի, քարի/քարանց, քարամբք, կամ առանձին հոլովներում ունենում են տարբեր ձևեր՝ աղբիւր-աղբերք/աղբերա, աղբերքք/աղբերօք:

Կան բառեր էլ, որոնք հաճախ հոլովվում են այլ հոլովմամբ, երբ հանդես են զալիս որպէս բարդ կամ ածանցավոր բառերի վերջին բաղադրիչ, օրինակ՝ մէր-սիրոյ, քայց՝ մարդասէր-մարդասիրի, մարդասիրաց, գործ-գործոյ, քայց՝ անգործ-անգործի, անգործից, գէն-զինու, քայց՝ պատենազէն-պատենազինի, պատենազինաց և այլն:

Հոլովումների մեջ նկատվող այդ կարգի բնորոշ փոխանցումները ցոյց կտրվեն հոլովման համապատասխան բաժիններում:

§ 93. Գրաքարում կան գոյական և ածական անուններ, որոնք չեն հոլովում: Դրանցից են՝

ա) Իւն վերջածանցով կազմված ձայն նշանակող բառերը՝ գոշին, թնդին, դդրդին, հնչին, շառաչին և այլն:

բ) Կրկնակի փոքրացուցիչ իկ ածանց ունեցող բառերը՝ պատամեկիկ, նաւակիկ և այլն:

գ) Մի շարք այլ բառեր՝ արտօսր, ծունր, կազմ, հաճոյ, գոհ, ծիգ, դոյզ (=չնչին), հաշտ և այլն:

## ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆՑ

### ՆԱՍ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ

#### 1. ՊԱՐՉ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

#### Ա ԱՐՏԱՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 94. Հոլովման պատկերն է՝

	Եղակի	Նոգնակի
Ո. Տ.	տիտան	տիտանք
Հ.	(զ) տիտան	(զ) տիտանս
Ս. Տ.	տիտանայ	տիտանաց
Բ.	ի տիտանայ	ի տիտանաց
Գ.	տիտանաւ	տիտանաւ(օք)

§ 95. Այսպես հոլովվում են.

ա) Անհոգնական և անեղական հատուկ անունների մեծ մասը՝ Ադամ, Անահիտ (Անահտայ), Արամ, Արշակ, Բել, Երասխ, Երուանդ, Հայկ, Հոռվիմ, Մեսրոպ, Սահակ, Վարդան, Տիրան, Տրդատ, Ալանք, Զուշանք, Գուգարք, Ծոփք, Հոնք, Մարք, Սոկը, Վիրք (Վրաց), Տաշիրք և այլն:

Հոլովման օրինակներ.

Ո. Տ.	Տրդատ	Ալանք
Հ.	(զ)Տրդատ	(զ)Ալանք

Ս. Տ.	Տրդատայ	Ալանաց
Բ.	ի Տրդատայ	յԱլանաց
Գ.	Տրդատաւ	Ալանաւ(օք)

բ) Որոշ բացառություններով աս, էսս, էոս, իոս, իս, ոս հնչյունակապակցություններով վերջավորվող հատուկ անունները, որոնց աս, ոս, ս բաղադրիները թեր հոլովներում դրւու են ընկնում, իսկ է և ի ծայնավորները ա հոլովիչից առաջ վերածվում են ե-ի՝ Նուկաս-Դուկայ, Անդրեաս-Անդրեայ, Տիմոթեոս-Տիմոթեայ, Հերակլէս-Հերակլեայ, Տիբերիոս-Տիբերեայ, Արտեմիս-Արտեմեայ, Հոմերոս-Հոմերայ և այլն:

**Ծանոթություն.** Ոս-ով վերջավորվող մի քանի հատուկ անուններ սեռական և տրական հոլովներում ստանում են ես՝ Փաւտոս-Փաւտեայ, Կադմոս-Կադմեայ, իսկ էս-ով վերջավորվողները՝ այ՝ Վլրանէս-Վլրանայ:

զ) Ա-ով և իհ-ով վերջավորվող հատուկ անունները, որոնց սեռական և տրական հոլովները կազմվում են ուղղականին յ ավելանալով՝ Աննա-Աննայ, Յուլիա-Յուլյայ, Ասիա-Ասիայ, Մակեդոնիա-Մակեդոնիայ և այլն:

**Ծանոթություն.** Իհ-ով վերջավորվող մի քանի հատուկ անունների ի-ն թեր հոլովներում դառնում է է՝ Գալիխա-Գալիեայ, Կեսարիա-Կեսարեայ կամ Կեսարիայ, Սամարիա-Սամարեայ կամ Սամարիայ:

դ) Է-ով և իհ-ով վերջավորվող հատուկ անունները, որոնց է-ն և ի-ն ա հոլովիչից առաջ վերածվում են ե-ի՝ Հոհիփսիմէ-Հոհիփսիմեայ, Գայիհանէ-Գայիհանայ, Վահէ-Վահեայ, Եսայի-Եսայեայ և այլն:

**Վարժություն 49. Հոլովել Ա արտաքին հոլովմամբ հետևյալ բառերը՝**

Անակ, Պապ, Սաժակ, Վաղարշակ, Շամիրամ, Փառանձեմ, Ազրիպաս, Աքիլլէս, Եղիա, Հեղինէ, Մծրին, Միջագետք, Քուշանք:

**Վարժություն 50. Թարգմանեն որոշել Ա արտաքին հոլովման բառերի հոլովը:**

Աճապարէին հասանել ի քանակն Երուանդայ: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արծախայ...: Զիսաղաղորիին խնդրէր արքայն Ալանաց: Խսկ նախարարքն մեր խնդրէին ի Վլանայ այլ արռուակալ: Առաջ ի Հայու հանդերձ մեծաւն Վլրանա: Ի Վաղարշայ առնու զբագաւորութինն Խոսրով որդի նորա: Գայը հասանէր դեսպան ի քագաւորէն Վրաց Վախտանգայ: Տայ ի Ժառանգութիւն Կադմեայ՝ որդոյ Արամանեկայ: Խաղաք գմա՝ դու յերկիրն Քուշանք: Ինքն մնաց Ժամանակս ինչ յԱսիա:

## Վարժություն 51. Թարգմանել գրաբար:

Հղում են ողջովոյ Հայոց Վարդան սպարապետին: Շապուհ արքան կանչեց Արշակ արքային: Ստեպ-ստեպ պատգամավորներ էին զալիս Պատկողմից Հայաստան: Սահակի և Մեսրոպի հետ միասին (հանդերձ) շրջում է ավաններում և շեներում: Հրամայում է Ավաններին ավերել գեղեցիկ դաստակերտները: Գերիններին կրողնես Ծոփքում:

## ԳԱՐՈՒՆ

Օմենն էանց, անձեւք անցին և զնացեալ մեկնեցան: Շաղիկը երեւեցան յերկրի մերում. ժամանակ եհաս յատանելոյ<sup>1</sup>: ծայն տատրակի լսելի եղու՝ յերկրի մերում. թգենի արծակեաց զրողող իր. որքը մեր ծաղկեալը ետուն զիտսու իրեանց: Արի եկ, մերծատր իմ, գեղեցիկ իմ, աղաւնի իմ: ... Երևեցու ինձ գերեսն քո և լսելի արա ինձ զբարբառ քո. զի բարբառ քո քաղցը և և տեսլի քո գեղեցիկ:

(Երգ Երզոց, Բ, 11-14)

<sup>1</sup> յատանելոյ-էտելու  
<sup>2</sup> եղու-նղավ

<sup>3</sup> ետուն-ովին  
<sup>4</sup> երևեցուցոյց տուր

## ՈՐՈՉ ԱՂՋԱՏԻՆ

Արք երկու էին ի քաղաքի միում<sup>1</sup>, մին մեծատուն և միւսն աղքատ: Եւ մեծատան էին<sup>2</sup> հօտք և անդենայր քազում յոյժ, և աղքատին և ոչ ինչ, բայց որոց մի փոքր. և որոջն հաստատեալ էր ընդ նմա<sup>3</sup> և ընդ որդիս նորա ի միասին. ի հացէ նորա ուտէր և ի քածակէ նորա ըմպէր և ի ծոց նորա ննջէր, և էր նորա իբրև զդրւատր: Եւ եկն<sup>4</sup> անցաւոր առ այրն մեծատուն և խնայեաց մեծատունն առնուկ ի հօտից իրոց և յանդէոց իրոց. և էար զորոց աղքատին և արար<sup>5</sup> առնն եկելոյ<sup>6</sup> կերակուր:

(Բ Թագատրութեանց, ԺԲ, 1-4)

<sup>1</sup> արք երկու էին ի քաղաքի միում-մի քաղաքում երկու մարդ կային  
<sup>2</sup> մեծատան էին-հարսւոն ուներ ընդ նմա-նրա հետ

<sup>3</sup> եկն-եկավ  
<sup>4</sup> արար-պատրաստեց  
<sup>5</sup> առնն եկելոյ-եկած մարդու համար

## ՎԱՍՆ ՄՐՁԵՄՆ

Նմաննեցուր զոնէ մրջեանն, որ ամարայնոյ<sup>1</sup> պատրաստ աշխատութեամբ գիամբարս<sup>2</sup> մերայնոյ: Թէպէտ և ոչ է մօտ նեղութիւն մերայնոյ, ոչ

ծովանայ և ոչ հեղզայ ի պատշաճոց պիտոյիցն<sup>3</sup> ենդութեան ժամանակին. այլ մեծաւ փութով անդանդաղ տայ զանձն ի գործ և ի վաստակ<sup>4</sup>, մինչև ժողովեսց դից<sup>5</sup> համբարս ի շտեմարանս բաւական իւրոյ դարմանիցն: Եւ զկերակուրմ զոր ժողովէ, ոչ ծովութեամբ համբարէ, այլ իմաստուն և խորագէտ հնարիգ զարժան իրացն կատարէ<sup>6</sup>: Զհատ կամ զկրոյի իրիք յորժամ տանի ի ծակն, ընդ մէջ<sup>8</sup> կտրէ և դնէ, զի մի-բուսիցն ի հիւրոց խոնաւութենէ, և վրիպաւլ ելանիցն ի դերն<sup>9</sup> ի պիտոյից կերակրոց: Եւ դարձեալ եթէ խոնաւասիցն հատքն, հանէ առ եզերը մրջինոցին, արկան տարածոց<sup>10</sup> և ցամաքեցուան: Բայց ոչ եթէ հանապազ հանէ, այլ յորժամ զիտէ՛ թէ արևկայ և պարզ իցն (օրը) և ոչ անձըն:

(Քարսեղ Կեսարացի, Վասն վեցօրեայ արարչութեան. կըս Թոռն., Բ, էջ 86-87)

<sup>1</sup> անարայնմայն-ամառնը

<sup>6</sup> զարժան իրացն կատարէ-

<sup>2</sup> համբարս-պաշար, պարծմ

<sup>7</sup> արժանիք գործ է կատարամ

<sup>3</sup> ի պատշաճոց պիտոյիցն

<sup>8</sup> ի հիւրութեամբ համար.

<sup>4</sup> անհրաժշտ կարիքները հոգալու համար.

<sup>9</sup> ընդ մէջ-մեջունիցն

<sup>5</sup> տայ զանձն ի գործ և ի վաստակ-աշխատութեամբ

<sup>10</sup> մի... վրիպաւլ ելանիցն ի դերն-շիշանան դիցէ-դնի

<sup>6</sup> դիցէ-դնի

<sup>10</sup> արկան տարածոց-փոռմ է

## Ա ՆԵՐՁԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

### § 96. Հոլովման պատկերն է

Նկակի	Ռոգնակի
ՈՒ.	աղեղն
Հ.	(զ)աղեղն
U.S.	աղեղան
Բ.	յաղեղանէ
Գ.	աղեղամբ

Այս հոլովման ենթարկվող այն բառերը, որոնք վերջանում են (ը) մ.քաղածայնով, հոգնակի ուղղականում այդ բաղածայնից առաջ ստանում են ու ծայնավորը: Մի քանի բառեր ու-ի փոխարեն ստանում են ա ծայնավորը՝ ակն-ականք (գոհարեղենի իմաստով), կողմն-կողմանք, զերմն-զերմանք, սերմն-սերմանք (այլև սերմունք, սերմանիք): Հոգնակի ուղղականում ա ստանում նաև անոն բառը՝ անուանք:

§ 97. Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Առաջին նրան նախորդող որևէ այլ բաղաձայնով վերջացող բառերի մեջ մասը ակն (հոգն. ուղղ. ակունք=աղբյուրի ակ), այժեամն (այժեամն), ասելին, ատամն, բուրգն, զագաթն, դիակն, դուռն, եղեռն, երկն, թիթենն, կայծակն, հիմն, ծմեռն, ծուկն, ճպուռն, մուկն, նուռն, շուլքն, որդն, ունկն, ոռունքն, սերմն, սկիզբն, փայլակն, քիրտն և այլն:

**Ծանոթություն 1.** Մի քանի բառերի մեջ ո բաղաձայնը, Ա-ից հեռանալով դառնում է թա ամառն-ամարան-ամարունք, գրուն-դրան-դրունք, մատուն-մատրան-մատրունք, ծմեռն-ծմերան-ծմերունք, եղեռն-եղերան կամ եղեռան-եղերունք կամ եղերը:

**Ծանոթություն 2.** Ունկն բառը «ականջ» առումով գործածվելիս հոգնակի ուղղականում ունենում է ականջը ծևը, որը հոլովկում է հ-Ա արտաքին հոլովմանը (սեռ. տր. ականջաց, գործ. ականջարթօք), իսկ «կանք» առումով՝ ունկունք:

թ) Ումն ածանցով վերջացող բառերը՝ աղումն, դեգերումն, երդումն, խոստումն, շարժումն, ուսումն և այլն: Հոլովման օրինակ՝ հարցումն. սեռ. տր. հարցման, բաց. ի հարցմանէ, գործ.՝ հարցմանք, հոգն. ուղղ.՝ հարցմունք, սեռ. տր.՝ հարցմանց, բաց. ի հարցմանց, գործ.՝ հարցմանքք:

Ումն-ով վերջացող բառերի նմանակությամբ է հոլովկում նաև պաշտօն բառը. սեռ. տր.՝ պաշտաման, բաց. ի պաշտամանէ, գործ.՝ պաշտամանք, հոգն. ուղղ.՝ պաշտամանց, սեռ. տր.՝ պաշտամանց, բաց. ի պաշտամանց, գործ.՝ պաշտամանցք:

զ) Ուրիմ-ով և իմ-ով վերջացող բառերը՝ բազմուրիմ, գիտուրիմ, իմաստուրիմ, մեծուրիմ, անկիմ, կորիմ, մրջիմ, ծիմ, սիմ և այլն: Այս կարգի բառերի իւ երկբարբառը թեր հոլովմերում ա հոլովիչից առաջ դառնում է եւ, իսկ եւ-ն շեշտագրկվելով՝ եզակի բացառականում սովորաբար փոխվում է եկի: Հոլովման օրինակներ.

Եզակի	Ռոգմակի	Եզակի	Ռոգմակի	
Ու.	բաջուրիմ	բաջուրիմք	արին	արինք
Հ.	(զ)բաջուրիմն	(զ)բաջուրիմնս	(զ)արին	(զ)արիմն
Ս. Ս.	բաջուրեան	բաջուրեանց	արեան	արեանց
Բ.	ի բաջուրենէ	ի բաջուրեանց	յարենէ	յարեանց
Գ.	բաջուրեամք	բաջուրեամքք	արեամք	արեամքք

**Ուրիմ-ով և իմ-ով վերջացող բառերի նմանակությամբ են հոլովկում ունդ ուստ, ուղղ վերջածանցներով մի քանի բառեր՝ ծնունդ, ծննդեան, ի ծննդեն, ծննդեամք, հոգնակին սովորաբար ո հոլովիչով է՝ ծննդոց, ծննդովք (այլ.՝ ծննդեամքք). սերունդ, սերնդեան կամ սերնդոյ, սնունդ, սննդեան (այլ.՝ սննդի). փախուստ, փախստեան (այլ.՝ փախստի), փախստեամք, բարուստ,**

բարստեան (այլ.՝ բարստի), բարստեամք. գալուստ, գալստեան. կորուստ, կորստեան, ի կորստենէ, կորստեամք. ժողովուրդ, ժողովրդեան (այլ.՝ ժողովուրդի կամ ժողովրդեն), ի ժողովրդենէ, ժողովրդեամք կամ ժողովրդով, ժողովրդեանց կամ ժողովրդող. խորինուրդ, խորիրդեան (այլ.՝ խորիրդոյ), խորիրդեամք, ինչպես նաև հետևյալ բառերը՝ տեսիլ, տեսլեան, տեսլեամք, տեսիլք, տեսլեանց, տեսլեամքք (այլ.՝ տեսլիք, տեսլեաթօքօք), ամիս, ամսեան, սովորաբար լինում է ո հոլովիչով՝ ամսոյ, ամսոց. հանգիստ, հանգստեան (այլ.՝ հանգստի, հանգստից):

դ) Ուն-ով վերջացող մի քանի բառեր՝ տուն, տան, ի տանէ, տամք, տունք, տանց, ի տանց, տամքք, շուն, շան, ի շանէ, շամք, շունք, շանց, ի շանց, շամքք. ծեղուն (=առաստաղ), ծեղուան, ի ծեղուանէ, ծեղուամք, ծեղունք, ծեղուանց, ի ծեղուանց, ծեղուամքք, անուն, անուան, յանուանէ, անուամք, անուանք:

Այս բառերի նմանակությամբ հոլովկում են աշուն, գարուն և մահ բառերը՝ աշուն, գարնան, մահուան, ի մահուանէ, մահուամք, մահուանք կամ մահունք: *Սահ* բառը հոլովկում է նաև ու հոլովիչով՝ մահու, մահք, մահուց, մահուուր:

ե) Իկ-ով, ուկ-ով վերջացող մի շաբք բառեր՝ ծաղիկ, ծաղկան (այլ.՝ ծաղկի, ծաղկոյ), ի ծաղկանէ, ծաղկունք (այլ.՝ ծաղիկք), ծաղկանց (այլ.՝ ծաղկաց, ծաղկոց), աղջիկ, աղջկան, աղջկամք կամ աղջկաւ, աղջկունք, աղջկանց. անդրանիկ, անդրանկան (այլ.՝ անդրանկի), անդրանիկք, անդրանկաց. իսիկ, իսկան (այլ.՝ իսցի), իսկունք. շնիկ, շնկան, շնկունք. ընշիկ (=չնչին, աննշան ունեցվածք), ընշկան. փոքրիկ, փոքրկան, փոքրկունք, փոքրկանց. մանուկ, մանկան, մանկունք, մանկանց, հատուկ անուններից՝ Աստղիկ, Աստղկան. Յուսիկ, Յուսկան. Սարէնիկ, Սարինկան. Չուկան (Չուզկան) և այլն:

Մարդ բառը, որը պատկանում է Ո հոլովման, իկ մասնիկով գործածվելիս, հոլովկում է այս բառերի նմանակությամք՝ միայն եզակի ծնունդ մարդիկ, մարդկան, ի մարդկանէ, մարդկամք կամ մարդկաւ:

#### Վարժություն 52. Հոլովել Ա ներքին հոլովմամբ հետևյալ բառերը՝

արեգակն, բաղեղն, եղեգն (եղեգան), թէկն կամ թէկն (թիկան), որո՞նն, կընճո՞ն, սիսեռն (սիսուան), փայծաղն, սերնդեան, խոտուումն, կազմուրիմ, օրորիմին, սիմն:

Վարժություն 53. Թարգմանել որոշել Ա ներքին հոլովման բառերի հոլովն ու թիկը և կազմել դրանց եզակի և հոգնակի ուղղականը.

Օրինակ՝ մանկանց - հոգն. սեռ., եգ. ուղղ.՝ մանուկ, հոգն. ուղղ.՝ մանկունք: 61

Ոչ է բարոք առնուլ՝ գիաց մանկանց և արկանել շանց: Յանինայ կոտորելով՝ նախնիրս արեան գործէին: Առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորոց: Տապալեաց զլերին ի հիմանէ: Դիակամբք թշնամեաց լցին գդաշտն ամենայն: Քանզի մարդոյ մարմին ի չորից տարերց խառնեալ է, ի խոնաւորենէ, ի ցամաքութենէ, ի ցրտութենէ և ի ջերմութենէ: Չոքանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մեծաւ: Զնոյն շշնչին լսէին յամենայն շրանց: Պահանջմամբ Վրիժուցն զվնասն կարծէ: Այրէին կիզուին զտաւնս պաշտաման լրակի:

**Վարժություն 54. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխան հոյովով և բվով:**

Օրինակ՝ արեգակն-եզ. տր.՝ արեգական, տունք-հոգն. բաց.՝ ի տաճաց, կայ-ձակունք-հոգն. գործ՝ կայծակամբք, կողմանք - ի նախողով հոգն. հայց.՝ ի կողման հոգն. ներգոյականի նշանակությամբ:

Մատուցած երեխագութիւն (արեգակն): Սա շիմէ աւան մեծ զտեղի (ծնունդ) իւրոյ: Տիեզերք ամենայն զկնի (ուսմունք) նոցա զնային: Սա էր իշխան և իրամանատար ամենայն (տէրութիւն)-ն Պարսից: Մնուանի Արայ ի պատերազմին (մանկունք)-ն Չամիրամայ: Ամենայն քաղաքն երերէր (պաշարումն) շարժմանցն: Բարի է մարդոյ առնուլ զլուծ խոնարհութեան (մանկութիւն) իւրմէ: Մի՛ հանեք բերինս (տունք) ձերոց: Եփեաց (կայծակունք) նորա հաց և խորովեաց միս: Զականչն (ատամունք)-ն ի բաց կտրէր: (Երգումն) հաստատեմք այսօք առաջի քո: (Ըրտունք) երեսաց քոց կերիցես զիաց քո: Չոհեից գորդիս ծեր... (կողմանք) ծորոցն: Ոչ (անկիւն) ուրեք աշխարհի բարոցի: Տեսաներ (տեսիլ), զի այզի մի էր մեծ և վայելուց: Արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր (օտարութիւն):

**Վարժություն 55. Թարգմանել գրաբար:**

Տեսնում էինք, որ տանից ծուխ էր եմում: Ամբարտակը բոլոր կողմերից պատեշին կրով և խճով: Սուս երդումով և սնոտի խոստումով իր մոտ (առ ինքն) կանչեց հայոց նախարարներին: Աղեների լարերի ծայնից խլանում էին ականջները: Որսում էր ձկներ պղտոր ջրերում: Ծունը շան միս չի ուտի: Օրվա (աւոր) հացը քրտինքով ենք հայրայրում: Քաջությամբ կկռվենք ու կմեռնենք, բայց մեր հայրենիքը չենք տա թշնամիներին: Մեր էր կաքում նրա (նորա) շրունքներից: Արջը փորում էր մրջյունի բույնը, լեզվով (լեզուա) ժողովում և ուտում: Կաղնու (կաղնոյ) փայտից կշինես դրներ: Լուսինն է պատճառը արեգակի խավարման: Խարսխավոր սյուներով շիմում է եկեղեցի զմբերահարկ:

## ՎԱՍՆ ՎԱՐՉԿԱԾՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿԱՑՆ

Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն<sup>1</sup>, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել<sup>2</sup> մշակս յայզի իւր: Եւ արկ վարձս<sup>3</sup> մշակացն աւուրն դահեկան<sup>4</sup> և առաքեաց զնոսա յայզի իւր: Եւ ելեալ զերրորդ ժամուն<sup>5</sup> ետես այլս, զի կային դատարկը ի հրապարակս: Ասէ և ցնոսա. «Երթայր և դուք յայզի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց<sup>6</sup> ծեզ»: Գնացին և նորա: Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմետասաներորդ ժամու ելեալ եզիտ այլս, զի կային դատարկը. ասէ և ցնոսա. «Ընդէ՞ր կայր աստ զօրս ցերեկ<sup>8</sup> դատարկը»: Ասեն ցնա. «Չի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու»: Ասէ ցնոսա. «Երթայր և դուք յայզին, և որ ինչ արժան է՝ առնուցոյք»:

Եւ իբրև երեկոյ եղն, ասէ տէր այգույն ցգաւառապէտ իւր. «Կոչեա՝ զմշակս և տո՛ր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչև ցառազինսն»: Իբրև եկին ոքք զմետասաներորդ ժամուն<sup>9</sup>, առին մէն մի<sup>10</sup> դահեկան: Եկեալ և առաջինքն՝ համարեին, թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նորա: Իբրև առին, տրտնջէին զտանուտեառնէն<sup>11</sup> և ասէին, թէ «Դոքա յետինքը մի ժամ գործեցին, և հասարակորդս մեզ արարեր<sup>12</sup> զրյսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօք»: Նա պատասխանի եւս միում ի նոցանէ և ասէ. «Ընկե՛ր, չզրկեմ զրեզ, ո՞չ դահեկանի միոց սակ արկեր<sup>13</sup> ընդ իս: Ան զրյոյ և ե՛րք: Եթէ կամիմ յետնոցս տալ, որպէս և քեզ՝ երէ չիցէ՝ ինձ իշխանութիւն<sup>14</sup> յինսս առնել<sup>15</sup> զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առաստ եմ»: Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք յետինք: զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»:

(Մարգելու, Ի, 1-16)

<sup>1</sup> առն տանուտեառն-տանուտեր

մարդու, տանուտերի

<sup>2</sup> ի վարձու ունել-վարձելու

<sup>3</sup> արկ վարձս-վարձ նշանակեց

<sup>4</sup> աւուրն դահեկան-օրը մի դահեկան

<sup>5</sup> զերրորդ ժամուն-ժամը երեքի մոտ

<sup>6</sup> տաց-կտամ

<sup>7</sup> զմետասաներորդ ժամուն-ժամը տասնմեկի մոտ

<sup>8</sup> զօրս ցերեկ- այս օրը ցերեկով

<sup>9</sup> ոքք զմետասաներորդ ժամուն-ժամը,

որ ժամի տասնմեկի մոտերն էին զնացել

<sup>10</sup> մէն մի-ամեն մեկը մի, մի-մի

<sup>11</sup> զմանուտեառնէն-տանուտերից

<sup>12</sup> հասարակորդս... արարեր-

հավասարեցիք

<sup>13</sup> սակ արկեր-սակարկեցիր, զին դրեցիր

<sup>14</sup> եթէ չիցէ՝ ինձ իշխանութիւն-մի՞րն

ես իրավունք չունեմ

<sup>15</sup> յինսս առնել- տնեցածներս

(ունեցվածքս) անել (տնօրինել)

## ԱԱՍ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ

### Ե ՀՈԼՈՎՈՒՄ

#### § 98. Հոլովման պատկերն է՝

Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ո. Ի.	կայսր	կայսերք	արկղ
Հ.	(զ)կայսր	(զ) կայսերս	(զ)արկղ
Ս. Ս.	կայսեր	կայսերց	արկեղ
Բ.	ի կայսերէ	կայսերաց	արկեղաց
Գ.	կայսերը	ի կայսերաց	յարկեղէ
		կայսերք կամ կայսերաւք(օր)	յարկեղաց արկեղք կամ արկեղաւք(օր)

Ե հոլովման բառերը հոգնակի թեք հոլովմերում մեծ մասամբ զուգահեռաբար հոլովմում են ա հոլովչով, որը դրվում է Ե հոլովչով հոլովված եզակի ստական-տրականի վրա:

#### § 99. Այս հոլովման ենթարկվում են՝

ա) Այն բառերը, որոնք վերջանում են *բ-ով* կամ *դ-ով* և նրանց նախորդող որևէ այլ բաղաձայնով՝ ազդը, դրատը, եզր, լիտր (լտեր), ուկը, ուստը, վազը, տարը, տայքը կամ տագը, աստղ, անգը, կոճը, սկոտը (սկտեր) և այլն:

բ) *Իր(եր)-ով* վերջացող մի քանի բառեր՝ ալիր (ալեր), աղրիր (աղբեր), եղիր (եղեր), եղտիր (եղտեր=ծահիծ): Այս բառերը հանդիս են զայիս նաև հոլովական տարբեր ձևերով, օրինակ՝ *ալիր-սեռ*, *տր-* ալիրոյ, *աղբիր-գործ*, *աղբերաւ*, *հոգն*, *ուղր*, *աղրիրը*, *եղիրը-գործ*, *եղիրիի*, *հոգն*, *ուղր*, *եղիրովը*:

#### Վարժություն 56. Հոլովել Ե հոլովմամբ հետևյալ բառերը՝

համը, աղբիրը, եսոր (=տեղ), կողը (=ճյուղ), շիզը (=կոճակ, զարդ), կուպը, սիկը (=ծանրության չափ և դրամական միավոր)

Վարժություն 57. Թարգմանել որոշել Ե հոլովմամբ բառերի հոլովն ու թիւն՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակիմ՝ եզակի:

Զանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիւն յաւանի: Առե զուր ուրախութեամբ յաղբերացն: Ունեին զգէնսն պատրաստ, ի ծագելոյ առաւոտուն մինչև յելանել աստեղն: Մի՛ կասկածեր ի կայսերէ: Սկսանին փորձկանալ ստուերը տարերց երկրի: Իսկ մի ոմն ի գինուորացն մտեալ ենար վաղերք զգլուին Երուանդայ: Զդուստը քո մի՛ տացես ուստեր նորա: Տայր զափ արկեղացն: Չի ինաստութիւն երաց գբերան համերց: Երբակալ առնե զվատշուէրն յեզեր շամբին Կոզայովսի:

### Կ ա մ ո ն

Ի նախորդը, գործածվելով անորոշ դերբայի հայցական հոլովի հետ, արտահայտում է ժամանակի իմաստ, օրինակ՝ Իսկ ի լինել մարտին հարկանի օրն Արայի (Խոր., 1-ին, ԺԵ)=Իսկ մարտի ժամանակ Արայի զորք ջարդիւմ է:

#### Վարժություն 58. Թարգմանել զրաբար:

Կայսրի հարկահանները հասան Պարսկաստան: Առյուծը վազրից չի վախենում: Աղբյուրների ակունքները չեն փակի: Ուղտերով (ուղտուք) տանում էին զանձերով լի արկղեր: Դաշտը լի էր մարդկանց ոսկորներով: Արեգակի ծագիլու ժամանակ (ի ծագել արեգական) խավարում են աստղերը: Ծնողները ուրախանում են ուստրերի և դուստրերի պարկեշտ վարքով (վարուք): Անքադ դիակները անգդների կերակուր են լինում: Բնակվում են գետի (գետոյ) եղբրում:

Յաղագու<sup>1</sup> թէ որպէս զիփիրսն և զրաւիհայսն հարցեալ Շապիոյ<sup>2</sup> փորձէր զիրս Արշակայ, և տայր<sup>3</sup> զնա յԱնուշ բերդն...

1

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զիփիրսն և զաստեղագէտսն և զրաւիհայսն. խօսէր<sup>3</sup> ընդ նոսա և ասէր<sup>3</sup> եթէ «Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս: Եւ եղի ընդ նման ովստ խաղաղութեան, և երդուա ինձ յիւրեանց օրենս քրիստոնէութեանն ի զիսաւորութիւն այնմ<sup>5</sup>, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեւր բարիս խորիեցայ որպէս հայր որդույ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարույ<sup>6</sup> հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցուն եկեղեցոյն Տիսփոնի քաղաքի, և կարծեցի թէ նորա նենգութեամբ ինչ<sup>7</sup> ետուն<sup>8</sup> նմա զերդումն և ետուն ինձ ստել: Եւ պատուհանալ զնոսա որպէս զմահապարտս. իսկ ասաց ցիս 5-72

Մարի երեց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ տուաք<sup>9</sup> նմա զերդումն. քայց երեւ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ<sup>10</sup> զնա առ ոստ ծեր: Եւ եւ նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ եւբանասուն զնոսա ի մի գուր փողոտեն, և գուսումնակից նոցա հանել ընդ սուր: Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի լրայիք. և կայ ի զանձի իմում: Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ<sup>11</sup> և յիշեցի զի ասէր թէ մի սպանանէք զմեզ, այլ<sup>12</sup> ես գիտեմ զի նոյն աւետարանն ածէ<sup>13</sup> զԱրշակ արքայ ի ծունկս քո: Ահառասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն: Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ վետուն ընդ նմա ճակատս, և յարթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և եկեալ է եկեալ ուտիր իրովք: Բայց թէ զիտէի<sup>13</sup> թէ յայս ենտէ կայց յուխտին իմում և ի հնազանդութեան բարեաւ ուխտի, մեծապէս մեծարանօք արծակէի<sup>14</sup> զա խաղաղութեամբ յիւր աշխարհն»:

Իսկ քաղեայքն ետուն նմա պատախանի և ասեն<sup>15</sup>. «Թող մեզ այսօր, և վաղին պատախանի արասցուք քեզ»: Իսկ ի վաղի անդր՝ ժողովեցան եկին ամենայն քաղեայքն և աստեղագէտքն և ասեն<sup>15</sup> ցարքայ. «Այժմ զի եկեալ է առ քեզ քազաւոր Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ քեզ, կամ զի՞ն ճայն ածէ, կամ զի՞արդ ունի զանձն՝<sup>17</sup>»: Ասէ արքայն. «Երբէ զմի ի ծառայից իմոց համարի զինքն, հոր ոստից իմոց ջանայ լինել»: Ասեն նորա. «Առ<sup>18</sup> արա զոր ասեմք քեզ. պահես դու զնոսա աստեն. և առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր քերթել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեղինս երկուս, և կահոյր մի ջուր: Եւ հրաման տացես<sup>19</sup> հարկանել զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զծեռանէ արքային<sup>20</sup> Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ՝<sup>21</sup> ուր բնակ իսկ իցտ հողն<sup>22</sup>. և հարցցես ցնա բանս: Եւ դարձեալ առցես դու զծեռանէ նորա, և տարցես ի հայատակսն ի հարեալ հողոյն<sup>23</sup>. և լուիցես դու բանս ի նմանէ. և ապա գիտացես դու՝ երկ կա՞յ յուխտի քո և պահէ՝ զդաշինս քո թէ ոչ, յետ արծակելոյ քո զնա ի Հայ: Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, զիտասչիք՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ճայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն քշնամութիւն յուզէ»:

### (Փաւարոս Բուզանդ, 4-րդ, ԾԴ)

<sup>1</sup> կապի խնդիրք այնորիկ.

արտահայտված չէ՝ այս մասին

<sup>2</sup> սեռական հոլովկվ ենթակա՝ անցյալ դերքայի մոտ՝ հարցեալ Չափիոյ-Չապուիդ հարցներով

<sup>3</sup> անցյալ անկատարը անցյալ

<sup>12</sup> այլ. այստեղ՝ որովհետն

<sup>13</sup> անցյալ անկատարը ընծական պատանու իմաստով՝ իմանայի

<sup>14</sup> անցյալ անկատարը պայմանական պատանու իմաստով՝ կարծակէի

կատարյալի իմաստով՝ բանտարկեց

<sup>4</sup> եղի ընդ նմա-կապեցի

հաստատեցի նրա հետ

<sup>5</sup> յիրանց օրէնս քրիստոնէութեանն ի գլխաւորութիւն այն-իրենց քրիստոնեական

կրոնի գլխավոր սրբության վրա

<sup>6</sup> ընդ նախայիրը սեռ. հոլովի հետ

արտահայտում է փոխարեմ. դիմաց իմաստը բարմատար է, չի բարգմանվում

<sup>7</sup> ետուն-տվեցին

<sup>8</sup> տուր-տվեցինք

<sup>10</sup> ներկան ապանու իմաստով՝ կրերի

<sup>11</sup> ոչ եղեն ինձ-միարս եկան. իիշեցի

<sup>15</sup> ներկան անցյալ կատարյալի իմաստով՝ ասացին

<sup>16</sup> ի վաղի անդր-հաջորդ օրը

<sup>17</sup> զիա՞րդ ունի զանձն-ինչպես է պահում իրեն առ. այստեղ՝ դե, հապա

<sup>19</sup> տացես-կտաս

<sup>20</sup> առցես քեզէն զծեռանէ արքային-դրու ինքը կրոնս արքայի ծեռքից

<sup>21</sup> վիս. տեղի

<sup>22</sup> որ բնակ իսկ իցտ հողն-որ բուն իսկ հողն է

<sup>23</sup> ի հայատակսն ի հարեալ հողոյն-դեպի հայկական հողով ծածկված հատակը

### Ի ՀՈՂԵՎՈՒՄ

#### § 100. Հոլովման պատկերն է՝

##### Եզակի

ՈՒ.

ճառագայք

Հ.

(զ)ճառագայք

Ս. Ս.

ճառագայքի

Բ.

ի ճառագայքէ

Գ.

ճառագայքի

##### Շոգնակի

ճառագայքք

(զ)ճառագայքս

ճառագայքից

ի ճառագայքից

ճառագայքինք

#### § 101. Այս ձևով հոլովվում եմ՝

ա) Ծատ բառեր՝ աղտ, ատաղձ, բանտ, բառ, գայո (=ցեխ), դատ, երկիւլ, խրամատ, ծերայ, ծնօտ, կայձ, հանդէս (հանդիսի), ծայն, ճառ, նետ, ոստայն, սիրտ, վտանգ, տօն, փայտ, օծ և այլն: Անեզական բառերից՝ աղօքք, ասք, արևելք, արև մուտք, գահոյք (զահոյից), զնացք, կուրծք, հմայք, ցնորք և այլն:

բ) Որոշ բացառություններով այն բառերը, որոնք վերջում ունեն այ, աստ, եայ, եան, եստ, է, ոյ, ոյք արքայ, շղբայ, իմաստ, պաշտօնեայ (պաշտօնէի), վայրկեան (վայրկենի), գրվեստ, բազէ, մարգարէ, երեկոյ, սովորոյք (սովորութի) և այլն:

գ) Մի շարք հատուկ անուններ՝ Գրիգոր, Մաշտոց, Մատթեոս (Մատթէի), Սովուս (Սովսեսի կամ Մովսեսի), Ներսէս, Վաչէ և այլն: Անեզական հատուկ անուններից՝ Աղուանք, Կասպք, Պարս և այլն:

### Վարժություն 59. Հոլովել Ի հոլովմամբ հետևյալ քառերը՝

այժ, այտ, արօտ, քան, հաց, որովայն, վկայ, ծառայ, նպաստ, ահ, քաղց, ափսէ, մատեան (մատենի), փախստեայ (փախստէի), անէծք (անիծից), Արտաշէս (Արտաշիս):

### Վարժություն 60. Թարգմանել, որոշել Ի հոլովման քառերի հոլովն ու թիվը դրւու գրելով առանձին սյունակներում անհզական և անհզնական ամունները:

Ես գիտեմ գիպարտութիւն քո և զշարութիւն սրտի քո: Հայցէին և յարքայ մանկուն մատադու: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական: Կապէ զուս Արշակայ երկարեղէն շրբայիք: Հրամայէ դնել զնա ի վերնատանն ապարանից: Ամենայն ճանապարհ լի էր հանդերձիւ և կահիւ: Ոչ թէ յարևելից յարև մուտս զնան՝ այլ յարև մտից յարև ելս: Սա պատեաց պարսպաւ և զիզօր աւանն Վարդգչի: Զնշան տէրունական խաչին առնոյր և դիմէր ի դուռն մենին: Տեսանէր զուրբ եախսկոպսն Աղուանից: Առնոյր Մուրքք զբագալութիւնն յԱրտաշիւ: Ամենսին ոչ առնու յանձն լսել և հաւանել այսպիսի քանից: Յուղարկէ թագաւորապէս զքոյր իր Տիգրանուի մեծ ամբոխի, ի Հայա Նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլ նշանազրացն: Աճապարէր կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարան Վաշէի: Ապրեսիս որպէս զայծեամն ի հաղթից: Բորբոքեցէր առաւել քան զինոցն Բարելովնի: Պատշաճամբ իինզ՝ առանցիք և խորչիք ընդ կողմն հիւսիսոյ: Յայն մարտի թագում վիրատրք անկանէին: Յամենայն ատեանս յիշեցին զանուան նոցա: Ոչ տեսանեմք այնչափ մեծ աստղ յերկինս:

### Վարժություն 61. Կազմել զրաբար նախադասություններ պիտի քառի եզակի և հոգնակի հոլովածներով:

### Վարժություն 62. Թարգմանել զրաբար:

Գաղտնի խոսքերով գրգռում էին թագավորին: Արև մուտքից փշում էր մեղմ քամի: Հրամայեց կապէլ շրբաներով գերիներին: Բժշկեցին իիվանդներին պեսպես ախտերից: Ո՞վ եմ ես, որ լինեմ արքայի փեսա: Հափշտակում էին քրիստոնյաների ամբողջ ունեցվածքը (զամենայն ինչւ): Հայոց աշխարհի արևելյան կողմը տալիս է Պարսից արքային: Անից և երկյուղից կրուլանան նրանց (նոցա) սրտերը: Ընդունելով (ընկալեա) Հարելից Հայոց նշանագրերը ուրախանում են: Լուսու են Արտաշէսի մահվան բոքը: Քաղցով և ծեծով (զանի) տանջում էր պաշտոնյաներին:

Յաղագս թէ որպէս զդիւրսն և զբաւինայսն հարցեալ Շապիոյ փորձէր զմիւս Արշակայ, և տայր զնա յԱնուշ բերդն...

### 2

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քատէիցն, տաճիկ<sup>1</sup> ուղտուր արձակէ ի Հայս արս զիոնոյ և զջրոյ,<sup>2</sup> զի եկեսցեն բարձցեն նմա զգհմայս: Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ<sup>3</sup> յիեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զօրուն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողոյ բնակութեան<sup>4</sup> երկրին քողով: Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջն առեալ շրջէր շեմէին՝ թէ «Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զբուտը իմ ի կնուրին, և որդի ինձ առնել զքեզ. իսկ որո խստացար ընդ իս, և քով կամօք առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս»:

Աստ Արշակ արքայ, թէ «Մերայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քեն՝ պարզ կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիլուկս՝ ի քեն, և փախուցին ի քեն: Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածն զիս. և եկի աւասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ծեռս քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցտ: սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»:

Իսկ Շապուհ արքայ առեալ զծեռանել նորա, շրջէր ծեմելով, ի շրմես առեալ՝ զնա ածեր ի հայակողմն ի հողն հարեալ յատակն: Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զիայ հողն կոխէր, մեծամեծս զմբոստացեալ հպարտացեալ՝ այլ ծայն շրջէր<sup>10</sup>. սկսանէր խօսել և ասել. «Ի բաց կազ յինէն», ծառայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ թողից զքեզ<sup>12</sup> և որդուց քոց զվրէտ նախնեաց իմոց, և զմահն Արտևանայ արքայի: Զի այժմիկ ծեր ծառայից զմեր տերանց ծերոց զբարծ կալեալ է՝ քայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ<sup>14</sup> մեր առ մեզ եկեսց»:

Իսկ դարձեալ առնոյր զծեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարհէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկանէր<sup>15</sup> զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զզմամբ զասացեալ քանսն: Իսկ յորժամ առեալ զծեռանէ զնա տանել ի հայ հողն, և ս խստացոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ մեսանցամ<sup>16</sup> հանէր յայնն հողոյն, բանից յապաշխարութիւն դառնայր: Յայգու և<sup>17</sup> երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց՝ զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ քետնոյն յատակին՝ և կայր<sup>19</sup>, ի զջումն դառնայր:

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթիւնաց բագաւորին Պարսից, քանզի սովորութիւն էր Հայոց բագաւորին բազմական անդեն ընդ մին առ նմա ի նորին տախտին<sup>20</sup> արկանել բազմական<sup>21</sup>, օրէնք էին՝ զի բագաւորն Պարսից և բագաւորն Հայոց ի միում տախտի բազմին ի միում զահոյս: Իսկ այն օր նախ գտող բազմականացն բագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ լետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին<sup>23</sup>, որ զիայ հողն յատակն հարեալ էր: Նախ ամեներեան իբրև բազմացն յիլրաքանչիւր չափու<sup>24</sup>, յնտոյ ածէին բազմեցուուցանէին<sup>25</sup> զարքայն Արշակ: Արդ եկաց բազմեալ ուսուցեալ վայր մի<sup>26</sup> իսկ<sup>26</sup> յոտն եկաց<sup>27</sup>, ասէ ցրագաւորն Շապուհ. «Ի՞ն<sup>28</sup> այդ տեղի, որ դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, բող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քեն»:

Ապա տայր՝ հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շրթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռու նորա երկարս<sup>30</sup>, և խաղացուցանել զնա ի յԱնդմջն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչն անդեն մետցի...:

#### (Փաւսպոս Բուզանդ, 4-րդ, ԾԴ)

- <sup>1</sup> տաճեկ-արագավազ
- <sup>2</sup> զ նախդիր բացառական հոլովի հետ նպատակի իմաստով՝ հոդի և ջրի(համար)
- <sup>3</sup> Վերացականը քանձրացականի փոխարեն՝ բնական, բուն
- <sup>4</sup> ես ածել-բերել տվեց
- <sup>5</sup> ընդ նախդիրը հայցական հոդոյի հետ տեղի իմաստով՝ դակիճում
- <sup>6</sup> ի նախդիրը կրկնված է՝ փիս. ի վերայ պարսիկ հողոյն
- <sup>7</sup> ի թեն-ցեզնից
- <sup>8</sup> երկիրուկս արկանեկ-վախ ներշնչն
- <sup>9</sup> ի շմենս առեալ-անմեն միամիտ ծնանալով
- <sup>10</sup> ձայն շրջել-ձայն համեկ. խոսել
- <sup>11</sup> յինեն-ինձանից
- <sup>12</sup> հանգման անուղղակի խնդիր է, պետք է իներ տրական հոդովով, առանց գ-ի ձեր ծառայից զմեր տերան ձերոց գրաք կալեալ է-դուք՝ ծառաներո, մեր՝ ձեր տիերի բարձը (աստիճանը) գրավել եք
- <sup>14</sup> դ հողը ցուցական իմաստով՝ այդ տեղը

- <sup>15</sup> բուռն հարկանեկ-բռնել
- <sup>16</sup> հոմանիշ է դարձեալ մակրային
- <sup>17</sup> այստեղ՝ մինչն իմաստով
- <sup>18</sup> փորդ փորձեկ-հարցուուրդ անել
- <sup>19</sup> այստեղ՝ հենց որ կանգնում էր
- <sup>20</sup> անդըն ընդ նմին առ նմա ի նորին տախտին այստեղ, նրա հետ, նրա մոտ, նոյն բախտի վրա
- <sup>21</sup> բազմական արկանել-բազմելու տեղ պատրաստել
- <sup>22</sup> այստեղ՝ շարք իմաստով
- <sup>23</sup> այստեղ՝ անցյալ կատարյալի իմաստով
- <sup>24</sup> յիլրաքանչիւր չափու-յուրաքանչյուրն իր չափով, իր աստիճանով
- <sup>25</sup> եկաց բազմեալ ուսուցեալ վայր մի-մի պահ մնաց նստած ուսած-փքված
- <sup>26</sup> այստեղ՝ հետո՛իմաստով
- <sup>27</sup> յուն եկաց-ուորի կանգնեց
- <sup>28</sup> է օժանդակ բայր զեղչված է
- <sup>29</sup> դ-ն դիմորոշ հոդ է
- <sup>30</sup> այստեղ նշանակում է կապանը

## ԴԱՍ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՒՄ

### Ո ՀՈԼՈՎՈՒՄ

#### § 102. Հոլովման պատկերն է՝

	Եզակի	Նոգնակի
Ո.Ի.	արմատ	արմատք
Հ.	(զ)արմատ	(զ)արմատս
Ս.Ս.	արմատոյ	արմատոց
Բ.	յարմատոյ	յարմատոց
Գ.	արմատով	արմատովք

Ինչպես նշվել է (§ 90), Ո հոլովման բառերի եզակի և հոգնակի ներգոյականի իմաստը դրսն որպիս է ի(յ) նախդրով և անորոշ հայցականով: Եզակի ներգոյականի իմաստն արտահայտելիս որոշ բառեր վերջից ստանում են ի հոլովիչը՝ մարմնի-ի մարմնի, երազ-յերազի, ջրհոր-ի ջրհորի, տօթ-ի տօթի և այլն:

#### § 103. Այս հոլովմամբ հոլովկում եմ՝

ա) Չատ բառեր՝ ածուխ, աղիս, ամաց, անասուն, արծաք, բոյն (բունոյ), բոյս, բոց, գետին, գոմ, գոր, երգ, երկաք, էշ (իշոյ), բութք, բոչուն, բուք, ժողով, իտ, խոտ, ծառ, ծուխ, կշիռ, հողմ, ծոր, ծաշ, մոխիր, ներկ, ողբ, որս, պտուղ, ջուր (ջործ. ջրով կամ ջուրը, հոգն. սեռ. ջրոց կամ ջուրց), սեխ, սեր, սեղան, սողուն, սուզ, տապ, բուն և այլն: Անեզական բառերից՝ դժոխը, կուտք (կոռց), հունձք, տիք (=տարիք, հասակ) և այլն:

բ) Ցի-ով վերջավորվող բառերը՝ հելլենացի (հելլենացւոյ), հոլովմայեցի, քաղաքացի, երրայեցի, քաղդեացի, Կողբացի, Խորենացի և այլն:

գ) Ի-ով վերջավորվող մի քանի միավանկ և բազմավանկ բառեր՝ թի, ոի, ձի, ոզի, որդի, հոգի, ուսի:

Ծանոթություն. Բազմավանկ բառերի վերջին ի-ն ո հոլովիչից առաջ դառնում է՝ քաղաքացի-քաղաքացւոյ, որդի-որդոյ:

դ) Ուած ածանցով կազմված բառեր՝ հարուած, կալուած, շինուած, յօդուած և այլն:

ե) Սի շարք անհոգնական և անեզական հատուկ անուններ՝ Շապուհ (Շապիոյ), Սանատորուկ, Կարին, Տարօն, Հայր (Հայոց), Վայր, Տայր և այլն:

### Վարժություն 63. Հօլովել Ո հոլովմամբ հետևյալ բառերը՝

առող, մարմին, ամքար, բերան, արտ, գլուխ, հուր, զիտուն, պղինձ, ճիչ, դիպուած, սափոր, որդի, Փարանցի, պահք, Վուամշապոհ, Հայք:

Վարժություն 64. Թարգմանել, որոշել Ո հոլովման բառերի հոլովն ու թիվը՝ առանձնացնելով անեղական և անհոգնական անունները:

Քանզի ոգոյ և հողմոյ անուն եքրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է: Սրանչելի է և աշխարհին առատութեամբ ամենայն պտղոց: Մի՛ անսայք երազոց ծերոց զոր դուր տեսանեց: Զդրուս տաճարաց կոռոցն փակեցին: Եւ ի սրոյն բերանոյ ապրեցուցին, և զկապեալս արձակեցին, և ի գրոյ հանին: Չայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ: Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիլ: Ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով թէ թա և մարմնով և բուխ է գունով: Եւ էին աւուրց հնծոց ցորենոյ: Արտօսրալիր ողբովք ճառագրեամբ զբազում հարռածու: Գտանել զնոսա յամուրս աշխարհին Տայոց: Չատ յամառեաց այրն իջամնել ի ծիոյն: Եւ այն կամ ի շատ ուտելոյ և ըմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց: Ելանէ հրաման ի Շապիոյ: Վահեկանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ:

Վարժություն 65. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դմել՝ և ենթակետինը սեռական և տրակած, բ-ինը՝ բացառական, գ-ինը՝ գործիական հոլովներով, իսկ դ-ինը՝ կյ) նախողով հայցական հոլովով՝ ներգոյականի նշանակությամբ:

ա) Քանզի ընդիմակաց է (հուր) ջուր, և (լոյս) խաւար, և (ցուրտ) ջերմ: Այս են անուանը (որոյիք) նորա: Ոչ կամէին անսալ (խորհուրդը) իմոց: Անվեհեր բաջարար նման (թոշուն) յերիվարն հեծաներ:

բ) Առնուն շերմութիւն (տապ) արեգականն: Ուն քաջ (իմաստունը)-ն ասաց: Ծողովեաց երանասուն այր (ծերը): Եւ զիսոգէ ասեն՝ եթէ հեղձնու յանուշ (հուր):

գ) Կապեցին գրտսն և զծեռսն, և մնձաւ (ուժ) պրկեցին: Խոսէր համակ (ողոք), և աղաչէր զԱրշակ արքայ Հայոց: Սա շինէ զՄածաք ընդարձակացոյն և պայծառ (շինուածք): Միշիքարէր զհաւատացեալս յախտենական (լոյս):

դ) Ծողովեցէր եւդ (ամանք) ծեր: Որք ի նմանէ կերակրին և (ծոց) նորա հանգչին: Տեսանեի աչօք իմովք (երազ): Փայտս պահանգս դնէին (որմք)-ն:

Վարժություն 66. Թարգմանել զրարար:

Բեռնակիր անասուններով ջուր էին կրում ջրհորներից: Աղյուսները բրծե-

ցեք իրով: Գետերի ջրերը զնում են ծովերը: Չորացան պտղաբեր ծառերի արմատները: Սև է նրանց մարմնի մորքը: Ծառը պտուղից է ճանաչվում: Երբ ընից պիտի արքնանաս: Ծիչերով և ողբերով սգում էին հարազատներին: Կոտքեր էին կրում ոսկուց, արծարից, պղնձից և երկարից: Թարգնվեցին ծորերում, գոմերում և ջրհորներում: Մի՛ խմեք ջուր պղտոր գետից: Սափորի մեջ ջուր չկա (ոչ գոյ):

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զիարդ մեռաւ յերկրին Խուժաստանի յԱնդմշն բերդին ինքն ինքեամբ ձնոր, և Դրաստամատն էր պատճառը<sup>1</sup> մահուն:

1

Այլ յայնմ ժամանակի դեռ տակալին<sup>2</sup> ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս.<sup>3</sup> զի Արշակունին թագաւորն Քուշամաց, որ նստէր ի Բաղսի քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապիոյ և թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զգօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զորս միանգամ ածեալ էր զերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրն ծի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան, և զներքինին անզամ թագաւորին Հայոց Արշակայ տաներ ընդ ինքեան ի գործ պատերազմին:

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ,<sup>4</sup> ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատն: Իսկ իբրև եղն պատերազմ ընդ թագաւորին Քուշամաց և ընդ թագաւորն Պարսից, չարաչար տարածէին<sup>5</sup> զգօրսն Պարսից զօրքն Քուշամաց, և զբազում կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշամաց, և զբազում ծերբակալ արարին, և զկէս փախստական հալածական առնէին<sup>6</sup>: Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրամայ թագաւորին Հայոց և Արշակայ որդոյոց նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ զանծուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս<sup>6</sup>. սոյնավս և յերկրին Ծոփաց ի Բնաբեր բերդին զանձքն լեալ էին ընդ նովաւ,<sup>7</sup> և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն: Եւ քանզի այս գործակալութիւն և մարդաբետութիւն, որում հայրն կոչէին ներքինաց, գործ լեալ էր ի բնտ ծվամանակաց ի թագաւորութեանն Արշակունյոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ<sup>9</sup> տանն զերեալ տարեալ

Եր յերեխին Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

### (Փաւագուստ Բուզանդ, 5-րդ, է)

<sup>1</sup> զործածված է եզակի իմաստով  
<sup>2</sup> հոմանիք է դեռ մակրային  
<sup>3</sup> զայտո ժամանակաւ խաղաղացաւ  
 պատերազմ տալ Պարսից ընդ Հայու-այն  
 ժամանակ պարսիկները դադարեցրին  
 պատերազմները հայերի հետ  
<sup>4</sup> լինիք բայի անցյալ դերբայն է  
<sup>5</sup> անցյալ ամկատարը անցյալ կատարյալի

իմաստով՝ տարածեին-նեղցին,  
 հալածական առնեին-հալածեցին  
<sup>6</sup> որ ի կողման յայնս-որ գտնվում  
 էին այն կողմերում  
<sup>7</sup> ընդ նախողիքը գործիական հոլովի  
 հետ տակ, ենթարկվել իմաստով՝  
 նրա տնօրինության տակ էին  
<sup>8</sup> օժանդակ բայը (եր) գեղշված է  
 նախողիքը կրկնված է

### ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

#### § 104. Հոլովման պատկերն է՝

Եզակի	Ռոգնակի	Եզակի	Ռոգնակի
ՈՒ.	ծով	ծովք	խրատ
Հ.	(զ)ծով	(զ)ծովս	(զ)խրատ
Ս.Ս.	ծովու	ծովորց	խրատու
Բ.	ի ծովէ	ի ծովորց	ի խրատորց
Գ.	ծովու	ծովորց	խրատորց

Եզակի բացառականում է հոլովակերտից առաջ ու-ն սովորաբար սովոր է, իսկ որոշ բառերում կարող է պահպանվել կամ չպահպանվել՝ ի դասէ-ի դասութ, ի գանձէ-ի գանձութ:

#### § 105. Այս հոլովմանը հոլովվում են՝

ա) Մի շարք բառեր՝ առաօտ, արև, գանձ, դաս, գարդ, զեն (զինու), ժամ, ծով, ճակատ, նախանձ, շարաք, ուրբաք, պար, վրէժ և այլն: Անեզական բառից՝ բարը (բարուց), պարտք, վարք:

բ) Կենդանիների և բոչունների որոշ անուններ՝ աղուէս (աղուեսու), առեւծ, արջ, գրաստ, ինձ (ընձու), կաքաւ, կով, հաւ, որք (=հորք), ուլ, ուզտ, ցով և այլն:

գ) Մի շարք հատուկ անուններ՝ Արգար, Արքահամ, Խոսրով, Յոհան (Յոհանու), Յովհաննէս (Յովհաննու), Սոկրատէս (Սոկրատու), Յորդանան, Մարիամ (Մարիանու) և այլն:

ՈՒ հոլովման պատկանող ասր, ծաղր, մեղր բառերը, որոնք ունեն ներքին թերման որոշ առանձնահատկություններ, հանդես են զալիս հոլովական տարբեր ձևերով, օրինակ՝ ասր, սեռ՝ ասրոյ, ասրու, բաց՝ յասրոյ, գործ՝ աս-

րով, ասերք. ծաղր. սեռ՝ ծաղեր, ծաղրու, մեղր, սեռ՝ մեղեր, գործ՝ մեղեր, մեղրու: Այս բառերի հոգնակի հոլովածները գործածական չեն: Ուղիղ հոլովման պատկերն է՝ ասր, հայց. (զ)ասր, սեռ. տր. ասրու, բաց. յասրուէ, գործ. ասրու:

#### Վարժություն 67. Հոլովել ՈՒ հոլովմամբ հետևյալ բառերը՝

այօ, զահ, զգեստ, առիւծ, դար, սպաս, համբաւ, սակաւ, ծազ, քէն (քիմու), վարք, Յովսէփ:

#### Վարժություն 68. Թարգմանել, որոշել ՈՒ հոլովման բառերի հոլովմանը ու թիւ վր՝ եղանակն դարձնելով հոգնակի, իսկ հոգնակիմ՝ եզակի:

Մի՛ բանայցէք վաղվաղակի գրդունսն մինչև ի ծագել արևուն: Եւ զարդարեցի գրեգ զարդու: Չտեղի ճակատուն չինէ դաստակերտ: Եւ շրջէր ի մէջ առիծուց: Վարէ զիր իշխանութիւնն օրինօք մնգուց: Յերկիրն Սիւնեաց դասուց վանականաց լնոյր: Իսկ խոսրով առեալ ի գանձուցն, հանտ մասն Ծապինյոյ: Եւ ի քո խրատուկ աւելի և ս կորեաւ աշխարհն Հայոց: Ցլուք սպատակօք և զիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակի: Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ:

#### Վարժություն 69. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխան հոլովով ու թվով:

Ասա՛ դու մեզ զավատճառս (վնաս)-ն: Մեծի (ծաղր) արժանի է: Թեալւտ և բազում (գանձք) տէր են՝ աղքատ են ոգուվ: Զօր ծննդեան երանելոյն յիշէին յերկորդ (ժամ) աւուրն: Անկան (զօր) ծառայիցն Դարիք: Թուի՞ թէ (ծով) ելանից: Եւ սկսաւ կարդալ զնա (առաօտ) յորժամ ծագէր արեզակն: Լի էր (նախանձ) և (քէն): Կերայ զիաց իմ (մեղր) իմով: Յառաջ խաղային իրեանց (զէնք)-ն ծածուկ վառեալ: Ոչ է արժան զործել (շարաք):

#### Վարժություն 70. Թարգմանել զրաբար:

Ծովի ջրերը աղի են: Հարդ և խոտ էինք տալիս ուտտերին: Երկիրը լուսավորվում է արևի լույսով: Երգերով և պարերով կմտներ բաղաքը: Ֆուկի միս ուտել դարման է մարմնին: Հորդանանի կողմերում լսվում էր Հովհաննեսի ծայնը: Խոսրովի զանձերից տալիս էր իշխաններին և գրավարներին: Իբրև արծիվ խոյանում էր դեաի կաքավների երամը: Աղվեսը կուտի ագռավի ծագերը: Հիվանդներին կերակրում էինք մեղրով: Շատ կենդանիներ են ապրում (բնակին) ծովերում և գետերում:

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ գիարդ մեռաւ յերկրի Խուժատանի յԱնդմշն բերդին ինքն ինքեամբ ձեռօր, և Դրաստամատն էր պատճառը մահուն:

2

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատրարեցին Զուշանք զԾապուի արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջորին այնչափ կոռուաւ ևս ի վերայ Շապիոյ արքայի, և այլբեցոյ զնա ի մահուանէ. և բազում ի Զուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից<sup>1</sup> զգլուխ բերէր զառաջեաւ: Եւ զԾապուի թագաւորն Պարսից փրկէր ի նեղութեն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խոտն պատերազմին ի զօրաց անտի: Իսկ իրքն եղն յորժամ դարձաւ Շապուի թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներդինույն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուի թագաւորն Պարսից. «Խնդրեա՝ դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից»: Եւ ասէ Դրաստամատ ցրագաւորն. «Ինձ ի քեն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբանակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, իրքն ևս երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուման, և արկանել նմա բազմականս, և դմել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ»: Եւ ասէ թագաւորն Շապուի. «Խստ են խնդրուածքը, զոր խնդրեցերի<sup>2</sup>. զի յատուց ժամանակաց յորմէ<sup>3</sup> թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոր է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոր եղեալ է, բոլ թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զիակառակորդն, որ այնքան աշխատ արար զմեզ, և դու աւաղիկ զանձն ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ: Բայց զի վասն<sup>4</sup> քո մեծ վաստակը են առ իս, զոր ինչ խնդրեցերն երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրեալ կամ աշխարհս կամ զաւառս կամ զանձս: Բայց յորժամ դու զայր խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք<sup>5</sup> Արեաց թագաւորութեանս. երթ տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց»:

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեան, զի գնացեալ<sup>6</sup> երբից նա ի բերդն յԱնդմշն, և զիարու և կամք իցէ նո-

րա, զոր օրինակ և խնդրեացն՝ արասցէ կապեկոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս: Եւ չոզաւ<sup>7</sup> Դրաստամատն հանդերձ փշտիպանան և հրովարտական արքունի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ. և արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաքեաց ի ձեռակապացն և յոտիցն երկաքոց և յանրոց պարանոցն շղթայիցն սարեացն<sup>8</sup>. և լուաց զգլուխ նորա. և լոզացոյց զանձն նորա: Եւ ազոյց նմա պատմուման ազնի. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եղ<sup>9</sup> առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եղ առաջի նորա զինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և միսիքարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք:

Եւ ի ժամ աղանդեր նատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրզ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եղին դանակ նմա, որպէս զի հատոց և կերիցէ զիարդ և կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և միսիքարեր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և զինին եկն զակամք<sup>10</sup> նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. «Վա՝ ինձ Արշակայ. այս և այս, և յայս չափու և այս անցը անցին ընդ իս»<sup>11</sup>: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ որ ունէր ի ձեռինն, որով զմիրզն կամ զամիճն կամէր ուտել, եհար խրտի իրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն, հարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամուն յայնմ:

(Փաւսպոս Բուզանդ, 5-րդ, Է)

<sup>1</sup> նախորդ կրկնված է

<sup>2</sup> դ-ն դիմորոշ հող է

<sup>3</sup> նոգնակի հարաբերյալի մատ որ  
հարաբերականը եզակի թվով, որը  
զրաբարում տովորական է

<sup>4</sup> փիւ. վասն զի

<sup>5</sup> անցեալ լիցիս զօրինօք-թու օրենքից  
դորս եկած լինես. այսինքն՝ թու  
բացառություն լինես օրենքից

<sup>6</sup> նույնանձ է երթա թային

<sup>7</sup> չոզաւ- զնաց

<sup>8</sup> յանրոց պարանոցն շղթայիցն սարեացն-  
զիի օղակներից ու շղթաներից

<sup>9</sup> եղ-դրեց

<sup>10</sup> զինին զալ զակամք հարբել

<sup>11</sup> վա՝ ինձ Արշակայ. այս և այս, և յայս  
չափու և այս անցը անցին ընդ իս-վա՝ ինձ,  
Արշակիս. որուելից ուր ընկալ և ի նշ օրի հասա

## 2. ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

### ԴԱՍ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ

#### Ի-Ա ԱՐՏԱԶԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

##### § 106. Հոլովման պատկերն է՝

Եզակի	Դոգմակի	
ՈՒ.	աշխարհ	աշխարհը
Հ.	(զ)աշխարի	(զ)աշխարին
U.S.	աշխարհի	աշխարհաց
Բ.	յաշխարհէ	յաշխարհաց
Գ.	աշխարհաւ	աշխարհաւ(օր)

##### § 107. Այսպես հոլովվում են՝

ա) Բազմաթիվ բառեր՝ ազգ, ամ (=տարի), ամպրոպ, քևեռ, զազան, զաւոպ, գերեզման, զուսան, զաշտ, դեւ (դիվի), դպիր, ըմբիշ, իր, հրաման, ճանապարհ, ճախարար, ճահանճ, ոչխար, պատկեր, պարիսպ, պարտեզ (պարտիգի), սահման, վահան, վիշապ, փիղ և այլն: Անեզական բառերից՝ խելք, կառք, կեանք (կենաց), արտասուր (արտասուաց), աղաչանք, բաղծանք, յանցանք, զարմանք, հանգամանք, տառապանք և այլն:

բ) Որոշ բացառություններով այն բառերը, որոնք վերջում ունեն՝ ակ, ական, արան, եակ, իկ, իչ, որդ, ոց, ու, ուկ, պան, ստան, որ կամ ատոր, օրինակ՝ ազարակ, ամբարտակ, աշտանակ, բանակ, կտակ, շինական, զանձարան, դատարան, դայենակ (դայենի), սենեակ (սենենի), մրրիկ, բրիչ, գրիչ, որսորդ, փորոց, լեզու, մեղու, բազուկ (բազկի), գեղջուկ, պարտիզան, բուրաստան, գինուոր, սպասատոր, դատատոր և այլն:

#### Վարժություն 71. Հոլովել Ի-Ա արտաքին հոլովմամբ հետևյալ բառերը՝

աղքատ, գաւազան, վեմ (վիմի), աղաղակ, բաժակ, լծակ, փախստական, ժամանակ, յաղքանակ, պահարան, դրեակ (դրենի), կօշիկ, գործիչ (գործչի), երջերու, ստրուկ, պահապան, աղանդատոր, սպասատոր, աչք, կամք, անարզանք:

Վարժություն 72. Թարգմանել, որոշել Ի-Ա արտաքին հոլովման բառերի հոլովման բառերի հոլովմամբ անեզական բառերը՝ դիմացը նշելով նրանց ուղղական հոլովածերը:

Գինի սրակեն մեղրուանոցացն, զի պարսն որ ելանիցէ՝ վաղվաղակի անդ իշանիցէ: Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զիսօսս և զեզուս հայկական: Գովութեան արժանի է և մեծարանաց: Իջանէր յերիշարէն, հանեալ զուսերն իր յարծակէր ի վերայ փիղն: Բազումք ի օրականոցն ոչ կարէին հայատալ սուտ ուխտին Վասակայ: Հրապութեաց զմարդաբետն իջանէլ ի կառաց անտի և հեծանելի ի նժուզից: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն: Եւ շատ ցաւեցոյ զմէջք փափուկ օրիորդին: Յորժամ զամ արծակեմ ի կապանաց: Ապաշխարէր մեծաւ տառապանօր: Որք բազում թոշակօր և հեռուազնաց ճանապարհօր մաշէին զաւուրս իրեանց ի դպրոցս ասորի զիտութեան: Եւ զիր նենգաւոր խորհուրդն նամակաւ ծանուցանէր նմա: Աղաղակաւ արտասուօք զուածարն լնուին: Յամենայն քաղաքու և ի զաւուս՝ ուր և ընթեռնուին գիրամանս արքունի՝ խնդուրին և ուրախուրին լինէր: Հատին զգուխ սրբոյն սուսերաւ: Ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր:

#### Վարժություն 73. Թարգմանել գրաքար:

Պատերազմով կամենում էր զրավել քաղաքը: Հայոց քազավորներից ստացան զյուղեր, ազարակներ և զանձեր: Պարտեզի դուռը բաց է: Երգում էին հրապարակներում տավիղներով և քնարներով: Գնում էին քաղաքից քաղաք և զավառից զավառ և չեին զտնում իրենց (հիրեանց) սիրելիներին: Եվ այս է հրովարտակի պատճենը: Մեծ անարգանքով և տանջանքով նեղում էր հավատացյաներին: Քաջաքար հարձակեցին քաղաքների և բերդերի վրա (ի վերայ): Չենք կամենա ողբալ մեր ազգի թշվառությունը: Թոշունները սընկում են (սնանին) միջատներով: Պանդուխտ եմ ես օտար երկրում:

Յաղագս գօրավարին Մուշեղայ Հայոց, թէ որպէս անկատ<sup>1</sup> ի վերայ բանակին Շապիոյ բազատրին Պարսից և եհար զնա ի հարուածս անհնարինս<sup>2</sup>, մինչ զի միաձի Շապուհ ճողովարէր:

Ապա Մուշեղի որդի Վասակայ, ստրատելատն Հայոց Մեծաց ընտրեաց իր արս ընտիրս միամիտս<sup>3</sup> ազատս ազգայինս բառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնոսա ծիով և թոշակաւ և զինու. և առեալ զնոսա ընդ իր, երթալ նստել<sup>4</sup> ի սահմանս Աստրապատճացն և պահել<sup>5</sup> զաշխարհն Հայոց: Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ գօրովք իրովք, եկն եհաս յերկիրն Աստրապատականի. և Մերուժանմ առաջնորդ գնդին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն բազատրին ի Թարթէն բանակեալ էին:

Եւ հասաներ սպարապետն գօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ

բանակին քառասուն հազարաւ, և անդէն ծեռն ի գործ արարեալ<sup>6</sup> կոտորվէ:  
Ապա միաձի մազապար քազաւորն Պարսից Չապուի ճողովրեալ փախչէր. և  
զամենայն կարևան բանակին առ հասարակ ընդ սոր հանէր Մուշեղ հան-  
դերձ գօրօքն Հայոց: Զի քազում կոտորէին. և գրազում յաւագանոյն Պար-  
սից ծերբակալս առնէին, և առնուին զգանձս քազաւորին Պարսից յաւարի. և  
ըմբռնէին զտիկնաց տիկլին հանդերձ այլովք կանամքն: Եւ զամենայն մաշ-  
կաւարզան ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին  
արս իրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել գօրավարն Հայոց Մուշեղ, և լոռ  
խոտով, և տայր բերել առ Պապ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն ի-  
րոյ Վասակայ:

Բայց զկանայան Շապիոյ քազաւորին Պարսից ոչ ումեր<sup>7</sup> ինչ բոյլ տայր  
Մուշեղ գօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեր. այլ ժանաւարս տայր  
նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զիետ առն նո-  
ցա<sup>8</sup> Շապիոյ արքայի: Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ  
Շապուի քազաւորն Պարսից ողջս և անարատս: Իսկ քազաւորն Պարսից  
զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազա-  
տութիւնն, զի ոչ արար ինչ նմա յարազ կանանցն քշնամանս: Եւ էր ի ժամա-  
նակին յայնմիկ երիւարն Մուշեղի<sup>9</sup>, ծերմակ ծի մի. իսկ քազաւորն Պարսից  
Շապուի յորժամ առնոյր զինի ի մատունսն ըմապել<sup>10</sup>, յորժամ ուրախութեանն  
իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. «Ծերմակածին զինի արք-  
ցէ»: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ծերմակաւն. և ի ժամ ուրա-  
խութեանն իւրոյ դմէր զտաշտն առաջի իւր, և յիշէր եանապազ զնոյն քանս ա-  
սելով՝ թէ «Ծերմակածին զինի արքցէ»:

Այլ<sup>11</sup> Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անշափ առին զաւար ի բանակին  
Պարսից, և անշափ լցան զանձօր և ստացուածովք. և քազում աւարամասն  
Պապայ պահէին քազաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ քա-  
զաւորին Պապայ էին մնացեալ հանին աւարամասն և զօրավարացն Յունաց՝  
որ էին առ քազաւորին Հայոց. սոյնայս և ամենայն զօրացն տային բաշխել ի  
մեծամեծ աւարացն ածելոցն: Այլ<sup>12</sup> իրքն դարձան զօրքն Հայոց յաշխարհն  
իւրեանց, քազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ քազաւորին Պապայ  
զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէր արձակեաց զկանայս քազաւորին Պար-  
սից զքշնամոյն մերոյ և քազաւորին Հայոց Պապայ. վասն այսր իրաց<sup>13</sup> ոչ  
ինչ սակաւ լինէր քշնամուրեամք ընդ Մուշեղի մինչն ի քազում ժամանակս:

(Փառագրու Բուզանդ, 5-րդ, Բ)

այստեղ՝ հարծակվեց

80

<sup>6</sup> ծեռն ի գործ արարեալ-սկսեց

<sup>2</sup> նեար զնա ի հարուածս անհնարինս-  
տուկալի հարվածներով շարդ տվեց նրան  
<sup>3</sup> այստեղ՝ հավատարիմ  
<sup>4</sup> գործածված են դիմավոր քայի  
շշամակությամբ՝ գնաց. նստեց  
<sup>5</sup> հայցականով նպատակի պարագա-  
պակապանելու համար

<sup>7</sup> ումեր-որևէ մեկին  
<sup>8</sup> զիետ առն նոցա-իրենց ամուսնու նտնից  
<sup>9</sup> էր ... Մուշեղի-Մուշեղն ուներ  
<sup>10</sup> արքց-բող խմի  
<sup>11</sup> այստեղ՝ իսկ  
<sup>12</sup> այստեղ՝ բայց  
<sup>13</sup> վասն այսր իրաց-այս քանի պատճառով

## Ի-Ա ՆԵՐՁԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

### § 108. Հոլովման պատկերն է՝

Եզակի	Դոգնակի	Եզակի	Դոգնակի	
ՈՒ.	անձն	անձինք	բոռն	բոռունք
Հ.	(զ)անձն	(զ)անձինս	(զ)բոռն	(զ)բոռունս
Ս.Տ.	անձին	անձանց	բոռին	բոռանց
Բ.	յանձնէ	յանձանց	ի բոռնէ կամ	ի բոռանց
Գ.	անձամբ	անձամբք	բոռամբ	բոռամբք

Հոգնակի ուղղականը բառի վերջին քաղածայնից առաջ ստանում է ի կամ  
ու ծայնավորները՝ վերջավորվելով իմբ-ով կամ ունք-ով:

§ 109. Այս հոլովմամբ հոլովվում են Ա-ով և նախորդող որևէ այլ քաղածայ-  
նով վերջացող մի շարք բառեր՝ ազն. (=ցեղ, սերուն, հոգն. ուղդ, ազինք), ազն  
(=ազնվական, հոգն. ուղդ, ազունք), ափն (ափունք), բեռն (բեռինք), բուռն  
(բոռնք), գառն (գառինք), դաշն (դաշինք), եզն (եզինք), եղն (եղինք), հոգն.  
ուղդ, եղինք), լեառն (սեռ, տր., լերին, բաց, ի լեռնէ կամ ի լեառնէ, հոգն. ուղդ,  
լերինք), խաշն (խաշինք), կամն (կամունք), հարսն (հարսունք), մասն (մա-  
սունք), մատն (մատունք), ողն (ողունք), տոռն (պարան, լար, հոգն. ուղդ, տո-  
ռունք) և այլն:

Ծանոթություն 1. Հոգնակի ուղղականում իմբ-ով վերջացող մի քանի քա-  
ռունք բարդությունների մեջ վերջավորվում են ունք-ով, օրինակ, ազն-ազինք,  
բայց՝ դիմացն-դիմացունք. բեռն-բեռինք, բայց՝ մեծաբեռն-մեծաբեռունք և  
այլն:

Ծանոթություն 2. Զեռն և ուռն բառերը եզակի թվում հոլովվում են այս հո-  
լովմամբ, իսկ հոգնակիում՝ արտաքին բերման Ի-Ա և Ի հոլովմամբ՝ ծեռն. սեռ.  
տր.: ծեռին, բաց, ի ծեռանէ, գործ, ծեռամբ, հոգն. ուղդ, ծեռք, սեռ, տր., ծե-  
ռաց, բաց, ի ծեռաց, գործ, ծեռար(օք). ուռն, սեռ, տր., ոտին, բաց, յոտան,

գործ՝ ուսամբ, հոգմ. ուղղ.՝ ուղք, սեռ. տր.՝ ուժից, գործ՝ ուժից:

Քար քառ եղակի թվում հոլովում է Ի հոլովմամբ (սեռ. տր.՝ քարի, բաց. ի քար, գործ՝ քարի կամ քարամբ), իսկ հոգմակիում ունենում է այս հոլովման պատկանող բառերի նույն հոլովական ձևերը (ուղղ.՝ քարինք, սեռ. տր.՝ քարանց, բաց. ի քարանց, գործ՝ քարամբը):

#### Վարժություն 74. <ոլովել Ի-Ա ներքին հոլովմամբ հետևյալ բառերը՝

կարն, սառն, նեռն (նեռինք), առն (առինք=վայրի արու ոչխար), կառափն (կառափունք=զլուխ, գանգ), դիւցան, վեհանձն:

Վարժություն 75. Թարգմանել, որոշել Ի-Ա ներքին հոլովման բառերի իրությունը ու թիվը՝ եղակին դարձնելով հագնակի, իսկ հոգմակին՝ եղակի:

Թագաւորն տեսաներ գթաք ծեռինն որ գրէր: Մատամբը իրեանց վաստակեցին և կերակրեցան: Իջաներ Մովսէս ի լեռնէն Սինայ: Յարձակէին ի վերայ գառանցն: Յանձանց ինչ ունիցին զայնավիպ շարժմուն: Դնէին ի վերայ ողինն Յոհաննու: Հրային մասամբ քեռուցանէ զամենայն գոյացեալս: Եւ նա գնաց զինի նորա... իրու զշուն տոռամբ: Փոշոտեցան և ծխուեցան սրահակը և սրսկապանք նորեկ հարսանք:

Վարժություն 76. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դմեկ համապատասխան հոլովով ու թվով:

Արշակ տիրէ երրորդ (մասն) աշխարհին: Ոյ եղեր զանձն քո ի վերայ (խաչինք) բոց: Իջեալ էին յամրոցացն (լեառն)-ն Պարխարայ: Ես փրկեցի զքեզ (ծեռք) Սաւուղայ: Յորժամ (քարինք) որ շինուածն առնիցտ: (Գառինք)-ն լինելոց են զայլք: Մի՛ որ իշխանութիւն (բռն): Ալոնյոր Դաւիթ զքնարն և նուագէր (ծեռն) իրով: Արքի զիննի իմ (կարն) իմով: Ետես մեծն Սահակ զայս ամենայն շարիս (մասն)-ն Պարսից: Ո՞չ բողոքու... զոշխարն (իրինք):

Եղեր-դրեցիր

արքի-խմեցի

#### Վարժություն 77. Թարգմանել զրաքար:

Կոփածո քարերով շինում էին տներ: Կալերում կալսում էին ցորենը կամով: Որդիներով և բոռներով գալիս հասնում է Հայաստան: Նավը քեռներից ծանրացավ և խորտակվեց: Երդվում է, որ այլևս չի խախտի դաշինքը: Կարից պանիր է լինում: Գառների և ոչխարների բուրյը լվանում էինք գետում: Եզի լուծը ծանր է: Ծրջում էին լեռներում և չին կարողանում մտնել շեները:

կալսեկ-կասու

լիմեկ-լիմեկ(իթ)

Յաղագս թագաւորին Պապայ, թէ որպէս խոտորեցաւ<sup>1</sup> ի թագաւորէն Յունաց, և կամ որպէս սպանաւ ի զօրացն Յունաց:

Եւ շրջեաց<sup>2</sup> զմիտս իր թագաւորն Պապ և խոտորեաց զսիրտ իր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զեր իր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկուն իր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղացս միաբանութեան: Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ «Կեսարիաւ հետ» և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տոր<sup>3</sup>: և զլուհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանձար ինչ առնել<sup>4</sup>, տոր ի բաց. ապա թէ ոչ, կոռիխմբ մեծաւ պատերազմաւ: Այլ Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եղին ի մտի<sup>5</sup> արքային, զի մի քակեսց զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց գրշնամութիւն իր՝ զոր ուներ ընդ թագաւորին Յունաց:

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակախն էին յերկրինն Հայոց. և անոն իշխանացն միումն Տէրէնտ, միւսումն Աղէ: Եւ յդեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իրոց՝ որ էին յերկրինն Հայոց, և հրաման տայր սպանանել գրագաւորն Հայոց զՊապ: Եւ եղին իրու ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել գրագաւորն Հայոց զՊապ: Եւ եղին ի դիպան ժամանակի իրու զիտացին Տէրէնդն և Աղէն զօրավարըն զօրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրամդ գաւառի ի Խու անուն տեղոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօս առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ<sup>7</sup> յընթրիս հրաիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել և առնեին կազմութիւն պատրաստութեամ<sup>8</sup>:

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել<sup>9</sup>: Եւ իրու մտաներ արքայն ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետև ակն վահան ի ծնոն, սակուր զգօտույ, շորջ ի ներքոյ զորմովք յորբանին պատեալ պսակէին<sup>10</sup>. սոյնպէս և արտաքրո կազմէին ի ներքոյ կուր վառեալ և ի վերոյ հանդերձք զգեցեալ պատրաստէին<sup>11</sup>: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իր թէ ի պատի իմչ նորա զայն առնիցտէն: Եւ մինչ եռ յընթրիսն ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուտ նորա կարգեալ պսակեալ կային շորջ զնովաւ յամենայն կուտ: Իրու ընդ զինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուազն<sup>12</sup> մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմրկահարք և սրնգահարք քնարահարք և փողահարք, իրաքան-

շիր արուեստօք պէսպէս ծայնիք բարբառեցան: Եւ վահանաւոր լեզենի հրաման նուուն. և մինչ դեռ թագաւորն Պապ գուրախուրեան գինին ուներ մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, ահեակ ծեռամբ յարմուկն՝ յոր յեցեալ թագմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աղ ծեռն եղեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապէան էր յաջու ազդերն իրում, և մինչ դեռ բերան ի թաժակին էր յըմպէլն, և աչօքն յարաջ կոյս պշտոցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, իրաման լինէր ակնարկերվ զօրացն Յունաց: Եւ լեզեն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասուու ոսկիմբէ վահանօքն յանկարծորեն կից ի վեր առեալ՝<sup>13</sup> զսակուրսն, զարկանին թագաւորին Պապայ. մին կշիռ զուլն հարկանէր՝<sup>14</sup> սակրաւուն, և միան ևս սակրաւորն զաջ թաք ծեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին հարկանէր, կորէր և ի թաց ընկենոյր: Անդէն ի բերանս տպապալէր թագաւորն Պապ. և զինին տաշտին և արիւնն պարանոցին նովայ հանդերձ ի վերայ թաժակակալ սկրտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ: Ընդ շիորենոյ տաճարին խոռվուրեան.<sup>15</sup> Գնէլ տէր գաւառին Անծն ացեաց յուն կացեալ յիւրմէ թագմականէն, հանեալ զիր սուսերն՝ հարկանին զմի ի լեզենաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին<sup>16</sup> զբագաւորն: Ապա Տէրեն զօրավարին Յունաց զիր սուսերն հանեալ ածէր,<sup>17</sup> տարակաց ի զիսոյն Գնելոյ զսկաւուակն զիսոյն ի վերայ աշացն ի թաց ընկենոյր:<sup>18</sup> Եւ այլ ինչ որ ոչ կարաց յանդգնել ասել ինչ ընդ նոսա և ոչ իմչ:

### (Փատակու Բուզանդ, 5-րդ, Iթ)

- <sup>1</sup> այստեղ՝ երես դարձրեց
- <sup>2</sup> գործածիած է փոխե, շոտ տալ ինսաստով
- <sup>3</sup> ի թաց տուր-ետ տուր
- <sup>4</sup> յանգար ինչ առնել-յառվության առաջ թերեւ
- <sup>5</sup> այստեղ՝ թեն, թեպետ
- <sup>6</sup> եղին ի մտի-հորդորեցին
- <sup>7</sup> հաց... զործեալ-հացկերույթ սարբեցին
- <sup>8</sup> առնին կազմութին պատրաստուրեան-ամեն բան կազմել պատրաստել էին
- <sup>9</sup> ի նախորդը և հայշականով ամորու դերայը նպատակի պարագաւ՝ ուտելու և ըմպելու
- <sup>10</sup> շուրջ ի ներքոյ զորմովք յորուանին պատեալ պահպանում էին

- <sup>11</sup> սոյնպէս և արտաքրյ կազմէին ի ներքոյ կոտ վտանգը և ի վերո հանդերձ զգեցեաց պատրաստէին-նույնապես և (սենյակից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վյայից սովորական զգեստ հազած (զինվորներ)
- <sup>12</sup> այստեղ՝ թաժակ, զափաք
- <sup>13</sup> կից ի վեր առեալ-միասին վեր թարձրացնելով
- <sup>14</sup> կշիռ զուլն հարկանէր-ուղիղ վիզն կտրեց ընդ շիորենոյ տաճարին խոռվուրեան-երբ սեղանատանց աղմուկ և շիորություն ընկավ
- <sup>15</sup> յայնցանէ՝ որ հարին-նրանցից (զինվորներից) մեկին, որը խփել էր
- <sup>16</sup> այստեղ՝ խփեց
- <sup>17</sup> ի թաց ընկենոյր-շուրտ տվեց

### Ո-Ա ՀՈԼՈՎՈՒՄ

#### § 110. Հոլովման պատկերն է՝

Նզակի	Տոգնակի
Ո. մատանի	մատանիք
Հ. (զ)մատանի	(զ)մատանիս
Ս.Ս. մատանոյ	մատանեաց
Բ. ի մատանոյ	ի մատանեաց
Գ. մատանեալ	մատանեալ(օք)

Այս հոլովման դեպքում բառավերջի ի ծայնավորը ո հոլովիչից առաջ դառնում է և, իսկ ա-ից առաջ՝ ե:

Եզակի ներգոյսկանի իմաստն արտահայտվում է ի(յ) նախորով և եզակի անորոշ հայցականով, իսկ հոգնակին ի(յ) նախորով և հոգնակի անորոշ հայցականով՝ ի թշնամի=թշնամու մեջ, ի թշնամիս=թշնամիների մեջ:

Մի քանի բառերի եզակի ներգոյսկանի իմաստը, որոնք տրականում ունենում են նաև ոզ վերջավորությունը, սովորաբար դրսնորվում է ի(յ) նախորով և ոզ վերջավորությամբ տրականով՝ տեղտօշ-ի տեղտօշ=տեղում, այգտօշ-յայգտօշ, կդգտօշ-ի կդգտօշ և այլն:

#### § 111. Այս հոլովմանը հոլովկիմ են՝

ա) Ի-ով վերջացող բազմավանկ բառերը (բացառություն են կազմում ցի վերջածանց ունեցող և հոգի, ոգի, ուսկի, որդի բառերը, որոնք ներարկվում են Ո պարզ հոլովման, տեսն § 103): աղաւնի, այգի, անդրի (=արձան), ապակի, աքրունի, գարի, զերանդի, գերի, գինի, գուրորի, գոտի, ևկեղեցի, թշնամի, ծնունի, մորթի, շողի, ոզնի, պատանի, փոշի և այլն:

բ) Ենի, ուսի, ուսի վերջածանցով բառերը՝ առիւծենի, ձիթենի, թզնի, ցնցուի, թազուիի, տիրուիի, Սմբատուիի, Տիգրանուիի և այլն:

գ) Ումի-ով վերջացող հատուկ անունները՝ Ամատունի, Արշակունի, Բագրատունի, Սանդակունի, Խոռխոռունի և այլն:

դ) Ի-ով վերջացող մի շարք անեզական հասարակ և հատուկ անուններ՝ արգասիք (արգասեաց), երախուիք, ընթրիք, հարսանիք, տանիք, կնոծիք, շարիք, Տմորիք (Տմորեաց), Աղձնիք, Սիւնիք և այլն:

#### Վարժություն 78. Հոլովել Ո-Ա հոլովմամբ հետևյալ բառերը՝

եղն նի, մորի, կենդանի, մարի (=էօ թոշուն), արմաւենի, պատասխանի, ջորի, Արծրունի, Տաճատուի, կարծիք, Աղձնիք:

## Վարժություն 79. Թարգմանել, որոշել Ո-Ա հոլովման բառերի հոլովն ու թիվը

Լուսային գծես և գերեսս ի փոշոյ: Ո՞ւր է տերևն բգենոյ, ո՞ւր է ու ույզն այգոյ: Պատրաստեր զըմպելիսն արքայի յընտիր և համեղ գինեաց: Են այս էր պատճեն հրովարտակին զոր կնքեալ էր մատանեաւ բագաւորին: Են աքաղաղ՝ որ շրջի ի մէջ մարեաց սիզալով: Եր քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և սպիտակ ապակոյ: Զանային և ոչ կարէին համել զվանասակար խոզսն յայգոյ անտի: Ոչ ի նորենոյ կրեն խայլող: Թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա: Ամուրեացն և այրեացն ասեմ: Եր առաքեաց զծառայս իր կոչել զիրալիրեալսն ի հարսանիս:

**Վարժություն 80. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել՝ և ենթակետինը սեռական և տրական, բ-ինը՝ բացառական, գ-ինը՝ գործիական հոլովներով, իսկ դ-ինը՝ ի(յ) ճախորով և համապատասխան հոլովով՝ ներզոյակամի նշանակությամբ:**

ա) Իսկ Վարազդատ բագաւորն պատզամ յուր (պատասխանի)-ն առ զօրավարն Մանուկ: Ելեք ի լեան և բերէք տերևն ս (ծիրենիք), և տերևն ս (արմաւենիք): Եր անզգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանծս սուրբ (նկեղեցիք)-ն:

բ) Արկանէ կալ (գարի): Պատմեաց մի ոմն (մանկտի) անտի: Որք ունէին զկանայս (այլազգիք)-ն:

գ) Մի՛ արքենայր (զինի): Սկսան այնուիեսն պատրել զոմանս (կարասի) և զոմանս ողոքական բանիք: Միով (գօտի) ծշմարտութեան պնդեցին զմէջս:

դ) Աստրուշանս շինէին ի բազում (տեղիք): Պատմեցէք (կղզիք) հեռաւորս: Բերէին և դնէին ի սուրբ (նկեղեցիք)-ն:

## Վարժություն 81. Թարգմանել գրաբար:

Թզենու տերևն ները դեղին են: Հանդերձները վնասվում են փոշոց: Արտաշեսի հրամանով բնակվեցին Տմորիքում: Ապակու բեկորները փայլում էին արևի ճառագայթներից: Թագավորը հրովարտակը կնքեց մատանիով: Ամբարները պիտի լցնեն գարիով և ցորենով: Քաջալեռում էր պատամիներին բաջարար մարտնչել: Տերունիներից լսում էին իմաստուն խրատներ: Մանգաղներով և գերանդիներով կինձեք արտերը: Բազում տեղերից գրդեր և ավագակներ էին զայխ Արշակավան: Երգում և պարում էր պատանիների հետ:

Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեանն և շաղուտ խօսիցն և գործոցն, և նշանացն<sup>1</sup> որ յաստուծոյ ի վերայ նորա եղեն:

Այլ<sup>2</sup> Յոհան եպիսկոպոս, որդի Փառինայ հայրապետի, հինաւորց<sup>3</sup> թէ արծան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եր սա այր կեղծաւոր, և երևնեցուցանէր ինքն զանձն իր<sup>4</sup> մարդկան պահող և խորգահանդերձս. մինչ զի մոյզս անզամ ոչ ազանէր, այլ զամանուն<sup>5</sup> հեսկով պատէր, և զձմեռն<sup>5</sup> կեմով: Եր յազահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զագահութին իր ընդ երկիրին աստուծոյ<sup>6</sup>. այնչափ ինչ զի զիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն<sup>7</sup>, զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ ի ծի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտույ, աղեղմակապարծ զմիջով. լուացեալ զիերս իր օծեալ մերձեալ<sup>8</sup>, վարսակալ եղեալ ի գլուխ իր, և ողիկ արկեալ զուսով իր. և զայր զճանապարհս իր. թերևս յաւազակութեմնէ: Իսկ ծին՝ յորում հեծեալ մեծ հասակաւ, և էր գունաւոր, զնացող, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զգին մեծապէս զարմացեալ՝ ակնակառոյց լինէր<sup>9</sup>: Ապա իրը եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուսն հարկանէր գերասանակաց ծիոյն, և ասէր. «Ե՛ջ դու վաղվաղակի ի ծիոյ այտի, զի բանք են ինձ ընդ քեզ»<sup>10</sup>: Ասէ այրն. «Զի ոչ դու զիս գիտես և ոչ ես զրեզ, զի՞ն այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ»<sup>11</sup>: Մանաւանդ զի այրն արքեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ծիոյն: Ապա բոնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ծիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի ծանապարհէն: Եր առնան խոնարիել հրամայէր և ասէր. «Եթիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո»: Իսկ նա տայր պատասխանի զանձնեմ<sup>12</sup>, երէ «Այր աւազակ սպանող չարազործ և խառնագնաց լեալ ի մանկութեմնէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ ի նմին գործ կամ»: Եր շատ ի վեզ եկեալ<sup>13</sup> յամառէր այրն, և նա ևս չար քան զնա: Ապա բոնաբար զգետնեալ զայրն, դմէր Յոհան զգենուն իր՝ առնել զնա երեց. և յարուցեալ հրամայէր լուծանել զիանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաքողոն: Եր ասէր. «Ե՛ր ի գեւ քո, և լիջի՛ր դու անդ երեց գեղջն՝ ուստի ես»: Եր անզամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջ իցտ: Ինքն Յոհան մատուցեալ բուսն հարկանէր զծիոյն, և ասէր. «Այս ինձ կօշիկը լիցին, փոխանակ զի երեց արարի զքեզ»: Իսկ այրն յամառեալ ի վերայ ծիոյն չառնոյր յանձն տալ. ապա բոնաբար յինքն հանեալ<sup>14</sup> զմին, և զայրն արձակեաց: Եր այս ամենայն իրքս վասն ծիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղեղողոն արկեալ, զնայր ի տուն իր, և երբեալ

մտաներ ի մեջ ընդանեաց իւլոց, ասէ ցկին իւր և ցընդանիս. «Արիք յաղօթ կամք»<sup>15</sup>: Եւ նորա ասեն. «Մոխս դու, դե՞ւ ուրեմն հարա ի քեզ»: Իսկ նա ասէ. «Արիք կամք յաղօթ, վասն զի երեց եմ»: Իսկ նորա զարմացեալ, մերը շիկտին, մերը ծիծաղէին. Մինչն բազում անգամ յամառեալը, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթ ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. «Ո՞չ դու երախայ»<sup>16</sup> էիր, և չէիր մկրտեալ»: Ասէ այրն ցկինն իւր. «Ապշեցոյց, չետ յիշել. և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս երեց արար, և ձին սանձաւ թամբաւ առ և անց»: Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. «Յարիցես»<sup>17</sup> անդրէն գնացես առ եպիսկոպոսն, և ասացես. «Մկրտեալ չէի, զի՞ արարէր զիս երեց»: Իսկ նորա<sup>18</sup> յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. «Ես մկրտեալ չէի, զի՞ արարէր զիս երեց»: Եւ ասէ Յոհան. «Սափորով միով զուր քերէք»: Եւ առեալ զօրուն էարկ զգլխով նորա, և ասէ. «Ե՛րք, մկրտեցի զրեզ»: Եւ արծակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

### (Փաւապոս Բուզանդ, 6-րդ, Ը)

- <sup>1</sup> նշանացն-այն հրաշքների
- <sup>2</sup> օժանդակ քայլ (Եր) զեղչված է՝ այլ էր
- <sup>3</sup> այսուել նախակին
- <sup>4</sup> գանձն իւր-իրեն
- <sup>5</sup> գաման-ամառն. զմոն-ձմունն
- <sup>6</sup> ոչ կարէր տուզ զագահութին իսր ընդ երկիդին աստուծոյ-քառացի՝ չէր կարուղանմ իր ազակուրյունը տալ աստու երկյուղի փոխարեն, այսինքն՝ իր ազակուրյունից աստծուց երկյուղ չուներ
- <sup>7</sup> զի՞ էր երեմն դիպեալ ի ճանապարհի ուրեմն-մի անգամ պատահեց մի ճանապարհի վրա

- <sup>8</sup> մերձեալ, այստեղ՝ հարդարած
- <sup>9</sup> ակնակառոյց լիմէր-աշքը վրան մնաց
- <sup>10</sup> բան են ինձ ընդ քեզ-քեզ հետ խոսելիք ունեն
- <sup>11</sup> փիս. խօսելոց
- <sup>12</sup> զանձնէն-իր մասին
- <sup>13</sup> ի վեզ զալ-վիճեւ, հակառակվեւ, դեմ կամզմեւ
- <sup>14</sup> յինքն հանել-խել, հափշտակեւ
- <sup>15</sup> ներկան ապառնու իմաստով՝ աղոքք անենք
- <sup>16</sup> երախայ, ի, ից, գ. դեռ շկնքված՝ շմկրտված, անկնունք (փոքր կամ մեծ)
- <sup>17</sup> յարիցես-վեր կիենաս
- <sup>18</sup> սեռական հղույնը ենթակա՝ անցյալ դերբայի մոտ: Պետք է բարզմանել ուղղականով՝ նա

### ԴԱՍ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ

#### ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

§ 112. Անկանոն կամ զարտուիլի հոլովման բառերը, չնայած ունեն հոլովման որոշ օրինաչափություններ, շենքում են հոլովման սովորական կանոններից և հանդես են զայիս հոլովական հատուկ ծևերով:

Անկանոն հոլովման ենթարկվող բառերն են՝ այր (=տղամարդ), տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, զիտ (գետ), աւր (օր), տիւ (=ցերեկ): Այս բառերի մեջ հոլովիչներն առանձին կամ բոլոր հոլովներում նույնանում են արմատական ձայնավորների հետ:

Ներգոյական հոլովի իմաստը դրսն որվում է ընդիանուր ծևով՝ եզակին եզակի տրականով, իսկ հոգնակին՝ հոգնակի հայցականով և ի(j) նախդրով:

#### ՀՈԼՈՎՈՒՄՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

	1. Այր	2. Տէր		
	Եզակի	Ռոգնակի	Եզակի	Ռոգնակի
ՈՒ.	այր	արք	տէր	տեարք
Հ.	(զ)այր	(զ)արս	(զ)տէր	(զ)տեարս
U.S.	առն	արանց	տեառն	տեարց, տերանց
Բ.	յառնէ	յարանց	ի տեառնէ	ի տեարց, ի տերանց
Գ.	արամք	արամքք	տերամք	տերամքք

Այր, տէր բառերի նման հոլովվում են նրանցով բարդված բառերը՝ սկեսրայր-սկեսրան (նաև՝ սկեսրայրի, ի սկեսրայրէ), քեռայր-քեռան, տանուտէր-տանուտեառն, պարտատէր-պարտատեառն (նաև՝ պարտատէրի, պարտատիրաց), զաւառատէր:

#### 3. Հայր

	Եզակի	Ռոգնակի
	հայր	հարք
ՈՒ.	(զ)հայր	(զ)հարք
Հ.	հարք(հօր)	հարց, հարանց
U.S.	ի հարք (ի հօրէ)	ի հարց, ի հարանց
Բ.	հարք, հարամք	հարքք, հարամքք

## 10. Ալր (օր)

## 11. Տիւ

4. Մայր		5. Եղբայր	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	մայր	մարք	եղբայր
Հ.	(զ)մայր	(զ)մարս	(զ)եղբայր
U.S.	մարտ(մօր)	մարց	եղբարտ(եղօր)
Բ.	ի մարտ (ի մօրէ)	ի մարց	յեղբարէ (յեղօրէ)
Գ.	մարք	մարքք	եղբարք

Հայր, մայր, եղբայր բառերի նման հոլովկում են նրանցով բարդված բառերը՝ նախահայր, նախամայր, տիրամայր, հօրեղբայր և այլն:

## 6. Քոյր

## 7. Կին

6. Քոյր		7. Կին	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	քոյր	քորք	կին
Հ.	(զ)քոյր	(զ)քորս	(զ)կին
U.S.	քեռ (քուեր)	քերց (քուերց)	կեռջ
Բ.	ի քեռէ	ի քերց	ի կեռջէ
Գ.	քերք	քերքք	կանամք կամ կնաւ

Քոյր բառի նման հոլովկում են նաև հօրաքոյր (հօրաքեռ), մօրաքոյր (մօրաքեռ) բառերը, իսկ կին բառի նման՝ արճակին բառը:

## 8. Տիկին

## 9. Գիտ

8. Տիկին		9. Գիտ	
Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	տիկին	տիկնայք	գիտ
Հ.	(զ)տիկին	(զ)տիկնայս	(զ)գիտ
U.S.	տիկնոց	տիկնայց, տիկնաց	գեղջ
Բ.	ի տիկնոցէ	ի տիկնայց, ի տիկնաց	ի գեղջէ
Գ.	տիկնամք կամ տիկնաւ	տիկնամքք	գիտիւ

Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
ՈՒ.	ալր(օր)	ալուրք	տիւ
Հ.	(զ)ալր (զօր)	(զ)ալուրս	(զ)տիւ
U.S.	ալուր	ալուրց	տուրնջեան
Բ.	յալրէ (յօրէ)	յալուրց	ի տուրնչենէ
Գ.	ալուրք	ալուրքք	տուրնջեամք

Տիւ բառը հոգնակի թվում ունի միայն ուղղական և հայցական հոլովածերը:

**Վարժություն 82. Թարգմանել, որոշել ամկանոն հոլովման բառերի հոլովն ու թիվը:**

Ի մարց իրեանց պահանջէին հաց և զինի: Կանայք յարանց իրեանց, և մանկունք ի հարց իրեանց, և մարք ի բերանոյ տղայոց իրեանց յափշտակէին զկերակուրք: Մինչև զոսկերս անգամ հարցն բրեաց ի գերեզմանաց: Ոչ որ կարէ երկուց տերանց ծառայել: Նման է առն, որ շինցէտ տուն ի վերայ հողոյ առանց հիման: Ծունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իրեանց: Բայց մնաց Աթանագենի որդի ի Բամբըշնէ ի քեռէ, քազաւորին: Իսկ քազաւորն Տրդատիսոս հանդերձ միաբանութեամք կնաւ իրով Աշխեն տիկնաւ, և քերք իրով Խորառվիդյստով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամք ամենայն օրաց իւրց: Որ էր ի զաւառէն Բազրու անդայ, ի գեղցէն որ կոյի Եղեգեակ: Յայն ասուրս երկիրն ի շարժման ոչ դադարէ: Երբէն զանեծ այնպէս խորտակեաց զամենայն ոսկերս իմ, զի ի տուրնջենէ մինչև ի գիշեր մատնեցայ: Ելէք ամենայն արք պատերազմողք: Հրամայեաց և յամենայն գետս վաճա շինել:

**Վարժություն 83. Թարգմանել, փակագծերի մեջ առնված բառերը դնել համապատասխանաբար սեռական և տրական, բացառական, գործիական հոլովմերով:**

ա) Եւ արկանէ գրգռութիւն ի մէջ (եղբարք): Պատմեաց (հայր) իւրում, և (եղբարք) իւրոց: Եւ էր նա կին Գարենին (տէր)-ն Շշտունեաց զաւառին: Ետես զգինդան և զապարանջանսն ի ծեռս (քոյր) իւրոյ: Երբային երիտասարք և կուսանք և ամենայն բազմութիւն (արք) և (կանայք): Նմանեցաւ արքայութիւնն երկնից (այր), որ սերմանից սերմն բարի յազարակի իւրում:

բ) Յովք (գիտք) հարկս առնոյր: Արհմն և Որմիզդ (հայր) ծնան և ոչ (մայր): Մի ստանար նախատինս (արք) չարաց: Գնային (գիտի) և լուլեայն:

զ) Տունն լի էր (արք) և (կանայք): Այր ոմն Անանիա ամուն հանդերձ (կի՞ն) իրով Սափիրաւ վաճառեաց ազարակ: Կոյսք ի կուտաստանաց (մարք) հանդերձ ի հրապարակս հասանեին: Սատակէ զամենայն ծնունդս Արգանյ հանդերձ (հայր)-ն:

#### Վարժություն 84. Թարգմանել գրաբար:

Իմ քույրերն ու եղբայրները բնակվում են զյուղում: Երեխաներին խլեցին մայրերի գրկից: Սպարապետը եղբայրներով և քույրերով հանդերձ վերադապ իր (իրը) երկիրը: Հայտնիք քո (քում) հորն ու մորը: Կանայք բաժանվում էին իրենց (իրեանց) ամուսիններից: Մշակում էր իր (իրոյ) տիրոջ այգին: Որդին սիրվում է հոր և մոր կողմից: Կանանց և տղամարդկանց, ծերերին և երեխաներին գերի էին տանում: Ուրախությամբ անցան իմ (ինոց) կյանքի օրերը: Հրաման ունեին զյուղերում շինել ատրուչաններ:

Վերադառնաւ-դառնաւ

անցնել-անցանել

#### ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ<sup>1</sup> ՅՈՒԱՆՆՈՒ

Երեմն<sup>2</sup> սոյն Յոհան անցանելու առ այգեօր ուրում<sup>3</sup>. և էր ժամանակի զայգիսն յատելոյ: Աղաղակէր<sup>4</sup> առ նա այր մի յայգույն, և ասէ. «Օրինեա, տի եպիսկոպոս, զմեզ և զայգիսս»: Ասէ Յոհան. «Փուշ և տատասկ բուսցի»: Առ այրն. «Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անհծանես զմեզ»: Եւ եղեն նշանը յաստուծոյ. զի իբրև չոզաւ<sup>5</sup> եպիսկոպոսն ի վանս իր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամն մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել<sup>6</sup>: Եւ մեծապէս շտապեալ անկեալ ի տանջան շարաշարս հարուածոց, և ի մեծ տագմապի կայր աւալը բազում: Ապա յդեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաշեաց զնա առնել ի վերայ նորա<sup>7</sup> աղօրս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: Այգորդն ասէր. «Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք<sup>8</sup> օրինել կամ անհծանել. բող թէ<sup>9</sup> զայր եպիսկոպոս»: Իսկ նա բոնադատէր զնա յայնժամ. մինչև յանելու այգորդն կայր յաղօրս և ասէր. «Տէր աստուած, դու զիտես՝ զի ես այր մեղատոր եմ և անարժան, ոչ զիտես զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս<sup>10</sup>. դու փրկեա՛ զիս յայս ի շարէս<sup>11</sup>, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անծեր, և ասեն քո բանին եղև: Զի լաւ էր ինձ մահ, քանզի չզիտեմ զայս՝ զոք ինչ զինեմ<sup>12</sup> ասեն»: Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոցն փուշն ի բաց բափեն: և էր իբրև զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ ողջացաւ յախտէն:

(Փաւարոս Բուզանդ, 6-րդ, Ձ)

<sup>1</sup>նորին - նոյն

<sup>2</sup>մի անգամ

<sup>3</sup>առ այգեօր ուրում - մեկի այգիների մոտով

<sup>4</sup>զորածված է անց. կատարյալի իմաստով՝

ձայն տվեց

<sup>5</sup>չոզաւ-զնաց

<sup>6</sup>սկսաւ ընդ ամենայն անդամն մարմնոյ

նորա որպէս զփուշ հարկանել-նրա մարմնի բոլոր

անդամներն սկսեցին ծակծկվել, կարծես փշից

<sup>7</sup>այստեղ նշանակում է՝ իր

<sup>8</sup>զոք-մեկին

<sup>9</sup>թող թէ-այն էլ

<sup>10</sup>ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս-չգիտեմ ինչպես ընկա այս փորձանքի մեջ

<sup>11</sup>նախորդը կրկնված է

<sup>12</sup>զինեմ-իմ մասին

#### ՀԱՍԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 113 Համանուն բառերն ընդհանրապես ենթարկվում են տարբեր հոլովումների, իսկ որոշ դեպքերում հոլովվում են նոյն հոլովմամբ:

ա) Տարբեր հոլովվում ունեցող համանուն բառերի օրինակներ.

Այր, առն, արամք (=տղամարդ)

Այր, այրի, այրիի (=քարանձավ)

Գայլ, գայլոյ, գայլով (=գայլ գազանը)

Գայլ, գայլի, գայլի (=քերանակայ)

Դար, դարու (=100 տարի)

Դար, դարի, դարի (=բարձր տեղ, դարավանդ)

Խաղ, խաղու կամ խաղոյ, խաղով (=խաղալը, այլն՝ ծաղը, կատակ)

Խաղ, խաղի, խաղի (=խաղալ՝ ծանծաղ ջուր, ճահիճ)

Կար, կարոյ, կարով (=կարելը, այլն՝ պարան)

Կար, կարի, կարի (=կարողություն)

Հազար, հազարոյ, հազարով (=մառոլ բույսը),

Հազար, հազարի, հազարաւ (=1000)

Հոր, հորոյ, հորով (=փոս)

Հոր, հորի, հորի (=փեսաւ)

Մայր, մար (մօր), մարք (=մայր)

Մայր, մայրի, մարի (=մայրի ծառը)

Որբ, որբոյ, որբով (=խաղողի տունկ)

Որբ, որբու (=հորբ)

Սան, սանու կամ սանի (=սան, սանիկ)

Սան, սանի, սանի (=կարսա)

Փող, փողի, փողի (=պարանոց, վիզ)

Փող, փողոյ, փողով (=մանր դրամ)

Օդ, օդոյ, օդով (=օդ)

Օդ, օդի, օդի (=ոտնաման)

բ) Նույն հոլովում ունեցող համանուն բառերի օրինակներ.

Բայ, բայի, բայից (=խոսքի մասը)

Բայ, բայի, բայից (=գազանների հատկապես արջի որդ)

Նուազ, նուազի, նուազաց (=երգ, տաղ)

Նուազ, նուազի, նուազաց (=գավաթ, բաժակ)

Սարդ, սարդի, սարդից (=դափնի ծառը)

Սարդ, սարդի, սարդից (=սարդ միջատը)

Սարդ, սարդի, սարդից (=սարյակ բռչումը)

**Վարժություն 85. Թարգմանել, գտնել համանուն բառերը՝ որոշելով նրանց հոլովումը, հոլովն ու թիվը:**

Խնում զակումն աղբերաց: Մի՛ մերժեր զիսրատ մօր քո: Եւ զարդարեաց գտունն ակամքք պատուականօր: Առնուն զջուրս ծովուն զաղին և զղառն, արկանն ի սան: Ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին: Ահա և բնակեմ ի տաճ մայր փայտից: Բազում զայլը շրջին ի հանդերձս զառանց: Եւ ետ կապել զնա ծեռս յետս, և արկանել զայլ ի բերան նորա: Գործ մի մեծ է այր հատարիմ գտանել: Փախստեայս արկանէ յամուր այրս ի գաւառին Մանանալոյ: Օծ ի բոյն հատոց ծագուց դիմեսց: Բայց Տիրան հաւն նորա պատզամս խիստս յղեաց առ որդի իւր Արշակ: Առաք զՄբատ ասպետ, զիայր Բագարատոյ՝ ածել զկոյսն Աշխեն՝ դուատր Աշխադարայ: Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց ծեռակերտ:

Ետ կապել-կապել տվեց

### ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ ՅՈՒԱՆՆԵՐՈՒ

Սոյն Յոհան Եպիսկոպոս՝ որդի Փառինայ յորժամ երթայր առ բագաւորն<sup>1</sup> Հայոց, խաղակատակ լինէր<sup>2</sup> նոցա. որպէս<sup>3</sup> խաղաղով<sup>2</sup> զանձն իւր կորեր յազահութեան, որում ծարաւեալ պասքեալ փափաքէր<sup>4</sup>. սակայն միահանէր այն էնորա<sup>5</sup>: Ի չորք անկեալ յոտս և ի ծեռս<sup>6</sup> սողեր առաջի բագաւորացն, և զուղուու զծայն<sup>7</sup> ածեր կառաչելով, զօրեն ուղտու այնպէս փարելով<sup>8</sup>: Ընդ կառաչեն<sup>9</sup> ապա մի մի բան խառնելով առնէր ի ծայն կառաչելոյն, ասելով՝ թէ «Ուղտ եմ, ուղտ եմ, և զարթայի զմենս<sup>7</sup> բառնամ. լիք<sup>10</sup> ի վերայ իմ զմենս արթայի, թող բառնամ»: Խսկ բագաւորքն զմուրիհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դմէին ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ի բագաւորացն Հայոց ստացաւ իւր գնելու և ազգարակս և զանձս յմլտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: Այսպիսի էր այրս Յոհանս

կապեալ յըռժութեան<sup>11</sup> և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ազահութեան, որ չէր արժան:

(Փաւստու Բուզանդ, 6-րդ, Ժ)

<sup>1</sup> փխ. բագաւորսն

<sup>2</sup> խաղակատակ լինել-խեղկատակություն՝ միմուություն անել. խաղալ այստեղ՝ ծամառություն՝ միմուություն անել

<sup>3</sup> այստեղ՝ այսպէս օրինակ

<sup>4</sup> որում ծարաւեալ պասքեալ փափաքէր-որին անհագարպ փափագու էր

<sup>5</sup> սակայն միահանէր այն էին նորա-ն (այդ խեղկատակությունները) նրան իքը միջոց էին ծառայում

<sup>6</sup> ի չորք անկեալ յոտս և ի ծեռս-ուտքերի և ծեռքերի վրա ընկած, շորեքքար

<sup>7</sup> նախսիյը կրկնված է

<sup>8</sup> շքեւով, մաս զալով

<sup>9</sup> ընդ նախսիյով և հայցական հոլովով անորոշ դերբայն իքը ծամանակի պարագան՝ կառաչելիս, կառաչելու ժամանակ:

<sup>10</sup> դիք-դրեք

<sup>11</sup> կապեալ յըռժութեան-վարակված ժատությամբ՝ կծծիությամբ

### ԴԱՍ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ

#### ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

114. Գրաբարում հոլովում են անորոշ, անցյալ և ենթակայական դերբայները, ըստ որում անորոշ դերբայը հոլովում է միայն եզակի թվով, իսկ անցյալ և ենթակայական դերբայները՝ և եզակի, և հոգեակի թվով: Անորոշ և անցյալ դերբայները հոլովում են արտաքին թեքման Ո պարզ, իսկ ենթակայականը՝ Ի-Ա խառն հոլովմաբ: ՈՒ լծորդության բայերի ու խոնարիիչը թեք հոլովներում սղվում է (թռղով-թռղլոյ), իսկ անցյալ դերբայի եա երկբարբառը դառնում է Ե (մնացեալ-մնացելոյ): Հոլովման օրինակներ.

#### Եզակի

ՈՒ.	տեսանել	հնացեալ	պատերազմող
Հ.	(զ)տեսանել	(զ)հնացեալ	(զ)պատերազմող
Ս.Ս.	տեսանելոյ	հնացելոյ	պատերազմողի
Բ.	ի տեսանելոյ	ի հնացելոյ	ի պատերազմողէ
Գ.	տեսանելով	հնացելով	պատերազմողաւ

#### Հոգնակի

ՈՒ.	հնացեալը	պատերազմողը
-----	----------	-------------

Հ.	(գ)հնացեալս	(զ)պատերազմողս
U.S.	հնացելոց	պատերազմողաց
Բ.	ի հնացելոց	ի պատերազմողաց
Գ.	հնացելովը	պատերազմողաւր(օր)

§ 115. Դերքայներից անորոշը, անցյալ և ենթակայական դերքայները կարող են գործածին և գոյական անունների հետ, և անկախ, իսկ ապառնի դերքայլ չունի անկախ գործածություն:

Անցյալ և ենթակայական դերքայները գոյական անունների հետ գործած վում են թէ՝ նախադաս, թէ՝ ետաղաս: Նախադաս գործածինիս այս դերքայները հոլովով ու բվով սովորաբար չեն համաձայնում իրենց գոյական լրացյանների հետ, իսկ ետաղաս գործածության դեպքում համաձայնում են, օրինակներ՝ Մի՛ ընկդմնեսից նաև հաւատոց մերոց ի մէջ ալեկոծնեալ ծովու մեղաց (Եղիշէ, էջ 152): Կամքեղիվ վառելովք... զատրըն յուղարկեցին (Բուլ., 5-րդ, Ի-Դ): Որ իշխն ի դժոխս պատերազմոն զիմուքն իրեանց (Եղեկ., ԼԲ, 27): Մի՛ լինիք ընկեր առն բարկացողի, ընդ բարեկամի զայրացողի մի՛ բնակեր (Առակ., ԻԲ, 24):

§ 116. Երբ երկու կամ ավելի բայեր ունենում են նույն ենթական, սովորաբար նրանցից առաջինը դրվում է անցյալ դերքայով, որը բարգմանվում է աշխարհաբար կամ անորոշ դերքայի գործիական հոլովով, կամ հաջորդ դիմավոր բայի դեմքով ու բվով, օրինակ՝ Եւ մտեալ ի նաև անց յայնկոյս և նկն ի քաղաք իր (Մատք., Թ, 1)=Եւ նավ մտավ (կամ մտնելով) անցավ այն կողմը և նկավ իր քաղաքը: Այս դեպքում ենթական հաճախ դրվում է սեռական հոլովով և բարգմանվում աշխարհաբար ուղղական հոլովով, օրինակ՝ Եւ լուեալ Արտաշիսի զայսափսի իմաստուն բան, գնաց յեզր գետոյն (Խոր., 2-րդ, Ծ)=Եվ Արտաշեսը լսելով այսպիսի իմաստուն խոսքեր, գնաց գնտի ափը: Նորա բողեալ վաղվաղակի զնաւն և զիայր իրեանց, գնացին զիետ նորա (Մատք., Դ, 22)=Նրամք բողնելով նավը և իրենց հորը, գնացին նրա ետևից:

**Վարժություն 86. Թարգմանել, որոշել անորոշ, անցյալ և ենթակայական դերքայների հոլովն ու թիվը. դուքս գրել անցյալ և ենթակայական դերքայներն իրենց գոյական լրացյանների հետ միասին բացատրելով, թե ինչպես են համաձայնել նրամք վերջիններիս հետ:**

Զտի՞ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելոյ և ի բռոքելոյ: Արեգակն ծագելովն և վերանալով և ի մուտս դառնալով, և լուսին աճմամբ լնլով և նուազելով: Զօրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զասացեալսն արքայի: Տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգենլոյ: Եւ արք պատերազմողը որ ածին աւար: Զամնայն մրերեալ բոյնսն բափեաց ի բաց: Էառ իր Արշակ զկինն սպանելոյն

զՓառանձեմն: Թունից և սպանող դեղոց աղքիւրս բդիսից: Չորս բաժանեաց Մովսէս յարանցն պատերազմողաց: Արք սրտի զուարձացելով զգինի քո: Եւ ի բազմութենու դիականցն անկելոց՝ յտակ ջուրը գետոյն յարին դառնային: Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամենայն զրկելոց լինէր նա: Զանալով զցայց և զցերեկ՝ բարգմաննեաց զկտակարանն ամենայն: Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ծործոյ:

**Վարժություն 87. Հրովել հետևյալ կապակցությունները՝ դրամք համաձայնեցնելով գոյական անունների հետ դերքայների գործածության կանոններին համապատասխան:**

Այր պատերազմող, ծնեալ մանուկ, հայր ծերացեալ, հուր բորբոքեալ:

**Վարժություն 88. Թարգմանել, ընդգծված բայերը դնել անցյալ դերքայով, իսկ ենթականները՝ սեռական հոլովով:**

Իսկ Արտաւազդ և Տիրան իմանալ զիսորհուրդն նորա, դարան գործեալ յորս սպամին զՄաժան, զոր տարեալ քաղեցին ի Բազմացն աւանի իր զքրմապես: Առնով այնուիետև երանելին զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողբան: Եւ իմանալ եղրարը իջուցին զնա ի Կեսարիա: Եւ մտանել կարողիկոսն Հայոց հանդերձ երանելեան Մաշտոցին առ թագաւորն Պուաշապուի: Զայս տեսանել քագաւորն Ջուշանաց՝ ոչ հանդուրէր ելանել ընդ առաջ նորա պատերազմա: Եւ նա (նորա) հրամայել կոչել զմոզսն և զամնայն աւազան դրան: Եւ նա սիրով ընկալու զնա: Եւ նորա (նոցա) տեսանել զհազարապետն և զգօրականն, դադարեցին ի հարկանելոյ զՊօղոս: Եւ նորա լսել (լուեալ) զայս ի քաղաւորէմ փուրացուցանէին զնա:

**Վարժություն 89. Թարգմանել գրաքարը՝ ընդգծված բայերը դնելով անցյալ դերքայով, իսկ ենթականները՝ սեռական հոլովով:**

Թագավորն իր մոտ (առ ինքն) կամշելով նախարարներին՝ առատ պարզն ներ տվեց (Ետ) նրանց (նոցա): Երանելին առնելով իր աշակերտներին, զնում է Սամոսատ քաղաքը: Թշնամինները ասպատակեցին, ավերեցին երկիրը: Նախարարները ստանալով կայսրի իրովարտակը, ընթերցում են այն զորքերի առջն (առաջի): Հովսեփը տեսանելով իր եղբայրներին՝ ուրախացավ: Իսկ նա բարկանալով, հրամայեց զիսատել նրանց (զնոսա): Նրամք բողնելով հայրենի երկիրը, փախան օտար աշխարի:

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

«Այս<sup>1</sup>, ասէ<sup>2</sup>, Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջազանգուր, խայտափն և հաստաբազուկ : Սա ի մէջ սկայիցն քաջ և երև ելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զծեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիցազանց : Սա խրոխտացեալ ամբարձ զծեռն ընդդէմ բռնաւրութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մզ քազմակյուտ սկայիցն, անհուն, խօլաց և ուժաւրաց : Քանզի անդ մոլեզնեալ այր իրաքանչիւր, սուր ի կող ընկերի իրոյ զգելով՝ ջանային տիրել ի վերայ միմեանց . ուր պատահմունք ի դէա եւանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր : Որում<sup>3</sup> ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յեւ ծնանելոյ զորոյի իր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողման հիւսիսոյ, հանդերձ որդուվք իրուվք և դատերօք և որդուց որդուվք, արամբը զօրաւրոր, բուռվ իբրևն երեքհարիւր, և այլովք ընդունօք և եկօք յարեցելովք ի նա<sup>4</sup> և բոլոր աղիսիւ : Երեալ բնակէ ի լեռնուտին միում ի դաշտավայրի, յորում<sup>5</sup> սակաւը ի մարդկանտ յառաջազոյն զրուելոցն դադարեալ բնակէին . զորս հնազանդ իր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կաղմեայ՝ որդույ Արամանեակայ»: Այս արդարացուցանէ զանգիր իին ասացեալ զրոյցս:

«Եւ իմբն խաղայ, ասէ<sup>6</sup>, այլով աղիսին ընդ արև մուտս<sup>7</sup> հիւսիսոյ, զայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս իմբն թէ հարք ես աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգումայ: Ծինէ և զիւլ մի, և անուանէ յիս անուն «Հայկաշէն»: Յիշի աստանօր ի պատմութեանն ի հարաւոյ կողմանէ<sup>8</sup> դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միզով լեռամբ<sup>9</sup>, բնակեալ յառաջազոյն արք սակաւը, իմբնակամ հնազանդեալ<sup>10</sup> դիցազինն: Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անզիրս:

(Մովսէս Խորենացի, 1-ին, Ժ)

<sup>1</sup> Հայկ բարի լրացումն է՝ այս Հայկը  
<sup>2</sup> միջանկալ նախադասությունն է  
<sup>3</sup> օժանդակ բայց (եր) բացակայում է  
<sup>4</sup> լինիմ բայի անցյալ դերքայն է,  
<sup>5</sup> գործածված է դիմավոր բայի (եր) իմաստով  
<sup>6</sup> ընդ լայնութիւն-լայնությամբ  
<sup>7</sup> անդ-այս ժամանակ  
<sup>8</sup> պատահմունք ի դէա եւանէին Բելայ-  
<sup>9</sup> Բելին պատահաբար հաջողվեց  
<sup>10</sup> որում-որին  
<sup>11</sup> իրեանը պատահաբար հաջողվեց  
<sup>12</sup> անդ-այնտեղ  
<sup>13</sup> ընդ նախզիրը հայցական հոլովի  
<sup>14</sup> հետ արտահայտում է ուղև որման իմաստ  
<sup>15</sup> դեպի հյուսիս-արև մուտք, կամ կարելի է բարձնել հյուսիս արև մուտքով նշանակությամբ  
<sup>16</sup> բացառական հոլովը ներգոյականի իմաստով՝ այս դաշտի հարավային կողմում  
<sup>17</sup> առ նախմիրը գործիական հոլովի հետ մոտ իմաստով՝ մի երկայնանիստ լեռան մոտ  
<sup>18</sup> հնազանդեալ-հնազանդեցին

§ 117. Գրաբարի դերանունները ութ տեսակ են՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ:

Գրաբարի որոշ դերանուններ հոլովվում են անվանական հոլովմամբ՝ համապատասխան հոլովվիշներով, իսկ որոշ դերանուններ՝ առանց հոլովվիշների՝ արմատների յուրահատուկ փոփոխություններով: Նկատի ունենալով այդ փոփոխությունները, դերանունների հոլովվումը, ի տարբերություն անվանական հոլովման, կոչվում է դերանվանական հոլովվում:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 118. Անձնական դերանուններն են՝ ես, դու, նա, իմքն, իր, որոնք հոլովվում են հետևյալ կերպ:

	Եզակի Ռոգնակի	Եզակի Ռոգնակի	Եզակի Ռոգնակի			
Ու.	ես	մեր	որ	դուք	նա	նորա
Հ.	(գ)իս	(գ)մեզ	(գ)քեզ	(գ)ձեզ	(գ)նա	(գ)նորա
Ս.	իմ	մեր	քո	ձեր	նորա	նորա
Բ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ	նմա	նորա
Պ.	յինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ	ի նմանէ	ի նորանէ
Գ.	ինն	մեր(մեօր)	քն	ձեւր(ձեօր)	նովա	նորար (նորօր)

	Եզակի	Ռոգնակի	Եզակի	Ռոգնակի
ՈՒ.	իմբն	իմբեանք	-	իրեանք
Հ.	(գ)իմբն	(գ)իմբեանս	-	(գ)իրեանս
Ս.	իմբեան	իմբեանց	իր	իրեանց
Բ.	յիմբենէ	յիմբեանց	յիրմէ	յիրեանց
Գ.	իմբեանք	իմբեանքք	իրն, իրեան,	իրեանքք
			իրեանք	

§ 119. Ես դերանվան եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է

ի/յ) նախղորով և եզակի հայցականով՝ յիս, իսկ հոգնակին՝ հոգնակի հայցականով՝ ի մեջ: Մյուս անձնական դերանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ծևով՝ ի/յ) նախղորով, եզակի տրական և հոգնակի հայցական հոլովներով:

§ 120. Ինքն դերանունը կարող է գործածվել առաջին դեմքի նշանակությամբ՝ ինքնեանք ի նմին կաւոյ եմք (Յովք, Դ, 19)=Սենք (ինքներս) նույն կավից ենք:

Ինքն դերանունը (առանձին կամ իսկ բառի հետ միասին) հաճախ գործածվում է մյուս դերանունների, ինչպես և գոյականների հետ սաստկական նշանակությամբ՝ ես ինքն, դու ինքն, նա ինքն, մեր ինքնեանք, նոյն ինքն, ինքն քազաւորն: Օրինակ՝ Եւ ես ինքն մարդ եմ (Գործ., Ժ, 26)=Հենց ես էլ (ինքս էլ) մարդ եմ: Դու ինքն ես քազաւոր իմ և աստուած իմ (Սաղմ., ԽԳ(ԽԴ), 5): Այլ նա ինքն գրած էր (Սաղմ., ՀԵ(ՀԸ), 38): Ես ինքն իսկ եմ, ասէ. կամին ի ներք մտանել և տեսանել զգեզ (Եղիշէ, էջ 148): Այլ և ինքն քազաւորն հրամանի նորա անսայր (Եղիշէ, էջ 88): Եւ ինքնեանը իսկ հարքն մեր հապատացան և անօրինեցան (Նէեմ., Թ, 16):

Ինքն դերանվան փոխարեն անձնական դերանունների, այլև գոյականների հետ սաստկական նշանակությամբ կարող է գործածվելինքնինքառը (առանձին կամ իսկ բառի հետ միասին) Դուք ինքնին գիտեք (Գործ., Ժ, 28)=Հենց դուք (դուք ինքներդ) գիտեք: Ես ինքնին իսկ, ասէ, փութայի ջանալ կատարեք (Քուգ., 4-րդ, Դ): Եւ նա ոչ գիտ քէ երկիրն ինքնին բերդ զպտոս (Մարկ., Դ, 27):

Ինքն դերանվան պես անձնական դերանունների հետ սաստկական նշանակությամբ կարող են գործածվել ինձեն, մեզէն (Երբեմն՝ մեզոյն), քեզէն (Երբեմն՝ քեզոյն), ձեզէն (Երբեմն՝ ձեզոյն) բառերը (առանձին կամ իսկ բառի հետ միասին), որոնք բացառական հոլովի մրազնված ծևեր են. օրինակ՝ Դուք ձեզէն իսկ քաջ գիտեք (Եղիշէ, էջ 135)=Հենց դուք (դուք ինքներդ) լավ գիտեք: Մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ (Եղիշէ, էջ 9): Զեկ և զմուտ ճանապարհաց քոց ես ինձեն գիտեմ (Եսայի, ԼԷ, 28):

Այս բառերը կարող են գործածվել առանձին դերանվան նշանակությամբ, օրինակ՝ Ո՞չ ահա ձեզէն իսկ արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց (Եղիշէ, էջ 27)=Ո՞չ որ դուք ինքներդ պետք է դատաստան անեիք այդպիսի անարժան ուսմունքների համար:

§ 121. Անձն գոյականը գրաբարում հաճախ գործածվում է (առանձին կամ իմ, քո, մեր, ձեր, իր, իրեանց բառերի հետ միասին) անձնական դերանվան նշանակությամբ՝ իսկ նա տայր պատասխանի զանձնեն (Քուգ., 6-րդ, Ը)=Իսկ նա պատասխան տվեց իր մասին: Քանզի անձանք անձին օգնել ոչ կարիքին կորեան (Յովք, Դ, 20)=Որովհետև իրենց իրենց չէին կարողանում օգնել, կորան: Փրկեցեր զանձն իմ ի մահուանէ (Սաղմ., ԾԵ(ԾԶ), 13)=Փրկեցիր իմ մահից: Վարանէր յանձն իր (Ազ., Բ, 24)=Վարանում էր ինքն իր մեջ:

Վարժություն 90. Թարգմանել, որոշել անձնական դերանումների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Ես և եղբարք իմ հարազատ այսօր հրաժարիմք ի քէն: Իսկ ես ո՞վ եմ, զի աղաջես դու զիս: Հանդերձ նորօք յառաջ խաղայր սպարապետն Հայոց Վասսակ: Եւ աղաջէր զնոսա մարդասէրս լինել: Չիք ի նմա նենգութիւն: Եւ իր անդէն քաղաք բնակութեան շինեաց: Ոչ ունի արմատս յինքեան: Գովիշք իմ ինս երբուին: Շառը բողբոջն պտղովք իրեանց: Առնու ի նմանէ զօր յօգնականութիւն ինքեան: Նորա ոչ հաւատացին նմա: Գործովք իրեանց ուրացեալ են ի նմանէ: Եւ ինքեանը դառնային, և ի մի վայր ժողովէին: Սեռու յերկրին Խուժատանի յԱնդմշն բերդին ինքն ինքեանը ծեռօք: Բազումք ի ձենջ լաւագոյնք էք քան զիս արդութեամբ: Ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնը: Նովա եւեղեցիքն պարծին իբրև քաջ և կատարեալ զինուոր: Ջեւ փրկեցայց ի փորձութենէ:

Վարժություն 91. Թարգմանել, փակագծերի մեջ առնված անձնական դերանումները դնել համապատասխան հոլովն ու թվով:

Ապստամբել (դու) կամեցաւ Ենանոս: Թագաւորն և մեծամեծքն ոչ երբեք մեկնեին (նա): Ոչ երէ (ինքն) հակառակ էր, այլ ընկերին: Քանզի պատուէր ընկալայ (դու): Զա՞յս ամենայն կամենայիք լսել դուք (ես): Ուսան զդապրութիւն հայրենի աշխարհին (իրեանց): Հաներ զգէն իր (ինքն): Ոչ ունիմ ինձ օգնական քաց (դու): Ես նոյն պատմեմ (դուք): Եւ նա համակ անարգեանց (ես): (Դու) զբշնամիս մեր հարցուք, և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցալս ի վերայ մեր:

Վարժություն 92. Թարգմանել գրաբար:

Ինքնը իրենց ծեռքերով այրեցին կրակատները: Խորամանկությամբ պատվում էր նրանց: Մենք ծեզ երբեք չենք լսի: Թագավորը խնդրում էր նրանց սեր և խաղաղություն: Ձեր ընկերը ի՞նչ (զի՞նչ) է խնդրում ինձնից: Մի՛ լրի ինձ: Քեզանից ենք կամենում ուսանել ծշմարիտը: Նրանցից ումանց (զոնանց) մեծարում էր պարզներով և ընծաներով: Կուսուցանեն նաև իրենց որդիներին: Մենք չենք երկնչում ծեզանից:

Վարժություն 93. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով անձն բառի ընդգծած ծների նշանակության վրա:

Երէ ասիցնաք երէ մենս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խարեմք: Եկայր, զանձինս անձամբք մխիթարեսցուք: Փրկեցեր ի վշտաց զանձն իմ: Եւ ամենայն 101

պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաթրութինն: Անձամբ անձին այր հիրաքանչիր զվելոյ վատ մահու... տեսաներ: Ի տագմապի զկառավարն և զանձին կացուցանեն: Ոչ ոք կարէ լինել երաշխաւոր անձին իրում: Բազում անգամ ողբրմիմ անձանց ձերոց: Մեծաւ տրտմութեամբ խոռվեալ տարակուտէր յանձն իր: Անձամբ անձին առջ զբեռն ծանրութեան:

## ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱՋՄԱՆ ԵՒ ՄԱՌՈՒԱՆ ԲԵԼԱՅ

Եւ յառաջ մատուցեալ զբանս իր ասէ<sup>1</sup>, թէ ի հաստատել Տիտանեանն Բելայ զբագատրութին իր առ ամենենեան<sup>2</sup> առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութին և կեալ խաղաղութեամբ: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջեռուցեալ մեղեան՝ զցրտութին սառուցեալ քո հապատացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ո՞ր հաճոյ է քեզ յերկրիս ինու բնակութեան»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատօգամատրսն Բելայ՝ յըստութեամբ պատասխանեաց: Դառնայ առաքեալն անդրէն ի Բարելովն:

Ապա զօրաժողով լինի ի Վերայ նորա Տիտանեանն Բել ամբոխի հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կաղմեայ: Փախստական. լինի Կաղմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իր առաքէ. «Գիտեա», ասէ, ո՞վ մեծող դիցազանց, զի դիմեալ գայ ի Վերայ քո Բել յաւերժիք քաջօք և երկնաղջօք հասակօք սկայիսի մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն ի տուն իմ՝ փախեայ, և զամ աւասիկ տագնապա: Արդ աճապարեա՝ խորհել զոր ինչ գործելոց ես»:

Իսկ Բէլն, յանդրուն և անճոռնի գորութեամբ ամբոխին, որպէս յործան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հենեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին կստահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշիմ և խոհեմ սկայն քաջազանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաք զորդիս իր և զքոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլսն ևս որ ընդ իրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս<sup>4</sup> ունելով յինքեան ծկուն: Եւ կոշեցեալ զգօրս իր՝ ասէ ցնոսս. «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ, դիակել ջանացուք տեղույն, ուր անցեալ կայցէ<sup>5</sup> ի մէջ խոսն քաջացն Բել: Զի կամ մնեցուք, և աղիս մեր ի ծառայութին Բելայ կացցէ, կամ զաջողութին մատանց մերոց ի նա ցուցեալ ցրուեսի ամբոխն, և մեր եղիցուք յարդութին ստացեալք»:

Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէկս՝ հասանեն ի միջոց ինչ դաշտածն՝ լերանց բարձրագունից: Եւ յաջմէ<sup>6</sup> ջուր հոսանաց ի բարձրաւան-

դակում կուռ կալով ի տեղուց<sup>7</sup>, ի վեր զերեսս ամբարձեալ՝ երևեցաւ նոցարազմութին անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդրուգն յարձակմանք ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխի մեծաւ ի ծախմէ<sup>8</sup> ջուրցն ի վերայ ոստոյ միոյ, իբրև ի դիտանցի: Ծանեալ Հայկ զխումք վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ<sup>11</sup> ընտրիք և վառելով ոմամբք. և երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն<sup>12</sup>: Եւ ինքն զիսանոց ագուցեալ երկարի, նշանաւորօք վերջիք<sup>13</sup>, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից<sup>14</sup> և բազկաց. գոտուորեալ զմէջսն, և յահեկէ զուրն երկսայրի. և նիզակ ամարի ի ծեռին իրում աջոյ և յահեկումն վահան, և ընտիքք յաջմէ և ի ծախմէ: Եւ տեսեալ Հայկին զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիքս ընդ նմա աջինս և ահեկինս՝ կարգէ զԱրամանեակն երկու եղբարքք ընդ աջմէ<sup>15</sup>, և զԿաղմոս և զայլս երկուս յորդոց իրոց ի ծախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իր կարգեաց. երեքանկինի իմն կարգեաց ծնով, հանդարտ յառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս՝ ահագին դղյրդմունս ի վերայ յերկիրի առնէին շահանտակենով, և ահս պակուցանողս տարազորու<sup>16</sup> յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին: Անդ ոչ սակաւը յերկոցունց կողմանց արք յաղբանդամք բերանոյ սրոյ դիակեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի անակնունելի դիապուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհուցաւ, և ի նոյն բլուր ուստի էջմ՝ վերջունեալ ելանէր<sup>18</sup>. քանզի խորհեր ի միջոցի ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցտ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնային, դիակեցուցանէ զերեքնեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարստի պարճ. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին զործ քաջության՝ փախեան իրաջանչիր դէպ երեսաց յիրեանց: Եւ վասն այսորիկ այսաչի բաւական լիցի ասել:

Բայց զտելի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յարքութեան պատերազմին. այսորիկ աղազաւ և գաւառն այժմ անուանի Հայոց Զոր: Իսկ զբլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանակը: Բայց զդիակն Բելայ պաճունեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանելի Հարք, և թաղելի բարձրաւանդակ տեղուց, ի տեսիլ կանանց և որդոց իրոց: Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախստյն մերոյ Հայկայ՝ Հայք:

(Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԱ)

1 նկատի ունի Մարտ Աբաս Կատինային  
 2 առ նախդիրը հայցական հողովի  
 հետ վրա իմաստով՝ ամենքի վրա  
 3 դերբայական երկրորդական  
 նախայաստություն է, որի ենթական դրված է  
 տրական հոլովով, իսկ ստորոգյալները՝  
 անորոշ դերբայով  
 4 ձկուն բառի որոշչին է՝ մանր  
 5 ուր անցեալ կայցե՛ռ անցած կանգնած կյանք  
 6 բացառականը ներգոյականի իմաստով  
 7 կոռ կալով ի տեղտջամուր դիրք գրավելով  
 8 այստեղ՝ բլոր իմաստով  
 9 ծանեաւ-ճանաչեց

10 վառեալ-սպառազինված  
 11 օժանդակ բայց զեղչված է  
 12 նախայաստության ստորոգյալը  
 (եր. կայր) չի արտահայտված  
 13 նշանաւորօք վերջիւր-նշաններ  
 ունեցող վերջերու  
 14 բարձր. այստեղ՝ ազդրեր  
 15 ընդ նախդիրը բացառականի  
 հետ ներգոյականի իմաստով  
 16 այստեղ՝ ծև երով  
 17 զնախջիրը գործիականի հետ վրա իմաստով  
 18 վերջուննեալ երանել-ետ  
 բաշվելով բարձրանալ

## ԴԱՍ ԶՍԱՑՄԵԿԵՐՈՐԴ

### ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

**§ 122.** Ցուցական դերանուններն են՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն իմբռում ընկած են ս, դ, ն արմատական հնչյունները:

**Ծանոթություն.** Այս, այդ, այն, սոյն, դոյն դերանուններով և պէս (պի), չափ, քան բառերով կազմվում են նաև հետևյալ ցուցական դերանունները՝ այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի, այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նոյնչափ:

**§ 123.** Սա, դա, նա

### Եզակի

ՈՒ.	սա	դա	նա
Հ.	(զ)սա	(զ)դա	(զ)նա
Ս.	սորա	դորա	նորա
Բ.	սմա	դմա	նմա
Գ.	ի սմանէ	ի դմանէ	ի նմանէ
	սովաւ	դովաւ	նովաւ

### Տոգնակի

ՈՒ.	սորա	դորա	նորա
Հ.	(զ)սոսա	(զ)դոսա	(զ)նոսա
Ս.	սոցա	դոցա	նոցա
Բ.	ի սոցանէ	ի դոցանէ	ի նոցանէ
Գ.	սոքաթ(օք)	դոքաթ(օք)	նոքաթ(օք)

**Վարժություն 94.** Թարգմանել, որոշել առ, դա, նա ցուցական դերանունների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Զշառակի արմատոյ դրոր թողէ՛ք յերկրի: Զի սոցա աւելի վնասակար են գազանաց՝ քան թէ գազանքն սոցա: Չիք հաւատք ի սմա: Չներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նորօք սրբեմք: Ի նմանէ կերակրին և ի ծոց նորա հանգին: Կամ նա զսա ապականէր, կամ սա զնա: Աչք մեր գիշացեալ են արտասուօք ի կծութենէ ծխոյ դրորա:

**Վարժություն 95.** Թարգմանել, գրաբար:

Հավատացե՛ք դրան: Նրանք ուրախանում են սրանցով: Չենք վախենում սրանց: Դրանով կնքեց հրովարտակները: Դրա միսը չի ուտվում: Դրանցից կլուեն մանգաղներ և խոփեր: Դրա մեջ չկա (ոչ գոյ) խոնավություն:

**§ 124. Այս, այդ, այն**

Այս, այդ, այն դերանունները հոլովվում են երկու ծևով՝ կարճ և երկար: Երկար ծև երը հանդես են զայիս եզակի թվի թեր և հոգնակի թվի բոլոր հոլովներում:

### Եզակի

ՈՒ.	այս	այդ	այն
Հ.	(զ)այս	(զ)այդ	(զ)այն
Ս.	այսր, այսորիկ	այդր, այդորիկ	այնր, այնորիկ
Բ.	այսմ, այսմիկ	այդմ, այդմիկ	այնմ, այնմիկ
Գ.	յայսմ, յայսմանէ	յայդմ, յայդմանէ	յայնմ, յայնմանէ
	այսու, այսուիկ	այդու, այդուիկ	այնու, այնուիկ

### Տոգնակի

ՈՒ.	այսր,	այդր,	այնը,
-----	-------	-------	-------

Հ.	այսորիկ (զ)այս,	այդորիկ (զ)այդ,	այնորիկ (զ)այնս,
Ս.	այսցիկ այսցից,	այդցիկ այդցից,	այնց, այնցիկ այնցից,
Բ.	այսցիկ կամ յայսցիկ	այդցիկ կամ յայդցիկ	այնց, կամ յայնցիկ այնցիք
Գ.	այսորիւր (այսորիմբք)	այդորիւր (այդորիմբք)	այնորիւր (այնորիմբք)

**Ծանոթություն.** Հոգնակի հայցականում այս և այդ դերանունների կարծ ձևերը և հոլովակերտ չեն ստանում: Հոգնակի գործիականում այս դերանունները հոլովվում են միայն երկար ձևերով՝ այսորիւր, այդորիւր, այնորիւր:

§ 125. Այս, այդ, այն դերանունները գործածվում են գոյական անունների հետ և նախադաս, և նշանադաս:

Նախադաս գործածվեիս այս, այդ, այն դերանունները՝ ա) հոլովվում ու թվով համաձայնում են գոյական անուններին, բացի հոգնակի ուղղական և հայցական, մասամբ էլ գործիական հոլովներից, որտեղ մնում են եզակի, բ) հոլովվում են կարծ ձևով, դ) իրենց վրա են կրում գոյականների նախորդները:

### Հոլովման օրինակ

Եզակի	Դոգնակի
ՈՒ. այս ժամանակ	այս ժամանակը
Հ. (զ)այս ժամանակ	(զ)այս ժամանակս
Ս. այսր ժամանակի	այսց ժամանակաց
Բ. յայսմ ժամանակի	այսց ժամանակաց
Գ. այսու ժամանակաւ	այսու ժամանակաւք(օր) կամ այսորիւր ժամանակաւք(օր)

**Ծանոթություն 1.** Նշված կանոններն ունեն շեղումներ. ա) երեմն այս, այդ, այն դերանունները հանդես են զայիս երկար ձևերով՝ այնորիկ գրի (Կոր., Ը), այսորիկ թագաւորը (Ա. Մաց., Ա, 43). բ) հոլովվում ու թվով կարող են շիամաձայնել գոյականներին՝ յայց սերմանէ (Եզնիկ, 2-րդ, Ժ), այս գործով (Բուզ., 4-րդ, Դ), այս սեանց (Ազ., ԾԲ, 737). գ) գոյականը կարող է ստանալ

համապատասխան դերանվան հողը՝ այդ հրամանիդ (Փարպ., 2-րդ, ԻԶ), յայսմ ժամանակիս (Բուզ., 5-րդ, Դ):

Ետադաս գործածվելիս այս, այդ, այն դերանունները՝ ա) հոլովվում ու թվով համաձայնում են գոյական անուններին. բ) հոլովվում են երկար ձևով. գ) գոյականի նախորդները (բացի առ նախորդից) կրկնվում են դերանունների վրա. դ) գոյականները ստանում են համապատասխան դերանվան հողը՝ ս, դ, մ:

### Հոլովման օրինակ

Եզակի	Դոգնակի
ՈՒ. ժամանակս այս	ժամանակը այսորիկ
Հ. (զ)ժամանակս զայս	(զ)ժամանակս զայսորիկ
Ս. ժամանակիս այսորիկ	ժամանակաց այսորիկ
Բ. ի ժամանակէս յայսմանէ	ի ժամանակաց յայսմանէ
Գ. ժամանակաւս այսուիկ	ժամանակաւք(օր)ս այսորիւր

**Ծանոթություն 2.** Նշված կանոններն ունեն մասնակի շեղումներ. ա) երեմն այս, այդ, այն դերանունները հոլովվում են կարծ ձևով՝ բանակի այնը (Փարպ., 3-րդ, ՀԵ), ի մեծ զահոյս յայսմ (Եղիշէ, էջ 83). բ) հոլովվում ու թվով կարող են շիամաձայնել գոյականներին՝ արքս այս (Գործ., ԺԶ, 17), բանքն այն (Բուզ., 5-րդ, ԼԸ), ի խորիորդս յայս (Փարպ., 3-րդ, ԿԶ). գ) նախորդները կարող են չկրկնվել դերանունների վրա՝ ըստ բանիդ այդմիկ (Ծննդ., ԽԴ, 8), զրադարձն այնորիւր (Յեսու, ԺԹ, 8). դ) գոյականը կարող է չստանալ համապատասխան դերանվան հողը՝ ի տեղոտք յայդմանէ (Ծննդ., ԺԳ, 14), ի ժամանակի անդ յայնմիկ (Բուզ., 4-րդ, ԽԵ), յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ (Բուզ., 5-րդ, ԽԴ):

**Վարժություն 96.** Թարգմանել, որոշել ամկախ գործածված այս, այդ, այն ցուցական դերանունների հոլովն ու թիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:

Պատիւս և պարզես այնոցիկ շնորհեր: Երանի իցէ այնմ, որ հաւատայ իս: Այդմ ես լինիմ երաշխատը: Բազումք այնորիկ էին, որ իբրև լսէիմ գովեմ զպատասխանիսն: Այնն ոչ էր տեղեակ: Ոչ այսու միայն զարմանալի է: Եւ յայնմանէ խնդրէր Սահակ փախչել յԱրշակայ: Փրկեա՛ զիս յայնցանէ, ոյք գործեն զանօրէնութիւն: Եւ այսու ցուցան՝ թէ տկար էր Զրուանն: Այսմ հաւատացեալ Արշակ, յէտ զնոյն իսկ զՎարդան առ Գնել:

**Վարժություն 97. Թարգմանել, որոշել գոյականների հետ գործածված այս, այդ, այն դերանունների հոլովն ու թիվը՝ բացատրելով հոդերի ու նախադր ների կիրառությունը:**

Ուստի՝ է ինձ մին՝ տալ ամենայն ժողովրդեանս այսմիկ: Պատգամս յրի օրինակաւ այսուիկ: Մի՞թ ի վիմէս յայսման հանիցեմք ճեզ ջուր: Եւ մին դեռ պատասխանի այս քորոց ոչ էր ընկալեալ, վախճանի Արգարիսու: Ծինեաց նորոգեաց զամենայս եկեղեցիս կողմանցն այնոցիկ: Անկանէր ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ: Իրը ելանիցէր ի տանէն կամ ի քաղաքէն յայնման: Դու ես ապաւէն իմ ի նեղութենէս յայսման: Եւ պատմեաց նմա Յովնարան զամենայն բանս զայսոսիկ: Մի՛ ուտիցէր յայդ ծառոյ: Յայն քաղաքու և տունս և ի գեւդս զամենայն համբարտն: Յայն տեղուց ծածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հողով: Այսու օրինակախորհեցաւ առնել զիշխանութիւնս Պարսից յանապատ աւերակ:

**Վարժություն 98. Թարգմանել, փակագծերի մեջ առնված դերանունները դմել գոյականի պահանջած հոլովով ու թվով:**

Եւ միսիթարեաց գրեզ տեսլեամբ (այլ): Այսուետու միսիթարեցէր զմեանս բանիւրս (այսորիկ): Յօժարեցին զարքայ՝ փոյք առնել վասն պիտոյիցն (այնորիկ): Եւ տայ պատերազմ ընդ նախարարսն (այնորիկ): Եւ ի ժամանակին (այն) յիշեաց քագաւորն Պապ գիհն զրոյցսն: Դու կարող ես փրկել զիս ի պղծութենէս (այս): Եւ (այնք) ժամանակաց մինչև ի քո հայրենի արոռոյ մեր զնոյն ծառայութիւն ծառայեցաք: Ի վերայ (այդ) վիմի շինեցից գեկեղեցի իմ: Զ(այն) ժամանակաւ երթեալ հասաներ եպիսկոպոսապետն Վրթանւս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց:

**Վարժություն 99. Հոլովել հետևյալ կապակցությունները:**

Այս ճանապարհ, ալբն(օրն) այն, ծառայդ այդ, դրաստրս այս, այն պարիսպ, այդ բան:

**Վարժություն 100. Թարգմանել գրաբար՝ այս, այդ, այն դերանունները գործածելով գոյականների հետ նախադրաւ:**

Այս քարերով կշինեմ իմ տունը: Չենք հավատում այդ խոսքերին: Այս նատանիով կկնքես հրովարտակը: Խմուտ էին այս գետի ջրից: Այդ պատերազմում կհաղթեն իրենց քշնամիններին: Այս պատվերները չենք մոռանա: Ես կինեմ միջնորդ այդ գործի: Օրսսորե գեղեցկացան այս քաղաքները: Այդ գե-

լիներից շատերը մեռան ճանապարհին: Շեր կամենում այն գինուց ըմպել: Այզիներ էին տնկում այս դաշտերում:

**Վարժություն 101. Թարգմանել գրաբար՝ այս, այդ, այն դերանունները գործածելով գոյականների հետ ետաղաւ:**

Այդ օրը կխավարի արեգակը: Այս գետերը սկիզբ են առնում այն լեռների բարձունքներից: Այդ դեղերով բուժեցին վիրավորներին: Մի՛ հանեք ջուր այն ջրինից: Այդ քաղաքը կոչվեց նրա անունով: Թշնամու զորքերը այն կողմից էին հարձակվում: Այդ հրամանները անմիջապես կկատարվեն: Այս քաղաքի հրապարակները գեղեցիկ են: Այդ անտառներում գազաններ են բնակվում: Հեռացեք այս քաղաքից, զնացեք այն քաղաքը:

§ 126. Սոյն, դոյն, նոյն

### Եզակի

ՈՒ.	սոյն	դոյն	նոյն
Հ.	(զ)սոյն	(զ)դոյն	(զ)նոյն
Ս.	սորին	դորին	նորին, նորուն
Բ.	սմին	դմին	նմին
Գ.	սովին, սովիմբ	դրվին, դրվիմբ	նովին, նովիմբ

### Հոգնակի

ՈՒ.	սորին, սոյնք	դորին, դոյք	նորին, նոյնք
Հ.	(զ)սոսին, (զ)սոյնս	(զ)դոսին, (զ)դոյնս	(զ)նոսին, (զ)նոյնս
Ս.	սոցին, սոցուն,	դոցին, դոցուն,	նոցին, նոցուն,
	սոցունց	դոցունց	նոցունց
Բ.	սոցին, սոցուն,	դոցին, դոցուն,	նոցին, նոցուն,
	սոցունց	դոցունց	նոցունց
Գ.	ի սոցունց	ի դոցունց	ի նոցունց
	սոքիմբք,	դրիմբք, դրվիմբք	նորիմբք, նովիմբք, նոքումբք

**Ծանոթություն 1. Դոյն դերանունն իմաստով համապատասխանում է դա, այդ դերանուններին և թարգմանվում աշխարհաբար դրանց համապատասխան ձևերով, օրինակ՝ Ըստ դմին օրինակի կորիցեն (Ազ., ԺԸ, 198): Դրա նման (այդ ձևով) կկորչեն:**

**Ծամոքություն 2.** Խիստ հազվադեպ եզակի սեռականում առյ դերանոնն ունենում է սորուն, հոգնակի գործիականում՝ դրումքը ձև երը, իսկ դրյ դերանունը հոգնակի գործիականում՝ դրումքը ձև ը:

§ 127. *Սոյն, դրյ, նոյն դերանունները գոյականների հետ գործածվում են նախադաս և սովորաբար հոլովով ու թվով համաձայնում նրանց: Հոգնակի ուղղականում և հայցականում այդ դերանունները գոյականների հետ գործածվում են սովորաբար եզակի թվով կամ սորին, դրին, նորին, զսուին, զդրին, զնուին, զնուին ձև երով, իսկ հոգնակի գործիականում համաձայնում են միայն հոլովով՝ թվով մնալով եզակի:*

### Հոլովման օրինակ

Եզակի	Ռոգնակի
ՈՒ. նոյն ճանապարի (զ)նոյն ճանապարի	նոյն կամ նորին ճանապարիք (զ)նոյն կամ (զ)նուսին ճանապարիս
Հ. նորին ճանապարիի	նոցին ճանապարիաց
Ս. նմին ճանապարիի	նոցին ճանապարիաց
Բ. ի նմին ճանապարիէ	ի նոցունց ճանապարիաց
Գ. նովին ճանապարիաւ(օր)	նովին ճանապարիաւ(օր)

**Ծամոքություն.** Նկատվում են հետևյալ շեղումները նշված կանոններից. ա) խիստ հազվադեպ սոյն, դրյ, նոյն դերանունները դրվում են գոյականից հետո՝ Եւ սորա աստուածս զնոյնս քարոզեն (Եզնիկ, 3-րդ, Բ), Զօրէնս և պաշտօն զնոյն ունի (Փարաք., 2-րդ, ԻԱ). բ) հաճախ հոլովով ու թվով չեն համաձայնում գոյականին՝ ի սոյն ժամու (Գ Թագ., Ժթ, 2), ի նոյն ամսնան (Կոր., ԻԴ, 15), նոյն շատօք (Խոր., 2-րդ, Զթ):

**Վարժություն 102.** Թարգմանել, որոշել այն, որին, նոյն դերանունների հոլովն ու թիվը:

Եւ որ քառնայ քարինս՝ նորիմքք չաշարեսցի: Եւ որդոյն պատուիրեաց վասն իր նմին յաշտ առնել: Նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել: Կին քազաւորին ևս զրգուեր զբազաւորն սովին քանիւք: Վաղքաղակի ի թիկունս հասանէին... Աղուանք... և այլ ևս որ ի սմին կողմանց: Յաղագս նորին Յովիաննու: Ի նմին ամի վախճաննեցաւ Արշէզ: Նովիմք զմանքս հնացեալս հնարին բժիշկը հատանել: Դովին մարմնովն պարտաւորեաց զմեղս աստուածախառն մարմնովն: Նովին իսկ անուամբ անուանին: Որ փորէ խորիսորատ՝ ի նոյն անկցի:

**Վարժություն 103.** Հոլովել հետևյալ կապակցությունները:

Սոյն հրաման, նոյն գետ, դոյն օրինակ:

**Վարժություն 104. Թարգմանել զրաբար. այ, այ, նոյն դերանունները վարդիմնել համապատասխանաբար այն, որին, նոյն դերանուններով՝ համաձայնեցնելով իրենց լրացյալներին նշված կանոնների համաձայն:**

Ըստ այդ հրամանի հեռացան այդ քաղաքից: Նրանք խմում էին այս ջրից: Այդ քարերով կշինեք ամբարտակը: Բնակում էինք նույն ավանում: Սրանով պատժում էր նրանց: Նոյն նշաններից ճանաչում է նրան: Առաջնորդվում էին նույն ցուցումներով: Նոյն գետի ջրերով ոռոգում էինք դաշտերը: Նոյն ծովն են գնում այս գետերը: Նրանք նոյն երկրից էին և նույն լեզվով էին խոսում: Պատմում է նույն թագավորի և իշխանների մասին (յաղագ):

### ՅԱՂԱԳՍ ԱՐԱՅԻ, ԵՒ ՄԱՐՈՒՄՆ ՆՈՐԱ ՊԱՏԵՐԱԶՄՄԱ-Ի ՀԱՄԱՐԱԾԱՅԱ

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճաննելն Նինոսի խնամակալեաց<sup>1</sup> իրոց հայրենեացն, նոյնպիսում շնորիի արժանայրեալ ի Նինոտ՝ որպէս և հայրն իր Արամ: Բայց վաւան այն և բորբոքիտոնն Չամիրամ ի բազում ամաց լուեալ<sup>2</sup> զգեղեցկութեն նորա՝ ցանկայր հասանել. այլ ոչ ինչ յայտնապէս զայսպիսի իշխել գործել: Իսկ յետ վախճանելոյն, կամ վախճատական լինելոյն Նինոսի ի Կրետ, որպէս հաւանեալ եմ<sup>4</sup>, համարձակ պատուելով Չամիրամայ<sup>5</sup> զախտն՝ առաք երեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիր և պատարագօք, քազում աղաշանօք և խոստմամբ պարզեց, զալ առ նա<sup>6</sup> ի Նինոտ, կամ առնով կնուրեան և քազայրեալ ի Վերայ ամենայն՝ որոց տիրեր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դարնալ մեծաւ պատարագօք և խաղաղութեամբ ի տեղի իր:

Եւ ի քազում անգամ երքն եկուրեան իրեշտակագնացութեանն լինել<sup>8</sup>, և յոչ հաւանել Արային, ի սաստիկ ցանան լեալ Չամիրամայ՝ ի վախճանի պատգամատրութեանն առնու զբազմութիւն զօրաց իրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի Վերայ Արայի: Բայց որչափ դիմացն<sup>9</sup> էր նշանակեալ, ոչ այնչափ ի սպանանել<sup>10</sup> զնա և ի հալածել<sup>10</sup> փութայր, քան թէ ի նուաճել կամ զրոամբ ածել<sup>11</sup>, զի լցոց զկամս ցանկութեան իրոց. զի առ յոյժ ցանկականի մոլեգնութեան<sup>12</sup>, ի քանսն որ զնմանե՝ որպէս ի տեսութիւն<sup>14</sup> շամբշութեամբ վարեալ էր<sup>13</sup>: Գայ հասանէ տագմապատ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ: Եւ ի լինել ճակատուն՝ պատուէր տայ զօրապետաց

իւրոց, թէ դեա լինիցի՝ հնարեկ ապրեցուցանել զԱրայն: Իսկ ի լինել մարտին հարկանի գօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն<sup>15</sup> Շամիրամայ: Դիակապուտ առաքէ տիկինն յետ յաղբութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականացն անկելց զըդալին իր և գտարփածուն: Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն:

Իսկ ի գրգռել միւսանգամ գօրացն Հայոց ի մարտ պատերազմի<sup>7</sup> ընդ տիկնոցն Սամիրամայ, քինախնդիր լինել մահուանն Արայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն լեզով զվերս նորա, և կենդանասցի»: Միանգամայն և ակն ուր դիւրութեամբ վիկութեան իւրոց կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տըփական ցանկութենեն: Իսկ իրքն նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենով ի վիենեծ և ծածկել. զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածով՝ համբաւ զնամնէ այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին զփափագ մեր և զիշչութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէջն և փառաւորեալը, իրքն հեշտացուցիչը և կամակատարը»: Կանգնէ<sup>16</sup> և նոր իմն<sup>17</sup> պատկեր՝ յանուն դից, և մեծապէս զոհիւր պատուէ, ցուցանելով ամենեցուն, իրք թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ: Եւ այսպէս համբաւեալ զնամնէ ի վերայ երկրին Հայոց, և հաւանեցուեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն:

Եւ որ ինչ յաղագս Արայի կարծառութիւն և այսափի շատ լիցի յիշատակել: Սա կեցեալ անս՝ ծնաւ զԿարդոս:

- <sup>1</sup> այստեղ՝ բազավորել իմաստով
- <sup>2</sup> լուսալ-լսելով
- <sup>3</sup> զործածկած է բայց իմաստով
- <sup>4</sup> հաւանեալ եմ-համոզված եմ
- <sup>5</sup> ենթական դրված է սեռական հոլովով
- անորոշ դերքայի զործիական հոլովի մոտ, որը հազվադեպ կիրառություն է
- <sup>6</sup> այստեղ՝ իմքն դիրանվան իմաստով՝ իր մաս սեռականով ավելացրույն է
- <sup>7</sup> ի բարու անզամ եղիս եկութեան հրեշտակագնացութեանն լինել-երք պատզաման-վորմերը շատ անզամ գնացին նկան
- <sup>8</sup> ներական դրված է սեռական հոլովով անցյալ դերքայի մոտ՝ դիմքն էր ցույց

### (Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԵ)

- <sup>9</sup> տալիս, դիմքից երևում էր ի նախոյիրն անորոշ դերքայի հետ նպատակի իմաստով
- <sup>10</sup> զբանք ածել-ձեռքը զցել առ յոյժ ցանկականի մոլեզնութեանն-մոլեզին ցանկության (Կրթի) պատճառով
- <sup>11</sup> այսինքն՝ շամբչութեամբ վառեալ էր ի բանն, որ զնամն-ուռփանքով միրահարվել էր այն զրուցներին, որ նրա մասին (պատմում էին) որպէս ի տեսութիւն-ինչպես տեսմելիս լիներ այստեղ՝ զիմվոր իմաստով
- <sup>12</sup> այստեղ՝ կանգնեցնում է
- <sup>13</sup> իմն-իմչ-որ, մի
- <sup>14</sup> այստեղ՝ արձան իմաստով

## ԴԱՍ ԶՄՄՆԵՐԿՈՒԹՅՈՒՆ

### ՍԱՏԱԿԱՆ ԴԵՐԱԾՈՒՆԵՐ

§ 128. Ստացական դերանուններն են՝ իմ, քո (քոյ), մեր, ձեր, իր, որոնք առաջացել են անձնական դերանունների սեռական հոլովածներից և հոլովվով են տարբեր ծևով՝ արտաքին թերման Ո պարզ հոլովմամբ. Եզակի տրականում ստանում են ում, իսկ եզակի բացառականում՝ է հոլովակերտ մասնիկները: Ներգոյականի իմաստն արտահայտվում է ընդհանուր ծևով՝ ի(j) նախղրով, եզակի տրական և հոգնակի հայցական հոլովներով.

### Եզակի

ՈՒ.	ԻՄ	ՔՈ,	ՔՈՅ	ՄԵՐ	ՁԵՐ	ԻՐ
Հ.	(զ)իմ,	(զ)քո,	(զ)քոյ	(զ)մեր	(զ)ձեր	(զ)իր
Ս.	իմոյ	քոյ,	քոյոյ	մերոյ	ձերոյ	իրոյ
Տ.	իմում	քում,	քոյում(քոյոյ)	մերում	ձերում	իրում
Բ.	յիմնէ	ի քումէ,	ի քոյոյ	ի մերմէ	ի ձերմէ	յիրմէ
Գ.	իմով	քով,	քոյով	մերով	ձերով	իրով

### Հոգնակի

ՈՒ.	ԻՄԾ	ՔՈՅԾ	ՄԵՐԾ	ՁԵՐԾ	ԻՐԾ
Հ.	(զ)իմս	(զ)քոյս	(զ)մերս	(զ)ձերս	(զ)իրս
Ս.	իմոց	քոց,	քոյոց	մերոց	ձերոց
Տ.	իմոց	քոց,	քոյոց	մերոց	ձերոց
Բ.	յիմոց	ի քոց,	ի քոյոց	ի մերոց	յիրոց
Գ.	իմովց	քովց,	քոյովց	մերովց	ձերովց

§ 129. Ստացական դերանունները գործածվում են գոյականների հետ և նախադաս, և ենտադաս՝ սովորաբար հոլովով ու թվով համաձայնելով նրանց, բացի հոգնակի ուղղական և հայցական, մասամբ էլ գործիական հոլովներից, որտեղ դրվում են եզակի թվով:

### Հոլովման օրինակ

#### Եզակի Հոգնակի Եզակի Հոգնակի

ՈՒ.	ԻՄ ՄԵՐԾ	ԻՄ ՁԵՐԾ	ՄԵՐԾ ԻՄ	ՁԵՐԾ ՄԵՐԾ
-----	---------	---------	---------	-----------

Հ.	զիմ տուն	զիմ տունն	զտուն իմ	զտունս իմ
Ա.	իմոյ տան	իմոց տանց	տան իմոյ	տանց իմոց
Տ.	իմում տան	իմոց տանց	տան իմում	տանց իմոց
Բ.	յիմնէ տանէ	յիմոց տանց	ի տանէ իմնէ	ի տանց իմոց
Գ.	իմով տամբ	իմովք տամբք	տամբ իմով	տամբք իմովք

**Ծանոթություն. Քո (Քոյ) ստացական դերանունը նախադաս գործածվելի սովորաբար հոլովկում է քոյ, իսկ ետաղաւ՝ քո իմքերով՝ քոյոյ տան, քոյոյ տան, տան քոյ, տան քում և այլն:**

**Վարժություն 105. Թարգմանել, որոշել ստացական դերանունների հոլով ու քիվը՝ եզակին դարձնելով հոգնակի, իսկ հոգնակին՝ եզակի:**

Եւ առաքէր յիրմէ նմա պատարազ հաշտութեան: Զգաւառն և գծովն անուանէ իրով անուամբն: Որոնէ հովի զիանդերձս իր: Հող ոտից իմոց ջանայ լինել: Եւ մազ մի ի զիսոյ ձերմէ ոչ կորիցտ: Որ է ի տէրութեան քում: Զգիր ողջունի քոյոյ տեսի: Եւ կերակրես զամենեսեան կամովք քովք: Հանապազ տեսանեն զիրեսս հօր իմոյ: Իմովք ականջօք լուայ ի Գնելայ: Ոչ ընդունիմ ի տանէ քում զուարակս, և ոչ ի հօտից քոց նոխազս: Յաշխարիի ծերում փառաւորեցան:

**Վարժություն 106. Թարգմանել, փակագծերի մեջ առնված ստացական դերանունները դնել համապատասխան հոլովով ու քվով:**

Ամենայն մարդ զսերմն վաստակոց (իւրք) ժողովէ: Ի ձայնէ որոտալոյ (քո) սարսիցն: Ինքն (իւրք) ծեռօքն լուանայր զամենեսեան: (Ձեր) խորհրդի գործեն զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մողաքտն: Հաւաքէ զորդիս (իւրք) և զրոռուն: Իսկ աշխարհս (մեր) կոչի յանուն նախնույն (մեր) Հայկայ Հայք: Զգեսա ծեռամբ (քո) զգաւազան (քո) ի վերայ գետոյն: Տայր հրաման Վասակայ (իւրք) գօրավարին զօր ժողովել: (Իւրք) ծեռօք խորտակեաց զիաստառն կնիք մատանույ:

**Վարժություն 107. Հոլովել հետևյալ կապակցությունները:**

Քոյր իմ, մեր զիստ, քոյ հրաման, հայր ծեր, եղբայր իւր:

**Վարժություն 108. Թարգմանել գրաբար, գոյականների հետ գործածված դերանունները դնել նախադաս կամ ետաղաւ՝ համաձայնեցնելով հոլովով ու քվով ըստ նշված կանոնների:**

Թորափում էր իր ոտքերի փոշին: Թազավորը հրամայեց իր գորավարին: Ջո ձեռքով կզրես այդ: Իր կամքով իշխանությունը բողնում է հայոց նախարարներին: Գնում է Հայոց երկիրը իր որդիներով և բողներով հանդերձ: Ձեր խոսքերով քշնամություն եք գրգռում: Գրի՛ մեր ազգի պատմությունը: Ահա մոտենում է ձեր փրկության ժամանակը: Մեր ծայնից ճանաչում են մեզ: Ամեն ինչ կլինի քո կամքի համաձայն (ըստ): Բազում ազգեր են ապրում մեր երկրում: Մեր այգիներն առատ քերք կտան:

## ՓՈԽԱԴԱՐՉ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

§ 130. Փոխադարձ դերանուններն են՝ միմեանց, իրերաց, որոնք հոլովկում են անվանական հոլովմամբ՝ ա հոլովիչով, ըստ որում միայն հոգնակի թվով և չընեն ուղղական հոլովածն:

ՈՒ.	(Պ)միմեանս	(Վ)իրեարս
Հ.	միմեանց	իրերաց
Ս.	միմեանց	իրերաց
Բ.	ի միմեանց	յիրերաց
Գ.	միմեանք	իրերաք(օք)

**Վարժություն 109. Թարգմանել, որոշել փոխադարձ դերանունների հոլովը:**

Կորինք առիւծու լրին զմիմեանս: Զիա՞րդ իցեն քշնամիք միմեանց Որմիզն և Արհմնն: Երկու հակառակ իրերաց՝ միմեանց ծախիչը են: Գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին: Անդ պատահեցին միմեանց եղջբար և տեսին զերեսս իրեանց: Մեկնեցան ի միմեանց առնակինն և կյուն: Որ ընդ միմեանս կոռուն, և միմեանց հակառակ են: Նա և ազատակոյտն, խանանադադան ամրոխիւն հանդերձ, զմիմեանքք դիզանէին ի միմեանց վերայ: Եւ հրաժարեցաք ի միմեանց և ելաք ի նաւն:

**Վարժություն 110. Թարգմանել գրաբար:**

Հայրն ու որդին բաժանվեցին միմյանցից: Միսիթարում էին միմյանց և ասում: Ողջուն էին տախս միմյանց: Զկարողացավ նրանց իրարից բաժանել: Հարգում և սիրում էին իրար: Հպարտանում և ուրախանում էին միմյանցով: Նրանք իրար նման չեն: Խոլում էին ավարը իրար ձեռքից: Զանում էին տիրել միմյանց վրա (ի վերայ): Նեսպաններ էին առաքում միմյանց մոտ:

Յաղագս Շամիրամայ, թէ էր աղագաւ կոտորեաց գորդիս իւր, և թէ ո՞րպէս փախատական լինի ի Զրադաշտէ մոզէ ի Հայս, և մեռանի ի Նիմուասայ որդ ույ իւրմէ:

Սա հանապազ յաճառնայինսն<sup>1</sup> ի խաղալն իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանի<sup>2</sup> զոր շինեաց ի Հայս կողմնապետ և վերակացու Ասորեստանի և Նիմուէի թողու զԶրադաշտ մոզ՝ նահապետ Մարաց: Եւ զայ այսպէս բազում ժամանակս կարգեալ Շամիրամայ՝ ամենսին հաւատայ նմա յարդարել<sup>4</sup> զիւր իշխանութիւնն:

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեամ, և ապրի կրտսերագրյն միայն, որ է Նիմուաս: Բարեկամաց և հոմանեաց իւրոց պարզնելով զամենայն իշխանութիւն և զգանձն՝ ոչ ինչ վասն որդոց իւրոց փոյք յանձին ուներ: Քանզի և այրն նորա Նիմու ոչ, որպէս ասի, մեռեալ բաղեցաւ ի նմանէ ի Նիմուէ յարդունիսն, այլ իմացեալ զախտասէր բարս նորա և զշարասէր, թողեալ գրագատրութիւնն՝ փախստական անկանէր ի Կրետէ: Իսկ ի հասակ և ի միտս հասեալ որդոց նորա՝ յիշեցուցանեն նմա զայս ամենայն, կարծելոց ցածուցանել զնա ի դիւական պակշոտութենէն, և աւանդել զիշխանութիւնն և զգանձն՝ որդոց իւրոց: Ընդ որ առաւել զայրազնեալ՝ սատակէ զամենեսեամ. և մնայ միայն, որպէս վերագոյնն ասացաք, Նիմուաս:

Իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել<sup>6</sup>, պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ, քանզի քոնանալ ի վերայ ամենայնի խորհեր մարն: Եւ ի սաստկանալ պատերազմին փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս: Աստ ժամանակ Վրէժխնողութեան պատեհ գտեալ Նիմուասայ՝ սպանան զմայրն և ինքն բագատը ի վերայ Ասորեստանի և Նիմուէի: Ահա ասացաք և յաղագս մահուան Շամիրամայ, թէ ուստի՝ և ո՞րպէս:

### (Մովսէս Խորենացի, 1-ին, ԺԷ)

<sup>1</sup> ամեն ամառ, ամառները

<sup>2</sup> ամառանոցային

<sup>3</sup> այստեղ՝ կարգավորելով

<sup>4</sup> այստեղ՝ վարել, դեկավարել

<sup>5</sup> փոյք յանձին ունենաց տանել

<sup>6</sup> իսկ ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել-իսկ երբ Զրադաշտը տիկնոց դեմ մի սխալանք գործեց, և մեջտեղը հակառակություն ընկավ

### ԴԱՍ ԶՍԱՆԵՐԵՁԵՐՈՐԴ

#### ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԽՆԵՐ

§ 131. Հարցական դերանուխներն են՝ ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ, քանի՞, ո՞ր, ո՞րպէս, ո՞րշափ, որքա՞ն, ե՞րբ, ինչպիսի՞, ո՞ւր, յո՞ (=ո՞ւր), ուստի՞ (=որտեղի՞ց), ո՞րպիսի: Հարցական դերանուխները նույն այս դերանուխներն են առանց հարցականի:

Հարցական-հարաբերական դերանուխներից հոլովկում են միայն ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ, ո՞ր, քանի՞, ըստ որում ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ դերանուխները հոլովկում են դերանվանական, իսկ ո՞ր, քանի՞ դերանուխները՝ անվանական հոլովկմամբ: Ո՞ր-ը հոլովկում է ո հոլովիչով, եզակի տրականում ստանալով ում, բացառականում է հոլովակերտ մասնիկները, իսկ քանի՞-՛՛ Ո-Ա խառն հոլովմամբ:

Եզակի	Տոգնակի	Եզակի
Ո. ո՞, ո՞վ	ո՞յք	զի՞, զի՞նչ
Հ. զո՞, զո՞վ	զո՞յս	զի՞, զի՞նչ
Ս. ո՞յր	ո՞յց	է՞ն
Տ. ո՞ւմ	ո՞յց	ի՞ն, իի՞ն, էրո՞ւմ
Բ. յումէ՞	յո՞յց	յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞
Գ.	-	ի՞ն

Ո՞, ո՞վ դերանուխները եզակի բացառականում հանդիպում են նաև յումէ՞ ծնով, իսկ գործիական հոլովկում նրանց պակասած ծների փոխարեն գործածվում են ո՞ր դերանվան համապատասխան ծները՝ որո՞վ, որո՞վ:

Զի՞, զի՞նչ դերանուխների զ-ն նախդիր է, որը պահպանվում է բացառական հոլովկում, որտեղ հանդես է զալիս նաև առ նախդիրը:

Զի՞, զի՞նչ, է՞ր, ի՞ն, իի՞ն, էրո՞ւմ, յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞ նշանակում են ի՞նչ, իմշո՞ն, իմշո՞ն համար, իմշի՞ց, իմշպե՞ս: Այս իմաստներով գործածվում են նաև ընդէ՞ր, վասմ է՞ր, է՞ր աղագաւ, զիա՞րդ հարցական բառերը:

Եզակի	Տոգնակի	Եզակի	Տոգնակի
Ո. ո՞ր	ո՞րք	քանի՞	քանի՞ք
Հ. զո՞ր	զո՞րս	զքանի՞	զքանի՞ս
Ս. որո՞յ	որո՞ց	քանու՞յ կամ քանո՞յ	քանու՞յց
Տ. որո՞ւմ	որո՞ց	քանու՞յ կամ քանո՞յ	քանու՞յց
Բ. յորմէ՞	յորո՞ց	ի քանու՞յ կամ ի քանո՞յ	ի քանու՞յց
Գ. որո՞վ	որո՞վք	քանեա՞յ կամ քանո՞վ	քանեա՞յք (քանեօ՞ք)

§ 132. Հարցական-հարաբերական դերանուններից գոյականի հետ գործածվում են՝ զի՞նչ, քանի՞, ո՞ր, ո՞րշափ, ո՞րդէս, որքա՞ն, իմշալիսի՞, որոնք ինուս են միայն նախադաս: Ո՞ր դերանունը հոլովով ու թվով սովորաբար համաձայնում է իր լրացյալին, քայի հոգնակի ուղղական և հայցական հոլովներից, իսկ մյուս հարցական-հարաբերական դերանուններն ընդհանրապես չեն համաձայնում. օրինակներ՝ Յորում տեղուց և ինքն իսկ արժանի եղև առնով զկատարեալ նահատակորթինն (Եղիշէ, էջ 118): Զորո՞ց վկայից ասես (Ագ., Ի, 223): Ո՞ր ցաւք չաշշարիցեն զոգիս նոցա (Թոռն., Ա, էջ 102): Տեսէր դրպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ (Գաղ., Զ, 11) և այլն:

**Վարժություն 111. Թարգմանել, առանձնացնել հարցական և հարաբերական դերանունները՝ որոշելով նրանց հոլովն ու թիվը:**

Ո՞յր ես դու և ուստի՞ զաս կամ յո՞ երթաս: Ո՞վ է ի գալիքս: Ո՞ զիտասց զինչ գործիցեմք: Ուստի սակաւ մի կասկածուտն էր, անտի աներկիլ հաստատեցաւ: Չմէ՞ դարձուցանես զերեսս քո ի մէնց: Չումմէ՞ առնուն զիարկս: Եւ եթէ գայլ էր, զգառնն զլրմիզդ հի՞ն ծնանէր: Ո՞րպէս ընթեռնուս: Արարիմ՝ որպէս ուսանն: Ուր եսն երթամ, դուք ոչ կարեք զալ: Ո՞ւր առնէր զյաշտն կամ ի՞ւ Որո՞վ իշխանութեամբ առնես զայլ: Զի՞ խորիիք ի միտս ձեր: Զի՞նչ է այս, զոր լսեմս զրեն: Զինչ խնդրեսցես, տաց քեզ: Ե՞րբ ի քնոյ զարթիցես: Ո՞քան է զօրութին քո, արա՛: Հրեշտակը երբ լսեն զանուն աստուծոյ, ուրախ լինին: Բաշխեաց, ո՞շափ և կամեցանն:

**Վարժություն 112. Թարգմանել գրաբար:**

Ո՞ր քաղաքից ես զալիս: Ո՞ւմ խորերով եք դա հաստատում: Ինչո՞ւ չանսացիր իմ խորերին: Ո՞վ է նրա հայրը: Որտեղի՞ց ես ճանաչում ինձ: Ումի՞ց են վախենում քո որդիները: Ո՞ւր են զնում նրանք: Ինչո՞ւ այս ծառը պտուի յլ տալիս: Ո՞քեր են արժանի այդ մեծ պատվին: Ո՞ւմ է կամենում արքան փառավորել, եթէ ոչ ինձ: Ինչո՞վ պիտի միշիքարեմ քեզ: Ո՞ւմ պատկերն է սա: Քանի՞ տարով մեծ ես նրանից: Ի՞նչ ես խորիում նրա մասին: Ո՞ւմ պիտի տաս այդ ընծաները:

**ՅԱՐՉԱԿՈՒՄՆ ԱԱՆԱՑ Ի ՄԵԶ ԵՒ ՊԱՐՏՈՒՄՆ, ԵՒ ԽՆԱՄՈՒԹԻՒՆ  
ԱՐՏԱՇԻՄ ԸՆԴ ՆՈՍՍ**

Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնի, յինքեանս արկանելով<sup>1</sup> և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոյ զօրացն բազմութին, և լինի

պատերազմ ի մէջ երկրիս երկոցունց ազգացն քաջաց և աղեղնատրաց: Սակաւ ինչ տեղի տայ<sup>2</sup> ազգն Ալանաց, և զնացեալ անցան ընդ գետն մեծ Կուր, և բանակի առ եզերը գետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշիսի բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա:

Քայց քանզի զորդի Ալանաց արքային ծերբակալ արարեալ զօրացն Հայոց ածեն առ Արտաշէս, զխաղաղորթին խնդրէր արքայն Ալանաց, տալ Արտաշիսի զի՞նչ և խնդրեսցէ. և երդմունս և դաշինս ասէր հաստատել մշտնջենաւորս, որպէս զի մի՛ ևս մանկունք Ալանաց ասպատակաւ լիինից<sup>3</sup> եցեն յաշխարհն Հայոց: Եւ ի շառնուղ յանձն Արտաշիսի առ ի տալ<sup>4</sup> զպատանին, գայքոյ պատանույն յափն գետոյն ի դարաւանդ մի մեծ, և ի ծեռն թարգմանչաց ձայն ի բանակն Արտաշիսի.

Ձեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,  
Որ յաղբեցեր քաջ ազգին Ալանաց.

Եկ հաւամեաց քանից

Աշագեղոյ զստերս Ալանաց՝

Տալ զպատանիդ.

Զի վասն միոյ քիմո ոչ է օրէն դիւցազանց՝

Զայլոց դիւցազանց զարմից

Բառնալ զկենդանութին,

Կամ ծառայեցուցանելով

Ի ստրկաց կարգի պահել.

Եւ թշնամութին յալիտենական

Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

Եւ լուեալ Արտաշիսի զայսալիսի իմաստուն բանս, զնաց յեզր գետոյն. և տեսալ զկոյսն զեղեցիկ, և լուեալ ի նմանէ բանս իմաստութեան, ցանկացաւ կուսին: Եւ կոչեցեալ զգայեակն իր Սմբատ, յայտնէ նմա զկամս սրտի իւրոյ, առնով զօրիորդն ի կնութին իր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն, և զպատանին արձակել ի խաղաղութին: Եւ հաճոյ բուեցեալ Սմբատայ, յդէ առ արքայն Ալանաց՝ տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍարինիկ ի կնութին Արտաշիսի: Եւ ասէ արքայն Ալանաց.

Եւ ուստի՞ տացէ<sup>5</sup> քաջն Արտաշէս

Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց

Ընդ քաջազգոյն կոյս օրիորդին<sup>6</sup> Ալանաց:

Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգելն իւրեանց ասեն.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն զեղեցիկ,

Եւ հանեալ զոսկետոյ շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթն ընդ գետն,

Եւ ճգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Ընկց ի մէջք<sup>7</sup> օրիորդին Ալանաց.

Եւ շատ ցաւեցոյց զմէջք<sup>8</sup> փափոկ օրիորդին,  
Արագ հասուցանելով ի բանակն իր:

Որ և ճշմարտութեամբ ոմի այսպէս: Քանզի պատուեալ է առ Այանս մորք  
կարմիր, լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանն<sup>9</sup>, առնու զտիկին օ-  
րիորդն Սարինիկ: Այս է ոսկէօղ շիկափոկ պարանն: Դոյնչէս զհարսանեաց  
առասպելեալ երգեն, այսպէս ասելով.

Տեղ ոսկի տեղայր<sup>10</sup> ի փեսայութեանն Արտաշիսի.

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սարինկանն:

Քանզի սովորութին իսկ էր թագատրացն մերոց, փեսայութեամբ ի դուռ  
տաճարին հասանել<sup>11</sup> դահեկանս ճապաղել իրքն զիկապատեանն հոգվա-  
յեցոց. սապէս և թագուհեացն<sup>12</sup> յառագաստին՝ մարգարիտ: Այս է ճշմարտու-  
թին բանիցս:

### (Մովսէս Խորենացի, 2-րդ, 3)

1 յինքանս արկանելով-իրենց կողմը գօնկով  
2 տեղի տայ-նահանջում է  
3 ասպատակա իինից-  
ավագակային հարծակմամբ  
4 առ ի տայ-տալու  
5 ուստի՝ տաց-ո՞րոնից պիտի տա  
6 ընդ... օրիորդին-այս օրիորդի փոխարեն

7 վիս. ի մէջս  
8 վիս. զմէցս  
9 տուեալ ի վարձանս-վարձանը տալոց  
10 տեղ ոսկի տեղայր-ոսկի անձըն էր տեղուա  
11 փեսայութեամբ ի դուռ տաճարին  
հասանել-իրքն փեսա դահինի դուող հասնեխ  
12 սապէս և թագուհեացն-նույնպես  
և թագուհեները

## ՀԱՅ ԶՍՏԱՎՈՐՄԵՐՈՐԴ

### ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՄՆՈՒՆԵՐ

§ 133. Անորոշ դերանուներն են՝ ոմն, որ, իմն, ինչ, այլ, միւս (մեւս): Ոմն,  
որ դերանուները հոլովվում են իսպան՝ դերանվանական-անվանական, իմն-ը  
և ինչ-ը՝ դերանվանական, այլ-ը և միւս-ը՝ անվանական հոլովվումներով:

### § 134. Ոմն, որ.

Իմն, ինչ

Եզակի

Դոգմակի

Եզակի

ՈՒ. ոմն  
(զ)ոմն

որ  
(զ)որ

ոմանք  
(զ)ոմանս

իմն  
(զ)իմն ինչ  
(զ)ինչ

Ո.	ուրումն	ուրուք	ումանց	իրիք
Տ.	ումենն	ումեք	ումանց	իմիք
Բ.	յումեննէ	յումեքէ	յումանց	յիմեննէ
Գ.	ոմամք	-	ոմամքք	իիք

Ոք դերանունը եզակի գործիական հոլով չունի. պակասը լրացվում է ոմն  
դերանվան գործիական հոլովվածն ով՝ ոմամք: Հոգնակի թվում ոմն, ոք դերա-  
նունները հոլովվում են նույն ծև ով:

Իմն, ինչ դերանունները հոգնակի թվով չեն հոլովվում:

§ 135. Ոմն, ոք դերանունների վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը.

ա) Անկախ գործածվելիս նշանակում են մարդ, մի մարդ, մեկը, իսկ հոգ-  
նակին՝ ոմնաք, մի քանչիսը. օրինակ՝ Ասէ ոմն (=մեկը, մի մարդ) ցնա (Ղոկ.,  
Ժ. 23): Եթէ զարինն ոք (=մեկը) ըմպիցէ՝ սատակի (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Ու-  
մեննն (=մեկին) ետ հինգ քանքար (Մատք., ԻԵ, 15): Զգոյշ լեր, մի՛ ումեք  
(=որևէ մեկին) ասկցես (Մատք., Ը, 4): Փառքն յումեքը<sup>13</sup> (=ո՞ւմ կողմից) յաջո-  
ղեալ էին ննա (Եզնիկ, 2-րդ, Գ): Եւ ոմանք յերկուացան (Մատք., ԻԸ, 17):

բ) Որպես որոշիչ գործածվելիս նշանակում են մի, իսկ հոգնակի զոյակա-  
նի հետ՝ մի քանի. օրինակ՝ Եւ ոմն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւրագոյն (Եզնիկ, 2-  
րդ, Գ): Առաքէ ի կողմն հիսախոյ զմի ոմն յորդոց իրոց առ Հայկ (Խոր., 1-ին,  
ԺԱ): Եթէ ուտէր ոք՝ շնասէր (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Եւ ոչ ոք տայր ննա (Ղոկ.,  
ԺԵ, 16): Չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ (Բուզ., 5-րդ, Ե): Մի՛ թէ և զարաի-  
գեն և ոք կարիցէ ասել (Եզնիկ, 1-ին, ԻԵ): Մի՛ ոք օտար հաղորդեսէ քեզ (Ա-  
ռակ., Ե, 17):

§ 136. Իմն, ինչ դերանունների վերաբերյալ պետք է իմանալ հետևյալը.

ա) Անկախ գործածվելիս նշանակում են քան, մի քան, որևէ քան. օրինակ՝  
Եւ ինչ (=քան, որևէ քան) ոչ ունեին ուտել (Մարք., Ը, 1): Ոչ իմիք (=մի քանի)  
ազդիցէ այնուհետև (Մատք., Ե, 13): Չիք ինչ (=որևէ քան) ոք բնութեամբ չար  
է (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Քանզի և ոչ արարիչ իրիք (=որևէ քանի) էր (Եզնիկ, 2-  
րդ, Գ): Չիք ոք շարժին և փոփոխիչ՝ չէ եական. այլ կամ լեալ յումեք և յիմեք  
(=մի քանի կողմից), և կամ հաստատեալ ի չգոյէ (Եզնիկ, 1-ին, Բ):

բ) Որպես որոշիչ գործածվելիս նշանակում են մի, որևէ, ինչ-որ, մի քանի.

օրինակ՝ Եւ զօրութիւն իմն ծածուկ կառավար (Եզնիկ, 1-ին, Գ)=ԵՎ (կա) կառավարող մի գաղտնի զորություն: Զի ոչ ոք ուներ նշանակ ինչ յայտնի (=որևէ բացահայտ օրինակ) բարերար կոչելոյ զԱստուած (Եզնիկ, 1-ին, ԺԴ): Եւ արուեստագետ միայն նիւթը իմիք (=ինչ-որ նյութի) զնա համարիցին (Եզնիկ, 3-րդ, ԺԵ): Ապա եթե ի պղծոյ իմերէ արարածոց (=ինչ-որ ալիոծ արարածից) հրամայէր հրաժարել (Եզնիկ, 3-րդ, ԺԱ):

գ) Հաճախ ինչ դերանունը գործ է ածվում որպես թարմատար, հատկապես հարցական, ժխտական և թեական (պայմանական) նախարարություններում՝ արտահայտելով անորոշություն կամ սաստկացնելով, մեղմացնելով խոսքի իմաստը: Այս դեպքում այն աշխարհաբար կամ չի թարգմանվում, կամ թարգմանվում է ինչ-որ, որնէ ծնով, կերպով, երրեք, ամեննին, բնավ բոլորովին բառերով: օրինակ՝ Կարծեցի թէ նոքա նենգութեանը ինչ ետու նմա գերդում (Բուզ., 4-րդ, ԺԴ)=Կարծեցի թէ նրանք նենգությամբ նրան երդ վեցրին: Յորժամ վնաս ինչ առնիցեն (Եղիշէ, էջ 63)=Երբ որնէ վնաս հասցնեն: Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարրառեսցի (Բուզ., 4-րդ, ԺԴ)=Իսկ եթե հայկական հոդի վրա խիստ ծնով խոսի: Քանզի չնարի թուութեան իմիք՝ առանց կամաց՝ մերք բարի լինել, մերք չար (Եզնիկ, 1-ին, ԺԳ)=Ուրվիետն ինչ-որ (որնէ) եւրյուն առանց կամքի չի կարող մերք բարի լինել, մերք՝ չար: Ոչ ինչ զանգիտեաց զալ յատեան հրապարակին (Եղիշէ, էջ 129)=Ամեննին (բնավ) շվախեցավ զալ ներկայանալ հրապարակային ատյանին: Եւ արատ ինչ ոչ գոյ ի քեզ (Երզ., Դ, 7)=ԵՎ ամեննին (բնավ, բոլոր վիճ) արատ չկա քո մեջ:

դ) Իմն դերանունը հաճախ գործածվում է անունների գործիական հոլովի ծնի պարագայի պաշտոն կատարող բառերի և բայերի հետ՝ արտահայտելով անորոշություն, ստանալով ինչ-որ, մի տեսակ, մի ծնով, կարծես բառերի իմաստը. օրինակ՝ Փակեալ զերկին իբրև սրահակա իմն (Ազ., ԿԹ, 549)=Փակեց երկինքը կարծես ինչ-որ (մի տեսակ) վարագույրով: Երև էր իմն ի վերայ ամենեցուն աստուածային շնորհը (Եղիշէ, էջ 69)=Կարծես մի տեսակ աստվածային շնորհ էր երև ում բոլորի վրա: Մտադեւր իմն անսացիք անմտացն (Ակորնք., ԺԱ, 19)=Կարծես սիրով (հոժարությամբ) լսեցիք անմիտներին: Յետ մահուանն Սանատրկոյ արքայի շփորի իմն թագաւորութիւնն (Խոր., 2-րդ, ԼԵ)=Սանատրուկ արքայի մահից հետո թագավորության մեջ ինչ-որ (ինչ-որ ծնով) խառնաշփորություն է ընկնում:

ե) Իմն, ինչ դերանունները երեմն գործածվում են կրկնությամբ՝ իմն իմն, ինչ ինչ, իրիք իրիք, իմիք իմիք, իվիք իվիք, որոնք ունեն հոգնակի նշանակություն՝ արտահայտելով տարբեր, զանազան, պեսակես, տեսակ-տեսակ, մի բանի իմաստներ. օրինակ՝ Վասն իրիք իրիք տեսչութեանց (Եզնիկ, 1-ին, ԻԳ)=Զանազան բաներ կատարելու համար: Եւ զատ նմանութեան ծկանցն օրինակի զտանէ զնոսա իիք իիք (=տեսակ-տեսակ) (Թոռն., Բ, էջ 69):

§ 137. Հաճախ ոք, ինչ դերանունները գործածվում են հարցական դերանունների հետ և հոլովկում միասին.

Եզակի	Նոգմակի	Եզակի				
ՈՒ.	Ո՞յ	Ո՞յք	ոմանք	զի՞նչ	ինչ	
Հ.	զո՞ւ	զո՞յս	ոմանս	զի՞նչ	ինչ	
Ս.	ո՞յր	ուրութ	ո՞յց	ոմանց	է՞ր	իրիք
Տ.	ո՞ւմ	ումեր	ո՞յց	ոմանց	ի՞ն	իմիք
Բ.	յումէ՞	ումերէ	յո՞յց	ոմանց	առ իմէ՞	իմերէ
Գ.	(որո՞վ)	ոմամբ	(որո՞վք)	ոմամբք	ի՞ւ	իիք

Զի՞նչ ինչ կապակցությունը հոգմակի թվով չի հոլովկում:

§ 138. Այլ, միև

Եզակի	Նոգմակի	Եզակի	
ՈՒ.	այլ	այլք	միւս
Հ.	(զ)այլ	(զ)այլս	(զ)միւս
Ս.	այլոյ	այլոց	միւսոյ
Տ.	այլում	այլոց	միւսում
Բ.	յայլմէ	յայլոց	ի միւսմէ
Գ.	այլով	այլովք	միւսով

Այլ և միւս դերանունները հոլովկում են ո հոլովիչով, եզակի տրականում ստանալով ում, իսկ բացառականում՝ է հոլովակերտները: Միւս դերանվան հոգնակի ծն երը սովորական չեն:

Հաճախ այլ դերանունն անորոշ նշանակությամբ գործածվում է ոմն, ոք, իմն, ինչ դերանունների հետ և հոլովկում միասին՝ այլ ոմն, այլոյ ուրումն, այլում ումենմ... այլ ոք, այլոյ ուրութ, այլում ումեր... այլք ոմանք, այլոց ոմանց... այլ ինչ, այլ իմն, այլոյ իրիք, այլում իմիք...:

§ 139. Ոմն, ոք դերանունները գոյականների հետ գործածվելիս դրվում են կիմնականում ետաղաս՝ համաձայնելով հոլովով ու թվով:

Եզակի	Նոգմակի		
ՈՒ.	աշակերտ ոմն	աշակերտ ոք	աշակերտք ոմանք
Հ.	(զ)աշակերտ ոմն	(զ)աշակերտ ոք	(զ)աշակերտս ոմանս
Ս.	աշակերտի ուրումն	աշակերտի ուրութ	աշակերտաց ոմանց

Տ. աշակերտի ումենն  
Բ. յաշակերտէ ումեննէ  
Գ. աշակերտաւ ոմամբ

աշակերտի ումեր  
յաշակերտէ ումեր  
աշակերտաւ ոմամբ  
աշակերտաց ոմանց  
յաշակերտաց ոմանց  
աշակերտագ(օք)  
ոմամբք

**Ոմն դերանունը** (մասսամբ էլ՝ ոք) հաճախ դրվում է գոյականից առաջ՝ համաձայնելով հոլովով ու թվով. օրինակ՝ Եին ուրումն Սկսեայ Հրէի քահանայապետի եւթն որդի (Գործ., Ժթ, 14): Եւ գտանել զոմանս զաշակերտս (Գործ., Ժթ, 2):

**§ 140. Իմն, ինչ դերանունները սովորաբար դրվում են գոյականից հետո և ընդհանրապես համաձայնում հոլովով ու թվով, բացի հոգնակի թվի հոլովներից, որտեղ մնում են անկոփոխ, եզակի ուղիղ ձևով:**

### Եզակի Տոգնակի

ՈՒ.	տունկ ինչ	տունկը ինչ
Հ.	(զ)տունկ ինչ	(զ)տունկս ինչ
Ս.	տնկոյ իրիք	տնկոց ինչ
Բ.	ի տնկոյ իսերէ	ի տնկոց ինչ
Գ.	տնկով իրիք	տնկովք ինչ

**§ 141. Այլ դերանունը սովորաբար նախադասվում է գոյականին և հոլովով ու թվով համաձայնում նրան, բացի հոգնակի ուղղական և հայցական հոլովներից, որտեղ ընդհանրապես մնում է եզակի:**

### Եզակի Տոգնակի

ՈՒ.	այլ ազգ	այլ ազգք
Հ.	(զ)այլ ազգ	(զ)այլ ազգս
Ս.	այլոյ ազգի	այլոց ազգաց
Բ.	այլում ազգի	այլոց ազգաց
Գ.	յայլմէ ազգէ	յայլոց ազգաց
	այլով ազգաւ	այլովք ազգաւգ(օք)

Հաճախ այլ դերանունը նախադասվելիս հոլովով ու թվով մնում է անհամաձայն՝ «խառնեալ ընդ այլ դեղոյ» (Եզնիկ, 1-ին, Ժթ), «այլ տոհնեն»

(Փարս., 2-րդ, ԽԵ) կամ համաձայնում է հոգնակի ուղղական և հայցական հոլովներում՝ «այլըն հնախօսք» (Խոր., 1-ին, Զ), «զայլս... գրւնդս» (Խոր., 2-րդ, Ե). Կամ հանդես է զայլս ետադաս գործածությամբ՝ «ազգի այլում» (Դան., Բ, 44):

**§ 142. Միև դերանունը դրվում է գոյականից առաջ և համաձայնում հոլովով ու թվով. հոգնակի հոլովածների հետ չի գործածվում:**

### Եզակի

ՈՒ.	միւս կողմն
Հ.	(զ)միւս կողմն
Ս.	միւսոյ կողման
Բ.	ի միւսմէ կողմանէ
Գ.	միւսով կողմամբ

Երբեմն միւս դերանունը հանդիպում է ետադաս գործածությամբ՝ «ի զայլստ ամին միւսոյ» (Ազ., Բ, 23) կամ նախադաս գործածվելիս հոլովով չի համաձայնում՝ «ի միւս կողմանէ» (Խոր., 1-ին, Լ):

**Վարժություն 113. Թարգմանել որոշներ անկախ գործածված անորոշ դերանունների հոլովն ու թիվը:**

Ոչ յումերէ առի զիաց բռնի: Այլը հատանէին ոստս ի ծառոց: Չգրյ ինչ ծանանակակից Աստուծոյ: Ոչ իմիք կարօտանայ: Ումնենն ետ իմնզ քանքար և ումենն երկուս և ումենն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի և զնաց: Թէ կարօտ եղն յայլմէ նիւթ մուրանալ: Ցործամ իցէ ոք ուրուք թշնամի: Հրամայէ ոնանց ի նոցանէ երթալ ի զաւառն Աղիովուի: Ոչ այլ իրիք խոշտանգէ: Բայց զկանայսն Շապիոյ թագաւորին Պարսից ոչ ումեր ինչ թոյլ տայր Մուշեն զօրավարն Հայոց անարգել: Թէ որպէս ստուեր իրիք ոչ երբէք հեռանայ յիմերէն:

**Վարժություն 114. Թարգմանել թագաւորելով, թի նախադաս և ետադաս անորոշ դերանունները հոլովով ու թվով ինչպես են համաձայններ իրենց լրացյաններին:**

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաշար հիւանդացեալ՝ մերծ էր ի վախճանեկ: Ի կնոջ ումեմնեւ ծնաւ: Ի չարէ ումերէ արարչէ կարծիցին: Առարէ քազում համարձակութեամբ, հանդերձ Սանատորկաւ ումամբ: Կանայք ումանք ու բժշկեալ էին յայսոց չարաց և ի հիւանդութեանց: Քանզի շմարի բնութեան ի միք առանց կամաց՝ մերք բարի լինել, մերք չար: Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղյիսին ընդ արև ուստա հիւսիսոյ: Եւ չէ կարօտ այլում օգնականի: Խսկ ի միւսում աւտորն ընդ այզն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանին: Մասմբ միով ուրախացաւ, և միւսով ևս մաշամբ տրտմեցաւ մինչև ի ման: Զնոյն բաջադան այլովք պատմութեամբ կարկատեցին: Դէալ լիներ ումանց եղարց ի Հայաստան աշխարհէս: Քանզի ոչ ուրուր մեծ բազաւրի կայր ի նմա ծեռնարկութիւնը այսպիսիք: Թէ են ինչ ցաւք՝ որ վասն մեղաց լինին: Եւ ի մայ հրաժարեցոյ իբրև ի պղծոյ և ի խոտանէ իմերէ:

**Վարժություն 115. Հոլովել հետևյալ կապակցությունները՝ այր ոք, կին ոմն, ծառ իմշ, այլ քազաւրութիւն, ազգ այլ, միւս աւր (օր):**

**Վարժություն 116. Թարգմանել գրաբար:**

Իր բարեկամներից մեկին չէր ճանաչում: Նրանցից ումանց չէր հավասում: Ուն ի արյուրապետի դուստրը հիվանդ էր: Որն է մեկի կողմից չէր սիրվում: Սի՞րե ինչ-որ բանի կարիք եք գգում: Հետո երևաց ուրիշ կերպարանքով: Եկան մի ինչ-որ տեղ: Ինչ-որ բույսից դեղ էր պատրաստում: Կգա նրանց տերը և այզին կտա ուրիշ մշակների: Մեկին կսիրի, խսկ մյուսին կատի: Խսկ մյուս օրը հրամայեց սպանել նրան: Մյուս դրնով (ընդ դրան) ներս մտեք:

կարիք գգալ-կարօտանալ

## ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ՝ ՈՐ Եղել Ի ԶԻՐԱՒ, ԵՒ ՍԱՏԱԿՄԱՆ ԱՄԲԱՐԵՇԻՆ ՄԵՆՐՈՒԺԱՆԱՅ

Ազդ արարեալ Մեհրուժանայ յերկիրն խորասանայ առ Չապուի զամնայն օգնականութիւն թէողոսի զոր արար առ Պապ՝ եւանտ հրաման ի Չապիոյ՝ ամենայն զօրացն Պարսից երբալ ընդ Մեհրուժանայ ի Հայու ի պատերազմ: Դոյնապէս ազդեն<sup>1</sup> իմքնակալին թէողոսի Պապ և Տերենտիանոս զՉապիոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց եւանել ի վերայ մեր, բայց ի դրանկացն: Ապա և Աւգոստոսն թէողոս հրամայեաց Աղդէի կոմահն մեծի երալ յօցնականութիւն Պապայ, առնու զամենայն զօրս Յունաց, ոչ զոր թողոս

զոր ոչ առցէ. այլ և զիետնակս պահապան քաղաքացն, որք զմետաքսեայսն ունեին զվիշապս<sup>2</sup>:

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Զիրա, և մատեան ճակատ առ ճակատ: Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակամ նահատակալք, մտին ի մէջ ճակատուցն, առաջնորդութեամբ սպարապետին իլրեանց Սմբատայ ասպետի, որդոյ Բագարատայ, որ<sup>3</sup> յազգէն Բագրատունեաց: Եւ լին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին: Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զիւտ նոցա<sup>4</sup>, օրինակ իմն որպէս փոքրիկ յանտառէ տերևս աթափ, այնպէս երազ յերիկարացն առեալ<sup>5</sup> նիզակօք, դի ցորուր յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա<sup>6</sup> յիլրեանց ճակատն մտանել: Խսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին<sup>7</sup> նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրուն, իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ:

Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի գէնս ուկոյ և արձարոյ, և երիվարք նոցա նոյնպէս զարդու, և եր տեսանել իբրև զալարիսպ ինչ, յորոց յորովք ի ջղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյքս<sup>9</sup>. և ի վերայ նոցա անխալամ զէսք<sup>10</sup> նշանք արձակեալք իբր զաւդարք ինչ հովանաւոր ծառոց: Բայց զվիշապացն մանուածն<sup>11</sup>, ահազին բերանաբացութեամբ ուռուցեալ ի փշմանէ օդոյն<sup>12</sup>, ոչ ինչ ուրեք կարեմ նմանեցուցնել, այլ միայն իբրև զետան ինչ աղամանդեայ խոնարիկլ<sup>13</sup> ի ծով—բռվանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրսն: Քանզի և զնոսա էր տեսանել իբրև զիզօր ինչ գետ առ ի կորմն ի լայն ծաւալեալ. արդարն զջրոյ գոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն<sup>14</sup>:

... Խսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբը փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոցան ի դուրս ոստչէին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ճառագայքք. յորոց միայն ի տեսութեան զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել<sup>15</sup> հայել ընդդէմ արեգականն ծագման: Խսկ ի բաղիսել զմիմեանս՝ ենև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կուտէ ընդդէմ պարսկականին փշեալ: Եւ ի խառնակել մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Ծերգիր Նեկաց արքայ, զգլուս միջին զնոյին պանդութեամբ զտեղի ճակատուն կալեալ<sup>16</sup>: Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումքն, որպէս զշանքահար յերկիր կործանէր զքաջն, և զխումքն պտուտեալ՝ ի փախուստ դարձուցնելոր: Եւ այսպէս ի վերին օգնականութեան զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, դիակամբք թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնա-

ցորդսն ամենայն ի փախուստ շրջեալ հալածեցին: Ընդ որս և զՈւտնայր Աղուանից արքայ խոցուտեալ ի Մուշեղայ որդոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն:

Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ծին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն. որում աճապարեալ հասանէ սպարապետն Հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն էին կոտորեալ ձերքակալ առնէ զվատշուէրն յեզեր շամքն Կոզայովտի: Եւ զմտաւ ածեալ թէ գուցէ թափիցէ<sup>17</sup> զնա մեծն Ներմէս, այնորիկ աղազաւ ոչ ածէ ի բանակն. այլ գտենեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ, և շամփուր երկարի միս խորովելոյ: զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պասակ, և յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. «Պատակեմ զքնք, Մեհրուժան, քանզի ի խնդիր էր թագաւորել Հայոց. և ինձ ասպետիս պարտ է զքնք պատկել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»: Եւ մինչ դեռ տաքն էր իբրև զիուր՝ եղէ<sup>18</sup> ի գուխն Մեհրուժանայ, և այնպէս սատակեցաւ չարճ: Եւ յայնմ հետէ խաղաղոցաւ երկիրն, ընդ ծնուամբ Պապայ նուանեալ:

### (Մովակէն Խորենացի, 3-րդ, Ա)

- <sup>1</sup> այստեղ՝ տեղեկացնելու, իմաց տալու իմաստով
- <sup>2</sup> զմտարսախն ումէին զիշապար-կոռա  
էին մտարսայ վիշապանկար դրոշներ
- <sup>3</sup> տառորյալը (էր) գեղշված է
- <sup>4</sup> ընդ հուա դարձեալ մերոցն զիւն  
նոցա-մերոնք անմիշապես հասնում  
էին նրանց հետևի ից
- <sup>5</sup> այստեղ ցած օգենու իմաստով
- <sup>6</sup> սեռական հորսովն որված ներական  
անորաշ դերբայի գործիական հորովի  
մոտ՝ նրամք չկարողացան
- <sup>7</sup> այստեղ նև դարձնելու իմաստով
- <sup>8</sup> էր տեսանել-կարելի էր տեսնել  
զկարծութեան վիճաց թերէին նրևոյր-  
կարծութեան տեսք էին տուանում

- <sup>10</sup> ստորոյալ (կային) զեղշված է
- <sup>11</sup> զիշապացն մանուած-վիշապների  
(վիշապի նեկարով դրոշակներ) զարդարմները
- <sup>12</sup> ահազին թերանաբացութեամբ ուստուցած  
ի փշմանէ օրոյն-քամուց ուղղելով ահազն  
կերպով բացեկ էին թերանները
- <sup>13</sup> անորոշ դերբայը ի մասնիկով 5-րդ  
դարում խախտ հազվադեպ է հանդիպում  
տնտերին. այստեղ՝ տնաք, տարավորություն
- <sup>14</sup> փիս. կարենոյ
- <sup>15</sup> զգակի միջին գմրին ամորքեամբ  
զտնդի ճակատում կալեալ-ճակատի մեջ  
տեղում ամուր կամզնած էր՝ միջին  
զնի զլաւին անցած
- <sup>16</sup> այստեղ՝ ազատեն, փրկել  
եղ-գրեց

### ԴԱՍ ԶԱՄԱՆՀԱՆՐԱԳԵՐՈՐԴ

#### ԴՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՏՆԵՐ

§ 143. Որոշյալ դերանուններն են՝ ամեներին, ամեներեան (=ամենքը, բոլոր, ամենքն էլ, բոլորն էլ), բոլորերին, բոլորերեան (=բոլորը, բոլորն էլ), ամենայն, այլն՝ ամէն, բոլոր, իրաքանչիր, համայն, հանուր(ց), ողջոյն:

Ամեներին-ամեներեան, բոլորերին-բոլորերեան, ամենայն դերանունները հոլովկում են անվանական հոլովմաբ, ըստ որում ամեներին-ամեներեան, բոլորերին-բոլորերեան դերանունները հոլովկում են միայն միանակի թվով՝ ու հոլովչով, իսկ ամենայն դերանունը՝ միայն եզակի թվով՝ ի հոլովչով:

ՈՒ.	ամեներին, ամեներեան	բոլորերին, բոլորերեան
Հ.	(զ)ամենեսին, (զ)ամենեսեան	(զ)բոլորեսին, (զ)բոլորեսեան
Ս.	ամենեցուն, ամենեցունց	բոլորեցուն, բոլորեցունց
Տ.	ամենեցուն, ամենեցունց	բոլորեցուն, բոլորեցունց
Բ.	յամենեցունց	ի բոլորեցունց
Գ.	ամենեցումբք	բոլորեցումբք

ՈՒ:	ամենայն
Հ.	(զ)ամենայն
Ս.	ամենայնի
Տ.	ամենայնի
Բ.	յամենայնէ
Գ.	ամենայնի

Ծանոթություն. Երբեմն բոլոր դերանունը հանդիպում է հոլովկած ծնով՝ եզակի տրական և գործիական հոլովներով. Բոլորումս Հայոց զօրութեամբ օտար ազգաց խորհեր տիրել (Խոր., 3-րդ, Գ): Եթէ հաւատաս բոլորով սրտի ըռը (Գործ., Հ, 7):

§ 144. Իրաքանչիր դերանվան հոմանիշ ծն երն են անձնիր կամ անձնիր, դրամք իշխատ սակավ գործածություն ունեն: Իրաքանչիր դերանունն ուղիղ ծնով կարող է գործածվել նաև թեր հոլովների իմաստով՝ թարգմանվելով աշխարհաբար յուրաքանչյուրն իր, ամեն մեկս մեր, ամենքն իրենց, ամեն մեկդ ծեր և նման իմաստներով. օրինակ՝ Ումեմն եւս հինգ քանքքար և ումեմն երկուս և ումեմն մի, ըստ իրաքանչիր կարի (=յուրաքանչյուրին իր կարողության չափ), և զնաց (Մատք., ԻԵ, 15): Ապա արձակեաց զմարզիկան յիրաքանչիր տեղին (Եղիշէ, էջ 12) =Հետո զինվորներին ուղարկեց ամեն մեկին իր տեղը:

§ 145. Ամեներին-ամեներեան դերանունը գործածվում է գոյականի հետ և 9-72

նախադաս, և՝ ետադաս՝ հոլովով ու թվով համաձայնելով իր լրացյալին. օրինակ՝ Վասն զի արհաւիրը ի Տեառնէ անկան ի վերայ ամենեցուն բնակչագաւորացն (Բ Մնաց., ԺԵ, 5): Յայնժամ ի մի վայր ծողովնեալ նախարարաց ամենեցուն (Փարաք., 2-րդ, ԽԵ): Սի ի հարիւրոց յամենեցունց պիտանեաց առնու պատանդ (Խոր., 2-րդ, ԿԵ):

Ամենայն դերանունը գործածվում է գոյական անվան հետ նախադաս և տադաս, սակայն տարածվածը նախադաս գործածությունն է: Այն հոլովով թվով չի համաձայնում իր լրացյալին. օրինակ՝ Թաքստեամբ ապրեր հանդիք ամենայն զօրօն իրով (Եղիշէ, էջ 18): Եթ գործակալք ամենայն յիմում ձեռին են (Փարաք., 2-րդ, ԽԵ):

Ծանոթություն. Երբեմն ամենայն դերանունը, մանավանդ ետադաս գործածվելիս, համաձայնում է միայն հոլովով՝ «անդրանիկ ամենայնի մետելցն» (Քուգ., 4-րդ, Ե), «լեռնականօքն ամենայնի» (Խոր., 2-րդ, Ծ), «ի ծողովլդեմն յամենայն» (Ա Թագ., Բ, 13):

§ 146. Իւրաքանչիւր դերանունը գործածվում է գոյականի հետ և՝ նախադաս, և՝ ետադաս, իսկ մյուս որոշյալ դերանունները՝ միայն նախադաս, որոնք հոլովով ու թվով չեն համաձայնում իրենց լրացյալներին. օրինակ՝ Այս են որովքն իւրայելի՝ ըստ իւրաքանչիւր տեղեացն (Եզր, Բ, 1): Բոլոր մարմնոյն իրականություն (Եղիշէ, էջ 15): Բոլոր ըստանեօքն (Խոր., 3-րդ, ԼԱ): Հանուրց մարդկոթեանս (Խոր., 1-ին, Դ): Ի վերայ ողջոյն ազգի (Եղիշէ, էջ 90):

### Վարժություն 117. Թարգմանել, որոշել որոշյալ դերանունների հոլովով:

Եւ զի այս այսպէս՝ և ամենեցուն յայտնի է. որ կամին ուսանել: Եւ դու տիրես ի վերայ ամենայնի: Այս էին ամենեքեան, որ ունէին զկանայս յայլազգեացն: Իսկ այն ո՞վ էր որ որսացաւ ինձ որս և երեր մատոյց, և կերայ յամենայն: Առատ ոռճկօք ուրախ առնէր զամենեսեան, և զուարքազին զինքն ցուցանէր ամենեցուն: Ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն: Դարձեալ փութայ ամենեքումք հանդերձ: Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մոր արարի: Եւ զայս իբրև սասաց, երեալ ծունք ամենեքումք՝ եկաց յաղօրս: Անազու և վատրաս յաշս ամենեցուն զնոսա ցուցանէին: Զանզի ոչ բոլորեցունց դիպի մարտիրոսութեան վիճակն: Այլ որպէս յամենայնի մոլորեցան հերձուածողը:

### Վարժություն 118. Թարգմանել, բացատրել, թե որոշյալ դերանունները հոլովով ու թվով ինչպէս են համաձայնել իրենց լրացյալներին:

Եւ եկին ամենեքեան ծերքն իւրայելի: Զդրուն քաղաքին պահեր մինչև ի գալն Արտաշիսի և զօրացն ամենեցուն: Եւ սպան զամենեսեան զեղքարսն իր

սրով: Զկնի իսկ եկեղոցս մարգարէիւրն ամենեքումքը ծանօթս տայ: Սիրեսցն... յամենայն սրունմէ: Սոյն օրինակ և ամենայն զիրը հոգեպատումք նշանակեալ ունին զբաջութիւնս ամենայն գօրաց: Զայուու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնի... մեծաւ ամբոխի տարածեալ ընդ աշխարհս մեր: Սի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդ:

ծանօթս տալ-իր մասին ծանոթություն տալ

### Վարժություն 119. Թարգմանել գրաբար:

Բերում էին գրքերը և այրում բոլորի առջև (առաջի): Առատ պարզեներ կատարողին: Ամենքը վախենում էին նրանից: Ամեն ինչից հարկ էին պահանջում: Ողջույն հղեց իր տերության բոլոր ազգերին: Ամեն ինչում դու արդար ես: Հանդիմանվում է բոլորի կողմից: Բոլոր գերիներին զլխատեցին քաղաքի հրապարակում: Այզու բոլոր ծառերը ծաղկեցին: Ամբողջ սրտով սիրում եր իր որդիներին: Ամենքին հայտնի է, որ նա քաջ է: Բոլոր կողմերից պաշարեցին քաղաքը:

### ԱՐՏԱՎԱՉՆԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՇԻՒՆ<sup>1</sup>, ԵՎ ՀԱԼԱԾԵԼ ԶԵՂԱՐՄ ԻՒՐ ԵՎ ԶՔՈՐՄ, ԵՎ ՄԱՌ ՀԱՆԴԵՐՉ ԱՅԼԱԲԱՆԵԼՈՎ

Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առերանոյ, զի մի՛ բնակեցն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զԾիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ զոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջան Արտաշատ քաղաքի՝ որսալ կինծու և իշավայրիս զականք Գինայ, աղմկեալ ի ցնորից իմն խելագարանաց<sup>2</sup>, ընդ վայր յածելով՝ երիկարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ՝ անհետի:

Զամանէ երգիշքն Գողթան առասպելարանն այսպէս. Եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հերանոսաց. դժուարի<sup>4</sup>, ասեն, Արտաւազդ՝ ասելով ցհայրն.

Մինչ դու զնացեր,

Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,

Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ:

Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի՝ սասաց այսպէս.

Եթէ դու յորս հեծցիս<sup>5</sup> յԱզատն ի վեր ի Մասիս,

Զքեզ կացին քաջը,

Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.

Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես:

Չրուցեն զսմանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում՝ կապեալ երկարի շղբայիլք. և երկու շունք հանապազ կրծելով զշղբայսն, ջանայ ելանել և առնել վախճան աշխարիի, այլ ի ծայնէ կուանարկութեան դարբնաց գորանան, ասեն, կապանքն: Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազովք ի դարբնաց, զիւտ երթալով առասպելին, յաւուր միաշաքարտոց երիցս կամ յորիցս բախնեն զսման, զի գօրասին, ասեն, շղբայքն Արտաւազդայ: Բայց է նշարտութեամբ այսպէս, որպէս ասացաքս վերագոյն:

Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն. զոր<sup>6</sup> համարեցան կախարդել զսա կանանց<sup>7</sup> զարմիցն Աժդահակայ. վասն որոյ զնուա բազում չարչարեաց Արտաշէս: Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս, եթէ.

Վկապազունք գողացան զմանուկն Արտաւազդ,

Եւ դն փոխանակ եղին:

Բայց ինձ արդարացեալ<sup>5</sup> թուի լուրն այն, թէ ի ծննդենէն և եթ մոլութեամբ լեալ,<sup>9</sup> մինչ նովիմք<sup>10</sup> և վախճանեցաւ: Եւ առնու զբազաւորութիւնն Տիրան եղբայր նորին:

### (Մովսէս Խորենացի, 2-րդ, Կ)

<sup>1</sup> այստեղ՝ բազավորելը իմաստով

<sup>2</sup> աղմկեալ ի ցնորից իմն խելազարանաց- ինչ-որ ցնորից շփորփում, խելազարվում է

<sup>3</sup> ընդ վայր յածել-վայր ընկնել

<sup>4</sup> այստեղ՝ նեղանում է

<sup>5</sup> եթէ դու յորս հեծցիս-թե դու

(Ճի) հեծնես որսի գնաս

<sup>6</sup> ուղիղ ինդիրը կրկնած է (զոր, զսա).

<sup>7</sup> պետք է բարզմանել որևէ մեկը անորոշ դերբայի մոտ ենթական

<sup>8</sup> դրվագ է տրական հոլովով. համարեցան կախարդել զսա կանանց-կարծում են,

<sup>9</sup> թե սրան կախարդել են կանայք

<sup>10</sup> այստեղ՝ ճշմարիտ, արդարացի

<sup>11</sup> մոլութեամբ լեալ-խելազար է եղել

<sup>12</sup> նովիմք-նույնով, այսինքն նոյն հիվանդությամբ

### ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՍԱԿԲԱՅՆԵՐ

§ 147. Գրաբարում մի՛ շարք բառեր՝ աստ, անդ, այսր, այդր, անդր, աստի, այտի (այդի), անտի, անկախ գործածվելիս հանդես են զայս որպես մակրայներ. օրինակ՝ Եւ անդ (=այնտեղ) պահեցէր զնոսա զգուշութեամբ (Եղիշէ, էջ 146): Զիա՞րդ մտեր այսր (=այստեղ) (Մատք., ԻԲ, 12): Թողեր անդը (=այստեղ) զառաջին յանցան ծեր (Եղիշէ, էջ 165): Քանզի անդ (=այն ժամանակ) մոլեգմեալ այր իրաքանչիր, սուր ի կող ընկերի իրոյ ծգելով՝ ջանային տի-

րել ի վերայ միմեանց (Խոր., 1-ին, Ժ): Եւ անտի (=այնտեղից) չուեալ՝ յուտանն ի Դուին մտանելին (Փարպ., 3-րդ, էջ 157):

§ 148. Դերանվանական մակրայները հաճախ գործածվում են նաև գոյական անունների հետ: Այս դեպքում պետք է նկատի ունենալ հետևյալը.

1. Դրանք նշանակությամբ փոխարինում են այս, այդ, այն ցուցական դերանուններին կամ ս. դ. և ցուցական հոդերին. օրինակ՝ ԵՇ դու վաղվաղակի ի ծիյու այսի (Բուգ., 6-րդ, Ը), փիս., ԵՇ դու վաղվաղակի ի ծիյու յայդմանէ=ցած իջրի խկոյյն այդ ծիուց (կամ՝ ծիուցը): Յաշխարիէ աստի չեն (Յովի., ԺԷ, 16), փիս. Յաշխարիէս յայսմանէ չեն=այս աշխարիից չեն: Թաքեայց ի դաշտի աստ (Ա Թագ., Ի, 5), փիս. Թաքեայց ի դաշտիս յայսմիկ=կրաքնվեմ այս դաշտում: Եւ ոչ ի տար աշխարի այսր զիւտ նոցա գնայար (Եղիշէ, էջ 184), փիս. Եւ ոչ ի տար աշխարիս յայս զիւտ նոցա գնայար=ն ոչ է նրանց հետևյալ այսուար աշխարից կգնայինք (բառացի՝ զնում էինք):

2. Հաճախ էլ այդ բառերը չեն արտահայտում ցուցական դերանունների կամ հոդերի նշանակություն և չեն բարզմանվում աշխարհաբար համապատասխան դերանուններով ու հոդերով. օրինակ՝ Ի պտղոյ անտի ծառն ճանաշի (Մատք., ԺԲ, 33)=Պտղոյ է ծառը ճանաշվում: Ապա իմացեալ Զրուանայ, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ» (Եղնիկ, 2-րդ, Ա)=Ապա Զրվանն իմանալով ասում է՝ «Երկու որդիներ կամ որովայնում»: Զարրոյց զսուրբսի ի քնոյ անտի (Եղիշէ, էջ 151)=Քնից զարքնեցրեց սրբերին: Եթէ որպէս նոցա ի բանտի անդ անհծանելին զքեզ (Եղիշէ, էջ 143)=Թե ինչպէս նրանք բանտում անհծում էին քեզ:

§ 149. Դերանվանական մակրայներն ունեն նաև գործածության հետևյալ առանձնահատկությունները.

1. Աստ, անդ, այդր բառերը գործածվում են ներգոյականի իմաստ արտահայտող ի(յ) նախորդով տրականի հետ. օրինակ՝ Գտանէր յամրոցի անդ (Բուգ., 3-րդ, Ը): Արկէք զդա ի գուր մի յանապատի աստ (Ծննդ., ԼԵ, 22): Գրեցի ծեզ ի թրի այդր (Ա Կորնը., Ե, 9):

2. Այսր, անդը բառերը գործածվում են ի(յ) նախորդի ունեցող ուղևորման հայցականի հետ. օրինակ՝ Եթէ ո՞չ զայցէ ի տօն այսր (Յովի., ԺԱ, 56): Մտեալ ի սեմեակ անդը՝ ելաց (Ծննդ., ԽԳ, 30): Գայր հասանէր ի տեղի անդը (Թոռն., Բ, էջ 501):

Ծանոթություն. Երբեմն անդը բառը կարող է գործածվել ներգոյականի իմաստ արտահայտող ի(յ) նախորդով հայցականի հետ. օրինակ՝ Եւ ձկունք, որ ի գետ անդը էին սատակեցան (Ելք, Ե, 21):

3. Աստի, այտի (այդի), անտի բառերը գործածվում են բացառական հոլովի հետ. օրինակ՝ Հանին զՅովսէի ի գրոյ անտի (Ծննդ., ԼԵ, 28): Ասաքնեցից զմի յաշակերտաց աստի իմոց (Խոր., 2-րդ, ԼԲ): Եւ նա յատենէ անտի (Թոռն., Բ, էջ 562): Ել ի տառապանէ այտի (Ծննդ., Ը, 16):

**Վարժություն 120. Թարգմանել, որոշել, թե ո՞ր հոլովաների հետ և ի՞նչ նշանակությամբ եմ գործածվել դերանվաճական մակրայները:**

Լուարություն (=լսեցեք) յազգականաց այտի դորա: Իբրև մերձեցան ի քանակ անդր: Ածէք այսր և ի կապեցոն, որը են ի բանտի անդ: Եւ դարձուցին զնա ի ջրհորոյ անտի: Չախոռապեսն արքային Պարսից զիշատէր ի ներս յասպատանի անդ: Ոչ հաւանէր նա իջանել յանապատ անտի: Ենուու այրն ի տուն անդր: Նոքա եկեալ ցուցանէին ի քաղաքի անդ: Ոչ կարէին հանել ըգնասակար խոզսն յայզու անտի: Լուայ գծայն քո ի դրախտի աստ և երկեայ: Թերևս ամաշեսեն յորդոյ աստի ինմէ:

**Վարժություն 121. Թարգմանել՝ բաց բողած բառերի տեղ դմելով համապատասխան դերանվաճական մակրայներ:**

Երբայր վարդապահի ի դաշտ...: Հոսէր արիւնն ի վիրէ...: Ինըն կերակրեաց ի սպակա հացէ գծողովուրդն յանապատի...: Եկն ենուու ի խորան...: Յամենայն ծառոց որ իցեն ի ներս դրախտի... մի՛ ուտիցէր: Ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց..., և դու ինձ ի յունականաց...: Ընկենուին յերիվար... զպատանեակն Գնել: Ի պարսպէ... ի ճոր... ընկենուին զնոսա:

**Վարժություն 122. Թարգմանել գրաբար, ընդգծված բառերի փոխարեն գործածել համապատասխան մակրայներ:**

Այն աղբյուրից էին ջուր տանում: Կմտնեք այն քաղաքը: Այս անապատում էին բնակիւմ: Շապոն թագավորը փախչում էր այս պատերազմից: Ոչ խարներն արածում են այդ դաշտում: Նավը ընկրմեց (ընկրմեցաւ) այս ծովի մեջ: Այս տեղում տնկում էին այգիներ: Այս գինուց էինք ընպում: Կվերցնեք այդ ալյուրը և կլցնեք այդ ամանի մեջ: Այդ զյուրից հարկ էին պահանջում:

### ՎԵՍՆ ԶԵՌԱԿԵՐՏԻՆ, ՈՐ ԿՈՉԻ ԵՐՈՒԱՌՆԴԱԿԵՐՏ

Քաղցր է ինձ ասել և յադագ գեղեցիկ դաստակերտին Երտանդակերտի, զոր յօրինեաց<sup>1</sup> նոյն ինքն Երտանդ գեղեցիկ և շքնար յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք՝ լուսաւոր որպէս ական բիբ: Իսկ շուրջ զմարդկութեամբ<sup>2</sup> ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբրովն օայլ բոլորակութիւն<sup>3</sup> ական: Իսկ զբազութիւն այգեստանոյ<sup>4</sup> իբր զարտն անանց խիտ և գեղեցիկ ծիր<sup>5</sup>: որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածն՝ արդարն գեղատը կուսից յօնից դարաւան-

դաց համեմատ<sup>6</sup>: Իսկ ի հարաւոյ հարթութիւն<sup>7</sup> դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն<sup>8</sup>: Իսկ գետն բերանացեալ դարաւանդոց ականցն զերկթերիսն նշանակէ շրթուն: Եւ այսպիսի գեղեցկութեան<sup>7</sup> դիր՝ անքրքելի իմն գոզցւ ի բարձրաւանդակ թագաւորանիստն զիայեցուածն ունի<sup>10</sup>: և արդարն բերքի և թագաւորական դաստակերտն:

Զայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ պարզն է մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մտերմաց և արեան կցորդաց<sup>11</sup> ազգին Արշակունեաց. զոր յիւրում տեղուցն պատմեսցոք....:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, ԽԲ)

<sup>1</sup> այստեղ՝ կառուցեց, շինեց

<sup>2</sup> շուրջ զմարդկութեամբն-բնակության

<sup>3</sup> շորջ: Այս և Խաջորդ մի քանի նախարա-

<sup>4</sup> ստյուններում բայ-ստորոշյալ կամ քաղադյոյալ

<sup>5</sup> ստորոշյալի հանգույցն արտահայտված չեն

<sup>6</sup> այստեղ՝ բռըսոկ

<sup>7</sup> այգեստանոյ-այցիների

<sup>8</sup> իբր զարտն անանց խիտ և գեղեցիկ

<sup>9</sup> ծիր-նախադասուրյունը պետք է

<sup>10</sup> ամբողջ նախադասուրյունը պետք է

<sup>11</sup> կարծես անքարդ հայացը ուղրել է

<sup>12</sup> թագավորանիստ թարձրավանդակի վրա

<sup>13</sup> արեան կցորդ-արյունակից

համեմատվում էր գեղեցիկ

կույսների հոնքերին

<sup>14</sup> վերացականը թանձրացականի փոխարեն.

<sup>15</sup> հարթութիւն դաշտաց-հարդ դաշտուրը

<sup>16</sup> ծնօտից պարզութեան գեղեցկութիւն-հիշեց

<sup>17</sup> նում էին ծնունների գեղեցիկ ողորկությունը

<sup>18</sup> ամբողջ նախադասուրյունը պետք

<sup>19</sup> է քարգմանել այսպես. իսկ գետը ափերի

<sup>20</sup> թարձրություններով պատկերանում էր մի բերան՝ իր երկու շրբունքներով

<sup>21</sup> կարծես անքարդ հայացը ուղրել է

<sup>22</sup> թագավորանիստ թարձրավանդակի վրա

<sup>23</sup> արեան կցորդ-արյունակից

### ՅԱՂԱԳՍ ՇԻՆՈՒԱԾՈՅ ԱՄՐՈՅԻՆ ԳԱՌՆՈՅ

... Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնուոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօր, երկարագամ և կապարով մնանուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց<sup>1</sup>, մահարձանօր<sup>2</sup>, սրանչելի յորօշուածովք թարձր քանդակաւ, ի համար քեզ իւրոյ Խոսրովիլիստոյ, և զրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով....:

(Մովսէս Խորենացի, 2-րդ, Ղ)

<sup>1</sup> տուն հովանոց-հովանոց

<sup>2</sup> մահարձան-արձան

## ՀԱՍ ԶՄԱՆՎԵՑԵՐՈՐԴ

### ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

**§ 150.**Գրաբարում ածականները լինում են երկու տեսակ՝ որակական և հայրաբերական:

Որակական ածականները ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, համեմատական, գերազարական:

**§ 151.**Ածականի համեմատական կամ բաղդատական աստիճանը կազմվում է երկու ծնով՝ ա) (ա) գոյն վերջածանցով, բ) քան նախադրությամբ:

ա) Գոյն ածանցը դրվում է ածականի ուղիղ ծնի վրա, օրինակ՝ մեծ-մեծագոյն=ավելի մեծ, հզօր-հզօրագոյն=ավելի հզոր, լաւ-լաւագոյն=ավելի լավ և այլն: Հարկ է կարծել՝ թե էր ուն ի վեր քան զնա զօրագոյն և փառատրագոյն (Եզնիկ, 2-րդ, Գ)=Պետք է կարծել, թե նրանից վեր ավելի զորեղ և փառավոր մենքը կար:

**Ծանոթություն.** Երբեմն գոյն ածանցով կազմված ածականներն արտահայտում են գերազարական իմաստ. օրինակ՝ Ապրի կրտսերագոյնն միայն, որ է Նինուս (Խոր., 1-ին, ԺԷ)=Ազատվում է միայն ամենափոքրը՝ Նինվասը:

բ) Քան նախադրությունը դրվում է սովորաբար դրական աստիճանից, երբեմն էլ գոյն ածանցով կազմված ածականներից հետո, այնուհետև՝ համեմատելի քառորդ հայցական հոլովով և գնախըռով. օրինակ՝ մեծ քան զերկիր=երկրից ավելի մեծ, բարձրագոյն քան զնա=նրանից ավելի բարձր և այլն: Մեծ քան զառսա այլ պատուիրան ոչ գոյ (Մարկ., ԺԲ, 31)=Մրանցից ավելի մեծ պատուիրան չկա: Քաղցր է նա քան զմեղու խորխիս (Սաղմ., ԺԸ(ԺԹ), 11)=Նա մեղրի խորխից ավելի քաղցր է: Մին բարձրագոյն էր քան զմիան (Դան., Ը, 3)=Մենքը մյուսից ավելի բարձր էր: Զի՞նչ հզօրագոյն քան զառն (Դատ., ԺԴ, 18)=Ի՞նչ է առյուծից ավելի հզոր:

**§ 152.**Գրաբարում ածականի գերազարական աստիճանը հատուկ ծն չունի: Այդ իմաստն արտահայտվում է կարի, յոյժ, սաստիկ, ամենարին և սաստիկական իմաստ ունեցող այլ մակրայների միջոցով, որոնք դրվում են սովորաբար ածականի ուղիղ ծնի վրա. օրինակ՝ Ծածկեալ յոյժ բարակ կտասով (Փարա., էջ 29)=Ծածկեով շատ բարակ կտասով:

**Ծանոթություն.** Բարդ քառերի կազմության մեջ հանդիպող ամեն քառ արտահայտում է ոչ թե գերազարական, այլ ամեն ինչ իմաստը. օրինակ՝ Թողոյր... զգաւառն Այրարատու... զամենարոյսն, զամենաբուլին, զամենալին... (Փարա., էջ 9)=Թողեց (բառացի՝ թողնում էր) ամեն ինչ բուտեցնող, ամեն ինչ բիւեցնող, ամեն ինչով լի Արարատյան զավառը:

**§ 153.**Ածականներն ունեն անվանական հոլովում, հոլովում են արտադին թերման Ի, Ո, Ի-Ա, Ո-Ա, մասամբ էլ ՈՒ հոլովմամբ:

**Ծանոթություն.** Մի քանի ածականներ եզակի տրականում ստանում են ում հոլովակերտ՝ իին-ինոյ-ինում, նոր-նորոյ-նորում, վերին-վերնոյ-վերնում և այլն:

ա) Ային, ին վերջածանց ունեցող ածականները հոլովում են Ո հոլովմամբ՝ դաշտային-դաշտայնոյ, ամառնային-ամառնայնոյ, վերին-վերնոյ, վերջին-վերջնոյ և այլն:

բ) Ի-ով վերջացող բազմավանկ ածականները հոլովում են Ո-Ա խառն հոլովմամբ՝ սիրելի-սիրելոյ-սիրելեաւ, բարի-բարտյ-բարեաւ, առաքինի-առաքինոյ-առաքինաւ, իմանալի-իմանալոյ-իմանալեաւ, գեղանի-գեղանոյ-գեղանեաւ, պիտանի-պիտանոյ-պիտանեաւ և այլն:

գ) Գոյն վերջածանց ունեցող ածականները հոլովում են Ի հոլովմամբ՝ մեծագոյն-մեծագոյնի-մեծագոյնից, լաւագրյն-լաւագրունի-լաւագրունից, վեհագոյն-վեհագոյնի-վեհագոյնից, ազնուագոյն-ազնուագոյնի-ազնուագոյնից և այլն:

դ) Ռ-ով և նախորդող որն է բաղաձայնով վերջացող թանձր, կարծր, մանր, ծանր, փոքր, քաղցր ածականները հոլովում են ՈՒ հոլովմամբ և ունեն ներքին թերման որոշ առանձնահատկություններ: Եզակի թվի թեր հոլովներում բ-ն ընկնում է, իսկ հոգնակի ուղղականը վերջավորվում է ունք-ով:

#### Հոլովման օրինակ.

##### Եզակի Հոգնակի

ՈՒ.	փոքր	փոքրունք
Հ.	(զ)փոքր	(զ)փոքրունք
Ս.Ս.	փոքրունք	փոքրունք
Բ.	ի փոքրունք	ի փոքրունք
Գ.	փոքրունք	փոքրունք

**Ծանոթություն.** Բարձր ածականը եզակի թվում հոլովում է (ը)ր-ով վերջացող քառերի նման, իսկ հոգնակի թվում ներքին թերման Ա հոլովմամբ:

ՈՒ.	բարձր	բարձրունք
Հ.	(զ)բարձր	(զ)բարձրունք
Ս.Ս.	բարձրունք	բարձրունք
Բ.	ի բարձրունք	ի բարձրունք
Գ.	բարձրունք	բարձրունք

Մնացած ածականների հոլովման վերաբերյալ որոշակի կանոններ չկան, քանի հոլովում իմանալու համար պետք է դիմել զրաբարի բառարաններին:

**ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

**§ 154.** Գրաբարում ածականները դրվում են գոյական անուններից և՝ առաջ, և՝ հետո, սակայն ավելի տարածվածը նախաղաս գործածությունն է:

**§ 155.** Որպես ընդհանուր կանոն, նախաղաս ածականները հոլովով ու քվով չեն համաձայնում գոյականներին: Նախաղափոր հոլովներում նախդիրները դրվում են ածականի վրա: Հոլովման օրինակ:

	Եզակի	Դոգնակի
ՈՒ.	սիրելի եղբայր	սիրելի եղբարք
Հ.	(զ)սիրելի եղբայր	(զ)սիրելի եղբարս
Ս. Տ.	սիրելի եղբար(եղբօր)	սիրելի եղբարց
Բ.	ի սիրելի եղբարէ(եղբօրէ)	ի սիրելի եղբարց
Գ.	սիրելի եղբարք	սիրելի եղբարքք

**Ծանոթություն.** Երբեմն նախաղաս ածականները հոլովով ու քվով համաձայնում են իրենց լրացյալներին. օրինակ՝ ի ծեռն պատուատրի գորազիլի ուրուր (Եղիշ, էջ 44), ի ծեռաց կորովեաց աղեղնաւորաց (Խոր., 2-րդ, ԿԵ), սիրելեաց վկայիցն (Ազ., էջ 10), ի մեծի տան (Եզնիկ, 1-ին, Գ), ի հնոց ժամանակաց (Քուզ., 4-րդ, Ե), ի չարէ արարշէ (Եզնիկ, 1-ին, ԺԵ) և այլն:

Այս դեպքում անեզական գոյականների հոգնակի գործիականի հետ ածականները սովորաբար համաձայնում են միայն հոլովով. օրինակ՝ մեծաքնամանօր (Քուզ., 3-րդ, Դ), բացաւ աչօր (Եղիշ, էջ 125) և այլն:

**§ 156.** Ետաղաս ածականները, որպես կանոն, հոլովով ու քվով համաձայնում են գոյականներին: Հոլովման օրինակ:

	Եզակի	Դոգնակի
ՈՒ.	ազգ քաջ	ազգք քաջք
Հ.	(զ)ազգ քաջ	(զ)ազգս քաջս
Ս. Տ.	ազգի քաջի	ազգաց քաջաց
Բ.	յազգէ քաջէ	յազգաց քաջացաց
Գ.	ազգաւ քաջաւ	ազգաւք(օք) քաջաւք(օք)

**Ծանոթություն.** Ետաղաս ածականները խիստ հազվադեպ չեն համաձայնում իրենց լրացյալներին հոլովով ու քվով. օրինակ՝ ի քաղաքի մի փորր (Խոր., 2-րդ, ԱԱ), բաղեաւ կածեայ (Խոր., 3-րդ, Ժ), զպաղատանս արտասուալից (Կոր., Ը) և այլն:

Աղբունիք բարը թե՛ նախաղաս և թե՛ ետաղաս գործածվելիս միշտ մնում է անհամաձայն:

**Վարժություն 123.** Հոլովել հետևյալ կապակցությունները՝ ածականները հոլովով ու քվով համաձայնեցնելով գոյականներին:

Բարեկամ սիրելի, այր առաքինի, զօրավար քաջ, ընկեր հաւատարիմ, մեծ քաղաք:

**Վարժություն 124.** Թարգմանել, բացատրել, թե նախաղաս և ետաղաս ածականները հոլովով ու քվով ինչպես են համաձայնել իրենց լրացյալներին:

Ինաստուն կանայք շինեցին տունս, իսկ անզգամբ ճեռոք իրենանց կործանեցին: Մեծաւ խնդրութեամբ ընդունելին զշարչարանս: Սակայն Վաղարշ մեռանի ի ճեռաց կորուվեաց աղեղնաւորաց: Պաշտէք զկուս համերս և անշուշչ: Այսօր քաջաւորք օտարք տիրեն ի վերայ մեր: Յորժամ զաներեւութեն և զնորին զմշտնշենաւոր զօրութենէն ճառից որ: Ամիսս վեց օճանելին իրովք անուշիք: Ախտը մահաբերք հանապազ տանշեն զմարդիկ: Դարձեալ իրաման տայր վասն առաքինույն Գայիանեայ: Եւ եղ զիս ի վերայ լերին միոյ բարձու յոյժ:

**Վարժություն 125.** Թարգմանել, փակազծերի մեջ առնված ածականները հոլովով ու քվով համաձայնեցնել ընդգծված լրացյալներին:

Եւ ածին զիշխամսն քաջաւորին (զիաւատարիմ): Բայց (ամբարիշտն) Սներութանայ վիրաւորեալ ծիմ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն: (Մեծ) անարգամօր տանշէք զամենեսկան: Հոգով իրով սուրբը միսիրարեսց գծեզ հանապազ: Դարձարութ ի ճանապարհաց ծերոց (չար): Եկեալ հասաներ առ իս իրաման առն միոյ (պատրիական) Յովսէփ կոչնեցելոյ: Հասանեն և զօրքն կայսերական: Եւ զօրութեամբ (բազում) տային վկայութիւն առաքեալքն: Եւ նեղեալքն յայսոց (ալիդ) բժշկէին:

**Վարժություն 126.** Թարգմանել գրաբար՝ ածականները հոլովով ու քվով համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին, ըստ որում առաջին երեք նախաղատությունների ածականները գործածել նախաղաս, իսկ մյուսներինը՝ ետաղաս:

Մեծ սիրով սիրում էր նրան: Ըստ իին ավանդության զոհեր էին մատուցում իրենց աստվածներին: Սպանվում է իր հարազատ եղբար կողմից: Կրնակվեն ավերակ քաղաքներում և անշեն տներում: Սրբությամբ են պահում առաքինի մարդկանց հիշատակը: Բազում վիրավորներ ընկան այն մեծ պատերազմում: Ուղարկուն է պատգամավորներ Հայաստան հավատարիմ մարդկանցով: Օգնություն էր այսանում իրենց սիրելի բարեկամներից: Ինչո՞ւ եք թշնամություն զցում իմ երկու հարազատ եղբայրների մեջ: Փոքր ամաներուկ զուր էին հանում խոր ջրհարից: Ինձ ասում են դրւս ելիք (եւ արտաքս) այս գեղեցիկ այ-

**գուց:** Մեծ և հզոր զորքով հարձակվում է թշնամու բանակի վրա: Միջնաբերդ ամրացրեց բարձր պարսպով:

զգել-արկանել

## ՎԵՐԱՑԱԿԱՆԸ ԹԱՆՉՐԱՑԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

§ 157. Գրաբարում հաճախ ածականը ստանում է ուրիշ ածանցը՝ վերածվելով վերացական գոյականի, որը ստվորաբար դրվում է սեռական հոլովով և գործածվում ածականի իմաստով: Այդ բառերը պետք է բարգմանել աշխարհաբար որպես ածական, օրինակ՝ Բազմացի ի ձեզ ողջոյն մարդասկրութեան մերոյ (Եղիշէ, էջ 9)=մոդ շատանա ձեզ վրա մեր մարդասկրական ողջոյնը: Բնակեցեր, ասէ, ի մեջ ցրութեան սառնամանեաց (Խոր., 1-ին, ԺԱ)=Բնակվեցիր, ասում է, ցուրտ սառնամանիքների մեջ:

Երբեմն այափիսի վերացական գոյականները դրվում են ուղիղ ձևով, իսկ նրանց հատկացայլները՝ սեռական հոլովով: Սրանք նույնական աշխարհաբար պետք է բարգմանել իբրև որոշիչ-որոշյալի կապակցություններ. օրինակ՝ Վասն այնորիկ յանձն իր տարաբերեր, եթէ յո՞ք բափեցից զդառնութիւն թիւմից, կամ ո՞ւր բացատրեցից զբազութիւն նետիցն (Եղիշէ, էջ 7)=Այդ պատճառով էլ ինքն իր մեջ ալեկոնդվում էր, թէ ո՞ւմ վրա բափեմ դառն բույներս կամ ո՞ւր արձակեմ բազմաբիկ նետերս:

**Վարժություն 127.** Դուրս գրել սեռական հոլովով և ուղիղ ձևով գործածված վերացական գոյականներն իրենց լրացյալների և լրացումների հետ միասին՝ դիմացը տալով աշխարհաբար բարգմանությունը:

Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխսառնութեան օդոց և մաքրութեան ջուրց և երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան: Զիի առաջինութիւն հաւատոյ զգեցան: Պատուհասէր զնա բանիք խստութեան: Այլ և մարմնոյն նեղութեամբք առաւել և ս բարձին գրեն ծանրութեան: Բայց զտեղի ճակատուն շինէ զատառակերտ, և անուն կոչէ Հայք, վասն յաղրութեան պատերազմին: Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեան: Եւ երրուակ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն: Իսկ անօրէն իշխանն իբրև զիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն: Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Եւ հրաժարեալք ի միմեանց համբուրի սրբութեամն՝ խաղայր զնայր... ի քաղաքն երկուս Ասորոց: Մաստակարէ անբար քազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօր, զանպակասութիւն հացի և զինոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանագրացն:

## ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ (Հատուած)

Մինչ չեն բնաւ էր ինչ-քանի դեռ  
բնավ ոչինչ գոյություն չտներ  
140

որ յերկինս կամ յերկրի, Զրուան ոմն անուն էր<sup>2</sup>, որ թարգմանի բախտ կամ փառը: Զհազար ամ յաշտ արար՝ զի թերևս ս որդի մի լինիցի նմա, որուն անուն Որմիզդ, որ գերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ<sup>3</sup>, ասէ. «Օգո՞ւտ ինչ իցէ յաշտու զոր առնեմ, և լինիցի<sup>4</sup> ինձ որդի Որմիզդ, եթէ ի զոր ինչ զանայցեն»: Եւ մինչ դեռ նա զայս խորհեր, Որմիզդ և Արհմն յղեցան յարգանդի մօր իրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, և Արհմն ի յերկուանալոյ անտի: Ապա իմացեալ Զրուանայ, ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ, որ որ ի նոցան վաղ առ իս հասցէ՝ զնա բազաւոր արարից»<sup>5</sup>. և ծանուցեալ Որմըզդի զիսրինուրդս հօրն՝ յայտնեաց Արհմենին. ասէ. «Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ որ ի մենց վաղ առ նա երփից, զնա բազաւորեցուցէ»: Եւ զայն լուեալ Արհմենին ծակեաց զորովայնն, և ել եկաց՝ առաջի հօրն: Եւ տեսեալ զնա Զրուանայ, ոչ զիտաց եթէ ո՛ որ իցէ. և հարցաներ՝ եթէ «Ո՞վ ես դու»: Եւ նա ասէ. «Ես եմ որդին քո»: Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»: Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմզդի ի ժանու իրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց առաջի Զրուանայ: Եւ տեսեալ զնա Զրուանայ, զիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է, վասն որոյ զյաշտն առնելք. և առեալ զբարամունսն զոր ի ծեղին իրում ուներ, որովք զյաշտն առնելք, ետ ցՈրմիզդ և ասէ. «Յայժմ ես վասն քո յաշտ առնեի, յայսմենտ դու վասն իմ առնիցես»: Եւ ի տալ Զրուանայ<sup>6</sup> զբարամունսն ցՈրմիզդ և օրինել զնա, մատուցեալ Արհմենի առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այնպէս ոխտեցեր՝ թէ ո՞ք երկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա բազաւոր արարից»: Եւ Զրուանն առ ի չջրելոյ՝ զոխտն՝ ասէ ցԱրհմնն. «Այ սուս և շարագործ, տուեալ լիցի<sup>7</sup> թեզ բազաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդի ի վերայ քո արքայ կացուցեալ»<sup>8</sup>. և յետ ինն հազար ամի Որմիզդ բազաւորեցէ, և զինչ կամիցի առնել՝ արասցէ»: Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդ առներ՝ բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արհմնն գործէր՝ չար էր և թիւր:

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, Ա)

<sup>1</sup> մինչ չեն բնաւ էր ինչ-քանի դեռ  
բնավ ոչինչ գոյություն չտներ

<sup>2</sup> Զրուան ոմն անուն էր-Զրվան

անունով մեկը կար

<sup>3</sup> յաշտ արար-զնի արեց

<sup>4</sup> ածել զմտաւ-մտածել

<sup>5</sup> արարից-կանեն

<sup>6</sup> իմանալով

<sup>7</sup> ել եկաց-եկավ-կանգնեց

<sup>8</sup> ի տալ Զրուանայ-երբ Զրվանը տվեց

<sup>9</sup> առ ի չջրելոյ-չղութերու համար

<sup>10</sup> տուեալ լիցի-քող տրվի

<sup>11</sup> կացուցեալ-նշանակած լինն

## ՀԱՍ ԶԱՄՆՅՈՒԹԵՐՈՐԴ

### ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

**§ 158.** Գրաբարում թվականները երեք տևսակ են՝ քանակական, դասական և անձներական.

### ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

**§ 159.** Քանակական թվականներն են՝ մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթ (եօրն), ութ, ինն, տասն, ասպա 11-ից մինչև 16-ը մասնակի փոփոխություններով միավորները սկզբից բարդվում են տասն թվականի տասան ծիսին մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, ինգետասան, վեշտասան, այնուհետև 17-ից մինչև 19-ը միավորը և տասնավորը միանում են և շաղկապով երթն տասն, ութն տասն (կամ ութուտասն), իննն տասն, իսկ քսամից սկսած միավորները և շաղկապով հարադրվում են տասնավորներին վերջից՝ քսան և մի, քսան և երկու..., երեսուն և երեք..., քառասուն և ութ..., յիսուն և չորք..., վարսուն և հինգ..., եւթանասուն և ինն..., ութսուն և վեց..., յիննուն և եւթ..., հարեք, հարեւը և մի..., երկերիւր, երեքհարիւր, չորեքհարիւր, հինգհարիւր, վեցհարիւր, եւթնհարիւր, ութհարիւր, իննհարիւր, հազար, բեր (բիւր) և այլն:

**Ծանոթություն 1.** Հարյուրավորներին, հազարավորներին և բիւր-ին սկզբից ավելացող թվականները կցվում կամ հարադրվում են առանց շաղկապի՝ հինգհարիւր կամ հինգ հարիւր, երկու հազար, երկու բիւր և այլն:

**Ծանոթություն 2.** Հարյուրավորներին և հազարավորներին բարդվող միավորները միանում են և շաղկապով, իսկ միավորներից բարձրերը՝ թե՛ շաղկապով, թե՛ առանց շաղկապի. օրինակ՝ Երկերիւր ութսուն և եւթն, և այլ և ս եւթն հարեւը և քառասուն այր (Եղիշէ, էջ 120): Հարը երեք հարեւը և ութն տասն (Խոր, 2-րդ, 1): Հազար և երեսուն և վեց (Եղիշէ, էջ 120): Յերկերիւր և ի հընգետասան բիւրոց ամաց (Ժոռն., Ա, էջ 332): Չորք հազարը և հինգ հարեւը շափովն (Եզէկ., Խը, 33) և այլն:

**§ 160.** Քանակական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ՝ ենթարկվելով տարբեր հոլովվումների:

1. Մի թվականը հոլովվում է ո հոլովիչով՝ միայն եզակի թվով, սեռականութանում է նաև ոչ վերջավորությունը, իսկ տրականում ուժ հոլովակերտը՝ սեռ՝ միոյ, միոյ, տր՝ միում, քաց.՝ ի միոշէ, ի միոյ, գործ.՝ միով:

2. Երկու, երեք, չորք թվականները հոլովվում են միայն հոգնակի թվով, ըստ որում երկու թվականը հոլովվում է ու, իսկ մյուսները՝ ի հոլովիչով:

Ու.	Երկու	Երեք	Չորք
-----	-------	------	------

142

Հ.	(զ)երկուս	(զ)երիս	(զ)չորս
Ս. Տ.	երկուց	երից	չորից
Բ.	յերկուց	յերից	ի չորից
Գ.	երկուք	երիք	չորիք

**Ծանոթություն.** Երկու թվականը ուղղական հոլովվում խիստ հազվադեպ հանդիպում է երկուր ծևով. օրինակ՝ Լերինքն երկուր (Բուզ, 4-րդ, ԾԴ):

3. Հինգ-ից սկսած՝ մյուս բոլոր թվականները հոլովվում են և եզակի, և հոգնակի թվով:

4. Հինգ, վեց, ութ, ինն, մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան թվականները և բոլոր տասնավորները, սկսած քանից՝ քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վարտուն, եւթանասուն, ուրտուն, իննսուն, հոլովվում են և պարզ հոլովմամբ: Թեր հոլովներում տասնավորների վերջնավանկի ու-ն սղվում է՝ երեսնի, քառասնի և այլն:

### Եզակի

Ու.	հինգ	ինն	քսան	հինգք	ինունք	քսանք
Հ.	(զ)հինգ	(զ)ինն	(զ)քսան	(զ)հինգս	(զ)ինունս	(զ)քսանս
Ս. Տ.	հնգի	ըննի	քսանի	հնգից	ըննից	քսանից
Բ.	ի հնգէ	յըննէ	ի քսանէ	ի հնգից	յըննից	ի քսանից
Գ.	հնգիւ	ըննիւ	քսանիւ	հնգիք	ըննիք	քսանիք

### Հոգնակի

Հոգնակի թվում ինն թվականը հոլովվում է նաև ու հոլովիչով՝ ինունց, ինունց, յինունց, իննուուր (կամ իննամբք):

5. Եւթ (եօրն) թվականը հոլովվում է ներքին թերման Ա հոլովմամբ՝ սեռ-տր.՝ եւթան, քաց.՝ յեւթանէ, գործ.՝ եւթամբ, հոգն, ուղոյ.՝ եւթանք, սեռ.-տր.՝ եւթանց, քաց.՝ յեւթանց, գործ.՝ եւթամբք:

6. Տասն, եւթն տասն, ութն տասն, իննն տասն թվականները հոլովվում են ներքին թերման Ի-Ա խառն հոլովմամբ՝ տասն. սեռ.-տր.՝ տասին. քաց.՝ ի տասնն, գործ.՝ տասամբ, հոգն. ուղոյ.՝ տասունք, սեռ.-տր.՝ տասանց, քաց.՝ ի տասանց, գործ.՝ տասամբք: Տասն քաղադրիչ ունեցող նշված բարդ թվականները հոգնակի ուղղականում ն-ից առաջ ստանում են և ձայնավոր եւթն տասանց, ութն տասանց, իննն տասանց:

7. Բոլոր հարյուրավորները հոլովվում են Ո պարզ հոլովմամբ՝ հարեւը. սեռ.-տր.՝ հարիւրոյ, քաց.՝ ի հարիւրոյ, գործ.՝ հարիւրով, հոգն. ուղոյ.՝ հարեւը, սեռ.-տր.՝ հարիւրոց, քաց.՝ ի հարիւրոց, գործ.՝ հարիւրով:

8. Հազար թվականը հոլովվում է արտաքին թեքման Ի-Ա խառն հոլովմամբ՝ սեռ.-տր.՝ հազարի, բաց.՝ ի հազարէ, գործ.՝ հազարաւ, հոգն., ուղղ.՝ հազարը, սեռ.-տր.՝ հազարաց, բաց.՝ ի հազարաց, գործ.՝ հազարաւը (օք):

9. Քեւը (բիւր) թվականը հոլովվում է ՈՒ պարզ հոլովմամբ. սեռ.-տր.՝ բիւր, բաց.՝ ի բիւրէ, գործ.՝ բիւրու, հոգն. ուղղ.՝ քեւը, սեռ.-տր.՝ բիւրոց, բաց.՝ ի բիւրոց, գործ.՝ բիւրուց:

Քեւը թվականը հանդիպում է նաև տարբեր հոլովիշներով հոլովված՝ բիւրաւ կամ բիւրեաւ, բիւրօք, բիւրոց, բիւրով:

10. Հարադրական կազմություն ունեցող թվականների հոլովման ժամանակ սովորաբար հոլովվում է միայն վերջին բաղադրիչը:

Եզակի	Հոգնակի
ՈՒ.	երեսուն և հինգ
Հ.	(զ)երեսուն և հինգ
Ս. Տ.	երեսուն և հնգի
Բ.	յերեսուն և հնգէ
Գ.	երեսուն և հնգիւ
	երեսուն և հնգիւք

### ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 161. Դասական թվականները կազմվում են քանակական թվականներից երրորդ կամ րորդ ածանցներով՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, տասներորդ, մետասներորդ, հարիւրերորդ կամ հարիւրորդ, երկերիւրերորդ, հազարերորդ և այլն:

Մի քանակական թվականի համար իբրև դասական թվականի ծև գործածվում է առաջին բառը, որը հանդիպում է նաև առաջնորդ, առաջներորդ ծև երու:

Հարադրական կազմություն ունեցող թվականների դեպքում ածանցը դրվում է բոլոր բաղադրիչների վրա՝ քանաներորդ առաջին (կամ՝ քանաներորդ առաջնորդ, քանաներորդ առաջներորդ), քանաներորդ երկրորդ, յիսներորդ եւրներորդ, հազարերորդ քանաներորդ հինգերորդ և այլն:

§ 162. Դասական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ՝ եզակի և հոգնակի թվով:

1. Առաջին թվականը հոլովվում է ո հոլովիշով, եզակի տրականում զուգահեռաբար ստանում է ում, իսկ եզակի բացառականում՝ է հոլովվակերտները սեռ.՝ առաջնոյ, տր.՝ առաջնոյ, առաջնում, բաց.՝ յառաջնոյ, յառաջնմէ, գործ.՝ առաջնով, հոգն. ուղղ.՝ առաջինք, սեռ.-տր.՝ առաջնոց, բաց.՝ յառաջնոց, գործ.՝ առաջնովք:

2. Մյուս դասական թվականները հոլովվում են արտաքին թեքման Ի-Ա

խառն հոլովմամբ, այն տարբերությամբ միայն, որ եզակի տրականում զուգահեռաբար ստանում են նաև ում հոլովվակերտը՝ հինգերորդ. սեռ.՝ հինգերորդի, տր.՝ հինգերորդի, հինգերորդում, բաց.՝ ի հինգերորդէ, գործ.՝ հինգերորդաւ, հոգն. ուղղ.՝ հինգերորդը, սեռ.-տր.՝ հինգերորդաց, բաց.՝ ի հինգերորդաց, գործ.՝ հինգերորդաց (օք):

3. Հարադրական կազմություն ունեցող դասական թվականները սովորաբար հոլովվում են իրենց բոլոր բաղադրիչներով՝ հազարերորդ քանաներորդ վեցերորդ-հազարերորդի քանաներորդի վեցերորդի և այլն:

### ԱՆՁՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 163. Անձներական թվականները կազմվում են քանակական թվականներից երին, երեան ածանցներով՝ երկորին կամ երկորեան, երերին-երերեան, հնգերին-հնգերեան, տասներին-տասներեան, չորեքտասասներին-չորեքտասասներեան և այլն:

Անձներական թվականները ցույց են տալիս այս կամ այն քանակով առարկաների միասին վերցված լինելը, օրինակ՝ վեցերին կամ վեցերեան=վեցն էլ վեցն էլ միասին:

§ 164. Անձներական թվականները հոլովվում են անվանական հոլովմամբ, միայն հոգնակի թվով և ու հոլովիշով:

ՈՒ.	երկորին,	երկորեան
Հ.	զերկոսին,	զերկոսեան
Ս. Տ.	երկոցուն,	երկոցունց
Բ.		յերկոցունց
Գ.		երկոքունք

### ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 165. Քանակական, դասական և անձներական թվականները գործածվում են գոյական անունների հետ և նախադաս, և նտադաս:

ա) Ետադաս գործածվելիս թվականներն ընդհանրապէս հոլովվով ու թվով համաձայնում են գոյական անուններին, որոնք քանակական և անձներական թվականների հետ դրվում են միայն հոգնակի, իսկ դասականների հետ՝ միայն եզակի թվով. օրինակ՝ ամացն բառասնից (Գործ., Է, 30), ամսովք ուրիշ (Թուոն., Ա, էջ 355), նախարարն երերեան (Եղիշէ, էջ 160), սեանցն քանաներունց (Ելք, ԼԶ, 24), յամսեանն մետասասներորդի (Ծննդ., Ը, 5), յամի քանաներորդի (Գ Թագ., ԺԶ, 15):

Ուղղական և հայցական հոլովներում ետաղաս քանակական թվականը մեծ մասամբ քվով չի համաձայնում գոյականին. օրինակ՝ հարդ երեք հարդի և ութիստասն (Խոր., 2-րդ, Ղ), աւորս քառասուն (Ղուկ., Դ, 2) և այլն:

թ) Նախադաս գործածվելիս քանակական և դասական թվականներն ըստ հանրապես հոլովով ու քվով չեն համաձայնում գոյական անուններին, իսկ անձներական թվականները համաձայնում են, ըստ որում քանակական թվականների հետ գոյական անունները կարող են դրվել և՝ եզակի, և՝ հոգնակի, անձներականների հետ՝ միայն հոգնակի, իսկ դասականների հետ՝ միայն եզակի քվով. օրինակ՝ ինն հազար ամի (Եզնիկ, 2-րդ, Ա), ի տասն դահենկան (Ծննդ., ԻԴ, 22), քառասուն և ութ բեր սպառազինօր (Թոռոն., Ա, էջ 361), ի հինգերորդ ամի (Կոր., Ե), յիններորդ օրէն (Ղուկ., ԻԳ, 27), քասնեցուն սեանց (Ելք, ԻԶ, 19), երթանեցուն զառանցն (Թիգր, ԻԹ, 5) և այլն:

Երեմն նախադաս քանակական թվականները կարող են հոլովել, ըստ որում միայն հոգնակի քվով՝ համաձայնելով հոգնակի գոյական անվան հետ. օրինակ՝ երկուտասանից առաքելոցն (Փարա., 3-րդ, Շ), երթանց աւորց (Եզնիկ, ԽԵ, 25) և այլն:

Սրանձին դեպքերում դասական թվականները կարող են հոլովով համաձայնել գոյական անվանը՝ ի չորրորդում աւորն (Եղիշէ, էջ 180), ի հինգերորդի ամի (Կոր., Զ) և այլն:

1. Մի թվականը, նախադաս թե ետաղաս, հոլովով համաձայնում է գոյականին, որը հանդես է զայխ միայն եզակի քվով. օրինակ՝ ի միջում աւոր (Եզնիկ, 2-րդ, ԺԳ), ի միոց ի հօրէ (Եզնիկ, 1-ին, ԻԸ), միով ակամք (Երգ., Դ, 9) և այլն:

Ծանոթություն. Ետաղաս գործածվելիս մի թվականը ստանում է անորոշ դերանվան նշանակություն՝ այր մի=մի մարդ, ինչ-որ մարդ:

2. Երկու, երեք, չորր թվականները, նախադաս թե ետաղաս, հոլովով համաձայնում են գոյականներին, որոնք դրվում են միայն հոգնակի քվով. օրինակ՝ յերկուց բնութեանց (Եզնիկ, 1-ին, ԽԵ), եղբարքը երիք (Եղիշէ, էջ 191), ի չորից հիւրից (Եզնիկ, 1-ին, ԻԳ) և այլն:

Երեմն նկատվում են անհամաձայնության դեպքեր՝ հատկապես գործական հոլովում երեք մանկամբըն (Եզնիկ, 2-րդ, ԽԵ), երկու քարընկեցօք (Փարա., 3-րդ, ՀԶ), յերեք ժամուց (Ազ., ԺԷ, 181) և այլն:

Վարժություն 128. Թարգմանել, առանձնացնել նախադաս և ետաղաս գործածված թվականներն իրենց լրացյալների հետ միասին և քացատրել, թե հոլովով ու քվով իմշապես են համաձայնել միմյանց հետ:

Ի միոց ի հօրէ երկու որդիք ծնան: Կապեցին զնա երիք կարովք նորովք: Ի քարգմանության դառնային հանդերձ արամբը երկուք: Ի չորից հիւրից յօդեալ է: Որ հեռի էր յերուսաղեմէ հարեւը և վարսուն ասպարիսաւ: Եր ի կա-

տարեկ ամացն քառասնից՝ երևեցաւ նմա յանապատի... հրեշտակ Տեառն: Եր եղն յետ աւորց քսան և հնգից մոզպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանելք մեծաւ գօրութեամբ: Արդ ի սկզբան երկուտասաններորդ ամի թագաւորութեան իրոց գունդ կազմեր անհամար քազմութեամբ: Եր կոչեցին զդպիրսն արքունի յամսեանն առաջնում, յաւորն երեքտասաններորդի: Եր նստաւ տապանն յեթներորդում ամսեանն ի քսան և յեթն ամսոյն ի լերին Արարատայ: Յամի քսաններորդի եթներորդի Ասայի արքայի Յուդայ, թագաւորեաց Զամբրի: Եր ծովեան նմա չորս օդամանեակս ոսկիս ի չորեցունց կողմանց նորա: Լինէր խօսնակից ի մեջ թագաւորացն երկոցունց: Ընկց ի ճեռաց իրոց զախսատակսն երկուսին: Հանդերձ Արշակունի տիկնաւն, և մանկամբըն երկուումք... հասաներ ի գաւառն Կարնոյ:

Վարժություն 129. Թարգմանել գրաքար, Ֆի. Երկու թվականները գործածել նախադաս, իսկ մյուսները՝ ետաղաս, համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին հոլովով ու քվով:

Բոլորին կապեցին մի շղթայով: Երկու վկաներով հաստատեցին այդ խոսքը: Սի օրում անցան այդ ճանապարհը: Մեռնում է Մծրինում թագավորելով քսանինզ տարի: Երեք տարի մնացին օտար երկուում: Չորս ամսից հետո (յետ) դարձյալ սկսեց պատերազմը: Տասնմեկ ամիս պաշարեցին բերդը: Ուրը տարով մեծ էր նրանից: Վաճառեցին իրենց ուղտերը երեք հարյուր հիսուն դահենկանի: Տասներկու զինվորներից չորսին զիսատեցին: Հինգ նախարարներով հանդերձ ներկայացավ (հանդիման եղն) թագավորին:

Վարժություն 130. Թարգմանել գրաքար, առաջին երեք նախադասությունների դասական թվականները գործածել նախադաս՝ եզակի ուղիղ ճնուկ, իսկ մյուսներինը՝ ետաղաս, համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին հոլովով ու քվով:

Վոամշապուհ թագավորի հինգերորդ տարում հորինվեցին հայոց նշանագրը: Ութերորդ ամսում պատգամավորներ է ուղարկում նրա նոտ: Առաջին սրահի լայնությունը հիսուն կանգուն էր: Յոթերորդ օրը (օրում) նրան իր նոտ կանչեց: Հենց առաջին օրվանից հավատարմության երդում էր պահանջում նրանից: Տասնմեկորդ ամսից հետո քշնամու գորքը պարտության մատնեց: Երկորդ դահլիճի սյուների խոյակները պատեց ոսկով: Այս քաղաքը շինեց իր թագավորության քսաններերորդ տարում: Յոթերորդ ամսվա տասնինգերորդ օրում տոն էր: Երկորդ հրովարտակով նախարարներին կանչում է Տիգրոն:

Վարժություն 131. Թարգմանել, փակագծերի մեջ առնված անձներական թվականները դմել իրենց ընդգծված լրացյալների հոլովով:

Եւ թշնամութիւն յափստենական ի մէջ (Երկորեան) ազգաց քաջաց հաստատել: Եւ նստաւ հազարապետն՝ զի լուիցէ կողմանց (Երկորեան): Եւ ինքն էր կադ (Երկորեան) ոտից իւրոց: Այնպէս կենդանույն մորթեցին զսուրբսն (Երեցին): (Երկորեան) կողմանց քաջում վիրաւորք յերկիր անկեալ դիարաւախաղային: Այլ սրբոյն Պատղոսի (չորեքտասանեքեան) բորովք պատմէ զիրառաքեակիցս և նիզակակիցս:

**Վարժութեյուն 132. Թարգմանել գրաբար, թվական անունների փոխարեն յնեւ համապատասխան անձներական թվականներ՝ նախադաս կամ նուածաս, հոլովով ու բվով համաձայնեցնելով ընդգծված լրացյալներին:**

Չորս կողմից քաղաքը պատեց պարսպով: Յոթ երեցներին էլ մորթեց մի գրում: Այդ մնձ պատերազմում երկու կողմերն էլ մնացին անպարտելի: Տասներկու որդիներով և բոռներով գալիս հասնում է այդ երկիրը: Ութ եղբայրներին էլ պատվիրեց զգուշանալ նրանցից: Երկու գետերից էլ ջուր էին տանում Երեք երկրների բոլոր նախարարներին իր մոտ կանչեց: Քսան սպառազինված (վառեալ) մարդկանցով հարձակվեց թշնամու քանակի վրա:

## ԵՂԾ ԱՂԱՆԴԱՑ

(Հատուած)

Արդ՝ մեր քողեալ զնոսա, հարցցուք զոսա. Զրուանն, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեա՞լ որ էր, թէ անկատար: Եթէ ասիցեն՝ եթէ կատարեալ էր, լուիցեն՝<sup>1</sup> եթէ կատարեալն յումմէ՝<sup>2</sup> կարօտանայր խնդրել որդի, որ գայցէ և գերկինս և գերկիր առնիցտ: զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել գերկինս և գերկիր: Ապա եթէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա,<sup>3</sup> որ զնորա թերակատարութիւնն լնուի կարէր: Եւ եթէ էր որ ի վեր քան զնա, ննա<sup>4</sup> պարտ էր առնել գերկինս և գերկիր և զամենայն որ՝<sup>4</sup> ի նոսա առ ի ցուցանելոյ զիւր բարերարութիւնն և զօրութիւն. և ոչ Զրուանայ որդի շնորհել, որ գերկինս և գերկիր և զամենայն որ՝<sup>4</sup> ի նոսա առնիցտ:

Այլ, ասեն, փառաց առներ զյաշտն:

Հարցցուք. փառքն յումերէ՝<sup>5</sup> յաջողեալ էին ննա, թէ վասն զի մշտնջենաւոր էր՝ փառաւոր էր: Եթէ յումերէ պարզւեալ էին ննա փառքն, հարկ է կարծել՝ թէ էր ոմն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին: Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին

փառք, որպէս ի շաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն. և Երկորին ի ոյի պար, որպէս ի շաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն:

Եւ այլ ևս. զի եթէ արեգակն և լուսին չն և էին լեալ, որով ժամքն և ատորք և տարիի կարգին, հազար ամն ուստի՝<sup>6</sup> երևէր. զի չէին՝<sup>6</sup> ի միջի լուսատրքն, որք զիւր աւուրց և ամսոց և տարեաց կարգէին, այլ յայտ է՝ թէ անմըստրեամբ լի են բաջաղանքն:

Դարձեալ թէ՝<sup>7</sup> Երկինք և Երկիր և որ ի նոսայն՝ չէին,<sup>8</sup> ո՞ւր առներ զյաշտն կամ ի՞ւ: Յորժամ Երկիր չէր և ոչ տունկը ինչ որ ի նմանէ, զբարսմունս ուստի՝<sup>9</sup> զտաներ ունել ի ծեռին. կամ բնաւ զի՞նչ իսկ յազէր, զի անասունք չն և ս էին արարեալ: Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զիազար ամ, ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ թէ լինիցի՝<sup>10</sup> ինձ որդի Որմիզդ, և եթէ չինիցի, և ի զուր ինչ վաստակիցիմ: Եւ այնու ցուցան՝ թէ տկար էր Զրուանն և կարօւ<sup>8</sup> և առանց գիտութեան<sup>9</sup>, և պատճառք<sup>10</sup> շարեացն նոյն է, և ոչ Արհմն: Զի եթէ նորա չէր յերկուացեալ<sup>11</sup>, որպէս ասենն, Արհմնն ոչ լինէր<sup>12</sup> զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն Երկմտեաց, որ անհաւատն է և լի անկարգութեամբ...:

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, 4)

<sup>1</sup> լոկցեն-կլսեն, քող լսեն

<sup>2</sup> եր ոմն ի վեր քան զնա-մրանից

վեր մնելը կար

<sup>3</sup> ենթական դրված է տրական հոլովով պարտ  
էր միայինի բայի մոտ՝ մա պիտի

<sup>4</sup> առորոգյալը (են) զեղչված է

<sup>5</sup> առ նախորդը բացառականի հետ

նպատակի իմաստով՝ ցույց տալու համար

<sup>6</sup> այստեղ՝ չկային իմաստով

<sup>7</sup> գործածված է երե իմաստով

<sup>8</sup> այստեղ՝ կարիք ունեցող, կարիքավոր

<sup>9</sup> առանց գիտութեան-տզես, անգետ

<sup>10</sup> պետք է բարգմանել եզակի իմաստով

<sup>11</sup> չէր յերկուացեալ-Երկմտած

չիններ, չկասկածեր

<sup>12</sup> ոչ լիներ. այստեղ՝ չէր լինի

## ՀԱՍ ԶՄԱՆՈՒԹԵՐՈՐԴ

### ՊԱՏճԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ

**§ 166.** Գրաբարի պատճառական բայերը կազմվում են *ուցան* (<ոյց+ան) ածանցով, որն ավելանում է անցյալ կատարյալի հիմքին, որից հետո դրվում է ել դերայական մասնիկը: Այսպիսով, տարբեր լծորդության բայեր պատճառական դառնալիս վերածվում են Ե լծորդության բայերի: Պատճառական բայերը հիմնականում կազմվում են չեղոք սեռի բայերից. օրինակ՝ վագել անց. կատ. հիմք՝ վագեաց-վագեցուցանել (=վագեցնել), յիշել-յիշեաց-յիշեցուցանել (=յիշեցնել), անցանել-անց-անցուցանել (=անցկացնել), զգալ-զգաց-զգացուցանել (-զգացնել), զարմանալ-զարմաց-զարմացուցանել (=զարմացնել), բազմիմ-բազմեաց-բազմեցուցանել (=բազմեցնել), ուսանիմ-ուս-ուսուցանել (=սովորեցնել), բռչմ-բռ-բռուցանել (=բռցնել), փախչիմ-փախս-փախուցանել (=փախցնել), ջենովլ-ջեռ-ջեռուցանել (=տաքացնել), զգենովլ-զգեց-զգեցուցանել (=հազցնել), զարբովլ-զարբ-զարբուցանել (=զարբնեցնել) և այլն:

Սի քանի բայերի պատճառականի կազմության ժամանակ *ուցան* ածանցի ց-ն դառնում է և կամ զ՝ կորնչիմ-կորուսանել, ելանել-ելուզանել (=դուրս հանել, դուրս բերել), ընկնովլ-ընկուզանել (=կով տալ, ընկոմել), փլչիմ-փլուզանել (=փլցնել):

**§ 167.** Պատճառական բայերը խոնարիվում են Ե լծորդության ածանցավոր բայերի նման, ըստ որում ներկայի հիմքից կազմվող ժամանակներում *ուցան* ածանցը պահպանվում է, իսկ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ծներում այդ ածանցի աճ բաղադրիչն ընկնում է: Անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի 3-րդ դեմքում *ուցան* ածանցի *ուց* բաղադրիչը շեշտված դառնում է ոյց՝ բաքուցանել-բաքոյց, մասուցանել-մատոյց, իջուցանել-իջոյց: Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում սուր շեշտի հետևանքով յ և ց հնչյուններն ընկնում են՝ բազմեցուցանել-բազմեցոյց-բազմեցն՝ լցուցանել-լցոյց-լցոն՝ ուսուցանել-ուսոյց-ուսուու:

Պատճառական բայերն ընդհանրապես խոնարիվում են ներգործածև: Խոնարիման օրինակ. ուսուցանել, ներկայի հիմք՝ ուսուցան, անցյալ կատարյալի հիմք՝ ուսոյց:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

		Ներկա	Անցյալ անկատար		
		Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
1-ին դ.	ուսուցանեմ	ուսուցանեմք	ուսուցանեի	ուսուցանեաք	ուսուցանեիք
2-րդ -	ուսուցանես	ուսուցանեք	ուսուցանեիք	ուսուցանեիք	ուսուցանեին
3-րդ -	ուսուցանէ	ուսուցանեն	ուսուցաներ	ուսուցանեին	

Անցյալ կատարյալ

		Եզակի	Հոգնակի	
		Եզակի	Հոգնակի	Եզակի
1-ին դ.	ուսուցի	ուսուցաք	ուսուցեիք(իք)	ուսուցին
2-րդ -	ուսուցեր	ուսուցեք		
3-րդ -	ուսոյց	ուսուցից		

### ՍՏՈՐԱԴԱՍՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

		Առաջին ապառնի	Երկրորդ ապառնի	
		Եզակի	Հոգնակի	Եզակի
1-ին դ.	ուսուցանիցեմ	ուսուցանիցեմք	ուսուցից	ուսուցուք
2-րդ -	ուսուցանիցես	ուսուցանիցեք	ուսուցեց	ուսուցիք
3-րդ -	ուսուցանիցէ	ուսուցանիցեն	ուսուցեցէ	ուսուցեն

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

		Բուն հրամայական	Հորդորական հրամայական	
		Եզակի	Հոգնակի	Եզակի
2-րդ դ.	ուսու	ուսուցէք	ուսուչիք	ուսուչիք

Արգելական հրամայական

		Եզակի	Հոգնակի	
		Եզակի	Հոգնակի	Եզակի
2-րդ դ.	մի՛ ուսուցանեք	մի՛ ուսուցաներ	մի՛ ուսուցանեք	մի՛ ուսուցանեին

Ապառնի դերքայ՝ ուսուցանելոց, անցյալ դերքայ՝ ուսուցեալ, ենթակայական դերքայ՝ ուսուցանող կամ ուսուցող:

§ 168. Գրաբարում պատճառականի իմաստն արտահայտվում է նաև անորոշ դերքայի հետ տալ բայի հարազորությամբ: Խոնարհման ժամանակ անորոշ դերքայը մնում է անփոփոխ, խոնարհվում է միայն տալ բայը (տալ բայի խոնարհումը տես § 170). օրինակ՝ Եւ նա ետք բերել ... աղ (Բուգ., 4-րդ, ԾԳ) = Եվ նա բերել տվեց ... աղ: Ետ տանել նմա բուղը աղաչանաց (Խոր., 2-րդ, Լ): Չատ տայր ըմպել (Բուգ., 5-րդ, ԼԵ):

**Վարժություն 133.** Կազմել հետևյալ բայերի պատճառականը ուշադանուվ:

ա) գնալ, հեռանալ, զարմանալ, յագենալ, մեղմանալ. բ) հնչել, հասանել, զարկանել, բնակել, փայլել. զ) յոգնիմ, նստիմ, բռչիմ, սնանիմ, շիջանիմ, ոյնուվ, հեղծնուվ, զգենուվ, զարբնուվ, ջենուվ:

**Վարժություն 134.** Խոնարհել դարձուցակեց, հասուցակեց, լուցուցակեց, անցուցակեց պատճառական բայերը:

**Վարժություն 135.** Թարգմանել, որոշել պատճառական բայերի ժամանակը, դեմքն ու թիվը:

Բայց փոխանակ իմ բազաւորեցո՛ զԱրշակ զորդի իմ: Զգոյշ լինիցիք, գուց որ զգեկ մոլորեցուցանիցտ: Թերև ացուցին զնամ՝ բափեալ զցորեանն ի ծովն: Մի՛ բարուցաներ յինէն զրան զոր ևս հարցից քեզ: Եւ զգեցուցեն զպատմունան առնն այնմիկ զոր արքայն սիրէ, և հեծուսեն զնա յերիվարն արքունի: Դու բխեցուցեր զարքեւրս և զվուակս, դու ցամաքեցուցեր զգեսոս սաստիկս: Արդ երէ կամիս ուսանել զծշմարիտն, քաղցրացն զդառնութիւնն սրտիդ: Մեծազոյ բարբառով զերինս հնչեցուցանէին: Եւ գտնալ յԱսիայ պղնձածոյ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակեայ և զԱպոդոմի տայ բերել յաշխարհս մեր: Եւ հեծուցեր զՍողոմոնն զորդի իմ ի ջորտչն իմում, և իջուցեք զնա ի Գեհոն: Զեղբայրն իր ետ կորուսանել:

**Վարժություն 136.** Թարգմանել գրաբար:

Նստեցրեց նրան իր կառքում: Ամենքից վերս (ի վերոյ քան զամենեսեան) բազմեցրին Արշակ բազավորին: Զաղցով և ծարավով տառապեցնում էին գերպած զինվորներին: Խջեցրին նրան կախաղանից: Սիջնաբերդն ամրացնում էր բարձր պարիսպներով: Չատերին բնակեցրին հեռավոր տեղերու:

Մի՛ բարցրեք նրանց ձեր տներում: Արևո տաքացնում է երկիրը: Ծտապ հասցրո՛ այս նամակը բազավորին: Արքնացրե՛ք նրանց քնից: Ինչո՞ւ վշտաց-քիք քո ընկերոջը: Հայոց երկրից հող և ջուր է բերել տալիս:

տաքացնել-ջեռուցանել

## ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅՑ (Հատուած)

Դարձեալ ասեն. «Զբարսմունան զոր ի ձեռին ուներ, ցորդին իր ցՈրմիզդ եւ, և ասէ. «Յայժմ ես վասն քոյ յաշտ առնեի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»:

Արդ երէ նա վասն նորա յաշտ առներ, զի որդի լինիցի նմա<sup>1</sup>, իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս<sup>2</sup> առներ, միրէ կասկա՞ծ ինչ ուստեք էր նմա, և այն աղազաւ պատուիրէր նմա վասն իր յաշտ առնել, միրէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ զուց ընդ որդույն տալոյ՝ զնա բաժ առնուցու<sup>3</sup>: Եթէ այն ինչ ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ զբարսմունսն շասաց սա՝ թէ «Դու ինձ յաշտ առնիցես», զի ցուցց թէ էր ոմն՝ որում նա վասն որդոյն յաշտ առներ. և որդոյն պատուիրեաց վասն իր նմին յաշտ առնել:

Եւ երէ էր որ ի վեր քան զնա և քան զորդին, որում զյաշտն առնեին, զնա պարտ էր իմանալ պատճառ իրեանց և արարիշ ամենեցուն, և ոչ զՋրուան պատճառ Որմզդի և Արհմենի. և զնոսա արարիշ չարեաց և բարեաց: Զան Զրուանայ որդի արարիշ տայր, որ ի վերն քան զՋրուանն էր, ինքն իսկ իրով վի չարէ՞ր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՝ առնել, որպէս յառաջագոյնն ասացաւ, և զիր զօրութիւնն և զքարերարութիւնն ցուցանել: Կամ թէ յորդոյն իրմէ Արհմենայ կասկած ինչ էր նմա<sup>4</sup>, և վասն այնորիկ զբարսմունսն յՈրմիզդ<sup>5</sup> տայր, զի նորօք յաշտ արարեալ վերագունին՝ անկասկած լինիցի, ապարէն պարտ էր ումեր՝ ի միջի լինել, որում զյաշտն առներ: Եւ երէ էր որ ի միջի՝ որում օրէն էր զյաշտն առնել, ապա Զրուանն չէր մշտնշենաւոր, այլ յուներ եղեալ: Եւ պարտ է խնդրել յում՝ նայն<sup>6</sup> եղել. և ո՛վ էր՝ ում ինքն զյաշտն առներ, և ով այն՝ որում որդոյն իրամայեաց վասն իր յաշտ առնել: Զի ոչ է մարդ ումեր սկիզբն առնուլ լինելոյ<sup>8</sup>, երէ ոչ յայլմէ առնուցու զինելն. և աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի: Եւ արդ ո՞վ իցէ որ զՋրուանն արար, երէ ոչ աստուած, որում և զյաշտն առներ. որ և որդի այնպիսի ետ նմա, զի զերկինս և զերկիր և որ ի նոսա՝ առնիցտ: Եւ այն են զարմանք<sup>9</sup> զի ինքն ոչ արար, և որդոյն Զրուանայ կախող է տալ զառնելն:

Այլ չէր<sup>10</sup> որ ի միջի, ասեն, որում Զրուան զյաշտն առներ. երէ այնպէս իցէ,

և ոյ Զրուանն իսկ էր<sup>10</sup>. և մեծի ծաղու արժանի է, զի չերն չէին վասն չէին յաշ առնձիք<sup>11</sup>:

### (Եզնիկ Կողբացի, 2-րդ, 6)

<sup>1</sup> այստեղ՝ իրեն

<sup>2</sup> յոր սակա-ինչ նպատակով՝ պատճառով

<sup>3</sup> միք յորմ գորդի՞ն խնդրեաց. թէ գուց

ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու-մի՞քն

նրանից (եր կասկածում), որից խնդրեց որդին

(մտածելով), թէ որդին տալու դիմաց

գուցի հատուցում պահանջի

<sup>4</sup> էր նմա-նա ուներ

<sup>5</sup> սովորական է՛ ցմրմիզ

<sup>6</sup> ներական պարու էր միադիմի բայի

մոտ տրական հոլովով՝ մծատեղը

պիտի լիներ մեկը

<sup>7</sup> Ա-ն հող է, իսկ յ-ն ավելացել է

վերջինիս պատճառով

<sup>8</sup> զի ոչ է մարք ումեր սկիզբն առնու լինելու

որովհետև հնարավոր չէ, որ մեկը

լինելու սկիզբ առնի

<sup>9</sup> այն են զարմանք-զարմանալին այն է

<sup>10</sup> այստեղ՝ չկար

<sup>11</sup> չերն չէին վասն չէին յաշտ առներ-չեղան

(նա, որ չկար) չեղածին չեղածի համար

զին էր մատուցում

## ԴԱՍ ԶՄԱՆՀԱՆԵՐՈՐԴ

### ԱՆԿԱՆՈՒՆ ԲԱՅԵՐ

§ 169. Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք անցյալ կատարյալի հիմքի կազմվող ծևերում ունենում են տարբեր կարգի շեղումներ, իսկ ներկայի հիմքի կազմվող ժամանակներում շեն շեղվում խոնարհման ընդհանուր կանոններից: Այդպիսի բայերը կոչվում են անկանոն բայեր: Անկանոն բայերի մասը, որոնք խոնարհման մեջ համդեն են զայիս մասնակի շեղումներով, նշվել են անցյալ կատարյալի հիմքի և նրա ժամանակների կազմության համապատասխան բաժիններում (տե՛ս § 40, 42, 43): Ստորև տրվում են մնացած անկանոն բայերը, որոնք ըստ իրենց շեղումների կամ անկանոնությունների բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի բայերն անցյալ կատարյալի հիմքի կազմվող ժամանակներում խոնարհվում են մասնակիորեն հնչյունափոխված արմատներով, իսկ երկրորդ խմբի բայերն ընդհանրապես խոնարհվում են այլ հոմանիշ արմատներով: Վերջին խմբի բայերը նաև պակասալոր բայեր են:

§ 170. Առաջին խմբի բայերն են՝ առնել, դնել, երդնու, լսել, հարկանել, ճանաչել, յառնել, տալ, տանել (իմ), որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ծևերում խոնարհվում են հետևյալ կերպ.

1. **Առնել** (=անել, կատարել, ստեղծել, դարձնել). անցյալ կատարյալի հիմքն է արար. անց. կատ.՝ արարի, արարեր, արար, արարք(իք),

արարին, 2-րդ ապ.՝ արարից, արարես, արարտ, արարութ, արարչիք, արարին, բուն իրամ.՝ արար, արարէք, հորդ. իրամ.՝ արարիք, արարող, հորդ. իրամ.՝ պերբայ՝ արարող: Խոնարհվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ արարայ, 2-րդ ապ.՝ արարայց և այլն:

2. **Դնել**, անց. կատ.՝ եղի, եղիր (եղեր), եղ, եղար, եղիր, եղին, 2-րդ ապ.՝ եղից, դիցես, դիցէ, դիցուք, դիչիք, դիցեն, բուն իրամ.՝ դիչիր, դիչիք, անց. դերբայ՝ եղեալ: Խոնարհվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ եղայ, եղար, եղաւ, եղայր, եղան, 2-րդ ապ.՝ եղայց, դիցիս, դիցիցէ, դրդուիցուք, երդուիչիք, երդուիցեն, բուն իրամ.՝ երդուիք, երդուարութ, հորդ. իրամ.՝ երդուիչիք, երդուիչիք, անց. դերբայ՝ երդուալ:

3. **Երդնու**. անցյալ կատարյալի հիմքն է երդ. անցյալ կատարյալում, բուն իրամայականում և 2-րդ ապանու եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորածն, իսկ 2-րդ ապանու մյուս ծևերում խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ երդուայ, երդուար, երդուաւ, երդուայր, երդուան, 2-րդ ապ.՝ երդուայց, երդուիցես, երդուիցէ, երդուիցուք, երդուիչիք, երդուիցեն, բուն իրամ.՝ երդուիք, երդուարութ, հորդ. իրամ.՝ երդուիչիք, երդուիչիք, անց. դերբայ՝ երդուալ:

4. **Լսել**. անցյալ կատարյալի հիմքն է լու. անցյալ կատարյալում և 2-րդ ապանու եզակի 1-ին դեմքում խոնարհվում է կրավորածն, իսկ 2-րդ ապանու մյուս ծևերում խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ լուայ, լուար, լուաւ, լուայր, լուան, 2-րդ ապ.՝ լուայց, լուիցես, լուիցէ, լուիցուք, լուիչիք, լուիցեն, բուն իրամ.՝ լուիք, լուայթ, լուարութ, հորդ. իրամ.՝ լուիչիք, լուիչիք, անց. դերբայ՝ լուիեալ, ենթ. դերբայ՝ լսող:

5. **Հարկանել**. անցյալ կատարյալի հիմքն է հար, անց. կատ.՝ հարի, հարեր, հար կամ եհար, հարար, հարեք(իք), հարին. 2-րդ ապ.՝ հարից, հարցես, հարցէ, հարցուք, հարջիք, հարցեն, բուն իրամ.՝ հա՛ր, հարէք, անց. դերբայ՝ հարդակ: Խոնարհվում է նաև կրավորածն. անց կատ.՝ հարայ, 2-րդ ապ.՝ հարայց

և այլն:

6. **Շանաշել**. անցյալ կատարյալի հիմքն է ժամ. խոնարհվում է խառն խոնարհմամբ. անց. կատ.՝ ժանեայ, ժանեար, ժանեաւ, ժանեայր, ժանեան, 2-րդ ապ.՝ ժանեայց, ժանիցես, ժանիցէ, ժանիցուք, ժանիչիք, ժանիցեն, բուն իրամ.՝ ժանիք, ժանեա՛յ, ժանեա՛յը կամ ժաներութ, հորդ. իրամ.՝ ժանիչիք, ժանիչիք, անց. դերբայ՝ ժանուցեալ, ենթ. դերբայ՝ ժանաշող:

7. **Ցառնել** (=առողջանալ, վեր կենա). անցյալ կատարյալի հիմքն է յար. խոնարհվում է խառն խոնարհմամբ՝ անց. կատ.՝ յարեայ, յարեար, յարեաւ, յարեաք, յարեայր, յարեան, 2-րդ ապ.՝ յարեայց, յարիցես, յարիցէ, յարիցուք, յարիչիք, յարիցեն, բուն իրամ.՝ արի՛, արիք, հորդ. իրամ.՝ յարիջիք, յարիջիք, անց. դերբայ՝ յարուցեալ:

8. **Տալ**. անց. կատ.՝ ետու, ետուր, ետ, տուաք, ետուք, ետուն, 2-րդ ապ.՝ տաց, տացես, տացէ, տացուք, տաջիք, տացեն, բուն իրամ.՝ տո՛ր, տո՛ք, հորդ.

հրամ՝ տաջի՛ր, տաջի՛ք, անց. դերբայ՝ տուեալ, ենթ. դերբայ՝ տուող: Խոնարիվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ տուայ, տուար, տուաւ, տուաք, տուայ, տուան, 2-րդ ապ.՝ տուայց, տացիս, տացիք, տացուք, տացին:

9. *Տանել(իմ)*. անցյալ կատարյալի հիմքն է տար. անց. կատ.՝ տարայ, տարար, տարաւ, տարաք, տարայք, տարան, 2-րդ ապ.՝ տարայց, տարօն (տարցես), տարցի (տարցէ), տարցուք, տարչիք, տարցին (տարցեն), բռն հրամ.՝ տա՛ր, տարա՛յք, հորդ. հրամ.՝ տարցի՛ր, տարցի՛ք, անց. դերբայ՝ տարեալ, ենթ. դերբայ՝ տանող:

§ 171. Երկրորդ խմբի բայերն են՝ գալ, երալ, ըմակել, լիմել(իմ), ունել(իմ), ուտել, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ծներում խոնարիվում նետույալ կերպ.

1. Գալ. անցյալ կատարյալի հիմքն է եկ. խոնարիվում է ներգործածն, իսկ բուն հրամայականի հոգնակի թվի 2-րդ դեմքում՝ կրավորածն։ Երկրորդ ապանիում, սկսած եզակի թվի 2-րդ դեմքից, վերջավորություններից առաջ ավելանում է եւ: Անց. կատ.՝ եկի, եկիր, եկն, եկաք, եկիք, եկին, 2-րդ ապ.՝ եկից, եկեսցես, եկեսցէ, եկեսցուք, եկեսցիք, եկեսցեն, բռն հրամ.՝ եկ, եկա՛յք, հորդ. հրամ.՝ եկեսցի՛ր, եկեսցի՛ք, անց. դերբայ՝ եկեալ, ենթ. դերբայ՝ եկող:

2. Երթալ. անցյալ կատարյալում խոնարիվում է չոգ, իսկ մյուս ժամանակներում՝ երթ արմատներով: Անցյալ կատարյալում և 2-րդ ապանու եզակի լին դեմքում խոնարիվում է կրավորածն, իսկ 2-րդ ապանու մյուս ծներում խառն խոնարինամբ. անց. կատ.՝ չոգայ, չոգար, չոգաւ, չոգաք, չոգայք, չոգան, 2-րդ ապ.՝ երթայց, երթիցես, երթիցէ, երթիցուք, երթիչիք, երթիցեն, բռն հրամ.՝ երթ, երթա՛յք, հորդ. հրամ.՝ երթիչի՛ր, երթիչի՛ք, անց. դերբայ՝ արբեալ: Խոնարիվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ արբայ, 2-րդ ապ.՝ արբայց և այլն:

3. *Ըմակել*. խոնարիվում է արբենալ բայի արբ արմատով՝ անց. կատ.՝ արբի, արբեր, արբ կամ եար, արբար, արբէք(իր), արբին, 2-րդ ապ., արբից, արբցես, արբցէ, արբցուք, արբցիք, արբցեն, բռն հրամ.՝ արբ, արբէք, հորդ. հրամ.՝ արբչի՛ր, արբչի՛ք, անց. դերբայ՝ արբեալ: Խոնարիվում է նաև կրավորածն՝ անց. կատ.՝ արբայ, 2-րդ ապ.՝ արբայց և այլն:

4. *Լիմել(իմ)*. անցյալ կատարյալում խոնարիվում է եղանիմ բայի եղ արմատով, իսկ երկրորդ ապանիում՝ զրկահեռաբար և՝ եղ, և՝ լի արմատներով: Սնացած ծներում խոնարիվում է միայն լի արմատով: Անց. կատ.՝ եղէ, եղեր, եղել, եղաք կամ եղեաք, եղէք, եղեն, 2-րդ ապ.՝ եղէց, եղիցիս կամ եղիցես, եղիցի, եղիցուք, եղիչիք, եղիցին, կամ լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք, լիչիք, լիցին, բռն հրամ.՝ լե՛ր, լեռո՛ք, հորդ. հրամ.՝ լիջի՛ր, լիջի՛ք, անց. դերբայ՝ լեալ:

5. *Ունել*, իմ (=բռնել, համարել և այլն), խոնարիվում է կալու կամ կալուց բայի կալ արմատով. անց. կատ.՝ կալայ, կալար, կալաւ, կալաք, կալայք, կալան, 2-րդ ապ.՝ կալայց, կալցիս, կալցի, կալցուք, կալցիք, կալցին, բռն հրամ.՝ կա՛լ կամ կա՛, կալա՛յք կամ կալարուք, հորդ. հրամ.՝ կալջի՛ր, կալջի՛ք, անց. դերբայ՝ կալեալ:

6. *Ուտել*. անցյալ կատարյալի հիմքն է կեր. անցյալ կատարյալում և 2-րդ ապանու եզակի 1-ին դեմքում խոնարիվում է կրավորածն, իսկ 2-րդ ապառնու մյուս ծներում խառն խոնարինամբ, անց. կատ.՝ կերայ, կերար, կերաւ կամ եկեր, կերաք, կերայք, կերան, 2-րդ ապ.՝ տարայց, կերիցես, կերիցէ, կերիցուք, կերիչիք, կերիցեն, բռն հրամ.՝ կե՛ր, կերա՛յք, հորդ. հրամ.՝ կերիչի՛ր, կերիչի՛ք, անց. դերբայ՝ կերեալ, ենթ. դերբայ՝ կերող:

**Վարժություն 137. Թարգմանել, որոշել անկանոն բայերի ժամանակը, դեմքն ու թիվը:**

Ա. Յարեաւ Դաւիթ և փախեաւ յաւուր յայնմիկ յերեսաց Սաւուդայ: Բայց ծանի՛ր զամինաւորիսն քո: Մի՛ տացուք զբստերս մեր ուստերաց ժողովորոց օստարաց: Արասցուք նմա վերնատուն մի փոքրիկ, և դիցուք ի նմա մահիճն և սեղան և աքոռ և աշտանակ: Գովեսցին ամենեքեան որ երդուն նովաւ: Ծանեաւ Հայկ զիտումք վառելոյ ջոկատին: Լուաւ զայս ամենայն թագաւորն ի բերանոյ մեծ հազարաւետին: Զհազար ամ յաշտ արաք՝ զի թերևն որդի մի լինցին նմա: Եւ դու եսուր ի հնձ պատասխանի իբրև ընկերի: Եւ տարցես նախ յայն տեղ՝ ուր բնակ իսկ իցտ հողն: Զրիկունս իմ հարին մեղաւորք:

Բ. Երթ ի գետ քո և լիջի՛ր դու անդ երեց՝ ուստի ես: Արբչի՛ք ջուր ի ջրիորոց ծերոց: Ես եղեց նմա ի հայր, և նա եղիցի ինձ յորդի: Ոչ կերայց հաց և ոչ արբից ջուր ի տեղուցս յասմիկ: Չոգաւ յանդիման եղն թագաւորին Պարսից Շապիոյ: Եւ արք պարսիկը... որք էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ծեռս նորա: Դի՛ր զայդ առաջի քո և կե՛ր: Զանզի իբրև եկին հասին հրամանք հրովարտակացն ի մեծ թագաւորեն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց Մեծաց՝ ոչ սակաւ ինչ խոռվութիւն եղն ի մեջ աշխարհին Հայոց: Եկա՛յք, երթիցուք ուխտ դիցուք և դաշիճն կուսցուք ընդ ամենայն ազգս հեթանոսաց: Մեսան եկն և փարատեաց գերկիտն:

**Վարժություն 138. Թարգմանել գրաբար:**

Ա. Ես նրանց չսեցի և տվեցի հրաման: Շանաշիր, թե ովքեր են քո թշնամիներն ու բարեկամները: Սկրտված չի, ինչո՞ւ ինձ արիր երեց: Հովնանը վեր կացավ և զնաց Նինվե: Չգիտեր, թե ինչ պատասխան տա այդ խոսքերին: Երբեք սուս չի երդվում: Ինչ որ կասի քեզ՝ կանես: Ժագ կդնենք նրա զլիսին (ի զլուխ) և կմեծարենք նրան: Դրան Հայոց մարզան արեք: Ուսկի և արծար կտաք նրանց: Այս ընծաները կտանես քո հավատարին մարդկանց: Երբ մոտեցավ (մերձեցաւ) տանը, լսեց երգերի և պարերի ծայն: Իր դստերը կտան կնության (ի կնութիւն): Ականջ դրեք իմ խոսքերին:

Բ. Բոնեցին նրան, շղաներով կապեցին ծեռքերն ու ոտքերը: Մատուցեք

մեզ գինի, որ խմենք: Խսկ նրանք եկան հասան Հայոց երկիրը: Լսեցեք բոլորք որ իմ ամուսնու մահը իմ պատճառով (վասն իմ) եղավ: Ասպա գնացին հարթցին Պարսից զորքին: Առավ նրա պտղից և կերավ: Թող խաղաղություն լին ամբողջ աշխարհում: Ինչո՞ւ եկար ինձ մոտ: Թող չխմի գինի և օդի: Որսորդ մի կարավ բռնեց: Կզնաս կբռնես նրան և կբերես ինձ մոտ:

## ԵՂԾ ԱՂԱՌՆՈՅՑ (Հասուած)

Հրամանաւ<sup>1</sup>, ասեն, մեռանիցին մարդիկ, թէ առանց հրամանաց:

Նախ պարտիմք գիտել՝ թէ զի՞նչ հրամանք իցեն, և ուստի՛ քան հրամանց ընդ աշխարհ տարածեալ ից:

Հրաման կապեալ<sup>2</sup> վասն մահուամ՝ յաստուածատուր գիրս ոչ ուրեք զտանեմք. քանզի Տէրն մահու և կենաց՝ և կարճել իշխէ զիրամանն իւր և երկայնել: Որպէս առ ջրեղեղան ասէ, եղիցին ատլըք կենաց մարդկանս այսորիկ հարիր և քան ամ. և վասն բազմութեան անօրէնութեանն պակասեցոյց ի նոցանէ զքսանն: Եւ որպէս առ Աղամ ասէ. յատուր յորում ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին մեռանիս. և առ իւրում բարերարութեանն, և վասն որդէնութեան և մարդկան յաշխարիի սերելոյ. ներեաց նմա ինն հարիր և երեսուն ամ, զի մի գեղեցիկ ստեղծուածն իւր համօրէն ջնջեսցի: Եւ վասն արտասուացն Եզեկիայի արքայի՝ յաւելաւ նմա հնգետասան ամ: Եւ վասն ապաշխարութեան նինուէացոց՝ ոչ կորոյս զքաղաքն յաւուրն երրորդի ըստ քարոզութեան մարդարէին իւրոյ:

Եւ ոչ որպէս քաւդեայքն աստեղանշմարք, որ և զծննդոց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իրը ի կենդանեաց՝ դնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցինն, անդէն և մահուանքն իւրաքանչիր ուրուր անվրէաւ սահմանիցին. և ըստ այս ոչ յառաջել ումեք մեռանել ինար իցէ, և ոչ յամենալ:

Այլ յանդիմանեն զնոսա և պատերազմացն դէաք. զի ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին այլ և այլ տիովք կէսք մատաղօրեայք, և կէսք երիտասարդք, և այլք ի կատարեալ հասակի ծերութեան. որոց ծնունդըն ի միում ժշին, և մահքն ի միասին եղանին:

Եւ դարձեալ՝ թէ յաստեղաց<sup>4</sup> էին պատճառոք ծննդոց, ընդէ՞ր ի հնդիկս<sup>5</sup> ոչ որ երեք սպիտակ ծնաւ, և ոչ յայլ աշխարհս այնայիս ինչ երևակ<sup>6</sup>. մի թէ ա՞նոյ միայն ոչ եհաս աստղն սպիտակարար, և ոչ յայլ աշխարհս աստղն սևագրծ: Եւ ատամունքն հնդիկն ուստի՛ իցեն այնչափ սպիտակ:

Դարձեալ բախտաւորութեանց և չուառութեանց՝ զաստեղսն դնեն պատ-

ճառս. որպէս թէ աստեղատունք ինչ իցեն, և ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունսն<sup>7</sup> նոյնպիսիք և ծնունդըն լինիցին:

Մինչ դեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի ոք, բազաւոր լինելոց է. և մինչդեռ եզն է՝ և ծնանիցի ոք, հզօր և բարենշան զալց է<sup>8</sup>, և մինչ դեռ խոյն է՝ և ծնանիցի ոք, մեծասուն լինելոց է, և որպէս նայս<sup>9</sup> քաւ և սասւեղ է. և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի ոք, շար և մեղանչական լինելոց է: Եւ այլքն<sup>10</sup> ևս այլց ազգի ազգի իրաց պատճառոք լինին: Որպէս թէ յորժամ Կոռոնսն յաստեղատունն մտանիցտ, բազաւոր մեռանի, որ եղևն իսկ երկիցս, որպէս ասենն, առ թէորոսի կայսերը. և քաւդեայքն պնդեալ էին՝ թէ մեռանի բազաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօք լիցի սպիտառութիւնն:

Արդ նախ զայն ասասցեն. ո՞ եհան զայնպիսի երկրական անուանն՝ զգիշակեր և զխտակերս յերկինս, զի պատճառոք ծննդեան մարդկան լինիցին. զի որ ոք ուրուր պատճառ ծննդեան կարիցտ լինել, նա ի վեր քան զնա՝ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստութեամբ<sup>12</sup>: Արդ հասարակաց<sup>13</sup> մտօր հայեցեալ, տեսցուր ո՞ ի վեր իցէ, մարդն՝ որ անասնոյն տիրէ, թէ անասունն՝ որ մարդոյն ի հարկի կայ,<sup>14</sup> և ոչ միայն ի հարկի կայ, այլ և կերակուր նորա է: Եւ զազանացն զկէսսն փախստականս եղեալս տեսանեմք, և զկէսսն յանտառախիտ մայրիս ամրացեալ՝ յորժամ զքարբառ միայն մարդոյն լիցեն: Քանզի զահ և զերկիս մարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ զազանացն և սողնոցն և անասնոցն և քոչնոց, վասն առաւել զնա պատուելոյն...

(Եզնիկ Կողբացի, 2-րդ, ԺԳ, ԺԴ)

<sup>1</sup> Իրաման քառն այստեղ և շարունակության մեջ օրծածվում է ծակատագիր իմաստով

<sup>2</sup> այստեղ՝ սահմանված իմաստով

<sup>3</sup> զծննդոց պատճառս և զմահուանց՝

յաստեղաց իրըն ի կենդանեաց-ծնունդների ու մահերի պատճառոք աստղերն են՝ իրըն կենդանիներ

<sup>4</sup> գրծածված է ուրիական հոլովի

նշանակությամբ՝ աստղերը

<sup>5</sup> պետք է հասկանալ՝ սև ամորք, մեզը

<sup>6</sup> էակ (սև ամորք իմաստով)

<sup>7</sup> և ըստ դիպելոյ պատճառաւորաց

աստեղացն յաստեղատունսն-ն պատճառ դարձող ինչպիսի աստեղեր որ հանդիպում են այլ աստղատներում

<sup>8</sup> այստեղ՝ լինելու է

<sup>9</sup> ն-ն հոռ է

<sup>10</sup> Երևակ կամ Սատուրն մոլորակը

<sup>11</sup> սպիտակ-սուսումուտ

<sup>12</sup> նա ի վեր քան զնա՝ որոյ պատճառն է՝ պարտի լինի նրանից, որի (ծննդյան) պատճառն է բարձր լինի նրանից, որի (ծննդյան) պատճառն է՝ պարտի պարզ

<sup>13</sup> ի հարկի կայ-ծառայում է

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

§ 172. Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք չունեն առանձին ժամանակներում առանձին դիմավոր ծևեր: Այդ կարգի բայերից են՝ գալ, երթաւ ըմպել, լինել(իմ), ունել(իմ), ուտել (տես § 171): Գրաբարում պակասավոր բայեր են նաև՝ եմ, պարտել(իմ), գոլ, կայ, գոզ, շիր:

1. Եմ, ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները. ներկա՝ եմ, ես, է, եմք, էք, են. անցյալ անկատար՝ էի, էիր, էր, էաք, էին. 1-ին ապառնի՝ իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն:

**Ժամորություն.** Բուն հրամայականում եմ բայն ունենում է ե՛ր, է՛ք կամ երություն ծևերը, որոնք առանձին չեն գործածվում, հանդիպում են միայն ողջ բառի հետ՝ ո՞ղջ եր (=ո՞ղ եղի՞ր), ո՞ղջ էք կամ ո՞ղջ երությ (=ո՞ղջ եղեք):

2. Պարտել, իմ(=պետք լինել, պարտավոր լինել, պարտք ունենալ). ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները. ներկա՝ պարտիմ, պարտիս, պարտի, պարտիմք, պարտիք, պարտին, անցյալ անկատար՝ պարտի, պարտիք, պարտէ, պարտէաք, պարտիք, պարտին, 1-ին ապառնի՝ պարտիցիմ, պարտիցիս, պարտիցի, պարտիցիմք, պարտիցիք, պարտիցին: Այս բայր չպետք է շփորել և լծորդության պարտել (=հաղթել) կանոնավոր բայի հետ:

3. Գոլ (=լինել, գոյություն ունենալ), ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները, ըստ որում անցյալ անկատարում և առաջին ապառնիում գործածական են միայն եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը. ներկա՝ գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն, անցյալ անկատար՝ գոյր, գոյին, 1-ին ապառնի՝ գուցէ, գուցեն:

4. Կայ (=կա). ունի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակների եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը. ներկա՝ կայ, կան, անցյալ անկատար՝ կայր, կային, 1-ին ապառնի՝ կայցէ, կայցեն: Այս բայր չպետք է շփորել Ա լծորդության կալ (=մնալ, կանգնել) կանոնավոր բայի հետ: Կայ բայի ժխտականը կազմվում է՝ մասնիկով՝ շկայ, իսկ կալ բայինը՝ ոչ-ով՝ ոչ կայ (=չի մնում, չի կանգնում):

5. Գոզ (=ասա). ունի միայն երկրորդ ապառնի (բացի եզակի թվի 1-ին դեմքից), բուն և հորդորական հրամայականները 2-րդ ապառնի՝ գոզցես, գոզցէ, գոզցուր, գոզչիք, գոզցեն, բուն հրամայական՝ գոզ, գոզէք, հորդորական հրամայական՝ գոզչի՞ր, գոզչի՞ք:

6. Շիր (=չկա). ունի միայն այս ձևը:

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

§ 173. Պակասավոր բայերի գործածության վերաբերյալ պետք է նկատի ոննեալ ինտև յալը.

ա) Եմ, գոլ բայերի 3-րդ դեմքերը (եմ բայինը սովորաբար շեշտված), ինչպես նաև շիր բայը ուղղական հոլովով բառերի հետ գործածվելիս արտահայտում են կա, գոյություն ունի իմաստը. օրինակ՝ Ոչ որ ից որ օգնից քեզ (Բ. օր., Ի՛լ, 32)=Ոչ որ չկա, որ քեզ օգնի: Ենանապարի որ բով յաշ մարդկան քեզ ասլիդ իցէ (Առակ., ԺԴ, 12)=Ենանապարի կա. որ մարդկանց թվում է, քեզ ուղիղ է: Չուր ոչ գոյր ի նմա (Ծննդ., ԼԷ, 25)=Նրա մեջ ջոր չկար: Չիք ինչ յերկրի որ նման է նմա (Յովլ., ԽԱ, 24)=Երկրի վրա չկա մի բան, որ նման է նրան: 1-ին ապառնի՝ իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն:

բ) Եմ, գոլ, կայ բայերի 3-րդ դեմքերը, ինչպես նաև շիր բայը սեռական (Երբան էլ տրական) հոլովով բառերի հետ գործածվելիս արտահայտում են ունեալ իմաստ. օրինակ՝ Եր նորա աղջիկ մի (Ծննդ., ԺԶ, 1)=Նա մի աղջիկ ուներ: Ոչ գոյր իր արու որդի (Փարապ., 1-ին, ԺԸ)=Նա չուներ արու որդի: Կայցէ ձեր հայր կամ եղբայր (Ծննդ., ԽԴ, 19)=Ունե՞ք դուք հայր կամ եղբայր: Չիք սորա իշխանութիւն (Թոռն., Բ, էջ 562)=Նա իրավունք չունի:

գ) Եմ և կայ բայերը (սովորաբար դրանց 3-րդ դեմքերը) ներգոյականի իմաստ ունեցողն (նախըռով տրական և հայցական) բառերի հետ գործածվելիս արտահայտում են գտնվելու, կա իմաստը. օրինակ՝ Չու արարեալ գնայ յերկրն Արարադայ որ է ի կողման հիւսիսոյ (Խոր., 1-ին, ԺԸ)=Չկում գնում է Արարադի երկրը, որը գտնվում է հյուսիսային կողմում: Կապեցի շղթայիր և կայ ի գանձի իմում (Բուգ., 4-րդ, ԺԴ)=Եղբաներով կապեցի, և գտնվում է իմ գանձարանում:

դ) Եմ, գոլ բայերի եզակի 3-րդ դեմքերը, գործածվելով անորոշ դերբայի հետ, արտահայտում են այսիի, պետք է, կարելի է, կարող է, հնարավոր է իմաստները: Այս դեպքում անորոշ դերբայի հետ կարող է դրվել տրական հոլովով խնդիր, որն աշխարհաբար բարգմանվում է ուղղական հոլովով որպես ենթակա. օրինակ՝ Եր իմձ ...լիմել այսօր յերկրի անձանօրում (Խոր., 1-ին, ԺԶ)=Այսօր ես այսիի լիմելի անձանոր երկրում: Ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր (Դան., Գ, 33)=Մենք չենք կարող մեր բերանը բացել: Ի Յորայ փորձանաց է ուսանել (Եզնիկ., 1-ին, ԺԸ)=Հորի փորձություններից պետք է սովորել:

Պարտիմ պակասավոր բայն անորոշ դերբայի հետ գործածվելիս արտահայտում է հարկադրական եղանակի իմաստ՝ պիտի, պետք է: Անորոշ դերբայն այս դեպքում աշխարհաբար բարգմանվում է դիմավոր բայով. օրինակ՝ Բայց զայն ևս պարտիմք գիտել (Եզնիկ., 1-ին, ՀԳ)=Բայց այն էլ պիտի իմանանք:

**Վարժություն 139. Թարգմանել, բացատրել, քեզ ո՞ր հոլովների հետ և ինչ իմաստով են գործածված ան գոլ, չիք պակասավոր բայերը:**

Ի բաց կային զանձք՝ և ոչ ոք էր որ յափշտակէր: Եւ այլ ևս աստեղք են, որ ի տարրոց հազի մի անզամ հասանեն ի նոյն տեղի: Ոչ ոք էր, որ օգնէր Արշամայ: Եւ էին բազում սպասաւորը արքունի: Բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայ ոչ զիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց: Գոյ յոյս թէ շուն որ կենդանի է լաւ է քան զառեւծ մեռեալ: Էր ոմն ի վեր քան զնա: Եթէ գոյր որ երեխայ ի բազմութեան օրուն՝ զգիշերն ամենայն մկրտեցին: Յորժամ տեսանէին նորդ դրւու փակեալ՝ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ ի ներքս: Էին և այլ սուրբը արք և կանայք: Եւ դրախտն ոչ եթէ յերրորդ երկինս իցէ... այլ յարկի: Նիստ ի գետնի, զի շիր աթռու: Եւ արք պարսիկը, որք... էին ի քաղաքի կայսեր: Եւ եթէ այլ ոք չգոյր դատաւոր, և առ հայրն չկարէ ին երքալ:

**Վարժություն 140. Թարգմանել, բացատրել, թէ ի՞նչ իմաստով են գործած ված ընդգծված ձ. գչ. կայ. ցի պակասավոր բայերը և սեռական հոլովով դրված բառերը:**

Էր դրաստր մի Անդրովկայ ուրումն: Բերան է նոցա, և ոչ խօսին: Է որդի ՓՀովնաբանու հաշմն ուղիք: Էր ներքինի մի Հայոց բազատրին Արշակայ. Եւ լուսնի շիր լոյս առանձին: Խսկ Վահանայ էր քոյրաքի ի Մասիկոնեան տոհմեն: Ոյր իցեն երկու հանդերձ՝ տացտ զմին այնմ, ոյր ոչն գուցէ. և ոյր կայցտ կերակուր՝ նոյնակա արասցէ: Ոչ գոյին նորա որդիք, այլ դատերը միայն: Դատաւուն կայ իմ ընդ քեզ: Աղուեանու որքը գոճ և բռչնց երկնից բոյնք: Ոչ գուցէ նոցա հովիք: Վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ եթէ ոչ օժի, այն յայտ իսկ է:

**Վարժություն 141. Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով, թէ ի՞նչ նշանակությամբ են գործածված ձ. գչ. և գորգնէ վակասավոր բայերն անորոշ դերքայի և տրական հոլովի կամ միայն անորոշ դերքայի հետ:**

Զի բաց արանց է յարձակ դաշտի և յազատ տեղուց կռուել: Նա այր ժանտ է, և ոչ գոյ խօսել ընդ նմա: Այլ անդ էր լսել զճայն լալոյ և զճայն գուժիք: Եւ այլ ինչ ոչ իցտ անդ տեսանել՝ բայց միայն ջուր և հոյր և կաւ և մոխիք: Է և զայս իմանալ՝ թէ ոչ զի ես միայն արժանի եղայ խորիքոյն: Զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարդնուց: Եւ ընդ այն է զարմանալ, զի և ի ծառս համրացեալ՝ զտանին կերպարանք մարդկան: Եւ անդ էր տեսանել նոր գոմն Ողիսնս: Ոչ այժմ բազատրել է նմա, և ոչ ի վախճանի՝ որպէս ասենն՝ յադրել կարէ: Ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել:

**Վարժություն 142. Թարգմանել գրաբար, ընդգծված բառերը դնել սեռական հոլովով. խսկ անձնական բայի համար գործածել ձ. գչ. կայ. ցի պակասավոր բայերից որն է մեկը:**

Դուք իրավունք չունեք դատելու նրանց: Ես ունեմ եղբայրներ և քոյրեր: Սմբեն ինչ, որ նա ուներ, տվեց նրան: Նրանք չունեն ոսկի և արծաք իրենց տներում: Այդ բազավորները շատ զանձեր կունենան: Դրամք արու զավակ չունեն: Սենք հույս չունենք, որ նրանք այսօր կգան: Այդ երկրի քաղաքները պարիսպներ չունեն:: Հունաց կայսրն ուներ մի գեղեցիկ դրսար:

## ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՅԵՐ

Տ 174. Գրաբարում կան բայեր, որոնք անորոշ դերքայի հետ գործածվելիս արտահայտում են եղանակի իմաստ, այսինքն՝ անորոշ դերքային տախս են այս կամ այս եղանակի, հատկապես հարկադրականի իմաստ: Այդ կարգի բայերը կոչվում են եղանակի բայեր: Պակասավոր բայերը նաև եղանակի բայեր են: Եղանակիչ-պակասավոր բայեր են նաև հետևյալները. արժան է (=պետք է, պատշաճ է), պարտ է (=պետք է), պիտոյ է (=պետք է), օրէն է (=կարել է, սովորություն է, վայել է), անկ է (=վայել է, պատշաճ է), վայել է (=հարմար է, վայել է), մարդ է (=կարել է), հնար է (=հնարավոր է, կարել է), հարկ է (=պետք է), ի դեպ է (=հարմար է, տեղին է), ի ճահ է (=հարմար է, պատշաճ է), փոյք է (=հոգն է, հոգ ունի), կամ է (=ցանկալի է), պատշաճ է կամ պարտ և պատշաճ է (=պատշաճ է, պետք է, հարմար է), հասանել (=վիճակված է, պիտի լինի), մարքի (=կարել է, հնարավոր է, համարվում է), պիտի (=պետք է, հարկավոր է) և այլն:

Եղանակի բայերի մոտ ենթակայի իմաստ արտահայտող բառը դրվում է տրական հոլովով, որը պետք է բարգմանել աշխարհաբար ուղղական հոլորվավով, իսկ անորոշ դերքայը՝ դիմավոր բայով: Օրինակներ՝ Որոց պարտ է պաշտել զնա և առնել զկամս նորա (Ազ., Ե, 52)=Որոնք պետք է պաշտեն նրան և կատարեն նորա կամքը: Ինձ պիտոյ է ի քէն մկրտել (Մատր., Գ, 14)=Ես պետք է բեզնից մկրտվեմ: Եւ ոչ պիտի մեզ այր սպամանել (Բ, Թագ., ԻԱ, 4)=Եվ մենք չպետք է մարդ սպանենք: Զեր մարդ մարմնատրի անմահ կալ (Եզնիկ, Լին, ԺԸ)=Մարմնավորը չէր կարող անմահ մնալ:

Հաճախ եղանակի բայերը գործածվում են միայն անորոշ դերքայի հետ, առանց տրականով ենթակայի՝ արտահայտելով ընդհանուր բնույթի հարկադրական իմաստ: Այս դեպքում անորոշ դերքայն աշխարհաբար բարգմանավում է անորոշ դերքայով, իսկ եղանակի բայերը՝ իրենց արտահայտած համապատասխան իմաստներով: Օրինակ՝ Սկսցով ուստի արժան է սկսանել (Եղիշէ, Էջ 5)=Սկսենք այնտեղից, որտեղից պետք է սկսել: Յերբայեցնեց լեզու երկին շմարդի ասել (Եզնիկ, 4-րդ, Է)=Երբայեցիների լեզվով չի կարելի ասել երկինք:

Ունիմ անկանոն-պակասավոր բայը նույնական կարող է եղանակի իմաստով գործածվել անորոշ դերքայի հետ, սակայն տարբեր դեմքներով՝ արտա-

հայտելով կարողանալ իմաստը. օրինակ՝ Սոյնպէս ունիս նայել և ընդ ջուր ծովու (Թոռն., Բ, էջ 28)=Այսպէս էլ կարող ես նայել ծովի ջրերին:

**Վարժություն 143.** Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով ընդգծված և դանակիչ բայերի, անորոշ դերքայների և տրական հոլովով դրվագ խնդիրների իմաստի և կիրառության վրա:

Ի դեպ էր ինձ անսալ ծեզ: Եր չէ հնար լուսնի յերկիր իջանել: Բայց պարս և պատշաճ էր նոցա ոչ միայն ընդ արեգական և լուսնի ընդ արարածն զարմանալ, այլ և ընդ գեղեցիկ պարզ և անդադար ընթացից արշաւան աստեղաց: Չէր մարք անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ: Պիտոյ է ինձ յոել զքեզ առ բազաւորն Պարսից Շապուհ: Արժան է քեզ ուրախ լինկ այսօր: Եր զի՞ պիտոյ է մնզ բնաւ մի ըստ միորդ բռել: Եր ինձ ասպետիս պարս է զքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան ինոյ հայրենեաց: Որով յայտ է, թէ երկուց անարարաց ի միասին չէ մարդ լինել: Զոր ծեզ պարտ է ընդունել:

**Վարժություն 144.** Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան եղանակիչ բայերով նարդի, պարու է, պարզան է, ի դիմ է, մար թ, դիմավոր բայերը դնելով անորոշ դերքայով, իսկ ենթակաները տրական հոլովով:

Ինչպե՞ս (զիա՞՞րդ) այդ կարող է լինել: Նա պետք է զնա Տիգրն և պատասխան տա արքային: Անկարելի է, որ նրանք մոռանան ծեր երախտիքը: Պատշաճ էր, որ դուք էլ նրանց որդիներին խնամեիք: Հարմար է, որ մենք ինքն այս քաղաքից և գնանք այն քաղաքը: Ես պետք է Հռոմն (Հռովմ) էլ տեսնեմ: Այն չէր կարող վկիպել:

## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՌԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Զանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհին Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարեր զիկր իշխանութիւնն օրինօք մոգուց<sup>1</sup>. և բազում անգամ մարտնչելո ընդ այնուիկ՝ որ ոչ ընդ նույն օրինօք մտանէին<sup>2</sup>, ովհերն արարեալ յամացն Արշակայ արքայի որդույն Տիրանայ, և կոռւր մինչն յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդույն Վոամշապիոյ: Եր իրին զնա և ս մերժեաց ի բազաւորութենէն, ի նախարարան Հայոց անկաներ բազաւորութիւնն. զի թէպէտ և զանձն<sup>3</sup> յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրութին Հայոց բովանդակ ի ծեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի: Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարու-

թեամբ<sup>4</sup> երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբան տէրութեանն Շապիոյ արքայից արքայի մինչն յամն երկուորդ Յազկերսի արքայից արքայի որդույն Վոամայ, զոր եգիտ սատանայ իր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն բախիեաց ի բաց, և եկից զնա իրը զապատկանդարան դեղեալ նետիր: Եր ըստ կայսար եղանակի ածել<sup>5</sup> անօրէնությամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հաներ ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երև եցուցանէր իր գիաւատացեալքը ի Քրիստոս, և նեղեալ տագմապէր անխաղաղասէր կենօր:

Զանզի յոյժ սիրելի էր նմա խոռվութիւն և արինենութիւն, վասն այնորիկ յանձն իր տարաբերելք, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թիւնաւոր, կամ ո՞ւր բացատրեցից<sup>6</sup> զբազմութիւն նետիցն: Եր առ յոյժ յիմարութեան<sup>9</sup> իրը զգացան կատարի յարձակեցա ի վերայ աշխարհին Հունաց, եհար մինչ ի քաղաքն Մծրին, և բազում զաւառ Հոռոմնց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցին հրծից արար. կուտեաց զաւար և զգերի, և ահարեկ արար զամենայն զօրս աշխարհին:

Իսկ երանելի թէոդոս կայսր՝ քանզի էր խաղաղասէր... ոչ կամեցալ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անաւոր անուն, որ էր նորա սպարապէտ արևելից, առաքեաց առ նա բազում զանձիր: Եր արք պարսիկը, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ես ի ծեռս նորա: Եր զամենայն զոր ինչ ասաց՝ ի ժամանակին կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն<sup>10</sup>, և դարձաւ անորդն ի քաղաքն իր Տիգրն:

Եր իրը ետև անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ շարութիւն նորա, սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելու, որպէս ոք զի ի հուր բորբոքեալ յաւելու բազում նիրս փայտից: Զանզի ուստի սակաւ մի կասկածուն էր, անտի աներկիլու հաստատեցաւ. վասն այնորիկ զդրուեցոյց զբազում ի սուրբ ուխտեն քրիստոնէից, եթէ զոր բանիր սպասնալեօր, եթէ զոր կապանօր և տանջանօր, և եթէ զոր շարաչար մահուամբ վախճանէր: Յափշտակութիւն առներ ընչից և արարոց. և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան: Եր իրը ետև եթէ վարատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտութեան ծախսկողմանն՝ որք կապեալ էին ի կոպապաշտութեան անլուծանելի հանգրւցիք, վառեալք և ջեռեալք իրը զինց առ այրել<sup>12</sup> զուխտ սուրբ եկեղեցւոյ:

Զանզի էին իսկ այնախսիք բնակեալ ի կեանս իրեանց իրը ի բանձրամած խաւարի, և ոգիբն արգելեալք ի մարմին իրը զկենարանի գերեզմանի...: Նա և արօք օրհասականք ընդ վախճանել շնչոցն<sup>13</sup> հզօրագոյնս կոտին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցան: Այսպիսի իմն եկեալ

հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանն չիմանան. և իրըն ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինսիրեանց մարտ եղեալ կռուին...:

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ շշիջանիս. զի՞ կրշես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց զոգիսն ճեր ի ծէնջ քաղեալ՝ համեալ է զանապականոյ յապականութիւն, և զապականելի մարմինոյ գէշաքարշ արարեալ իրըն զազիր մեռելոտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսչիր յորժամ յայտնեսցի, ապա զիտասցես զեկ կատարածի դրա:

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնն և զյադութիւն, և ոչ ինչ կարօտ են նոքա մարմնատր մեծութեան. բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրութեան քում, յայնամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մոտց ընդ օրինոր քովք: Արդ զմի քան զմեր վաղվաղակի կատարեա՛ դու, արքայ. զօր գումարեա՛ և գունդ կազմեա՛ խաղա՛ զնա դու յերկիրն Քուշանաց. և զամենայն ազգս ժողովեա՛ և անցու ըստ Պահ դրուն ի ներքս<sup>14</sup>. և դու անդէն արա՛ քեզ քնակութիւն: Յորժամ արգելոս և փակես զամենեսեան ի հեռատր: օտարութեան, կատարին խորհուրդ կամաց քոց. և որպէս երևիս մեզ ի դեմիս մերում<sup>15</sup>, տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քա իշխանութիւնն: Բայց միայն զաղանց քրիստոնէց քարձ ի միջոյ»:

Հաճոյ բուեալ խորհուրդն քազաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին քանի. իրովարտակս զրէր, պնդադեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իրոյ: Եւ այս է պատճեն իրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ արեաց և անարեաց, բազմասցի ի ծեզ որքայն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լեբուք, և մեք մեզէն ողջ նոր զիցն օգնականութեամբ:

«Առանց զենց ինչ աշխատ առնենոյ խաղացար զնացար յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուանեցար զամենայն երկրին մեզ ի ծառայութիւն: Դուք զրաքի զմտա ածէք, և անսպատ լեռուք յուրախառեան. բայց զրանս զայս կատարեցէք վաղվաղակի, գոր անքու:

«Մեք ի մայք երաք աճնվեալ խորիրուվք խաղագ զնալ յաշխարին արև ելից, ռառուածցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրաքիմն Քուշանաց. դուք իրըն վերակարտակս զայս տեսանելք՝ անըսպան վաղվաղակի պարնձրեցէք առաջոյ քան զիս, յանդիման լիջիք ինձ յԱսքար աշխարհն»:

Ըստ այսմ պատճենի իրովարտակ եհաս յաշխարին Հայոց, ի Վրաց և յԱղուանից...:

(Եղիշէ, էջ 6-10)

- <sup>1</sup> օրինօց մոգուց-մոգերի կրոնով  
<sup>2</sup> որ ոչ ընդ նովին օրինօց մտանեին-ովքեր չէին ընդունում նույն կրոնը  
<sup>3</sup> զանձ. այստեղ նշանակում է հարկ  
<sup>4</sup> բարձրագույն կամակարութեանք-ազատ ու համարձակ  
<sup>5</sup> նզներ ածել-հոխորոտալ  
<sup>6</sup> յանձն իր տարաքերէր-ինքն իր մեջ ալեկոծվում էր  
<sup>7</sup> յո՞-ո՞ւ վրա  
<sup>8</sup> ո՞ւր քացատրեցից-ո՞ւր արձակեն  
<sup>9</sup> առ յոյժ յիմարութեան-սաստիկ հիմարության պատճառով  
<sup>10</sup> արգել զնա ի բազում բարկութեան-իջեցրեց նրա մեծ բարկությունը  
<sup>11</sup> հոմանիշ է հաջողոր բային  
<sup>12</sup> առ այրել-այրելու համար  
<sup>13</sup> ընդ վախճանել շնչոցն-շունչները փշելիս  
<sup>14</sup> անցու ըստ Պահ դրուն ի ներցւանցկացըու: Պահ դրուն ներս  
<sup>15</sup> ի դենիս մերում-մեր գուշակությունների մեջ

## ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՍԵԿԵՐՈՐԴ

### ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՍՏԱԱԿՆԵՐ

§ 175. Գրաբարի քաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապանի դերբայներով և եմ, լինիմ օժանդակ բայերի համապատասխան ձներով:

Եմ օժանդակ բայը բաղադրյալ ժամանակներ է կազմում թե՛ անցյալ, թե՛ ապանի դերբայների, իսկ լինիմ բայը՝ միայն անցյալ դերբայի հետ:

§ 176. Եմ բայն անցյալ դերբայի հետ կազմում է երեք բաղադրյալ ժամանակ՝ ներկա (վաղակատար-հարակատար, ներկա), անցյալ (վաղակատար-հարակատար անցյալ), ապանի:

### Ներկա

(Վաղակատար-հարակատար ներկա)  
գտեալ եմ, գտեալ ես, գտեալ է  
գտեալ եմք, գտեալ էք, գտեալ են

### Անցյալ

(Վաղակատար-հարակատար անցյալ)

գտեալ էի, գտեալ էիր, գտեալ էր  
գտեալ էաք, գտեալ էիր, գտեալ էին

### Ապառի

գտեալ իցեմ, գտեալ իցես, գտեալ իցէ  
գտեալ իցեմք, գտեալ իցէք, գտեալ իցեն

Ներկա, անցյալ և ապառնի ժամանակներում անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է վաղակատար կամ հարակատար դերբայներով: Ենթայը ներկայում թարգմանվում է ներկայի համապատասխան ծն երով (եմ, ես է, ենք, եք, են), անցյալում անցյալ անկատարի ծն երով (էի, էիր, էր, էինք, էին), ինչպես նաև լինիմ բայի ըղձականի և պայմանականի անցյալ ժամանակներով (լինեմ, կլինեմ...), իսկ ապառնիում լինիմ բայի ըղձականի և պայմանականի ապառնի ժամանակներով (լինեմ, կլինեմ...), ինչպես նաև եմ բայի ներկայի ծն երով (եմ, ես, է...): Ներգործական սեռի բայերը նույն ծն երով կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ. օրինակ՝ սիրեալ եմ=սիրել եմ կամ սիրվել եմ, սիրած եմ կամ սիրված եմ. սիրեալ էի=սիրել էի կամ սիրվել էի, սիրած էի կամ սիրված էի, սիրած լինեմի կամ սիրված լինեմի, սիրած կլինեմի. սիրեալ իցեմ=սիրած լինեմ կամ սիրված լինեմ, սիրած կլինեմ կամ սիրված կլինեմ, սիրել եմ կամ սիրվել եմ, սիրած եմ կամ սիրված եմ:

Հաճախ եմ բայով և անցյալ դերբայով կազմված ներկա, անցյալ և ապառնի ժամանակների եզակի 3-րդ դեմքերի մոտ ենթակայի իմաստով իբրև խնդիրներ գործածված դերանունները և գոյականները դրվում են սեռական հոլովով, որոնցով արտահայտվում են բայի դեմքն ու թիվը. օրինակ՝ ես տեսեալ եմ. դուք տեսեալ էք, արքայ տեսեալ է ծն երի փոխարեն լինում եմ՝ տեսեալ է. իմ, տեսեալ է ձեր, տեսեալ է արքայի: Այս ծն երով արտահայտվում են միայն ներգործական և չեզոք իմաստներ: Ահա մի քանի բնագրային օրինակներ. Եթ զՈւտիհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց (Բուզ., 5-րդ, ԱԲ)=Շուտիհա. քաղաքն է մեր նախնիներն են շինել: Իմ եք չէր եկեալ և խօսեցեալ լին նոսա (Յովի., ԺԵ, 22)=Եթեն ես եկած և խոսած շինեմի նրանց հետ: Մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նման (Մատթ., Զ, 8)=Նախքան դուք նրանց որսէ քան կխնդրեք:

§ 177. Եմ բայն ապառնի դերբայի հետ կազմում է երեք քաղադրյալ ժամանակ՝ ներկա (ապառնի ներկա), անցյալ (ապառնի անցյալ), ապառնի:

### Ներկա

(Ապառնի ներկա)  
գտանելոց եմ, գտանելոց ես, գտանելոց է

գտանելոց եմք, գտանելոց էք, գտանելոց են

### Անցյալ

(Ապառնի անցյալ)

գտանելոց էի, գտանելոց էիր, գտանելոց էր  
գտանելոց էաք, գտանելոց էիր, գտանելոց էին

### Ապառնի

գտանելոց իցեմ, գտանելոց իցես, գտանելոց իցէ  
գտանելոց իցեմք, գտանելոց իցէք, գտանելոց իցեն

Ապառնի դերբայն աշխարհաբար թարգմանվում է ապառնի (կատարելի) դերբայով: Եմ բայը ներկա և անցյալ ժամանակներում թարգմանվում է ներկայի և անցյալի անկատարի համապատասխան ծն երով (եմ..., էի...), իսկ ապառնիում ներկայի ծն երով (եմ, ես, է...), ինչպես նաև լինիմ բայի ըղձականի և պայմանականի ապառնի ժամանակներով (լինեմ, կլինեմ...): Ներգործական սեռի բայերը նույն ծն երով կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ. օրինակ՝ սիրելոց եմ=սիրելու եմ կամ սիրվելու եմ. սիրելուց էի=սիրելու էի կամ սիրվելու էի. սիրելոց իցեմ=սիրելու եմ կամ սիրվելու եմ, սիրելու լինեմ կամ սիրվելու լինեմ, սիրելու կլինեմ կամ սիրվելու կլինեմ:

§ 178. Անցյալ դերբայով և լինիմ բայով քաղադրյալ ժամանակներ կազմելիս անցյալ դերբայը մնում է անփոփոխ, իսկ լինիմ բայը խոնարհվում է, որով որոշվում են բայի եղանակը, ժամանակը, դեմքն ու թիվը:

Սահմ. ներկա՝ գտեալ լինիմ, գտեալ լինիս, գտեալ լինի, գտեալ լինիմք, գտեալ լինիք, գտեալ լինին:

Սահմ. անց. անկատար՝ գտեալ լինեմ, գտեալ լինեմք, գտեալ լինեմ, գտեալ լինեաք, գտեալ լինեիք, գտեալ լինեին:

Սահմ. անց. կատարյալ՝ գտեալ եղէ, գտեալ եղեր, գտեալ եղն, գտեալ եղաք (կամ եղեաք), գտեալ եղէք, գտեալ եղեն:

Ստոր. 1-ին ապառնի՝ գտեալ լինիցիս, գտեալ լինիցիս, գտեալ լինիցի, գտեալ լինիցիմք, գտեալ լինիցիք, գտեալ լինիցին:

Ստոր. 2-րդ ապառնի՝ գտեալ եղեց, գտեալ եղիցիս (կամ եղիցես), գտեալ եղիցի, գտեալ եղիցուք, գտեալ եղիցիք, գտեալ եղիցին, կամ գտեալ լինիմ, գտեալ լինիս, գտեալ լինիք, գտեալ լինիուք, գտեալ լինիք, գտեալ լինիչին:

Բուն իրամայակամ՝ գտեալ լե՞ն, գտեալ լերո՞ւք:

Հորդորական իրամայակամ՝ գտեալ լիջի՞ր, գտեալ լիջի՞ք:

Արգելական իրամայակամ՝ գտեալ մի լինիր, գտեալ մի լինիք:

Այս բաղադրյալ ձևերն ունեն հիմնականում կրավորական նշանակություն և աշխարհաբար թարգմանվում են տարբեր իմաստներով. օրինակ՝ պիրեալ լինիս=սիրվում են, սիրած են լինում կամ սիրված են լինում, սիրած կինեմ կամ սիրված կինեմ, սիրած լինեմ կամ սիրված լինեմ. սիրեալ եղն=սիրվեց, սիրած եղավ կամ սիրված եղավ:

§ 179. Բարդարյալ ժամանակներում եմ և լինիս բայերի փոխարեն երբեմ հանդես են զայիս կայ և ունիս բայերը, օրինակ՝ զրեալ կայ (Փարապ., 1-ին, ԺԷ)՝ զրված է, եկեալ... կայր (Եզնիկ, 2-րդ, Դ)՝ եկել էր, կապեալ կան (Եզնիկ, 1-ին, ԻԵ)՝ կապված են, փակեալ ունի (Թռու., Բ, էջ 18)՝ փակել է, նշանական ունին (Կոր., Բ)՝ նշանակած ունեն, նշանակել են:

**Վարժություն 145.** Թարգմանել, դուրս գրել բաղադրյալ ժամանակներով դրված բայերը՝ որոշելով՝ նրանց եղանակը, ժամանակը, դեմքն ու թիվը:

Ո՞չ զիտես, զի խորհեալ է Գնել սպանանել զրեզ: Եւ կինն նորա յդի էր, և հասեալ էին ատորք ծննդեան իրոյ: Երեւ մոլորեալ ինչ իցեմ, արարեք զիս ինչ լամուս: Ի զառանցն լինելոց են զայլը, որ կոտորենց են զուրքքառինս: Անիծեալ լիցի օրն, յորում ծնայ: Որ լսելոց իցեւ լուիցէ, և որ արհամարհելոց իցէ արհամարհեսցէ: Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է: Ուր եղեն ժողովեալ հարը: Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կրորուսեալ էր և զտա: Մանրագորաւ բազում անզգամ թժիշկը քոն ածեն այնոցիկ՝ որոց քոն հատեալ իցէ յաշաց: Եւ նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատը. որպէս և Հրեայը՝ որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, երեւ Դաւիթ զալոց է՝ շինել գերուսաղէմ: Անկեալ կայր այս Գարենին իմէջ անկելոցն:

**Վարժություն 146.** Թարգմանել զրարար՝ ընդգծված բայերը դմելով համապատասխան բաղադրյալ ժամանակներով:

Ինչ որ լինելու է՝ կինի: Դուք մի՛ քննեք իմ զործերը, որ կատարելու եմ: Եկ զրված էր նամակում այսպես: Ներս չինք կարողանում նտնեն, որովհենուն դուռը փակված էր: Այդ խորսերը լսած կինի: Ձեզանից մեկը մատուելու է ինձ: Նրա զուրը աղբյուրի ակունքից է պղտորված: Եկել էին փղերով և անշափ զորքով: Երեւ քաղցած լինի, կերակրիր նրան: Սրանք բնակվելու են Արարատյան զավառում: Հեռացել էին մեր երկրի սահմաններից: Երեւ տեսնելու լինեն նրան, ուղարկիր ինձ մոտ: ճանապարհին որդիներից մեկը կորել էր: Ծնվել է օտար աշխարհում: Նրանց շտեմարանները լցված էին ցորենով:

**Վարժություն 147.** Թարգմանել՝ ուշադրություն դարձնելով ընդգծված բաղադրյալ ժամանակների և սեռական հոլովով խնդիրների իմաստի վրա:

Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գուր և սէր ունիս ընդ աշ-

խարին ծեր: Հայր քո երդմնեցոյց զմեզ՝ մինչ չն վախճանեալ էր նորա: Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ: Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան. մի, և բազում չարչարանօր հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ոչ ինչ զանգիտեաց զալյատեան հրապարակին: Այլ յայս ամենայն յայտ է եթ ոչ երդք լիալ է Զրուանայ հայր աստուածոց: Նոյնպէս և մոլորութիւնն ոհիաց խարեաց գրիցապաշտու Հայոց, երեւ զոնմ Արտաւազդ անուն արգելեալ իցէ զիաց: Չի՝ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ծեր ի ծենչ քաղեալ՝ հանեալ է զանապական յապականութիւն: Լուեալ է մեր յառաջնոցն՝ որք բարողեցին զշշմարտութիւնն: Եր ոմն երիտասարդ ի քաղաքի, որոյ բազում և մեծամեծ չարիս զործեալ էր:

**Վարժություն 148.** Թարգմանել զրարար՝ ընդգծված բայերը դմելով համապատասխան բաղադրյալ ժամանակներով, իսկ անունները (դերանուն, գոյական)՝ սեռական հոլովով:

Սենք լսել ենք նրա քաջության մասին: Ես պատվիրել եմ քեզ կերակրել: Նա իր երեսը ծածկել էր: Դուք չե՞ք կարդացել այդ նամակը: Նրանք մոռացած կիմեն այս խոսքերը: Դու ինքը ես ծնել մեզ: Մենք տեսել էինք այդ քաղաքը: Թագավորը չէր հայտնել իր խորհուրդը բոլորին: Նա տեսել է նրան: Գնենք խորհել էր սպանել թեզ: Դու խմե՞լ էիր այս ջրից: Դա եղել է շատ պատերազմներում: Դրանք են շիմել այս գեղեցիկ ապարանքը:

### ՎԱՍՆ ՎԱՐԴԱՎԱՅ ԵՒ ՌԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Որոց ոգիբն բուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահին<sup>1</sup> անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանը խոռվի, և յամենայն իրաց գորաց. երազագէտ է այնպիսին ի կեանս իրում, և յանգիտ կորուստն յուղարկի ի մահուան իրում<sup>2</sup>: Որպէս և ասաց ոմն ի հեռումն. մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ զիտէ, երկընչի ի մահուանէ. իսկ որ զիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ:

Եւ այս ամենայն շարիք մտանեն ի միտս մարրոյ յանուանմնութենն: Կոյր զրկի ի ճառագայքից սրեգական, և տղիսութիւն<sup>3</sup> զրկի ի կատարեալ կենաց: Լա է կոյր աշօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է ոզի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց:

Երեւ ոք կարի առաւետեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և <sup>4</sup> մտօքն աղքատոցոյն, այնպիսին ողորմելի է քան զրացումն. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի շափաւոր մարդիկ, այլ և յոր<sup>5</sup> մեծն է քան զամենայն: Թագաւոր երեւ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իր, ոչ կարէ ի վիճակին իրում վայելուց զոյ: Իսկ երեւ առ մարմնաւորս՝ այսպէս, որչափ և առաւել առ հոգևորն<sup>6</sup> ...:

Իսկ անօրէն իշխանն իրեն գիտաց երեւ յայտնեցաւ խորամանկութիւն խոր-

հրորյն, և պատրաստեալ հուրմ՝ մինչև ուրով ի նա փշեալ<sup>7</sup> վառումն նորա յայտնի իմացաւ երկիրածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիք խոցուի զմիս իրոյ շարութեանն. և անթշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսաներ:

Սերը շանթէր գալարդէր իբրև օօծ թիւնաւոր, մերը պարզէր գոչէր իբրև զա- ռիւծ զայրացեալ, գելոյր, գլորէր, տապալէր երկոյիմի մտօր և զխորհուրդս կա- մաց կամէր կատարել: Քանզի ծեռն արկանել և ունել ոչ կարէր, -վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ ննա, -սկսաւ այնուետև յառաջ կրչի զկրսերս յաւազաց և զանարգս ի պատուականաց և գոգէտս ի գիտնոց և զա- նարիս ի քաջ արանց. և զի<sup>8</sup> մի մի բույցեմ, այլ զամենայն զանարժանն յա- ռաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչև զիայր և զորդի քակէր ի միմեանց:

Թէպէտ և ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսաներ զնոսա ջերմագոյն յա- տուածպաշտութեան, մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց, և անմեղութեամբ ունէին զուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից: Պատրէր զոնանս ի նոցանտ ոսկով և արծարով, և զբազումս այլով եւս առատ պարզեած. իսկ զոնանս ազարակօր և մեծամեծ զեղօր, զոնանս պատուովք և իշխանութեամբ մեծամեծօր: Եւ այլ ևս սննուի յոյս ոգուց առաջին դնէր. և այսպէս հրապութէր և յորդորէր հանապազ. «Եթէ միհայն, ասէ, զօրէնս մոգու- թեան յանձին կալչիք, և զգեր մոլորութիւնն սրտի մտօր դարձուածիք ի ծը- մարտութիւն երեւելի մերոց դից օրինացս<sup>9</sup>, ի մեծութիւնս և յաւագութիւնս հա- սուցից հաւասար իմոյ սիրելի նախարարացն, և առաւել ևս զանցուցից»<sup>10</sup>: Եւ այսպէս կեղծարութեամբ խոնարիեցուցանէր զինքն առ ամենենեան, խօս- լով ընդ նոսա ի պատճառս սիրոյ<sup>11</sup>, զի խորամանկութեամբ որասլ մարթացէ զնոսա ըստ առաջին խորիդականացն խրատուց: Եւ զայս առնէր սկսեալ ի շքրորդ ամէն մինչև մետասամնորդ ամս իրոյ տէրութեանն:

### (Եղիշէ, էջ 14-17)

<sup>1</sup> ընդ ահիւ-երկյուսի մեջ

<sup>2</sup> յանզիս կորուատն յուղարկի ի մահուան իրուս-մահանալիս անդառնալի կորսույան է մատնկում պետք է քարզմանել՝ տգեսոք

<sup>4</sup> այստեղ՝ քայց

<sup>5</sup> քացակայոդ հարաբերյալի նախ- որք դրված է հարաբերականի վրա: ի ննա որ

<sup>6</sup> առ նախիքը հայցականի հետ վերաբերության իմաստով՝ մարմնավոր

<sup>7</sup> քաների վերաբերմամբ

<sup>8</sup> մինչև ուրով ի նա փշեալ-դեռ ոչ ոք նրա վրա չփշած

<sup>9</sup> յայտնի իմացաւ-հայտնի դարձավ

<sup>10</sup> յոգիս և ի մարմինս տեսաներ-հոգիների և մարմինների համար պատրաստում էր

<sup>11</sup> ի ծշմարտութիւն երեւելի մերոց դից

<sup>12</sup> օրինացս-մեր երեւելի աստվածների կրոնի ծշմարտությանը

<sup>13</sup> առաւել ևս զանցուցից-էլ ավելի կրածրացնեալ ի պատճառս սիրոյ- սիրս պատրվակով

### ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

#### ՍԱԿԲԱՅ

§ 180. Գրաբարում մակրայները, ըստ իրենց արտահայտած իմաստի, լի- նում են չորս տեսակ՝ տեղի, ժամանակի, ծնի, չափի և աստիճանի:

#### Տեղի մակրայներ

Տեղի մակրայներն են՝ այդը (=այդտեղ), այլդէն (=այդտեղ, նոյն տեղը), այլուստ//յայլուստ (=ուրիշ տեղից), այլուր (=ուրիշ տեղ), այլը անդը (=այս ու այն կողմ), այլդէն րեք (=ուրիշ տեղ), այլըր (=այստեղ), այլըր անդը (=այս ու այն կողմ), այլդէն րեք (=ուրիշ տեղ), անդըր (=այստեղ, նորից այստեղ), այլտի//այդի (=այդտեղից), անդ (=այնտեղ), անդըրն (=այնտեղ, նոյն տեղը), անդուստ (=այնտեղից, այն կողմից), անդըրն (=այնտեղ, դեպի այնտեղ), անդուստ (=նոյն տեղը), անտի (=այնտեղ), անդուստ (=առջևից), աստ (=այստեղ), աստոնոր (=այստեղ), աստուստ (=այստեղից), աստէն (=այստեղ, այստեղից), աստի (=այստեղից), աստուստ (=այստեղից), արտաքուստ (=դրսից), արտաքս (=դրուս), ի քաց (=հեռու), քացուստ//ի քա- ցուստ (=հեռվից), զճանապարհայն (=ճանապարհին), ի մօտոյ, ընդ մօտոյ (=մոտից, մոտերը), մօտ ի մօտ (=իրար մոտ, մոտերը), յայսկոյս (=այս կողմ, այստեղ), յայմկոյս (=այն կողմ, այնտեղ), յետու (=ետ, դեպի ետ, ետևից), յե- տուստ (=ետևից), ի ներքս (=ներս), ուստէք (=մի տեղից), ուրեք (=մի տեղ), ի վեր, ի վայր (=վայր, ցած) և այն:

#### Ժամանակի մակրայներ

Ժամանակի մակրայներն են՝ ամարայի կամ ամարանի (=ամունը), ամ- ըստ ամէ (=տարեցտարի), ամ յամէ, ամի ամի (=տարեցտարի), այգուն (=ամն առա- վալույան), ընդ այցս այգուն (=առավուտյան), այգուն այգուն (=ամն առա- վուտյան), ի ճշմարտութիւն երեւելի մերոց դից օրինացս, զիշերային//զիշերի պոտ, այգուց//յայգուց (=առավուտվանից, վաղը, առավուտյան), այժմ այժմիկ, այնուետևն, այսուետևն, այսոր, անազան (=ուշ), անազան ուրեմն, ապա, ա- ռաւուստ//առաւուստոց (=առավուտյան), ընդ առաւուստն//ընդ առաւուստուս (=առա- վուտյան), առժամանակի սիրոյ, առ ժամանակ մի (=մի առ ժամանակ), արդ վոտյան), առժամանակի սիրոյ, առ ժամանակ մի (=մի առ ժամանակ), արդ վոտյան), արդուստ (=իսկույն), առ ժամանակակ մի (=մի առ ժամանակ), արդ վոտյան), արդուստ (=իսկույն), զիշերային//զիշերի պոտ, զիշերային//զիշերի պոտ, զիշերով, զարձեալ, դեռ, դեռն և, եռանդ (=երեկ չէ մյուս օրը), երք, երք երեմն, երքէր (=երբեմն, մի անգամ, մի ժամանակ), երքէր երքէր, ե- րեկ, ժամանակ առ ժամանակ, լող ժամանակս ժամանակս//ըստ ժամանակս ժամանակս (=ժամանակ առ ժամանակ), իբրև (=երբ), իկոյն, կանչառ

(շուտ), հանապազ//հանապազորդ (=միշտ, շարունակ), հանապազօր (=ամեն օր), հերուս//ի հերուս հետէ (=անցյալ տարի), ծմերայնի//ծմերանի (=ձըռուանը), մերք ընդ մերք, միւս անգամ, միշտ, յայնժամ (=այն ժամանակ), յար (=միշտ, շարունակ), յարաժամ (=միշտ), յախտեամ, յորժամ (=երբ), նախ, նոյնինետայն (=իսկովյն), նոյնժամայն (=նոյն ժամին, իսկովյն), վաղվաղակի (=շուտով, իսկովյն), վաղին//ի վաղին անդր//ի վաղինն/առ վաղին (=հաջորդ օրը, վաղը, առավոտյան), տարաժամ (=վաղաժամ), ցանկ կամ ցանգ (=միշտ, շարունակ, մինչև վերջ), ցարդ//ցարդ և ս (=մինչև այժմ), օր ըստ օրէ, օր քան զօր (=օրեօր) և այլն:

### Զնի մակրայներ

Զնի մակրայներն են՝ ակամայ//յակամայ, այլ ընդ այլոյ ( =տարբեր ծնով), անձամբ անձին (=ինքն իրեն, ինքն իր կողմից), առաւելապէս, առնաբար/առնապէս (=տղամարդու պես, քաջաբար), արագ, արագ արագ, ահ ընդ ահ (=վախվխելով), արմատաքի (=արմատով, արմատից), արացի (=ոտքով, քացով), բերանացի (=բերանով), բռնի, բռնցի (=բռով), զիխիվայր, զիխովին//ի զրիխովին, դիւրաւ կամ դիւրեաւ (=հեշտ կերպով), զուր//ի զուր, իւրովի/իւրովին, լոելեայն, խառն ի խուռն, խիտ առ խիտ, կաղ ի կաղ/կաղ ի կաղու/կաղու ի կաղու (=կաղալով), կենդու ի կենդու (=կենդ, շինծու կերպով), կենդանոյն (=ողջ-ողջ), կերպս կերպս//ի կերպս կերպս (=զանազան ձևերով), հազի, հազի հազի, ի հարկէ//հարկաւ (=բռնի կերպով, ակամա), ծեռն ի ծեռն (=ծեռով), ծեա ի ծեապոյ (=շտապելով), յանգէտսու (=շիմանալով), յանպատրաստից, յանզգաստից//յանզգաստուց (=հանկարծ), ընդ վայր, վայրապար (=իզոր տեղը), վարկապարզի (=վայրիվերո), տարապարտուց//ի տարապարտուց (=իզոր տեղը, իզոր), փոյր ի փուրոյ (=շտապելով) և այլն:

### Չափի և աստիճանի մակրայներ

Չափի և աստիճանի մակրայներն են՝ առաւել, բազում անգամ, զամ քան զգամ (=թիշ-թիշ), զամու զամու (=շատ անգամ), երկիցու (=երկու անգամ), երիցու (=երեք անգամ), կարի, կրկին, կրկնակի, հազ քան զիազ (=թիշ-թիշ), հասարակ առ հասարակ (=հավասար չափով), հնգիցու, յածախ, յոլովակի//յոլով անգամ (=շատ անգամ), յոյժ, շատ, սաստիկ, ի սպառ, ստէպ, ստէպ ստէպ, վերսային//ի վերստին և այլն:

§ 181. Կան մակրայներ, որոնք հաճախ գործածվում են մեկից ավելի մակրայական նշանակությամբ. այսպես, օրինակ՝ ամի մակրայր գործածվում է և տեղի, և ժամանակի իմաստով՝ Ծիմէ անդ (=այնտեղ) տուն բնակութեան (Խոր., 1-ին, Ժ): Քանզի անդ (=այն ժամանակ) մոլեգնեալ այր իւրաքանչիւր...

(շուտ), հանապազ//հանապազորդ (=միշտ, շարունակ), հանապազօր (=ամեն օր), հերուս//ի հերուս հետէ (=անցյալ տարի), ծմերայնի//ծմերանի (=ձըռուանը), մերք ընդ մերք, միւս անգամ, միշտ, յայնժամ (=այն ժամանակ), յար (=միշտ, շարունակ), յարաժամ (=միշտ), յախտեամ, յորժամ (=երբ), նախ, նոյնինետայն (=իսկովյն), նոյնժամայն (=նոյն ժամին, իսկովյն), վաղվաղակի (=շուտով, իսկովյն), վաղին//ի վաղին անդր//ի վաղինն/առ վաղին (=հաջորդ օրը, վաղը, առավոտյան), տարաժամ (=վաղաժամ), ցանկ կամ ցանգ (=միշտ, շարունակ, մինչև վերջ), ցարդ//ցարդ և ս (=մինչև այժմ), օր ըստ օրէ, օր քան զօր (=օրեօր) և այլն:

Զարբեր նակրայական իմաստով են գործածվում նաև հետևյալ մակրայներ անդէն (1. այնտեղ, 2. այն ժամանակ), անդրէն (1. այնտեղ, նոյն տեղը, 2. նոյնից), աստ (1. այստեղ, 2. այս ժամանակ), աստէն (1. այստեղ, այստեղից, 2. այս ժամանակից, այժմվանից), անդրուտ (1. այնտեղից, 2. այն ժամանակից) և այլն:

§ 182. Գրաբարում շատ մակրայներ կազմվում են տարբեր խոսքի մասերից մակրայակերտ ածանցներով՝ բար, պէս, օրէն, ակի, անակի, ոյն, այն, ի, ցի(ացի), իցս, եր(էր), արի. օրինակ՝ քաջաբար, առիւծաբար, սաստկապէս, գեղեցկապէս, ազատորեն, վաղվաղակի, փութանակի, միահաղոյն (=միագամից, միաժամանակ), առժամայն, բոնի, բերանացի, բազմիցս, երբեք (երբէք), արմատաքի և այլն:

**Վարժություն 149. Թարգմանել, դուրս գրել տեղի մակրայները՝ դիմացը նշելով աշխարհաբար թարգմանությունը:**

Քանին՝ վարձկանք իցեն ի տան հօր ինոյ հացալիցը, և ես աստ սովամահ կորնչիմ: Յուսն կաց այդի, բռու ես այդը բազմեցայց: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել: Եւ քարշեալ ի բաց ընկեցին զնարմինս նոցա: Մի այլ ուրեմ երթիցսն քաղել հասկ: Եղանէին ի վեր, և կործանէին զպարիսապ նորա: Յարուցեալ բազատըն ել արտաքրս: Տեսեալ զնա ի բացուտը՝ ոչ ծանեան: Անդ էր տեսանել գրեկումն նիզակացն և զիսրուտակումն աղեղանց: Յեւանեմ, քանզի աստեն մեռանիմ: Թողեալ էր զոմանս ի նախարարացն անդէն յաշխարիին Հայոց: Անթի բազմութիւն նարդկան ի ներքս բնակեցուանեն:

**Վարժություն 150. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան տեղի մակրայներով (արտաքրուտ, ի ներքս, ամոք, աստ, յայսկոյս, անտի, ի հեռուստ, (յ)այլուտ, ի բաց, աստի, ի վայր, այտի, այլ ուրեմբ, արտաքրս):**

Խորտակում էին դրմերը և դրսից ներս մտնում: Ամեն կողմերից հավաքվեցին այնտեղ: Այստեղ պետք է շինել արքունի ապարանքը: Այնտեղից եկան գետի այս կողմը: Հեռվից տեսան նրան և ճանաչեցին: Ուրիշ տեղերից բերում էին մքերքներ (համբարս) և ուտում: Հեռու կացեք մեզանից: Այստեղից ընկապ ցած: Այդտեղից իջի՞ն և ուրիշ ցեղ գնա: Նրանց դուրս հանեցե՛ք տանից: Հրաման տվեց նրան ներս կանչել:

**Վարժություն 151. Թարգմանել, դուրս գրել ժամանակի մակրայները՝ դիմացը նշելով աշխարհաբար թարգմանությունը:**

Ոչ կարի վաղ առնիցէ և ոչ յոյժ անազան: Դարձաւ անդրէն ի բաղարն իւր 175

**Տիգրոն:** Յորժամ յաջ ուսն յենուի, զաջ լեառն ընդ գետին տանեի. յորժամ ի ծախս ուսն յենուի, զախս լեառն ընդ գետին տանեի: Ընդ առաւօսս առաւօսս քանային զրումն տաճարին: Վաղին պատասխանի արասցոր թեզ: Իսկ ի վաղի անդր մատուցեալ առնոյր հրաման դահճապեսն վասն սրբոյն Գայլանեայ սպանման: Խորշակահար լինի ամարայնի որդի անօրէն: Երբեմն այս Յոհան անցանէր առ այգեօք ուրումն. և էր ժամանակ զայգիսն յատելոյ: Կամ զերկիր՝ որ հանապազ բրեմք, և ցանկ կոխսեմք և զայր զմեր և զանանոց մերոց ի նա հեղումք: Եր երեք երեք խաւարեցուցան: Եր անդէն թագաւորն ի ներք կոչեցեալ զրպապեսուն, հրամայէր զրել հրովարտակ: Վաղվաղակի հանեք զպատմանն առաջին և ագուցէք նմա: Եր զկարգեալ տաճիկ նոցա յարբունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի միսիքարութիւն:

**Վարժություն 152. Թարգմանել գրաքար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան ժամանակի մակրայներով (իրրև, ամարանի (ամարայնի), յայնժամ, վաղին, այգուն այգուն, ընդ առաւօսս, ընդ երեկո, առժամայն, հանապազ, վայր մի, որ քամ զօր):**

Երբ մտան տուն, տեսան հրավիրվածներին: Ամունք պատրաստում է իր կեր (զերակոր): Այս ժամանակ Հերովինսը զարտնի (զաղոտ) կանչեց մոզերին: Սովոր էին երկրպագել արևին ամեն առավոտ: Իր մոտ կկանչի թեզ վաղը այս ժամին: Առավոտյան դեմ ծաղկում է, իսկ(ն) երեկոյան բառանում: Երբ բրւանեց, խկույն չորացաց տապից: Շարունակ լայիս էր և չէր միսիքարվում: Մնա դու այստեղ մի փոքր, մինչև մտնեն հարցնեն: Օրեցօր աճում էր և մեծանում:

**Վարժություն 153. Թարգմանել, դուրս գրել առանձին սյունակներուն ճեր, չափի և աստիճանի մակրայները՝ դիմացը նշեկալ աշխարհաքար թարգմանությունը:**

Եր խնայեա՛ յանձն քո, մի հեղուկ զարին եղօր քո հարազատի՝ սպանանեղ զարդարն ի տարապարտուց յանխնայ: Զի յորժամ զտառապանաց բունիկն կամիցի շինեւ, բերանացի քաղէ տանի շիզ: Քանի՛ց անգամ տուեալ է թեզ խրատ և պատուէր: Այլ և վիշապը, ասեն, և նեանցը կեղծս ի կեղծս լինին: Խոյս ես յերեսաց նորա Դափր երկիցս: Զի և ծեզ դրւնք վիակեսին, և մի՛ մերձենայք ի սեղան իմ վայրապար: Եր նոյնեւոյն փոյք ընդ փոյք ազդ առն Փիլիպոսի կայսեր եռովնայեցոց, օգնականութիւն ի նմանէ խնդիրով: Որչափ մերձենայ, այնշափ առ սակաւ սակաւ ած ի նա լոյսն: Երե բռոցես զնա՛ լրջ գրեզ ի սպա: Անս տասն ատէա ստէա զայս օրինակ աւար առեալ զամենայն երկիրն յապականութիւն դարձուցանքը: Եր կանզմեցան կացին ի վերայ ոտից խրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ: Յայնմ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ

կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ... չոզաւ յանդիման եղն թագաւորին Պարսից Շապիոյ: Պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս և սաստկապէս լայն: Զօրն դարանակալ յանսպատրաստից յանկարծօրէն յայլակարծուոց զնուա յանկարծուստ յիւրաքանչիւր թազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին:

**Վարժություն 154. Թարգմանել գրաքար՝ ընդգծված բառերը փոխարինելով համապատասխան ճերի և չափի ու աստիճանի մակրայներով (յանզգաստու, կենդանույն, ծեպով, սակաւ, յոլով, բազում անգամ/յոլով անգամ, տարապարտուց, երից, առատաքար, յաճախ, յոյժ, արմատաքի, առաւել):**

Հանկարծակի կիասնի մահկան օրը: Նրան օցեցին կրակի մեջ (ի հուր) և տջ-ող այրեցին: Հրամայում էր շտապ ուղարկել դսապաններ Հայոց երկիրը: Ուսացանում էր նրանց քիչ խոսել և շատ իմանալ: Շատ անգամ տեսնում եք, բայց չեք գգուշանում: Ինչո՞ւ իզուր գրգուեցիր քո նորայրներին: Երեք անգամ հարցրեց նրան: Ընորիիր մեզ քո պարզն ները առատաքար: Հաճախ կանչում էր նրան իր մոտ և խիստ հանդիմանում: Ծառը արմատներով պոկեց հանեց: Մարտը ավելի էր սաստկանում:

## ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՏԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Իսկ արին Վարդան յառաջմատուցեալ և զաւագանին<sup>1</sup> հարցանէր<sup>2</sup>, և միարան ամենեցուն խրատու զգօրագլուխն կարգէր.

Զգունդն առաջին տայր ի ծեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա զմնձ իշխանն Մոկաց. և զայլն ամենայն նախարարեան<sup>3</sup> համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն զնդին քևս ս աստի և անտի կազմէր նոցա:

Եր զգունդն երկրորդ տայր ի ծեռն Խորենայ Խորիսոռունույ, և նիզակակից նմա զԸնծայինն և զՆերսեն Քաջքերունի:

Եր զգունդն երրորդ մատուցանէր ի ծեռն Թարլոյ Վանանդացոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազում ի քաջ արանց աստի և անտի ի քևս նոցա:

Յանձն իր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իր գրաջն Արշակը և զիարազատ եղրայրն իր զՀամազապեան:

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին<sup>4</sup> դէմ յանդիման Արեաց զնդին, առ ափին Տղմուտ զեսոյին:

Եր իրքն այս այսմէս պատրաստեցան, երկորեան կողմանքն ի սրտմտութամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զազանցեալ զօրութեամբ յիշեարս յարծակէին և ամբոխ աղաղակին<sup>6</sup> երկոցունց կողմանց՝ իրքն ի մէջ

ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր<sup>7</sup>, և հնչումն ծայնից զբարանձաւ լեռանցն շարժէր: Ի բազմութենել սաղաւարտիցն և ի փայլին պատենազէն վառելոցն իբրև նշոյլը ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում շրդալ սուսերացն և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուտ ահազն իրածգործինք եռային<sup>8</sup>: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել՝ զմեծամեծ տաքնա ահատը ծայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլմելիս ամենեցուն առ հասարակ խացուցանէին:

Անդ էրտեսանել<sup>10</sup> շտապ մեծի տագնապին<sup>11</sup> և զայէտս անքաւ տարակուսանցն երկոցունց կողմանցն՝ առ ի յանդուզն յարձակմանէն զմիմեանս քայլով. քանզի քանձրամիտքն յիմարտին և վատասիրտքն լքանէին. քաջը խիզախէին և նահատակըն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեամն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութեն զետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան<sup>12</sup>: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին<sup>12</sup>, ծի ի վերայ առեալ<sup>13</sup> յարձակէին մեծաւ զօրութեամբ. սաստկապէս քախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաբաւալ խաղային:

Ցայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսաներ զըստիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին<sup>14</sup> զՀայոց զնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զաջ թնն Պարսից զնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն<sup>15</sup>, և շրջան առեալ կոտորէր մինչն ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի<sup>16</sup> ի վերայ հասուցանէր, մինչն զունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային<sup>17</sup>:

Ապա դէտակն ի վեր ամբառնայր<sup>18</sup> Մուշկան Նիսալաւուրտ, քակեալ զրմանս տեսաներ ի զնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիրեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ զնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղուցն երկորին կողմանքն զարդութիւն խոստովանէին, և առ յոյժ քանձր անկեալ դիականցն իբրև զքարակոյսու դերքկաց երնէին<sup>19</sup>:

Զայն իբրև եւես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր զազանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ծայն մեծ զալարափողոցն զիր գունդս ստիպէր, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր:

Իսկ կորովին Վարդան հիրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախմիրս ի տեղուցն գործեաց, յորում տեղուց և ինքն իսկ արժանի եղն առնուլ զկատարեալ նահատակորինն:

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարծատէր<sup>20</sup>. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց:

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտի ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն<sup>21</sup>. և սաստիկ խունապ տագնապի<sup>22</sup> էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ որք մնացեալքն էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց դարձեալ միւսանզամ<sup>23</sup> զմիմեանս սատակէին: Եւ մինչև ի մուտք արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն<sup>24</sup>:

Եւ քանզի զարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսան արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսաներ ոք զբազմակյուտ դիականցն անկելոց. սիրտն բեկանէր և աղիքն զալարէին՝ լսել զմնչիւն: Խոցելոցն և զմոնչիւն բեկելոցն, զբաւազլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զբարուստ լքելոցն, զսրուարափումն զանարի արանցն, զծիւն կանացեացն, զողըս սիրելեացն, զաշխարումն մերձաւորացն, զվայ և զաւադ բարեկամացն: Զանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղենաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջն ելեալ երկորին կողմանքն ի պարտութիւն մատնեցան:

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուինս ի մէջ զլխաւոր, յոր յեցեալ ժողովէին զունոր մնացելոցն: Թէաէտն ս բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան, և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում զաւառաց և բերլից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր:

(Եղիշէ, էջ 116-119)

<sup>1</sup> աւագանի-ավազներ, մեծամեծներ

<sup>2</sup> այս և հաջորդ բայերից շատերը գրծած-ված

<sup>3</sup> ված են անցյալ կատարյալի իմաստով

<sup>4</sup> նախարարնան-նախարարներ

<sup>5</sup> յորդորնով ընդ ամենայն երեսս

<sup>6</sup> դաշտին-սփուելով ամբողջ դաշտի երեսին

<sup>7</sup> առ նախորդը հայցական հոլովի հետ

<sup>8</sup> տեղի ի հաստուց՝ Տղմուտ զետի ափին

<sup>9</sup> ամբոխ աղաղակին-աղմուկն ու աղաղակը

<sup>10</sup> ճայթմուն գործէր-ճայթում էր

<sup>13</sup> ծի ի վերայ առեալ-ծի նստած հեծած

<sup>14</sup> այստեղ՝ ընկենցին

<sup>15</sup> արկանէր զգազանօքն-հարձակվեց զազանների վրա

<sup>16</sup> շտապ տագնապի-շինոր ու տագնապ

<sup>17</sup> դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային-դեռ շպարտված փախուստի դիմեց

<sup>18</sup> դէտակն ի վեր ամբառնայր-աշքերը վեր բարձրացրնց

<sup>19</sup> իբրև զքարակոյսու դերքկաց երն էին-

8 ահազին իրածգութիւնը եռային-  
 ահազին կյակ էր քափվում  
 9 ո՞վ իսկ է բաւական ասել-ո՞վ  
 կարող է պատմել  
 10 անդ էր տեսանել-այնտեղ կարելի  
 էր տեսնել, պետք էր տեսնել  
 11 հոմանիշ է շտապ բարին  
 12 ստորովալը համածայնել է նմքակային  
 ((զունից) ըստ իմաստի, պետք է  
 քարզմանել եզակի թվով

նմանվում էին խորդութորդ քարակույտերի  
 20 մօտ առ երեկոս կարճատեր-  
 երեկոյան դեմ դադարեց  
 21 ոչ կարէին կալ ծշմարտի ի վերայ սուր  
 մարմնոյ երանեացն-շին կարողանում առայ  
 նանաշն երանեշինների սուրը մարմինները  
 22 խումապ ու իրարանցում  
 23 մակրայական ավելադրություն է  
 24 վերացականը քանձրացականի  
 փոխարեն

## ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆԵՐԵԶԵՐՈՐՈՇ

### ԸԱՂԿԱՊ

§ 183. Գրաբարում շաղկապներն ըստ կիրառության լինում են երկու տեսակ՝ ա) համադասական, բ) ստորադասական:

ա) Համադասական շաղկապներն են՝ և՝ (=և, նաև, էլ), և...և, ևս (=մասն), երեւ... երէ (=քեւ... քե), քէ... քէ, այլ (=քայլ, իսկ, այլ), այլն (=այլն), այլ ևս (=այլն, էլ), բայց (=բայց, սակայն, այլ, իսկ, բացի), սակայն, երէ, քէ (=քե, այս նշանակությամբ երէ, քէ շաղկապները գործածվում են սովորաբար հարցական նախադասություններում. օրինակ՝ Արժան է հարկ տալ կայսեր երէ ոչ (Մարկ., ԺԲ, 14): Պե՞տք է կայսրին հարկ տալ քենոց կամ, կամ... կամ, կամ քէ... կամ քէ (=կամ... կամ, կամ քե), ոչ երէ, ոչ քէ... այլ իսկ, մանաւանդ, մանաւանդ քէ (=մանավանդ, մանավանդ քե) և այլն:

բ) Ստորադասական շաղկապներն են՝ զի (=որ, որովհետև, որպեսզի), քանզի (=որովհետև), վասն զի (=որովհետև, որպեսզի), որրայէս զի (=որպեսզի), որովհետև, փոխանակ զի (=զրա համար, որ. Եր օրինեսին... ամենայն ազգը երկրի, փոխանակ զի լուար ծայնի իմում (Ծննդ., ԻԲ, 18): Երկրի բոլոր ազգերը կօրինվեն նրա համար, որ լսեցիր ինձ), իբր զի/իբրը զի (=որովհետև), իբրն քէ (=իբրն քե, իբր քե), երէ (=երէ, քե), քէ (=քե, քե որ), երէ... ապա, ապա քէ ոչ, մինչ, մինչև, մինչդեռ (=մինչ, մինչդեռ, քանի դեռ), ուստի, այպինքն/այս է (=այսինքն), քէպէտ/քէպէտ և/քէ և (=քեպետ, քեն) և այլն:

Վարժություն 155. Թարգմանել, դրս գրել առանձին սյունակներում համադասական և ստորադասական շաղկապները՝ դիմացը նշելով աշխարհար քարզմանորոշում:

Մինչև յե՞րբ ոչ դադարիցես, հանդարտեա՝ զի և մեք խօսեսցուք: Եւ զիա-  
 զար՝ երէ ի տօք ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փո-  
 րոյն փարատէ, և երէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ: Յամենայն ծառոց  
 ոք է ի դրախտիք՝ ուտելով կերիցես, բայց ի ծառոյն զիտութեան բարոյ և չա-  
 րի՝ մի՛ ուտիցէք: Եւ դատաւորք ստոյգ, ոքր դատին զշարագործս, ոչ երէ չարք  
 անուանին և չաշչարիչք, այլ յոյժ քարիք և քարեգործք: Զի՞նչ շահ է՝ զի ծա-  
 ռայեսցուք նմա, կամ զի՞նչ օգուտ՝ զի հանդիպեսցուք նմա: Եւ թէ այնպէս ինչ  
 ոչ էր, ապա և ոչ նա զշարն իւր որդի կոչէր: Հաճոյ բուեցաւ Հերովդի, ուստի և  
 երդմանք խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ: Խակ զի՞ մկրտեն, երէ դրւ  
 չես Քրիստոսն: Այլ ուստի՞ յայս իցէ՝ թէ մայր գոյր. մանաւանդ զի ասեն իսկ՝  
 թէ մինչ չեն եր ինչ բնաւ, ոչ երկինք և ոչ երկիր: Դո՞ւ ես որ զալցն ես, երէ այ-  
 լում ակն կացցուք: Բայց որովհետևս ոչ կացէք յիմում պատուիքանին. դուք  
 իբրն զմարդիկ մեռանիք: Կամ արարէք զծան բարի և զպտու նորա բարի,  
 կամ արարէք զծան չար և զպտու նորա չար: Եւ կոչեաց զանուն նորա բա-  
 րիա. վասն զի ի չար ժամանակի ծնաւ: Թէպէտ և երկնչին յահէ տէրութեանն,  
 սակայն ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովորեանց տային: Այլ  
 թէ ինքն բարի էր, զշարն եղծանէր և բարտյն տայր զբազալութիւնն: Եւ ա-  
 ստին բանս միսիքարութեան, իբրն թէ լաւ իցէ մարդոյ մահու չափ ճգնել՝ քան  
 յայդպիսի օրինաց ուրանալ:

### ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 184. Գրաբարի ծայնարկություններն են՝ աղէ՝ (=հապա, դե), ա՛յ, աւա՞ն (=ափսո՞ն), վա՞յ, վա՞հ, վա՞շ, եղո՞նկ (=վայ, վախ, ափսո՞ն), օ՞ն (=հապա), օ՛շ (=երանի), քարէ՛ (=արտահայտում է զարմանք), երանի, իցին (=երանի), իցին  
 թէ (=երանի քե) և այլն:

Վարժություն 156. Թարգմանել՝ դրս գրելով ծայնարկությունները:

Վա՞յ քեզ, քաղաք, որոյ քազաւոր քո մանուկ է: Աղէ՛ տուր ինձ զիտել, ո՞վ են  
 երինքն այնոքիկ՝ զորս ընդ ունջ տանէիր: Ո՞հ, որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդա-  
 րութեամբ, և զվերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբք: Երէ ամպարշտեցայց վա՞հ է  
 ինձ: Ո՛, ո՛, փախերուք յերկրտ հիսախոյ: Աւա՞ն զրկանացս, աւա՞ն թշուառական  
 պատմութեանս: Եղո՞նկ դու, Նինու, ո՞վ իցէ որ հեծիցէ վասն քո: Ա՛յ, մի՛ լինիք  
 տիրասպանուք: Օ՞ն ամդը ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորե-  
 լուց: Իցէ՛ թէ լուիցէ ինձ, կամ իրաւացուցիք զքան իմ: Ա՛հ, գուք և որոզայր  
 ի վերայ ծեր, բնակիչք երկրի: Երանի սգաւորաց, զի նորա միսիքարեսցին:

## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝ գոր ոչ գիտեն, քան թէ գիտիցեն<sup>1</sup>: Չի հինգ հարիրով չափ յականէ յանուանէ<sup>2</sup> ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբագում ի կրսերագունաց անտի:

Ամեներեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ<sup>3</sup> որ ոչ ճաշակեցին զաշխարի: Քանզի երէ աւագագոյնը էին, և երէ մանկագոյնը, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենն ին՝ զանուն փափկորեան մայրենի ազատութեանն, այլ իրը մարոք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանց<sup>4</sup>, տանջելով վարեալ զկեան աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա<sup>5</sup> յանձն առին զիամբերութիւն վշտաց:

Ոչ միայն յոգին միսիրարեալ կացին առ աներենոյք զօրութիւն յուսոյն յափտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան: Չի թէպէտ և ունեին զիրաքանչիլը ճեռնասոսն սպասաւորս, ոչ ոք երևէ ի նոցանէ՝ թէ որ տիկինն իցէ<sup>6</sup> և կամ որ նաժիշտն. մի հանդերձ էր հասրակաց, և միապէս գետնախշչոյ երկորեան: Ոչ ոք ումեք անկողնարկ ինուր<sup>6</sup>. քանզի և շճանաչէին իսկ զիտուելէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փախրայիցն<sup>7</sup>, և մի գոյն սևուեան սմարդից բարձիցն:

Ոչ գոյր նոցա խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարար որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր<sup>8</sup>: Շարարամուտն ըստ կարգի միայնակեցաց<sup>9</sup>, որ յանապատս բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր ի ծեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. շանկա օշնան ի ծեռս փափկասուն կանանց, և ոչ նատուցաւ եւլ ի զուարութիւն խրախութեան: Շերան առաջի սուրբ սկտեղը, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն<sup>11</sup>. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս<sup>12</sup>, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա, չյիշեցան նոցա, թէ գուցէ որ ամենն ին ի բնականունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց<sup>13</sup>:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակը և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդիուտայնք ճգեցան ի սենեակս առագաստաց նոցա. Կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք<sup>14</sup> ապաստակի նոցա: Շորացան ազագեցան բուրաստամք ծաղկոցաց նոցա, տաշտախիլ եղեն որքը զիներեր այգեաց նոցա:

Աչօր իրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իրեանց, և ականջօր իրեանց լուան զշարչարանս վշտից սիրելեաց իրեանց. առան զանձը իրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենն ին զարոք երեսաց իրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին<sup>15</sup> յիրաքանչիլը բաստեռունս և ի զահաւորակս, հանապազ բոլք և հետի երքային ի տունս աղօրից, անձանձորյք խնդրեալ ուխտիք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իրեանց սմեալ էին ուղղովք զուարկաց և ամճովք էրեոց, խոտաբուտ կենօր իրըն զվայրենիս ընդունէին զկերպարուն մեծաւ խնդրութեամք, և ոչ յիշէին ամենն ին զսվորական փափկութիւնն: Սև ացեալ ներկան մորքը մարմնոյ նոցա. Վասն զի ցերեկ արևակեզր էին և զամենայն զիշերսն գետնարեեկը:

Սահմոսք էին մշտնջնաւորք՝ մրմունջը ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք զնքերցուածք մարգարէիցն: Միաբանեցին երկու երկու իրըն ամովք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակոսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստ խաղաղութեան:

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուր առաքինիք ի հոգն որ պատերազմին. մարտ եղեալ կրուեցան ընդ մեզնս կարենուս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորս: Միամտութեամք յաղթեցին խորանանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ազահութեան, և չորացան մահաբեր պտոտք ոստոց նոցա: Խոնարիութեամք կափեցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարիութեամք հասին երկնաւոր բարձրութեանն: Ազօրիւր բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զիրեշտակս ի փրկութիւն. լուան աւետին ի հեռաստանէ, և փառատրեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց<sup>16</sup> զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն կամօր կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ շարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամք, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն: Մատամքք իրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ոոճիկ նոցա յարքունուտն ամ յամէ բոշակ առնեին և տային տանել նոցա ի մխիթարութիւն: Անարին ծիպունց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամք առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

Բազում մերաց հալեցան սառնամանիք<sup>17</sup>. Եկաս զարտուն, և եկին նորեկ ծիծուունք. տեսին և խնդրացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իրեանց: Ծաղիկք գարմանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աշը իրեանց կարօտացան տեսանել զցան-

կալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակը որսականք, և խցեալ կուրացան<sup>18</sup> արշաւանք որտղոց: Բնազոր յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստան: ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իրաքանչիլ նշանակեալ ի նոսա:

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութեմէն: Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և շարչարեալք, և յոզիս իրեանց զարդարեալք և միսիքարեալք երկնաւոր սիրով:

Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր...:

(Եղիշէ, էջ 199-203)

- <sup>1</sup> առաջին ապառնին ներկայի իմաստով
- <sup>2</sup> յական յանուանէ-անուով, անձամք
- <sup>3</sup> ոչ ինչ ընդհատ երևան յայնցանէ-ամենն ին պակաս շմնացին նրանցից
- <sup>4</sup> որ վշտամբեր լեալ իցն անդատն ի շինական սովորութեանց-որոնք հենց
- <sup>5</sup> սկզբից նեղորույնների են համբերել շինականների սովորությունների օրինակով անդրագոյնը և ս քան զնոսանցից էլ ավելի
- <sup>6</sup> ոչ ոք ումեր անկողնարկ լինէր-ոչ
- <sup>7</sup> մեկը մյուսի համար անկողին չեր զցում
- <sup>8</sup> մի զոյն թխութեան փսիրայիցն-մինն նույն քոյնն ունեին փսիրաբները այ հասարակաց էր-այ (այդ ամենը) ընդհանուր եր
- <sup>9</sup> սովորոյալք (անցուցանէին) բացակայում է
- <sup>10</sup> չեղան առաջի-շորվեցին (նրանց) առջն

- <sup>11</sup> և ոչ անկան բաժակակալը յուրախութիւն- և ոչ էլ բաժակակալներ տրվեցին ուրախության համար
- <sup>12</sup> շնեաց ուրուք նոցա նուիրակ առ զուրանցից ոչ մեկի դրսների մոտ սպասավոր չկանգնեց
- <sup>13</sup> շիշեցան նոցա, թէ զուց ոք ամենն ին ի բնականուն դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց-մանք շիշեցին, թէ զուց սնուցանող որն է դաստիարակ կամ մի սիրելի հարազատ ունեն այստեղ՝ ամրոց իմաստով
- <sup>14</sup> որ զրգեալք և գզուեալք էին -որոնք փափուկ կյանքը ու քնչուչ մեծացել էին բարձին յանձանց-իրենց վլայից վերացրին այստեղ՝ սառույցներ
- <sup>15</sup> խցեալ կուրացան. այստեղ բոլորին դադարիցիցին դադարեցին

## ԸԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

### ԴԱՍ ԵՐԵՄՈՒՉՈՐՄԵՐՈՐԴ

§ 185. Գրաբարի շարահյուսությունն ունի շատ ընդհանրություններ արդի հայերենի շարահյուսության հետ, սակայն կան և զգալի տարբերություններ: Այս բաժնում կիսում կատակապես շարահյուսական այն երևոյթների նասին, որոնք առանձնապես բնորոշ են գրաբարին:

### 1. ԸԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 186. Գրաբարում նախադասության անդամների շարադասությունն ընդհանրապես ազատ է, սակայն սովորական շարադասության համար կան որոշակի կանոններ: Դրանք են.

ա) Ենթական դրվում է ստորոգյալից թէ՝ առաջ, թէ՝ հետո. օրինակ՝ Արքայ յիեաց զիս առ ձեզ (Եղիշէ, էջ 161): Ի սկզբանէ արար Աստուած գերկին և զերկի (Ծննդ., Ա, 1):

թ) Որոշչը դրվում է որոշյալից և՝ առաջ, և՝ հետո, սակայն տարածվածը նախադաս գործածությունն է. օրինակ՝ Խակ կորովին Վարդան իրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախաճիրս ի տելուզն զործեաց (Եղիշէ, էջ 118): Ահա ետու թէզ սիրտ իմաստուն և հանճարեղ (Գ Թագ., Գ, 12):

զ) Հատկացուցիչը դրվում է հատկացյալից և՝ առաջ, և՝ հետո, սակայն տարածվածը ենտադաս զործածությունն է. օրինակ՝ Խշնեցէր ձկանց ծովու և թռնոց երկնից (Ծննդ., Ա, 28): Մերմն նորա դեղ է (Եզնիկ, 1-ին, ԺԵ): Որ հայի ի կողմն ծովակին ի գետոյ կուտէ (Բուգ., 4-րդ, ԾԹ): Իմ որդին անուշակոտ և լուսաւոր է (Եզնիկ, 2-րդ, Ա):

Ծանոթություն. Հարցական-հարաբերական դերանուններով արտահայտված ենթականները, որոշչները և հատկացուցիչները լինում են նախադաս. օրինակ՝ Ռ՞Վ ես դու (Եզնիկ, 2-րդ, Ա): Որ սիրտ զիրատ, սիրտ զիմաստութիւն (Առակ., ԺԲ, 1): Որոց ոգիբն թուլացեալ են յերկնաւոր առաջիններնեն (Եղիշէ, էջ 14): Զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա (Մարկ., Ժ, 32):

դ) Բացահայտիչը դրվում է բացահայտյալից հետո. օրինակ՝ Սառա, կին Արքամու, ոչ ծնանէր նա (Ծննդ., ԺԶ, 1): Առաք զՄբատ ասպետ, զհայր Բազարատայ (Խոր., 2-րդ, ԶԳ):

ե) Սովորաբար իրենց լրացյալից հետո են դրվում կողմնակի անդամները, այսինքն՝ դերբայների, բայանունների, ածականների և թիվ ու քանակ ցոյց տվող բառերի լրացուները. օրինակ՝ Եւ տեսեալ զմա Զրուանայ, ոչ գիտաց ե-

թե ո որ ից (Եզնիկ, 2-րդ, Ա): Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարածամբ (Եղիշէ, էջ 118): Սպանումն Արգամայ ն որուց նորա (Խոր., 2-րդ, ԾԱ): Եսես այր մի կոյր ի ծնէ (Յովի., Թ, 1): Հինգն ի նոցամէ յիմարք, էին, և հինգի իմաստումք (Մատք., ԻԵ, 2):

**Վարժություն 157.** Դուրս գրել 30-րդ դասի ընթերցանության հատվածից Ենթակայի և ստորոգյալի, որոշի և որոշյալի, հատկացուցիչ և հատկացյալի, բացահայտչի և բացահայտյալի կապակցությունները և որոշել՝ Ենթակաները, որոշիչները, հատկացուցիչները և բացահայտիչները նախարա՞ն և գործածված, թե՞ ետաղաս:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

§ 187. Ենթակայի և ստորոգյալի, բացահայտչի և բացահայտյալի, հատկացուցիչ և հատկացյալի համաձայնությունը գրաբարում ընդհանուր առմամբ նույնն է, ինչ որ արդի հայերենում: Նկատելի են հետևյալ առանձնահատկությունները:

1. Եզակի կամ հոգնակի նշանակությամբ անեզական անուններով արտահայտված Ենթակաների ստորոգյալը սովորաբար ըվում է հոգնակի թվով. օրինակ՝ Եղիշեն կամք քո (Մատք., Զ, 10): Ուստի շարիքն յաշխարի մտին (Եզնիկ, 2-րդ, Գ): Փառքն ոչ երեւ անձնատր իմ են (Եզնիկ, 2-րդ, Գ): Հավաքան իմաստ արտահայտող եզակի Ենթակաների ստորոգյալը կարող է դրվել հոգնակի թվով. օրինակ՝ Տիրեցին աշխարիին Հայոց ազգն Սամասայ պարսկի (Եղիշէ, էջ 6):

2. Որոշիչը, եթե նախադաս է, սովորաբար հոլովով ու թվով չի համաձայնում իր լրացյալին, իսկ եթե ետաղաս է՝ համաձայնում է. օրինակ՝ Հրաման տայր կապեալ ոտիկր... խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ (Ագ., ԺԱ, 122): Եւ յետ հազար ամի՞ յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ (Եզնիկ, 2-րդ, Ա): Երգօք հոգնորօք և բարձրագոյն օրինութեամբք ի քաղաքն դառնային (Կոր., Թ): (Տե՛ս գոյականի հետ ածականների, դերանունների, թվականների, դերբայնների գործածությանը վերաբերող բաժինները):

3. Եթե հատկացուցիչն արտահայտված է ստացական դերանուններով, սովորաբար հոլովով ու թվով համաձայնում է հատկացյալին. օրինակ՝ Եւ առ ի պտոյ նորա, եկեր և եւ առն իրում (Ծննդ., Գ, 6): (Տե՛ս գոյականի հետ ստացական դերանունների գործածությանը վերաբերող բաժինն):

**Վարժություն 158.** Դուրս գրել 33-րդ դասի ընթերցանության հատվածից Ենթակայի և ստորոգյալի, որոշի և որոշյալի, հպատակացուցիչ և հատկացյալի կապակցությունները՝ բացատրելով դրանց համաձայնության կանոնները:

## 3. ՀՈԼՈՎՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

§ 138. Հոլովների գործածությունը գրաբարում ընդհանուր առմամբ նույնն է, ինչ որ արդի հայերենում: Նկատելի են գրաբարին բնորոշ հետևյալ հիմնական առանձնահատկությունները:

1. Հայցական հոլովով կարող են դրվել.

ա) Խննդրասոու բայի արմատից կազմված կամ նրան իմաստով մոտ լրացումները, որոնք աշխարհաբար բարգմանվում են գործիական հոլովով. օրինակ՝ Երկեան երկիր (=Երկյուղով) մեծ (Ղուկ., Բ, 9): Մեծացաւ մեծութիւն (=մեծությամբ) յոյժ (Դան., Ը, 8): Կոծեցան զնա անդ կոծ (=կոծով) մեծ (Ծննդ., Ծ, 10): Խննդացին յոյժ ուրախութիւն (=ուրախությամբ) մեծ (Մատք., Բ, 10):

բ) Խիստ հազվակեաց Ենթական, որի մոտ դիմավոր բայի փոխարեն գործածվում է անորոշ դերբայը. օրինակ՝ Կամին զծեզ իմաստուն լինել ի բարիս և անմեղս՝ ի շարիս (Հոռվ., ԺԶ, 19)=Կամին, զի դուք իմաստունք լիջիք ի բարիս և անմեղս՝ ի շարիս:

2. Սեռական հոլովով դրվում են.

ա) Նույն նախադասության անցյալ դերբայի և հաջորդ դիմավոր բայի ընդհանուր Ենթական, որն աշխարհաբար բարգմանվում է ուղղական հոլովով (տե՛ս § 116). օրինակ՝ Մատուցեալ Արիմեննին առաջի Զրուանայ՝ ասէ ցնա (Եզնիկ, 2-րդ, Ա): Արդ անկեալ ծառայակցին առ ուսու նորա, աղաշէր զնա և ասէր (Մատք., ԺԸ, 29):

բ) Եմ օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքերով և անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակներում Ենթակայի իմաստով գործածված խնդիրները (տե՛ս § 176). օրինակ՝ Զպայն իսկ իմ աշօք տեսեալ է (Եզնիկ, 1-ին, ԻԵ): Եթե զուն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիաւաց (Եզնիկ, 1-ին, ԻԵ):

գ) Ածականներից ուրին ածանցով կազմված և սովորաբար որոշի իմաստով գործածվող վերացական գոյականները, որոնք աշխարհաբար բարգմանվում են որպես ածական (տե՛ս § 157). օրինակ՝ Բարձին զրեոն ծանրութեամ (Եղիշէ, էջ 200)=Կրեցին ծանր բեռը: Այսպես նաև՝ ոյժ պնդութեան, խրիուրդ ամբարշտութեան, պաշտօն պղծութեան, գոյն բխութեան, ողջոյն նարդասիրութեան և այն:

Այսպիսի կապակցություններում սեռական հոլովով է դրվում լրացյալը, իսկ որին ածանցով վերացական գոյականը դառնում է հատկացյալ, որն աշխարհաբար դարձյալ բարգմանվում է որպես որոշիչ. օրինակ՝ Իսկ անօրէն իշխանն իբրև յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն (Եղիշէ, էջ 16): Խորամանկութիւն խորհրդոյն=խորամանկ խորհրդոյն: Այսպես նաև՝ բաղդրութիւն բանջարացն, անպակասութիւն հացի և զիւտյ, հարթութիւն դաշտաց, բազմութիւն նետիցն, կարծրութիւն նիւթյ և այլն:

դ) Չափ ու քանակի սեռականը (մասնական սեռական). օրինակ՝ Տուեալ

լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի (Եզնիկ, 2-րդ, Ա): Եւ Սողոմոն տայր Քիրամայ քսան հազար բռո ցորենոյ և քսան հազար սափոր իտոյ (Գթագ., Ե, 11): Այսպէս նաև՝ ափ մի գարւոյ, տիկ մի գինոյ, իինձ նկանակ հացի, հազար սիկող արծարոյ, նաղանդ մի արծարոյ, բեռն մի փայտի և այլը:

Այս կապակցությունները կարող են հորոված օրինակ՝ Վասն ափոյ միոյ գարւոյ և կոտորոյ միոյ հացի (Եզեկ., ԺԳ, 19): Ի տաղանձէ միոյ ոսկոյ սլքոյ արար զնա (Ելք, ԼԵ, 24): Այսպէս նաև՝ յիսուն սկեղ արծարոյ, միոյ ատր կեանք, երիս ալեր նաշխոյ և այլն:

Ե) Ոճական նկատառումով իրար մոտ-դրված հոմանիշ կամ նույնանի քառերից երկրորդը. օրինակ՝ Ընկալար զիրաման պատուիրամի (Եղիշէ, Է, 5)=Ստացանք պատվեր ու հրաման: Գայր տալ մարտ պատերազմի (Ազ, Դ, 39)=Գալիս էր պատերազմ տալու (պատերազմելու): Այսպէս նաև՝ զկան ցանկութեան (կամքն ու ցանկությունը), գելս կատարածի (վերջը, վախճանը), գխորհուրդ կամացն (կամքն ու խորհուրդը), խումապ տագնաապի և այլն:

Ո) Ամ բառը, երբ գործածվում է տարիք իմաստով. օրինակ՝ Եւ եղև Արքան ամաց իմաստուն և իմունց (Ծննդ., ԺԵ, 1): Եւ էր Խասհակ ամաց քառասմից (Ծննդ., ԻԵ, 20):

### 3. Տրական հոլովով դրվում են.

ա) Եղանակից բայերի մոտ ներակայի իմաստ արտահայտող բառը, որն աշխարհաբար թարգմանվում է ուղղական հոլովով (տե՛ս § 174) օրինակ՝ Նմա պարտ էր առնել զերկինս և զերկիր (Եզնիկ, 2-րդ, Գ)=Նա պիտի ստեղծեր երկինքն ու երկիրը:

բ) Անորոշ դերբայի մոտ կողմնակի ենթական, որն աշխարհաբար թարգմանվում է որպես երկրորդական նախադասության ենթակա, իսկ անորոշ դերբայը՝ դիմավոր բայով. օրինակ՝ Ոչ կամինք թագաւորել դմա ի վերայ մեր (Դուկ., ԺԹ, 14)=Չենք կամենում, որ դա թագավորի մեզ վրա: Մի՛ պատահեցէ ինձ բողով զեզ և դառնալ (Հոռոր, Ա, 16)=Մողող չպատահի, որ ես քեզ բողնեմ և վերադառնամ: Եւ ի հայեցուածոցն դժուութենէ ասեն պայթել ործարար վիմացն (Խոր., 2-րդ, ԽԲ)=Ասում են, որ ործարար վեմերը պայթելիս են եղի հայացքի շարությունից:

4. Բացառական և գործիական հոլովներով դրվում են չափ ու քանակ ցոյց տվող բառերը, որոնք պատասխանում են որքա՞ն հարցին. օրինակ՝ Ի տասն կանգնոյ (=տասը կանգուն) զերկայնութիւն միոյ սիւնակին առնցես (Ելք, ԻԶ, 16): Կանգնաւ և կիսով (=մեկ ու կես կանգուն) յերկայնութիւն, և կանգնաւ և կիսով ի լայնութիւն, և կանգնաւ և կիսով ի բարձրութիւն (Եզեկ., Խ, 42): Եւ արածես զնա չորեքանկինի, թզաւ (=մի թիզ) յերկայնութիւն և թզաւ ի լայնութիւն (Ելք, ԻԸ, 16):

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ (Հատուած)

Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարքեաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդույ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշրի որդույ Սասանայ,- որ էր նախարար ոմն ի Ստահր զաւոտ, որ եկեալ միաբանաց զօրս Պարսից, որք լիին խոտեցին մերժեցին անարգեցին գտէրութիւնն Պարքեաց, և հաճեցան հաւանութեամբ ընտրել գտէրութիւնն Արտաշրի որդույ Սասանայ,-արդ իրքն յետ մահուն հասանելոյ գուժիս այսորիկ առ խոսրվ թագաւորն Հայոց,-որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն,-արդ՝ թէպէս և վաղո՞ւ լուսալ գործն՝ ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն՝ պատերազմի իրացն պատրաստութեան<sup>4</sup>: Յետ այսորիկ դարձեալ լիներ յիրացն եղելոց<sup>5</sup> մնծաւ տրտմութեամբ, զի ոչ ենաս<sup>6</sup> ինչ նմա գործել գործ, ի մնծ ի տրտմութեանն և յիրացն վճարելոյ՝ դարձեալ անցեալ եկեալ լիներ յաշխարի իր:

Արդ՝ ի միս ևս ի գլուխ տարւոյն սկսաներ Խոսրով թագաւորն Հայոց գունը կազմել և զօր բովանդակել գումարել զօրս Աղուանից և Վրաց, և բանալ զգ-դրուն Այսանաց և զնորայ այսակին, հանել զօրս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանն Պարսից, արշաւել ի կողմանն Ասորեստանի, մինչև ի դրուն Տիսրոնի: Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւնն դարձուցաներ զշինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ քրոյը. Զնշել ի միջոյ ի բաց կորուսանել, խելի քակել, իիմն ի վեր ջանայր առնել, համարէր՝ բառնալ զօրենս տէրութեանն Պարսից: Ուխտ եղեալ միանգամասյան<sup>9</sup> վրէժ խնդրել մնծաւ քինութեամբ զանկանելն իրեանց ի տէրութեաննէն. սպառ սպոտ ջանայր զվլէժ խնդրել, մնծաւ քինու նախանձարեկ լինելով. մնծանեծ փիքայր՝ ի բազմութիւն<sup>10</sup> զօրացն ապաստան եղեալ, և ի քաջութիւն<sup>10</sup> զօրացն յուսացեալ: Վաղվաղակի ի թիկուն հասանելին մնծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ծիոյ և բուռն կազմութեամբ Աղուանը, Լիինը և նիղայք, Կասաք և այլ ևս որ ի ամին կողմանց, զի զվլէժ արեանն Արտևանայ խնդրեսցն:

... Առեալ Խոսրովի գրագութիւն զօրացն իրոց, և որ ուստեղ ուստեղ եկեալ հասեալ էին ի թիկուն օգնականութեան նիզակակիցք գործոյն պատերազմի: Խսկ իրքն ետես թագաւորն Պարսից զայս ամբոխ բազմութեան<sup>11</sup> գըն-դի, զի մնծաւ ուժով զիմնալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ ել և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի: Բայց սակայն ոչ կարաց ունեն զվլէմ նորա, փախստեայ լիներ առաջի նոցա. զիետ մտեալ կոտորելին զամենայն զօրս Պարսից, և դաշխացն և ճանապարհացն ցիր զիարաւալ կացու-

ցանէին<sup>12</sup> և շարախտավար վատնէին<sup>13</sup> և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին: Եթ քագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յարութեամբ և քազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանս Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և քարի անուամբ և քազում աւարաւ:

Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, իրովարտակա առնել, յեօրն քագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կող դիցն պաշտաման: Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք, ոսկեղեն և արծաթեղեն զարդուք, ի վերջաւորս փողփողալս, նշանակապ պալարակապ մետաքսիքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօքս ցանկալիս ակամքը պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիր ազգին Արշակունեաց գիայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարեր: Նաև և հինգերորդ և ս հանէր<sup>14</sup> յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարզս քրմացն շնորհեր: Իսկ զօրացն որ գիրեան էին՝ ետ պարզս և արծակեաց յիշմէ:

Իսկ ի զալուստ ամին միւսոյ զօր քազում կուտէր յոյժ, գումարտակ առներ, զնոյն զօր կոչէր, և և քազում քան զնոյն ասպատակ սփոնեալ զկողմամբքն Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց ի թիկունս եկեալ էին. աւար առեալ գերկիրն ամենայշ՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր տեղիս: Եւ ամս մետասան ստէպ ստէպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից քազաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր:

### (Ազաթանգեղոս, էջ 11-19)

- <sup>1</sup> ընդ նախադիրն անդրոշ դերքայի հայցական հոլովի իետ ժամանակի իմաստով՝ երբ վերջացան. վերջանալիս Վաղու-վաղուց
- <sup>2</sup> ամրովկ գործոյն-գործի պարարու
- <sup>3</sup> ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան-շկարողացպ պատերազմի պատերեան երեցոց-ավարտված՝ կատարված դեպքերից
- <sup>4</sup> ոչ եհաս. այստեղ՝ չհաջողվեց

- <sup>7</sup> ասպատակ դնել-ասպատակն
- <sup>8</sup> համարել. այստեղ՝ ջանալ. ձգտել
- <sup>9</sup> միանգամայն. այստեղ՝ միաժամանակ
- <sup>10</sup> ի նախսիրդ հայցական հոլովի իետ վրա իմաստով
- <sup>11</sup> նոյնանիշ է ամբոխ քարին
- <sup>12</sup> ցիր դիաքաւալ կացուցանեին-դիակներ էին փոռում
- <sup>13</sup> շարախտավար վատնէին-դաժանորեն ցրիվ էին տալիս՝ կոտորում էին
- <sup>14</sup> հինգերորդ և ս հանէր-հինգերորդ մասն էլ քաժին էր հանում

### ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ

#### ՀՈԴԵՐ

§ 189. Գրաբարի հոդերն են՝ ս, դ, ն, որոնք գործածվում են ցուցական, դիմորշ, ստացական և որոշիչ իմաստներով:

1. Ցուցական իմաստով գործածվելիս արտահայտում են այս, այդ, այն դիմորշների նշանակությունը. օրինակ՝ Ընկեցէք զիս ի ծովկ (Յովի., Ա, 12)=Գեք ի ինձ այդ ծովի մեջ: Ես աւերակաց ո՞ւմ քազաւորեն (Խոր., 2-րդ, ԿԱ)=Ես այս ավերակների վրա ո՞ւմ (ինչպէ՞ս) քազավորեմ: Ես այս է պատճն հրովարտակին (Եղիշէ, էջ 71)=Եվ այս է այն գրության պատճեն:

2. Դիմորշ իմաստով գործածվելիս արտահայտում են ես, դու, մեք, դուք դիմորշների նշանակությունը. օրինակ՝ Եւ արդ երե ես լուացի զոսու ձեր, տերս և վարդապետս (Յովի., ԺԳ, 14)=Եվ արդ՝ եթե ես՝ տերս և վարդապետս, վացի ձեր ուղբերը: Չորմէ դուդ ասացեր (Երեմ., ԼԲ, 43)=Որի մասին դու իմքը ասացիր:

3. Ստացական իմաստով գործածվելիս այդ հոդերը արտահայտում են իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրեանց, նորա, նոցա դերանունների նշանակությունը, որոնց հետ էլ հաճախ գործածվում են. օրինակ՝ Եկին լցին զաշխարհս Հայոց (Բուզ., 5-րդ, ԾԵ)=Եկան լցվեցին (քառացի՝ լցրին) մեր Հայոց աշխարհը: Քաղցրացո՛ զամանութիւն սրտիդ (Եղիշէ, էջ 167)=Քաղցրացրու քո սրտի դառնությունը: Ի նարմինց քո բուսից փուշ և տատասկ (Բուզ., 6-րդ, Թ)=Քո մարմնի վրա բող բուսին փուշ և տատասկ: Զի որ լաւ որ եկեալ յաշխարհ մեռաներ, վասն յիշատակի քաջութեանն զապատկերն երանգօք ի նկարու հանէին (Եզմիկ, 3-րդ, Ե)=Որովհետև երբ աշխարհ եկած մի քաջ անձնավորություն մեռնում էր, նրա քաջության հիշատակի համար պատկերը ներկերով նկարում էին:

4. Որոշիչ իմաստով գործածվում է ն հոդը, որն ունի աշխարհաբարի նոյն նկամ ը հոդի նշանակությունը. օրինակ՝ Եկին ամենայն քայլեայքն և աստեղագլուքը (Բուզ., 4-րդ, ԾԴ)=Եկան բոլոր քավյաներն ու աստեղագլուշները: Եւ իբրև Եկին ի նաևմ, հանդարտեաց հոդմն (Մատթ., ԺԴ, 32)=Երբ մտան քամին դաղարեց: Քաջալերէր զընկերակիցսն իւր (Եղիշէ, էջ 177)=Քաջալերում էր իր զընկերակիցներին:

§ 190. Գրաբարում հոդերն ունեն գործածության հետև յալ ընդիանուր կանոնները:

1. Գրաբարում սովորաբար որոշիչ հոդ չեն ընդունում.

ա) Այն գոյական անունները, որոնք գործածվում են ընդիանուր, վերացական, ոչ կոնկրետ առումով, օրինակ՝ Որդի իմաստուն ուրախ առն գիայր, որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր (Առակ., Ժ, 1): Եւ զօծ յաղբանդամ, կամ զգական ինչ ծովածին կրչեն գիրք վիշապ (Եզմիկ., 1-ին, ԻԵ): Նոյնպէս և ի բան-

ջարս և ինչ՝ որ առանձինն սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ բժշկի պէսպէս ցաւց լինի (Եզնիկ, 1-ին, ԾԵ):

Ծանոթություն. Հաճախ հայցական հոլովով դրված և զ նախդիր ունեցող գոյական անունները գործածված են ընդհանուր, վերացական իմաստով որոնք այս դեպքում նույնպես որոշիչ հոդ չեն ստանում (տես բերված օրինակները):

բ) Բնության մեջ գոյություն ունեցող եզակի առարկաների անունները (լուսին, արեգակն, երկիր, երկին, աշխարհ, հիմսիս, հարաւ և այլն). օրինակ՝ Եւ լուսին, ասեն, ի ներքոյ է քան զարեգատկն (Եզնիկ, 3-րդ, Ա): Երկներ երկին, երկնէր երկիր, երկներ և ծովն ծիրանի (Խոր. 2-րդ, ԼԱ):

գ) Հատուկ անունները, մանավանդ, երբ ընդգծված, շեշտված չեն. օրինակ՝ Փախստական լինի Կաղմոս առ Հայկ (Խոր., 1-ին, ԾԱ): Ելանն հրաման ի Ծափոյ ամենայն գօրացն Պարսից երթալ ընդ Մեհրութանայ ի Հայս ի պատերազմ (Խոր., 3-րդ, ԼԷ): Առաքեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշտօնիցն իրոց (Գործ., ԺԹ, 22):

2. Եթե հատուկ անուն ունի նախարաս ածական կամ գոյական լրացամ, ապա Վերջինիս վրա դրվում է ն որոշիչ հողը, իսկ եթե հատուկ անունն է դրվում նախաղաս, թե՛ հատուկ անվան, թե՛ ածական կամ գոյական անդամների վրա սովորաբար հոդ չի դրվում. օրինակ՝ Մեծն Ներսէս-Ներսէս մեծ, քաջն Վարդան-Վարդան քաջ, գետն Երասիս-Երասիս գետ, արքային Արշակայ-Արշակայ արքայի և այլն: Սուրբն Յովսէփի հեզաբար սկսաւ խօսել ընդ դահճնի (Եղիշէ, էջ 146): Լուս զայս ամենայն թագաւորն Տրդատ (Ազ., ԾԻԳ, 860): Յառաջ մատեա Ղևոնդ երեց (Եղիշէ, էջ 162): Ակիզբն արքեալ յամացն Արշակայ արքայի որդույթ Տիրամայ, և կոռուք մինչև յամն վեցերորդ Արտաշի արքայի Հայոց, որդույթ Վոամշապեհոյ (Եղիշէ, էջ 6):

3. Եթե որոշյալը կամ հատկացայլը գեղշվում են, այսինքն՝ որոշիչն ու հատկացուցիչը գործածվում են իբրև փոխանուններ, վերջիններիս վրա դրվում են սովորաբար ն, երբեմն էլ ս, ո հոդերը. օրինակ՝ Զշարն եղծանէր և քարոյն տայր գրազաւորութիւնն (Եզնիկ, 2-րդ, Դ): Տո՛ր զկայսէրն կայսէր և զաստուծոյն աստուծոյ (Մատք., ԻԲ, 21): Որ առ զինճն, գործեաց նորօք և շահեցաւ այլ ևս իինք: Նոյնպէս և որ գերկուսն՝ շահեցաւ այլ ևս երկուս (Մատք., ԻԵ, 16-17): Արդ աւասիկ քոյդ ցրեզ (Մատք., ԻԵ, 25): Եւ նա շյացելոյն և շննելոյն անուն դնէր (Եզնիկ, 2-րդ, Գ): Եթե չիցէ ինձ իշխանութիւն յինսս առնել զինչ և կամին (Մատք., Ի, 15):

4. Երկրորդական նախադասությունները գլխավորին կապող որ, ինչպէս և որ ինչ, որ ոք, որպէս, ուր, զի, յորժամ հարաբերականներին հաջորդող բառների վրա սովորաբար դրվում է ս, ո, և հոդերից մեկը: Այս դեպքում ս, ո, և հոդերը նշանակում են. ս-ն ես, սա, այս և նրանց հոգնակինները, դ-ն դու, դա, այդ և նրանց հոգնակինները, մ-ն նա, այն և նրանց հոգնակինները, որոնք աշխարհաբար կարող են չքարզմանվել. օրինակներ՝ Քաղցրութեամբ լուր զրա ասելոց եմք (Եղիշէ, էջ 45)=Քաղցրությամբ լսիր, ինչ որ (մենք) ասելու ենք:

Զոր ինչ խնդրեցերս՝ ե՛րք տուեալ լիցի քեզ (Բուզ., 5-րդ, Է): Եր ժամանակ՝ յոր-ժամ հիւլի չէր ի միջի (Եզնիկ, 1-ին, Ը):

5. Եթե ետակա որոշչն արտահայտված է այս, այդ, այն ցուցական դե-րանուններով, նախադաս որոշյալի վրա դրվում են համապատասխան ս, ո, և եղերը (մաճրամասնությունները տես ցուցական դերանունների բաժնում):

6. Գրաբարում հատկացուցիչ և հատկացյալի կապակցության մեջ հոդը, ի տարբերություն աշխարհաբարի, դրվում է հատկացուցիչ վրա, իսկ եթե հատկացուցիչը հատուկ անուն է՝ հատկացյալի վրա. օրինակ՝ Եկաց ի վերայ ցուց գետոյն (Ազ., ԾԸԸ, 833): Գուծկան հասաներ ի կողմանցն Զուշանաց (Եղիշէ, էջ 49):

Ծանոթություն. Եթե հատկացուցիչն արտահայտվում է ստացական և ցու-ցական դերանուններով, հոդը սովորաբար դրվում է հատկացյալի վրա. օրի-նակ՝ Ձէ որ յորդոցն իմոց վաղ առ իս հասցէ զնա թագաւոր արարից (Եզնիկ, 2-րդ, Դ): Մեծամեծ չարիս հասուցին ի վերայ գօրացն ծերոց (Եղիշէ, էջ 164): Եթե բարկացեալ տէրն նորա (Մատք., ԾԸ, 34):

7. Որոշչի և որոշյալի կապակցության մեջ հոդը դրվում է որոշյալի վրա, իսկ եթե որոշյալը հատուկ անուն է՝ որոշչի վրա. օրինակ՝ Ի նոյն ջուրս պիլծ ննիքն ընդ սովոր ծկունամ սենանիցին (Եզնիկ, 2-րդ, ԾԱ): Չապականների մար-մին գէշաքարշ արարեալ (Եղիշէ, էջ 8): Եւ երթիցեն նորա ի տանջանսմ յա-փունական (Մատք., ԻԵ, 46): Վիշապազունք գրազան զմանուկն Արտա-ազը (Խոր., 2-րդ, ԿԱ):

8. Գրաբարում հաճախ հոդերը ոճական նկատառումներով, իբրև ավե-լարություն, կարող են կրկնվել. օրինակ՝ Կամ որպէս երեցն Մրջինիկն մա-լարան դերով զնա... սպանանէր (Բուզ., 4-րդ, ԾԵ): Ի կապելոց երիցանց զրու մեր այսօր ի բաց տանիմք (Փարպ., 2-րդ, ԾԳ):

**Վարժություն 159. Թարգմանել, բացատրել, թե ընդգծված հոդերը ինչ ի-մաստով են գործածված (ցուցական, դիմորոշ, ստացական, որոշչի):**

Խիստ են խնդրուածքն, զրո խնդրեցերդ: Խելամուտ լեր բանիցս զրո խօ-սեացյ ընդ քեզ: Արծակեա՛ զժողովուրդա, զի երթիցեն... զնեսցեն իւրեանց կերակուրս: Խզուցնեին անրի զանձս ի բերդէն: Եւ ընդէ՞ր լինիցի քաղաքդ ա-ներակ: Արծակէ զծեզ ի կապանացդ յորում էրդ: Սա՞ է որդին ձեր, զրու դուք ասեիք, եթե կոյր ծնաւ: Յանձն առ, ասեն, զիրաման թագաւորիդ: Դառնային յաշխարիս մեր: Մեր պատրաստ ենք ի մեռանել վասմ քո սիրոյդ: Որպէս կար-ծնաւ՝ ասա ինձ: Արա զրո ասեմքս քեզ: Եթե ոչ արծակէք զդա ի բանտէլ, այ-լինք զքաղաքս զամենայն: Կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առատս եմ: Հայր, տուր ինձ բաժին, որ անկանի յրնչիցդ: Հատո՞ ինձ զրո պարտիսդ:

**Վարժություն 160. Թարգմանել, բացատրել, թե նախադասության ո՛ր ամ-դամի կամ բառի վրա են դրված ընդգծված հոդերը և ինչ կանոնի համաձայն:**

**Բախեաց գրուրս սենեկիմ:** Լոեաց ծայն յորդորեցուցիշ: Եկն նահապետն Վարդան առ Արշակ: Ոչ զիտեմ զիկինդ գորմ ասեսդ: Երեց Ղևոնդ իրաման առեալ ի սուրբ ընկերացն: Բացին գրուն քաղաքին: Դստերը՝ դստերը իմ են: Զինձ է, որ եղև նոյն ինքն որ լինելոցն է: Զկամուրջն Արտաշատու զտի աւերեալ: Ողբա՛ հանդերծ մարգարեւութեամբ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս նմք: Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփի և Ղևոնդ երեց: Երբ դու ընդ արսդ ընդ այդոսիկ: Շուրջ զնովաւ հարքն ծերք քնակեալ էին: Ոչ է հնար մեզ գերծանել ի չարէս յայսման: Որ եղև նիսկ երկիցս, որպէս ասեն, առ Թէոդոսի կայսերը: Գոն նշանագիրը հայերէն լեզուոյ:

**Վարժություն 161. Թարգմանել, ընդգծված հատկացուցիչ-հատկացյափ և որոշիչ-որոշյալի կապակցությունները գործածել ն հոդով՝ գրաբարի հոդառության կանոններին համապատասխան:**

Արծակեաց զԱրշակ ի կապանաց երկարեաց: Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեամ Արտաշիսի: Ոչ ևս ուստեղով ի պատուիրեալ ծառոյ: Բազումք և քաջ զիւտ լինէին փախուցելոյ Տիրիքայ: Մնացելոց զօրաց հրաման տայր: Ետ ածել գերանելի Գայիհանէ: Կոտորէին զամենայն զօրս Պարսից: Ի ներք մտեալ բոլոր զօրք: Եր ի կատարել ամաց քառասնից երև եցաւ նոնա յանապատի: Ի կիրծս ճաճապարհաց արգելին զնոսա: Անկաւ զպարանցաւ նորա և համբուրեաց զնա: Երկեայ, զնացի և թաքուցի զքանքար քո յերկրի: Ոչ արծակէ զեզ իր... և տանի տայ զուր:

## ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ (Հատուած)

Առն, զոր ի նախակարգ քանիս<sup>1</sup> նշանակեմք, վասն որոյ և փոյք արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական զաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն<sup>3</sup> Արշակունեաց քաջաւորաց Հայոց Սեծաց, կացեալ յարքունական դիաւնին, լինել սպասաւոր արքայատոր հրամանացն առ հազարապետութեամբն<sup>4</sup> աշխարհիս Հայոց՝ Առանայ ուրումն: Տեղեկացնալ և հմուտ եղեալ աշխարհիկական կարգաց, ցանկալի եղեալ զինուրական արուեստին իրոց զօրականացն: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածնելն գրոց, որով առ ժամայն լրսաւրեալ և թևամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկաներ զիշխանաց սպասաւորութիւնսն:

... Առեալ այնուիետու երանելոյն զիաւատացեալս իր, դիմեալ իշաներ

յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիսած և աստուածասէր, որում անուն էր Ծաբիք. և ասպանջական իիրամեծար զտեալ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշկերտաց հաւատոցն Քրիստոսի: Խսկ երանելոյն վաղվաղսկի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն<sup>5</sup> հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիաւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդրին Քրիստոսի մատուցաներ:

... Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դեզերէր, յարուցեալ այնուիետու հասանէր առ սուրբ կարուղիկոսն Հայոց Սեծաց, որոյ անուն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ...:

Ապա ելանէր նոցա պարզն ական<sup>6</sup> յամենաքարին աստուծոյ ժողովել զաշխարհանոց խորհուրդն երանելի միարանելոցն, և ի գիտ նշանագրաց Հայատան ազգին հասանել:

• Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին խրեանց քագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վոամշապուի:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորույց եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն զտեալ նշանագիրս աղփարետաց հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայտ վասն գտելոյն ի Դանիէլ, յօժարեցին զարքայ՝ փոյք առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վակիրի անուն հրովարտակօր առ այր մի երեց, որոյ անուն Հարէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորույց եպիսկոպոսի:

Խսկ Հարէլին զայն լրտեալ, փութանակի հասանէր<sup>7</sup> առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի քագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Խսկ արքայն հանդերձ միարան սրբովն Սահակաւ և Մաշտոցի ընկալեալ զնշանագիրսն ի Հարէլն, որախ լինէին:

Ապա առեալ երանելի հոգարարծուացն զյանկարծագիրտ խնդրելին, հայցին ևս յարքայտ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարքացն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև<sup>8</sup> ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իր. և նովին նշանագրովք տանէր:

(Կորին, 36-44)

<sup>1</sup> ի նախակարգ քանիս-մեր խոսքի պարուս, առաջարանում

<sup>5</sup> զաւետարանական արուեստն ի մէջ առեալ ձեռն արկանէր զգաւառովն-ավետա-

<sup>2</sup> այսուղի և հաջորդ նախադասություններում  
անցյալ զերպար հաճախ գործածված է  
դժմավոր բայի նշանակությամբ՝ վարժեալ-  
կորվել էր, եկան հասեալ-եկել, հասել էր  
<sup>3</sup> այսուղի արքունիք, պալատ  
<sup>4</sup> առ նախադիրը գործիական հոլովի հետ  
ժամանակի իմաստով՝ հազարապետու-  
թյան օրոք, ժամանակ

բանական արվեստը բանեցելով՝ սկսեց՝  
(քարոզել) գավառում  
<sup>6</sup> ելաներ նոցա պարզն ական-  
պարզն վեց նյանց  
<sup>7</sup> այսուղի և հաջորդ նախադասություններում  
անցյալ անկատարը գործածված է  
անցյալ կատարյալի իմաստով  
<sup>8</sup> այսուղի մոտավորապես, մոտ

## ՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԾ

§ 191. Ինչպես արդի հայերենում, այնպես էլ զրաբարում հարաբերական դերանունները նոյն հարցական դերանուններն են առանց հարցականի: Դրանցից իր շարահյուսական կիրառություններով առանձնանում է որ հարաբերական դերանունը:

Որ հարաբերականը երկրորդական նախադասությունը կապում է զիշա-  
վորին: Այս դեպքում զիշավոր նախադասությունը կարող է ունենալ կամ չու-  
նենալ համապատասխան հարաբերյալ:

1. Երբ զիշավոր նախադասությունը ունենում է հարաբերյալ, որ հարաբե-  
րականը թվով համաձայնում է նրան, բայց դրվում է երկրորդական նախա-  
դասության մտքի պահանջած հոլովով. օրինակ՝ Բերեհն ածուխ, որով խա-  
թին զաշսն Տիրանայ (Բուգ., 3-րդ, 1): Չի ցուցցէ քէ էր ոմն՝ դրում նա վաս  
որդոյն յաշտ առնէր (Եզնիկ, 2-րդ, Ե):

Ծանոթություն. Հոգնակի ուղարկան և հայցական հոլովներով դրված հա-  
րաբերյաներին որ հարաբերականը թվով կարող է համաձայնել կամ չհամա-  
ձայնեն. օրինակ՝ Ես արք պարսիկը, որք փախուցեալ էին վասն քրիստոնեու-  
թեան... կալաւ և ետ ի ծեռ նորա (Եղիշէ, էջ 7): Մահապարտ են այնորիկ՝ որ  
իշխեն խօսել չարութիւն զՄուշեղ (Բուգ., 5-րդ, 2): Զքարսմունսն զոր ի ծեռին  
ունէր, ցորդին իր ցմրմիզդ են (Եզնիկ, 2-րդ, Ե):

2. Եթե զիշավոր նախադասության հարաբերյաները արտահայտվում են  
նա, այն դերանուններով, հաճախ զեղչում են: Այս դեպքում որ հարաբերա-  
կանը նշանակում է մա որ, այն որ կամ ով որ, ինչ որ, որը որ, որ մեկը որ, այն  
ինչ որ. օրինակ՝ Եւ մատուցեալ որ զիմնզ քանքարն առ (Մատք., ԽԵ, 20)=Մո-  
տեցավ նա, որ իննզ քանքար էր վերցրել: Որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛  
դարձուցաներ գերես (Մատք., Ե, 42)=Ով որ կամենում է...:

3. Երբ զիշավոր նախադասության հարաբերյալը բացակայում է, որ հա-  
րաբերականը երբեմն դրվում է ոչ թէ երկրորդական, այլ զիշավոր նախադա-  
սության մտքի պահանջած հոլովով, այսինքն՝ այն հոլովով, որով պիտի դրվեր  
բացակայող հարաբերյալը. օրինակ՝ Որում խնդրէ ի քէն՝ տուր (Մատք., Ե,  
42) փիս. այն որ խնդրէ՝ տուր: Որոց մտանեն՛ չտայք բոյլ մտանել (Մատք.,  
ԽԳ, 13) փիս. այնոցիկ, որք մտանեն:

Վարժություն 162. Թարգմանել, բացատրել, թէ ո՞ր հարաբերականը ինչ-  
պէս է համաձայննել զիշավոր նախադասության հարաբերյալին և ինչ հոլո-  
վով է դրված:

Եկին, հասին ի գեւլ մի, որում անուն Դալարիս կոչէին: Ոչ բողցես զայնո-  
սկի որ խնդրեն զքեզ: Եւ կանեփուկն թուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է: Փը-  
կեա զիս յայնցանէ՝ որ պաշարեցին զիս: Տայ նոցա գեւլս և դաստակերտս  
ընտիրս և յարմարս՝ յայնոցիկ ժառանգութեն, որք ի բաժնոյն Պարսից մնա-  
ցին: Լուան նախարարն Հայոց, այնք՝ որք ունեին զիշանորիքին ի գաւառս  
բաժնին Պարսից: Նա և արջ օրիասականք ընդ վախճանել շնչոցն հզօրա-  
բաժնին կրուին. յորոց և իմաստունը տեղի տուեալ փախչին: Ետ հրաման ժո-  
ղովել զամենայն զօրս իր և զմեծամեծս իր և զփորունս և զամենայն մարդիկ  
աշխարհին իրոյ՝ որ ինըն իշխեր: Չիք տեղի թաքելոյ այնոցիկ՝ որ գործեն  
զամօրենորիքին: Եւ զգեցուցեն զպատմուման առն այնմիկ զոր արքայն սի-  
րտ: Շէին ի միջի լուսաւորքն, որք զիսի աւուրց և ամսոց... կարգէին: Եւ առեալ  
զպարմունսն զոր ի ծեռին իրուս ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզոյ:

Վարժություն 163. Թարգմանել, վերականգնել զիշավոր նախադասության  
գեղված այն կամ ևս հարաբերյալը՝ դմելով ո՞ր հարաբերականի հոլովով, իսկ  
վերջինս՝ երկրորդական նախադասության մտքի պահանջած հոլովով:

Ի զիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ: Փրկեան զորս ի մահ տանին: Որ  
սիրտ զիրատը՝ սիրէ զիմաստորիքին, և որ տատեայ զանդիմանորիքին՝ անմիտ է:  
Առաջի տիկնոցն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինեին որք էին ի  
տաճարին: Դուք երկիր պազաներ որում ոչն զիտէք: Զիա՞րդ կարիցեն նզովել  
զպատմանայ, որք զկամս նորա կատարեն: Վա՞յ որ ասիցէ ցհայր իր՝ թէ ըն-  
դէ՞ր ծնար զիս: Որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկի, այլ և  
յոր մեծն է քան զամենայն: Փրկեան զմեզ ի ծեռաց որ չարչարենս զմեզ: Զոր  
տեսին աչք քո՝ խօսեաց: Եւ եկեսցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ:  
Երևել որոց ի խաւարի... նստէին:

## ՎԱՐՁ ՄԱՀՏՈՒՅԻ (Հատուած)

... Իսկ իբրև ի վերայ հասեալ<sup>1</sup>, թէ չեն բաւական նշանազիրքն՝ ողջ ածել  
զիմաստության զկամս հայերեն լեզույն, մանաւանդ զի և նշանազիրքն իսկ յայ-  
լոց դպրութեանց թաղեալը և յարուցեալը դիպեցան, յետ այնորիկ դարձեալ  
կրկին անզամ ի նոյն հոգս դառնային, և նմին եւս խնդրէին ժամանակս ինչ:

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշտոցի դաս մի մանկուոյ հրամանաւ ար-

քայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալը ի միմեանց համբուրի սրբութեան՝ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի<sup>2</sup> ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդին Ամիո անուն: Ընդդէմ լիներ սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Քարիլաս անուն և երկրորդին Ակալիոս. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքաց պատահեալ, և քաղում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգարածութեամբ...:

Խսկ աշակերտասէր վարդապետին գտարեալսն ընդ իր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր (ի քաղաքին Եղեսացոց), և զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամոսատական քաղաքն գումարէր:

Եւ նորա իրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զահօրս և զտրնութիւնս և զպարատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զիոզ զաշխարահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեցես, յանժամ կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարզէ էր խսկ վիճակ յամենաշնորհողէն աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջոկն իրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անունեալ և կարգեալ, յօրինէր սիլորբայիք կապօք:

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ օգնականօք իրովք իջաներ ի քաղաքն Սամոսատացոց, յորում մեծապատի խսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լիներ:

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ<sup>4</sup> ոմն հելլենական դպրութեան Հռովիանս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարծն և զերկայնն, զառանձինն և զկրկնատըն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իրովք. որոց առաջնոյն Յովիան անուն կոչէին, յԵկեղեց զաւոտէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանեն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոնոնի, որ ի սկզբանն իսկ ժամօրս իմաստութեանն ընծայեցուցանէ լինեն, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբան հանճարոյ»: Որ և զրեցաւ ծեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկումս գրիչս նմին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր քուրքս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալմ եղն<sup>5</sup>, առաջի արկեալ<sup>6</sup> նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում խսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս աստուծոյ, և ի միհրարութիւն աշակեր-

տեղոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալը այնուիետու և առեալ քութքս աւետազիրս, հանդերձ շնորհատուր պարզէնօքն և ամենայն իրայիւքն, ի շնորհաց աստուծոյ ճանապարհորդ լիներ<sup>7</sup>. զօքն անօք անցեալ աջողութեամբ և հոգիլց ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան զաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին<sup>9</sup>, ի վեցերորդ ամի Վամշապիոյ արքային Հայոց Մեծաց:

... Եւ արդ եկեալ յիշենին մերձ ի քազաւրական քաղաքն, ազդ լիներ քագուրին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ՝ աւագանույն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն զափամբ<sup>10</sup> նահ գետոյն: Եւ զօնակայի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք նծութեան և երգօք հոգենորօք և բարձրագոյն օրինութեամբք ի քաղաքն յանային, և զաւորս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

(Կորին, էջ 46-54)

<sup>2</sup> ի վերայ հասանել. այստեղ՝ հասկանալ, իմանալ

<sup>3</sup> Արամ անունով կոչվում էր Ասորիք

<sup>4</sup> առաջի եղեալ-սկսեց

<sup>5</sup> յարց նախընկալմ եղն -որոնցից

<sup>6</sup> սկզբան ընդունվել էր

<sup>7</sup> առաջի արկանել. այստեղ՝ ներկայացնել

<sup>8</sup> ճանապարհորդ լինել-ճանապարհ ընկնել

<sup>9</sup> անցանել զօքն անօք-օքն աններ անցնել, այսինքն՝ շատ օրերի ճամփա անցնել

<sup>10</sup> նկատի ունի Վաղարշապատ քաղաքը, որն այն ժամանակ Հ-ի մայրաքաղաքն էր զ նախդիրը գործիական հոլովի հետ տեղի իմաստով՝ Ռահ (Երասխ)

գետի ափին

## ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ

### ՆԱԽԴԻՐՆԵՐ

§ 192. Գ-րաբարի նախդիրներն են՝ առ, զ, ի(յ), ընդ, ըստ, ց:

Նախդիրները գործածվում են տարբեր հոլովների հետ, բացի ուղղականցից՝ արտահայտելով քազմազան իմաստներ:

Եթէ նախդիր կրող բառն ունի նախադաս կամ ետադաս լրացում կամ լրացաներ, ապա նախդիրը տովորաբար դրվիս է նախադաս անդամից առաջ, ինչ-պես նաև կարող է կրկնվել նախադաս և ետադաս լրացումների վրա. օրինակ՝ Ծրջի ընդ անջրդին տեղիս (Մատք., ԺԲ, 43): Առ ամենայն ազգս տերութեան ինայ (Եղիշէ, էջ 9): Չարամահ սպանաներին զամենայն ի բերդս (Բուգ., 4-րդ, ԾԹ): Եղն սով սաստիկ յաշխարհին յայնմիկ (Ղուկ., ԺԵ, 14):

§ 193. Առ նախողիրը գործածվում է հայցական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ:

1. Առ նախողիրը հայցական հոլովի հետ արտահայտում է.

ա) Դեպի, մոտ իմաստները. այս դեպքում նախողիր կրող բառը ցույց է տալիս այն անձը, որին ուղղված է գործողությունը (ուղևորման հայցական) կամ այն տեղը, առարկան, որտեղ կամ որի մոտ կատարվում է գործողությունը. օրինակ՝ Առաքեաց առ նա (=նրա մոտ) բազում զանձիր (Եղիշէ, էջ 7): Ո՞վ են դու, որ կոչես զիս առ արքայ (Ա Թագ., ԻՉ, 14)=արքայի մոտ: Են մինչ դեռ մանուկն էր՝ սնանձեր առ ծննդան (Թոռն., Բ, էջ 395)=ծննդմերի մոտ: Իջին բանակեցան առ ափին (=ափին) գետոյն (Ազ., Ե, 48): Նի՞ստ առ իս (=ինձ մոտ) և մի երկնշիր (Ա Թագ., ԻԲ, 23):

բ) Վերաբերություն, որ բարգմանվում է աշխարհաբար վերաբերմամբ, նկատմամբ, մասին, համեմատությամբ բառներով. օրինակ՝ Երկայնամիտ էր առ իս (=իմ վերաբերմամբ, նկատմամբ), և զամենայն հատուցից թեզ (Մատք., ԺԸ, 26): Առ մե՞զ (=մեր մասին) ասացեր զառակդ զայդ՝ երեւ առ ամեննեսեան (Ղուկ., ԺԲ, 41): Խսկ երեւ առ մարմնաւրս (=մարմնավոր բաների վերաբերմամբ) այսպէս, որչափ ևս առաւել առ հոգն որն (Եղիշէ, էջ 15):

գ) Առանձին կամ ի նախողիր հետ դրվելով անորոշ դերբայի կամ այլ բառի հայցական հոլովի վրա, արտահայտում է նպատակ և պատճառ, որոնք բարգմանվում են համար, նպատակով, պատճառով բառերով, կամ ուղղակի նախորակոր բառի բացառական հոլովով. օրինակ՝ Եւ քարշեալ ի բաց ընկեցին զմարմինս նոցա՝ առ ի կեր լինել (=կեր դառնալու համար) շանց քաղաքին (Ազ., ԺԸ, 201): Առ սէր (=սիր համար) այնը յուսոյ՝ զոր տեսանեմք (Եղիշէ, էջ 46): Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն (Կոր., ԺԴ)-ուսուցանելու նպատակով (սովորեցնելու համար): Եւ առ մղձկել սրտին (=սրտնեղությունից, սրտնեղության պատճառով) չգիտէր թե յո՞ բափէր գրոյնս դառնութեանն (Եղիշէ, էջ 142):

դ) Տրական հոլովի իմաստ (նախողիր տրական). օրինակ՝ Բայց Արգար յօժարեցա գրել բուղը առ Տիբերիոս կայսր (Խոր., 2-րդ, ԼԳ)-կայսրին: Աղաղակեր առ նա (=նրան) այր մի (Բուզ., 6-րդ, Թ): Վասն որոյ և պատզամ յղեցին առ մարզպան (=մարզպանին) աշխարհին (Եղիշէ, էջ 132):

ե) Յուրաքանչյուր, ամեն մի իմաստը. օրինակ՝ Տալ յիսուն սիկդ առ այր (ՆՀԲ)=յուրաքանչյուր մարդու: Երկուս զարինս տարևորս առ օր (ՆՀԲ)=օրը:

զ) Ունիմ բայց համարելու իմաստով որպես ստորոգյալ գործածվելիս ընդունում է կրկնակի հայցական, որոնցից մեկն ունենում է առ նախողիր և միշտ դրվում հոգնակի թվով. աշխարհաբար կարելի է բարգմանել «համարել» կամ «մի բամի տեղ դնել» նշանակությամբ՝ օրինակ՝ Զանձինս առ իմաստուն, կամ արդարս ունեին (ՆՀԲ)=իրենց իմաստուն կամ արդար էին համարում (ի-

րենց իմաստունի կամ արդարի տեղ էին դնում): Զան առ աստուածս ունին (Եղնիկ, 2-րդ, Գ)=Նրան աստված են համարում:

է) Կազմում է մի շարք ոճեր՝ առ ոտն կլիխել «ոտնատակ անել» կոխուտել», առ ոտն հարկանել «ոտնահարել», բանի տեղ չդնել», առ ոչինչ համարել «քանի տեղ չդնել», առ հասարակ, առ երես և այլն:

2. Առ նախողիրը տրական հոլովի հետ նշանակում է.

ա) Պատճառ, որն աշխարհաբար բարգմանվում է պատճառով կամ նախորակոր բառի բացառական հոլովով. օրինակ՝ Առ տգիտութեան (=տգիտության պատճառով կամ տգիտությունից) մոլորեալ են (Եղիշէ, էջ 144): Դուք առ ծերում անմտութեան (Բուզ., 3-րդ, ԺԴ)=Դուք ծեր անմտության պատճառով, անմտությունից: Այսպես էլ՝ առ նախանձու=նախանձից, առ ափի=ափից, առ վշտի=վշտից և այլն:

բ) Մի առարկայի մոտ գտնվելը, լինելը. օրինակ՝ Ընկեցին զնա ի գույք առ դրան (=դրան մոտ) քաղաքին (Յեսու., Ը, 29): Զցայց և զցերեկ կային առ նման (Ազ., Ծ, 722)=նրա մոտ:

3. Առ նախողիրն առանձին կամ ի նախողիր հետ դրվելով բացառական հոլովի վրա՝ արտահայտում է.

.ա) Նպատակ. բարգմանվում է համար, նպատակով բառերով. օրինակ՝ Եւ Զրուանն առ ի ջրելոյ (=չջրժելու համար) զուխտմ՝ ասէ ցԱրկմնն (Եղնիկ, 2-րդ, Ա): Զի՞նչ գեղեցկագոյն քան զսիրամարգ՝ զոր առ ի ցուցանելոյ (=ցույց տալու նպատակով) զգեղեցկագործութիւնն արար (Եղնիկ, 2-րդ, Ը):

բ) Պատճառ. օրինակ՝ Առ ի չգոյէ (=բացակայության պատճառով) հիւրոյ երկրին (Մատք., ԺԳ, 5): Առ ի չգոյէ (=չլինելու պատճառով) մարդկան և առ ի չգոյէ բնակչաց և առ ի չգոյէ անասնոց (Երեմ., ԼԳ, 10):

գ) Սուտ իմաստը. օրինակ՝ Խնդրեացես զիմաստութիւն առ ի չարացն (=չարեցի մոտ) և ոչ զոցես (Առակ., ԺԴ, 6):

դ) Միայն բացառականի իմաստ. օրինակ՝ Եւ լիցի փախստական առ ի ձեզ (Յակով., Դ, 7)=Ճեզանից: Զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ (=աստծու կողմից) ամենայն քան (Ղուկ., Ա, 37):

4. Գործիական հոլովի հետ ցույց է տալիս.

ա) Տեղ, մի բանի մոտ լինելը, մոտակոր տեղը, մոտերքը, մոտով. օրինակ՝ Հասանէ առ սահմանօքն (=սահմանների մոտ) Խաղուեաց (Խոր., 2-րդ, Դ): Երեւեն սոյն Յոհան անցաներ առ այգեօր (=այգիների մոտով) ուրումն (Բուզ., 6-րդ, Թ): Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեղերբն (Մարկ., Դ, 1)=ծովափին:

բ) Ժամանակ. օրինակ՝ Առ Սերութաւ (=Սերութի օրոք) եղև, ասեն, սկիզբն եթքանոսութեան (Եղնիկ, 2-րդ, ԺԵ): Առ ջրիեղեղաւ=ջրիեղեղի ժամանակ, առ մերօք=մեր օրոք և այլն:

զ) Համեմատություն. օրինակ՝ Զի՞նչ է յարդ առ ցորենաւ (Երեմ., ԻԳ, 28): Հարդն ի՞նչ է ցորենի համեմատությամբ:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

(Հատուած)

**Վարժություն 164. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ինչ նշանակությամբ է զործածված առ նախդիրը:**

Արքաներ զնոսա առ ցաման ի գեհեն: Կոչեաց զնոսա ի ներքս և առ իր ազոյց: Թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ մարդաբետն Դղակ: Ո ոք յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա բազաւոր արարից: Կարդա առ իս, և տաց թեզ պատասխանի: Եւ նորա աչք կալեալ էին առ ի շճանաշելոյ զնա: Որպէս և տեսեալ էր իր առ հնօրն բազաւորօքն: Եւ եղն ի սերմանեն, ոնն անկաւ առ ճանապարհաւ: Առ ի պատերազմել ընդ խուժադրութ ազգն ընդ այնոսիկ: Եւ մի՛ յուղեսից ցատուն քո առ արարածն քո: Զանզի զիտէին ամեներեան, եթէ ոչ առ առաստորեան տայ, այլ առ երկիւղի վատնէ: Դարձոյց զարծարն առ քահանայապետսն: Եկ շրջնցուք ընդ երկիրդ առ ամենայն աղբերբ ջրոց և առ հեղեղատօք: Գրեաց Դափիր հրովարտակ առ Յովաք: Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութին սիրոյն: Առ ահին աղակեցին: Հանին բաղեցին առ առն իրում: Դիպեցան միմեանց առ ափն ծովուն թգնունեաց: Եւ ետու առ նոսա զրութք բազաւորին: Եւ չկայր և ս ոք ան առ նմա: Ծչէին առ գերեզմանօք մեռլոցն: Անցանէի ես առ մեհենի միով:

**Վարժություն 165. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով առ նախդրով և հայցական հոլովով (թարգմանելիս կապերը վերանում են):**

Ուղարկեցին երկու մարդ նրա մոտ: Քո սիրո համար արեցի: Եվ նրանք եկան նրանց զորագլուխների, իշխանների և հազարապետների մոտ: Հանդիպեցին (դիպեցան) միմյանց Տղմուտ գետի ափիմ: Երկու պահապաններ կային խորանի դրսերի մոտ: Հրովարտակ գրեց իր երկրի բոլոր նախարարներին, իշխաններին և մեծամեծներին: Սի առակ ասաց նրանց մասին: Այդ օրը նրանք մեզ մոտ գիշերեցին (ազան): Սաստիկ ցավերից ճշում էր: Նրանք զնացին հրապարակ՝ տաճելու և սպանելու համար գերիներին:

**Վարժություն 166. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով առ նախդրով և համապատասխան հոլովներով (տրական, բացառական, գործիական):**

Այդ բոլորն արեց մարդկանց նկատմամբ իր բարերարությունը ցույց տալու նպատակով: Տուն է շինում գետի եզերքին: Տրդատի օրոր քրիստոնեությունը տարածեց Հայաստանում: Ամորից շիկնում էր: Սա նրա համեմատությամբ փոքր է: Թաղեցին նրան եկեղեցու մոտ: Երկյուղից գիշերը վախավ քաղաքից: Փակեցին իրենց ականջները՝ ծշմարտությունը շլսելու համար: Նախանձից մատնեցին նրան:

Եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեաց միջամխել<sup>1</sup> ի Հայոց տեղին, այլ դադարեալ ի գաւառին որ կոչէր Հեր, ի գեուն որում անուն էր Նուարսակ, առաքեաց նա պատգամատոր առ Մամիկոնեանն Վահան զՇապին խորիրդեան դպիր և զՄիկր-Վշնասա ճուարշացի, որով տայր գիտել նա զիրս զալոյն իւրոյ ի Հայոց, և թէ «Հրովարտակ ունին առ ծեզ ի բազաւորնեւ Վաղարշու՝ նուածել զծեզ խաղաղութեամբ, և յամենայն աւագորերոյ՝ որ յԱրիս են՝ պատգամ ունին առ ծեզ արդ՝ արիր եկայք և լուարուք. և որպէս է ծեզ հածոյ և խորիրիք՝ ընտրեցէք որ բարին է»:

Եւ տեսեալ Վահանայ Մամիկոնեի զպատգամատորսն Նիխորոյ, և լուեալ զայս ամենայն բանս պատգամին ի նոցանէն՝ ժողովէր առ ինքն զամենայն հաւատարիմ ուխտապահացն գունդ, զնախարարս և զպատս և զամենայն այրեծիոյ. և հրամայէր Մամիկոնեանն Վահան եկեղեցն ի Նիխորոյ՝ ասել ապագի ամենեցուն զբան բազաւորին Վաղարշու և զբան ամենայն Արեաց աւագանույն: Եւ տուեալ լսել Մամիկոնենին Վահանայ ամենայն Հայորեայ՝ միահամուռ զպատգամն Նիխորոյ՝ ասէր ցպատգամատորսն Պարսից՝ առ վաղին առնել նոցա պատասխանի:

Եւ ժողովէալ ի վաղին ամենայն Հայորեայոյն առ Մամիկոնեանն Վահան, և խորիեալ նախ ընդ միմեանս զվարնչոց զպէսու և զինովիր իրացն, եկեալ և պատգամատորացն Նիխորոյ յատեանն սկսաւ խօսել Մամիկոնեանն և առնել պատասխանի բանիցն Նիխորոյ. «Եւ մեր ապստամբութեան իրացն, և յայսպիսի կարևոր և մահաբեր գործ տալ զանձինս՝ բազում են բանը և կարևոր և լինար զրով վճարել և կամ պատգամաւ, բայց եթէ յանշինան խօսել ընդ նմա՝ որ Արեաց տէրն է և ընդ ծեզ՝ որ դրանն աւագանի էք: Բայց եթիս բանս ասեմ ծեզ, որ թէ այս երից բանիցս պատասխանի առնել ինձ, որպէս եւ կամիմ և ամեներեան սորա որ աստէն իսկ են, և կարէ զայս երիս խնդիրս տալ մեզ զրով և կնքով բազաւորին՝ զամենայն զրո ինչ ասէք, զպատենի և զարժանն՝ առնեմք, և բանի ծերոյ լսեմք՝ որպէս և նախնիքն մեր լուան: Զանզի ոչ իմ բանքս, զրո խօսիմս ես ընդ ծեզ այժմս, այլ նոցա ամենեցուն, աւագի և կրտսերոյ, որ այժմ ծերի առաջի են. և ոչ եթէ այսօր ինչ խորիեալ կամ իմացեալ է մեր զբան զայս, այլ յաւուր, յորում տուար զանձինս ի մահ՝ նախ զայս երիս ընտրութիւնս խորիեալ եղաք այր ամենայն առաջի: Եթէ յանձն առցեն Պարսիկը բողացուցանել մեզ զայս երիս ծառայեսցուք նոցա որպէս ըզբիկ և զհաւատարիմ ծառայս. և եթէ ոչ համանին յանձն առնուլ, և խստանամ՝ ելցուք ըստ աշխարհ և կորիցուք և խնդրութեամբ մեռցուք, այլ Պարսիկ առն երկիր ոչ պազցուք:

«Եւ է մին յերիցն՝ նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի..եթ զիայրենի և գրնիկ օրէնս մեր ի մեզ բողոք, և զշայ այր զոր մի՛ մոզ ոչ առնեք, և ուստեղ յաղագ մոզութեան զահ և պատի շտայք, և զկրակարան յաշխար. եւս Հայոց ի բաց տանիք, և գեկենեցոյ թշնաման յաղտեղի և յանպիտան մարդկան, որ ցայժմ լիներ, յայսմ հետէ մեզ շտայք տեսանել. և քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնեութեան համարձակութեամբ և աներկիղ տայք պաշտել՝ որ և կամին. ապա բարի է, և առաջին խնդիրն մեր այր է:

«Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար<sup>6</sup> ճանաչեք, պյլ իրաւար գիտել զլաւն և զվատքարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, ի-ֆանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւն և պատուականն՝ զքաջն և զօտակարն, արհամարեկ և առ ոչինչ համարեկ զվատն և զանպիտանն. սիրել զվաստակաւորսն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստուն և խորհուրդն առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակ ևս հալածել: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի՝ ամենայն իր Արեաց աշխարհին աջող լինի և անսխալ. ապա եթէ զընդդեմն սիրեք, որպէս և ցայժմ, և ոչ զդյան և գործքն այլպէս ընդդեմ լինին, որպէս և եղեն իսկ, և տեսէք:

«Եւ երրորդ խնդիրն մեր այս է. որ տէրն է Արեաց և աշխարհի թագաւոր կամիմք, զի ինքն տեսցէ իրովք աչօք, և ինքն լուիցէ իրովք ականջօք, և ինքն գիտասցէ և ինքն խօսեսցի իրով թերանով. և մի՛ այլոյ աչօք տեսցէ և այլոյ լուիցէ և այլով հանապազ գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և այլոյ թերանով խօսեսցի զպէտսն: Յաղագ որոյ շինի ուղիղ հայեցուածն, և ոչ արդար լսողութիւնն. այլ յոլով սուտ խօսքն ճանաշին և հրամանքն ընդունայնք, և բնաւ այլ ընդ այլոյ լինի իմաստն ամենայն: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի՝ կործանեալ ամենայն վաստակք՝ ծառայիքն կորնչին, և ոչ կար կալ աշխարհ և ի նմա բնակեալք անշարժ և հաստատուն: Բայց թագաւոր, որ իրովք առողջ աչօքն հայի և ամենախանձ լսողութեամբ լսէ և արդար թանի խօսի ընդ իր ծառայս՝ կենանացեալ ծառայքն՝ շագին վաստակով, այլ յաւելեալ ի վաստակն՝ օր քան զօր անցուցանել զանան զբարին: Այսպէս աշխարհ շինի, և տէրն շքեղացեալ պայծառանայ հանապազ:

«Արդ՝ եթէ զայդ այլպէս կարեք խոստանաւ, զխոստացեալսն զրով և կրծքով հաստատեալ տայք ցմեզ՝ ապա կոչեա՝, և զամք կամաւ և լսեմք բամից ծերոց, և հրամանի թագաւորին հաւանիմք զոր ինչ ասէ: Ապա եթէ զայս երիս խնդիրն ոչ կարեք տալ մեզ, և զիտէք թէ չէ հնար՝ որպէս երեալ մեզ մահ առաջի՝ պատրաստ եմք մեռանել, այլ ծառայութիւն առնել Արեաց տեառն չկարեմք: Եւ այլ բանք, որ ինչ են, թէ ինձ լինի զալ՝ ինձէն իսկ խօսիմ ընդ նմա, ապա թէ ոչ լինի դէպ զալ՝ մնասց բանն և իրքն»:

(Ղազար Փարպեցի, դրուագ գ, 2Ձ)

- <sup>1</sup> պրամիսել-խոր ներս մտնել, խորանալ
- <sup>2</sup> առազրեար-ազնվականներ,
- <sup>3</sup> իշխանավորներ
- <sup>4</sup> առարեար-հայ ազնվականներ
- <sup>5</sup> կամ իշխանավորներ
- <sup>6</sup> այստեղ՝ արտահայտել
- <sup>7</sup> ամրոց նախադասությունը պետք է

թարգմանել այսպես. մեմք, որ տվել ենք  
մեզ ապստամբության և այսպիսի  
կարևոր ու մահարեք գործի, կարևոր  
խոսքեր ունենք ասելու  
այստեղ՝ արտահայտել  
այստեղ՝ ազատորեն, քմահած կերպով

## ԴԱՍ ԵՐԵՍՈՒՑՑՈԹԵՐՈՐԴ

### Զ

§ 194. Զ նախողիրը գործածվում է հայցական, տրական, բացառական և գործիական հոլովների հետ:

1. ա) Հայցական հոլովով դրված բառը, երբ գործածվում է որոշյալ առունվ, սովորաբար ստանում է զ նախողիր: Այս դեպքում հայցական հոլովը, բացի զ նախողիրից, կարող է ստանալ նաև և հոդ. օրինակ՝ Ի սկզբանն արար Աստած գերկին և գերկիլ (Ծննդ., Ա, 1)=երկինքն ու երկիրը: Զմիջնաբերդն (=միջնաբերդը) ամրացուցաներ բարձր պարսպօք (Խոր., 2-րդ, Լթ):

բ) Հայցական հոլովի հետ զ նախողիրը կարող է արտահայտել գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Չի՞ գործես. զմահ (=մահով) աղուեսու սպանից զրեզ (Բուգ., 4-րդ, ԾԴ): Եւ զրէր նամակ առ Մամիկոնեանն Վահան օրինակ զայս (Փարպ., 3-րդ, Ն)=այս ծևով:

2. Զ նախողիրը տրական հոլովի հետ զ գործածվում է միայն հարկանել զարկանել բայերի մոտ. օրինակ՝ Յետս յետս չոզան և զարկան զգետմի (Յովի., ԺԸ, 6)=զարկվեցին զետնին: Ծափ զծափի հարին (=ծափ տվին) ամենայն անցատըր ճանապարհ (Ողբ Երեմ., Բ, 15): Չափի հարաւ (=վախտեցավ) Աղեքսանդրոս. ընթացաւ եկն առ զատաւորն (Թոռն., Բ, էջ 111):

3. ա) Բացառական հոլովի հետ զ նախողիրը կազմում է «պատմական հոլով», որն աշխարհաբար թարգմանվում է սեռական հոլովով և մասին կապով կամ միայն բացառական հոլովով: Այս դեպքում բացառականի ի նախողիրն ընկնում է: Զ նախորով և բացառական հոլովով խնդիրն են պահանջում ասելու, խսելու, պատմելու, մտածելու իմաստ և զգացական վիճակ արտահայտող բայերը ասել խօսել (իմ), պատմել, հարցանել, վկայել, գիտել, ուսացանել, զարմանալ, գոհանաւ, տրտնջել և այլն. օրինակ՝ Ահաւապիկ է այրն զրմէ (=որի մասին) ասացի թեզ (Ա Թազ., Թ, 17): Խշնամիք շարախսուին ըգնանէ (Խոր., 2-րդ, Իթ)=նրա մասին: Զկիտացն ասեմ և զդելփինաց (Եզնիկ, 1ին, ԻԵ)=կտերի և դելփինների մասին եմ ասում: Դու գիտես զի սուտ վկայն զինէն (Դան., ԺԳ, 43)=իմ մասին: Ուսուցան զբարոյ և զարդարոյ և զա-

թ (Եզնիկ, 4-րդ, Ա)=Սովորեցնում է բարու, արդարի և չարի մասին: Եթ ես գոլ էի զվաստակոց քոց (Ազ., Ե, 51)=Եվ ես գոլ էի քո ծառայություններից:

բ) Բոնելու, կապելու կամ կախելու իմաստ արտահայտող մի քանի բայեր՝ ուժիմ (բոնելու իմաստով), առնուկ (բոնելու իմաստով), բուռն հարկանել, կախել, կապել, նույնպես պահանջում են զ նախդրով և բացառական հոլովիլ անողակի խնդիր, որն աշխարհաբար թարգմանվում է բացառական կամ հայցական հոլովներով. օրինակ՝ Եհաս և բուռն եհար զժեկղէ (Թուոն., Բ, Է, Էջ 105)=Թեկղին: Կապեսցէ զգրաստ իր զորոյ (Ազ., ԼԺ, 376)=որից: Բուռն եհար զձործոց (=շորերից) նորա (Ծննդ., ԼԺ, 19): Կախեցին զմանուկն Գրիգորիս զագույ (=պոչից) զձիոյն (Բուզ., Յ-րդ, Զ):

զ) Մի քանի բայերի մոտ (հատկապես՝ առաքել, յղել, արձակել, գնալ, երթալ և այլն) զ նախդիրն արտահայտում է նպատակի զարդարակար. օրինակ՝ Ապա թագաւորն Պարսից... տաճիկ ուղտուր արձակէ ի Հայս արս զիողոյ և ըզդրոյ (Բուզ., 4-րդ, ԾԴ)=հորի և ջրի: Եթ ընդ սակաւ ատուրս եկին բերին զայն ինչ, զորմէ (=ինչի համար) յղեացն (Բուզ., 4-րդ, ԾԴ):

4. Գործիական հոլովի հետ զ նախդիրը կազմում է «պարառական հոլով» և ցույց է տալիս.

ա) Տեղ՝ շուրջ կամ վրա իմաստներով: Այս դեպքում զ նախդիր առաջ հաճախ դրվում է շուրջ կապը: Աշխարհաբար թարգմանվում է շուրջ կապով կամ (=բերդի շուրջ) ամիսք երերտասան (Բուզ., 4-րդ, ԾԵ): Պատահելին երանելու զափամբ (=ափին) Ռահ գետոյն (Կոր., Թ): Եթող զիր զբանակն զՍատաղ քաղաքան (Բուզ., Յ-րդ, ԻԱ)=քաղաքի շուրջը: Եթ առեալ զջուրն եարկ զգիսով (=զլիսին) նորա (Բուզ., 6-րդ, Ը): Չիանդերծս իրեանց տարածանելին զճանապարհան (Նուկ., ԺԹ, 36)=ճանապարհի վրա:

բ) Սոտավոր ժամանակ. օրինակ՝ Եթ եկալ գերրորդ ժամու՝ (=ժամը երեքի մոտերը) ետես այլս զի կային դատարկը ի հրապարակս (Սատր., Ի, 3): Զայցու ժամանակա (=այն ժամանակները կամ այն ժամանակ) ապստամբեաց յարցայէն Հայոց... մեծ իշխանն Աղճնեաց (Բուզ., Յ-րդ, Ժ):

զ) Մի շարք բայեր ընդունում են զ նախդրով և գործիական հոլովով անուղղակի խնդիր, որն աշխարհաբար թարգմանվում է տարբեր հոլովներով: Այլ բայերից են՝ անցանել, եկանել, դիմաղել(իմ), ծաղր առնել, այսն առնել, կատակել, արհամարել, հայել(իմ), զգուշանալ և այլն: Օրինակներ՝ Բայց յորժամ դու զայդ խնդրեցներ, անցեալ լիցիս զօրինօր Արեաց թագաւորութեանս (Բուզ., Տ-րդ, Ե): Բայց երբ դու այդ խնդրեցիր, քոյ այդ բացառություն լինի Արյաց թագավորության օրենքից: Եթ երկորեան անցեալ էին զայցուն կատակեան էլ իրեանց օրերն անցկացրել էին (ծերացել էին): Ծաղր առնէ գերիկարաւ և զիեծելով նորա (Յովք., ԼԺ, 18): Ծաղրում է ծիուն և նորա հեծնողին: Այլ մեք ոչ կարենք անցանել զիրամանաւ մերոյ թագաւորին (Եղիշէ, Էջ 171): Խոկ մենք չենք կարող մեր թագավորի հրամանից:

դրյու գալ (հրամանից անցնել, հրամանը չկատարել): Ակսան իբրև արբեալը անզգայք զմիմեամբք ելանել ի բանից պատասխանիս (Եղիշէ, Էջ 161): Հարբար ու անզգայացած մարդու նման սկսեցին միմյանց գերազանցել պատասխաններ տալու մեջ: Զգուշանայր զահիմանօքն Հայոց (Բուզ., Տ-րդ, ԼՂ): Զգուշանայր պահպանում էր Հայաստանի սահմանները: Այլք զալեօր դիզանելին (ՆՀԲ)=Ալիբները դիզկում էին ալիքների վրա: Որ կատակէ զարդարանք բարկացուցան զարարիչ նորա (Առակ., ԺԵ, 5): Ով ծաղրի աղքատին, կրակացնի նրա արարչին: Այսն առնելին զնովաւ և հարկանէին (ՆՀԲ): Նրան ծաղրում էին և ծեծում:

յ) Գործիական հոլովի հետ զ նախդիրը կազմում է մի շարք ոճեր՝ զմտա ածել «մտածել», զարով երթալ «սրից ընկնել, սրով սպանվել», զմիմեամբք ելանել «միմյանցից առաջ անցնել, իրար անցնել», զճեոր (զճեուամբ, զբումբ) ածել, «ծեռքը զցել, ծեռք բերել» և այլն:

**Վարժություն 167. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ինչ նշանակությամբ է գործածված զ նախդիրը:**

Զամանէ երգիշքն Գորթան առասպելաբանեն: Արկին հոդ զգիսովք իրեանց: Նա և մեր զահի հարեալ ենք և յոյժ երկնչիմք: Տես քանի ամրաստանն զքեն: Հրամայեաց կախել զնա զլիկվայր զմիոյ ոստանեն: Եթ շուրջ զգեթեզմանաւն լինէին կամաւոր մահունք: Զայսու ժամանակաւ միարանեալ Ալանք լեռնականօքն ամենայնի... մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: Ահս պակուցանողս տարագորդ յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին: Եթ արկին զնովաւ քղամիդ կարմիր: Աբրահամ և Սառա ծերացեալը էին և անցեալը զաւորքք: Վերանան բարձրանան զուրք նորա, և ոչ անցանել կարեն զահմանաւ: Այսուետու ես ծիծաղեցայց զկորստեամբք ծերով: Յայն ժամանակի կոչէր առ ինքն Շապուի արքայն Պարսից զբազարն Հայոց զԱրշակ: Յարեաւ թագաւորն, առ զգօրս իր և ել հայել զբազարաւ: Եթ զիազար ամ յաշտ արար զի թերևս ս որդի մի լինիցի նմա, որում անուն նրմիզոյ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցտ: Բուռն արկ զճեուանէն և համբուրէր ընդ պատուհանն: Զահի հարեալ կազմեր զտապանն ի փրկութիւն տան իրոյ: Երթիջիք զճանապարհն ծեր:

**Վարժություն 168. Թարգմանել զրաբար՝ ընդգծված բառերը դմելով զ նախդրով և համապատասխան հոլովներով:**

Զգիտեմ, թե ինչ են խոսում նրա մասին: Հրամայում է նախարարների կանանց կախել երբոյի պարիսպմերից: Այս ժամանակ արքան շինեց մի դաստա-

**Կերտ:** Բոնեց նրա աջ ձեռքից և բարձրացրեց նրան: Սաստիկ ցավերից զարկում է գլուխը քարին: Հավատում էր, որ իրեն որդի կծնվի, որը կստեղծի երկինքն ու երկիրը և բոլոր արարածներին: Որի մասին խսկույն պատմեցին արքունիքում: Ժամը տասներեքի մոտերը արեգակն սկսեց խավարել: Ծինեց քաղաք և նրա շուրջ տնելոց ծաղկանոցներ ու բուրաստաններ: Վերցնում էր ջուր և լցնում իր մարմնի վրա: Գլխիվայր կախեցին նրան բարձր աշտարակից: Եթե մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա խոսքերի վրա: Հանեց հոների գորքերին և ասպատակեց Պարսից կողմերը: Այս ժողով ազատվեցին:

Ժաղկանոց-Ժաղկոց  
լցնել-արկանել

Ասպատակել-Ասպատակափել  
ազատվել-ապրել(իմ)

## ՎԱՄ ՍՈՎԱՐՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ (Հատուած)

... Ասացից վասն անհնարին նեղութեանցն որ եկին հասին նոցա ի տովի անգ: ... Տորեան յայտնապէս բնաւ ոչ ուրեք երևէ էր, զի վազվագելով ընթանային և մտանեին ի տունս և ի մառանս, և խիլ արկանէին և յուգէին<sup>1</sup>. և թէ ինչ առ ումեր գտանէին՝ յափշտակէին. և թէ ոչ գտանէին, որք վասն սովոյն բագուցեալ էին՝ անհնարին տանջանօք չարչարէին զնոսա: Բազումք ի ծածոկ զատացուածս իրեանց փոխանակէին ընդ կապծի միոյ ցորենոյ, եթէ մեծատունը էին և եթէ աղքատը ընդ զարոյ, և բազուցանէին զանձինս ի ներքնատունս իրեանց: Եւ կէսք ի նոցանէ ի բազում կարօտութենէ զցորեանն ուտէին՝ իբրու<sup>2</sup> չեր աղացեալ և էին որ եփէիմ՝ որպէս և հարկ օրինին հրամայէր:...: Եւ յանդստին<sup>3</sup> ի կրակէ անտի յափշտակէին և ուտէին զկերակուրն, և արտասուաց արժանի էր տեսիլ նորին, և որ միանգամ զօրագոյնք էին քան զընկերս իրեանց յափշտակէին զնա, և որ հիանդութքն էին լային և կային: Բայց քան զամենայն վիշտս և նեղութիւնս անցեալ անցանէր նեղութիւն սովուն. զի իրք որ յայլում վայրի ամօրոյ պատկառանաց արժանի են, ի մէջ նորա<sup>4</sup> անարգեալ արհամարհէին: Զի կանայր յարանց իրեանց, և մանկունք ի հարց իրեանց, և կորանք քան զամենայն<sup>5</sup> մարք ի բերանոյ տղայոց իրեանց յափշտակէին զկերակուրն: Յամենայն տեղիս իսկ հասեալ ժամանէին խոռվիշը. զի յորժամ տեսանէին ուրեք դրւոս փակեալ՝ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ գուցէ ի ներքս, և երթային և խորտակէին զդուրսն, արտաքուստ ի ներքս անկանէին, և հասանէին ունեին զկոկորդս նոցա և հանէին զկերակուրն: ... Հատուալ յոյս կենաց նոցա. և նս սաստկանայր սովն յամենայն

տունս. յամենայն ազգս տարածանէր, և լիզաջինջ առնէր<sup>6</sup> զամենայն ժողովորդն: Եւ տանեստան<sup>7</sup> լի էին կանամքը և մանկուով որ լուծեալ անկեալ դրէին, և հրապարակք՝ ծերոցն դիակամքը. իսկ երիտասարդը և կուսանք դանդաշէին<sup>8</sup> իբրև զատուեր, և իբրև պատկերը ի հրապարակս շրջէին և անկամ գլորէին. և ճար ուրեք միոյ ի նոցան ոչ լինէր ի չարչարանաց, զի բաղել խկ ոչ կարէին զայրելիս իրեանց: Յայս ամենայն անհնարին նեղութիւնս ուրք և լալիք ոչ կային, զի սովն սաստկացեալ զամենայն վիշտս չարչարանաց նոռացուցանէր, և ցամաք աչօք հայէին ընդ այնոսիկ՝ որք զառաջէին զնոսա ի մահ: Խոր լուգիւն պատեալ էր զքաղաքաւան և գիշեր լի մահուամք. և քան զայս ամենայն<sup>9</sup> ատազակքն զշարէին<sup>10</sup>, զի կողոպտէին զդիակունս մեռնցն ի տունս իրեանց, և փորձէին զուրս սուսերի իրեանց ի մարմինս նոցա, և յայնոսիկ՝ որ դեռ ևս ոգուվն կային<sup>11</sup>: Ի հասարակաց գանծուէ անտի բաղել հրամայէին զմնոնալսն, վասն զի ոչ համբերէին չար հոտոյն: Իսկ իբրև բաղել ոչ եղեն բաւական, ի պարապէ անտի ի ծոր անդր ընկենուին զնոսա:

(Եւսերիոս Կեսարացի. Վե՛ս Թոռն., Բ, էջ 552-554)

1 Իսկ արկանէին և յուգէին-փնտրում  
էին, որոնում էին

2 իբրաւ մինչ, մինչդեռ, նախքան

3 այստեղ՝ իսկույն

4 հավանաբար՝ նոցա

5 կորանք քան զամենայն-և ամենից

ավելի ամորակին այն է

6 լիզաջինջ առնել-լափել, ջնջել

7 տանեստան-տանիքներ

8 այստեղ՝ երերայ, տարութերպել

9 և քան զայս ամենայն-այս ամենից բացի

10 զարեկ(իմ)-չարանալ, չարիք գործել

11 ոգուվն կային-կենդանի էին

## ԴԱՍ ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ

Ի(Յ)

§ 195. Ի նախդիրը գործածվում է հայցական, տրական և բացառական հոլովերի հետ:

1. ա) Ի նախդիրը հոգնակի հայցականի, ինչպես նաև սեռական-տրականում ո, ա հոլովիներ ունեցող արտաքին թերման բառերի եզակի հայցականի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ (մանրամասնություններ տես համապատասխան հոլովումների բաժնում). օրինակ՝ Պատուաներ նաև ի տան և ի հրապարակու (Խոր., 1-ին, էջ 93)=տանը և հրապարակներում: Անտա ժողովորդն և բազմացաւ յեզիպու (Գործ., Է, 17)=Եզիպուսում: Շինելով եկեղեցիս... ի քաղաքս, յաւանս, ի շենս, ի գեօնս և յագարակս (Ազ., ՇԺԹ, 837):

բ) Ի նախդրով հայցականը ցույց է տալիս այն տեղը, առարկան, դեպի ով կամ դեպի որը ուղղվում է գործողությունը (ուղևորման հայցական): Օրինակ՝ Առաքեա՞լու դեպահանս յերկիրն Հայոց (Բուզ., 4-րդ, ԾԴ)=Հայոց երկիրը: Յարեա գնաց ի տուն իր (Բ Թագ., ԺԵ, 23)=իր տուն: Էջ յաղբեւրն (=աղբյուր) և ելից զափորն իր (Ծննդ., ԻԴ, 16): Աճապարհին հասանել ի բանակն (=բանակը) Երուանդայ (Խոր., 2-րդ, ԽԶ):

զ) Արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական): Այս իմաստով խնդիր են պահանջում մի շարք բայեր՝ հաւատայ, յուսայ, նախանձել, հայել(իմ), խնայել, մատնել, տալ, գրալ և այլն: Օրինակ՝ Ես հաւատացի ի նա (=նրան) և ի հայրն (=հորը) նորա (Խոր., 2-րդ, ԼԳ): Ի հինգերորդ ամի բազաւորութեան նորա ի նա (=նրան) հասուցաներ (Կոր., Զ): Ես նստաւ Փառեն յարոռ (=աքոռին) հայրապետական սակաւ ժամանակս (Բուզ., 3-րդ, ԾԶ): Ի կայսր և ի օրու նորա յուսացեալ (Բուզ., 3-րդ, Ի)=Հոյս զնելով կայսրի և նրա զորքի վրա:

դ) Արտահայտում է գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Ես երդուու Շապրա արքայն յարեզակս և ի ջոր և ի կուակ (Բուզ., 4-րդ, ԾԶ)=Շապուի արքան երդուու է արքակով, ջրով և կրակով: Բազումք գայցեն յանուն (=անունով) իմ և ասիցն թէ ես նմ (Ղուկ., ԻԱ, 8): Երդուու ինձ յօրենս (=կրոնով) քո (Բուզ., 4-րդ, ԾԶ):

ե) Անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ցույց է տալիս ժամանակ. օրինակ՝ Խսկ ի գնալն Սմբատայ (=երբ Սմբատը գնում է) ի Պարսս հասանեն հարկահանք կայսեր (Խոր., 2-րդ, ԽԸ): Խսկ ի լինել մարտիհն (=կովի ժամանակ) հարկահն զօրն Արայի (Խոր., 1-ին, ԺԵ): Ես ի քախել (=քախելիս) զգուրս տանն, մատեա աղախին մի, ունկն դմէր (Գործ., ԺԲ, 13):

զ) Անորոշ դերբայի և իմաստով գործողության հետ կապված այլ բառերի հայցական հոլովի հետ ցույց է տալիս նպատակ. օրինակ՝ Պատրաստ եմք ի սպանանել (Եղիշէ, էջ 73)=Պատրաստ ենք սպանվելու և մեռնելու: Որպէս օրէն էր զայր բազաւը ի հաց մեծ կոչել (Բուզ., 5-րդ, ԼԲ)=մեծ 210

հացերույթի կանչել: Եւ գնաց ժողովուրդն յուտել և յըմպել (Նէեմ., Ը, 12)=ուտելու և խմելու:

է) Արտահայտում է մի բան մի այլ բանի դարձնելու, վերածելու, փոխելու խնաս. օրինակ՝ Զջուրն ի գինի դարձոյց (Ազ., Ծ, 453)=Զուրը գինի դարձրեց: Եւ հորն ի ջոր դարձաւ (Ազ., ԿԷ, 544)=Կրակը ջրի վերածեց (կամ ջոր դարձավ): Զմատեանս և վէպս ի յոյն լեզու փոխարկեաց (Խոր., 1-ին, Բ)=Մատյաններն ու պատմությունները հունարենի փոխեց (քարզմանեց հունարեն):

2. Եզակի տրականի հետ ի նախդիրն արտահայտում է.

ա) Ներգոյական հոլովի իմաստ (տես համապատասխան հոլովումների բաժնում). օրինակ՝ Մեռանի և Արայ ի պատերազմին (=պատերազմում) ի մանկանց Շամիրամայ (Խոր., 1-ին, ԺԵ): Եւ եզիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղուցն (Բուզ., 4-րդ, ԺԵ)=մոտակա տեղում:

բ) Վրա իմաստը. օրինակ՝ Արդ նիստ և գրեա՝ ի տախտակի (Եսայի, Լ, Ց)=տախտակի վրա: Մի ոտնս ի միոյ լերին (=մի լեռան վրա) կայր, և մեւս ունան իմ ի միոյ լերին (=մի այլ լեռան վրա) կայր (Բուզ., 4-րդ, ԾԴ):

գ) Ցույց է տալիս ժամանակ՝ տվորաքար ժամանակի իմաստ ունեցող բանի մոտ. օրինակ՝ Ծնեալ Որմզդի ի ժամու հիրում (Եզնիկ, 2-րդ, Ա)=իր ժամն: Յայն ժամանակի (=այն ժամանակ) իշխանք և զօրք և նախարար առ նա հասանեին վաղվաղակի (Ազ., Դ, 41): Ի հովուութեան (=հովուության ժամանակ) նորա բազում խաղաղութիւն լիներ աշխարհին (Բուզ., 4-րդ, Դ):

3. Ի նախդիրը կազմում է բացառական հոլովը (տես «Հոլովների կազմությունը» բաժինը):

**Վարժություն 169. Թարզմանել, բացառել, թե որ հոլովի հետ և ինչ նշանակությամբ է գործածված իյը նախդիրը:**

Մուտ ի սենեակ քո: Եւ առցես զսրուակդ իսոյ, և արկցես ի գլուխ նորա: Փուրայր հասանել ի տեղի պատերազմին: Եւ յիշանել արեգական ի հարապարողն կոյս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք: Եւ ահա երկուր ի նոցան երային ի նմին աւուր ի գեղ մի: Զորս սպան ի կենդանութեան հիրում: Եւ ի տալ զրաբսունս չսասաց տս՝ թէ դու ինձ յաշտ առնիցես: Եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարուական ի ծի հեծեաւ: Զարին թուի՞ ի սպիտակ արին դարձուցան, և զմազ սեաւ ի սպիտակ մազ շրջէ: Եւ որ երդուաւ ի տաճարն երդու ի նա և ի բնակիչն նորա: Ի մնձարան ինչ զնա կոչշցէ բազաւորն: Ապս ենուոր բազմեցաւ յուտել և յըմպել: Ենտ մահուանն Արգարու բաժանի բազաւորութիւնն Հայոց յերկուս: Յիմաստուրիխն քո մի՛ հպարտանայր: Խսկ բազաւորն Պատապ համարէր ի միտս իր թէ ի պատի ի ինչ նորա զայն առնիցեն: Որ հաւատայ յիս՝ հաւատայ յայն, որ առաքեացն գիս: Սնուցին զնա, և ի չափ հաւացին: Հայեցարու ի ծեզ վասն արանց այսոցիկ զինչ արժան իցէ գործել: Ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Ի նաւ մտեալ զնային ի թրակայ: Եւ ի մտանելն նորա յերուսաղէմ, դրդեցաւ քաղաքն ամենայն:

**Վարժություն 170. Թարգմանել գրաբար՝ ընդգծված բառերը դնելով ի նախորդ և հայցական հոլովով:**

Գաղթեց Հունատանի կողմերը: Կուտքերի անունով էին երդվում: Կապեց նրան կապանքներով և տարավ Բաբելոն: Նրան նստեցրին ձիու վրա: Ենք էին նրան տեսմելու և լսելու նրա պատմությունները: Քո քշնամիներին պարտության կմատնի: Չէին կարողանում նայել արեգակի ճառագայթներին: Բորբոքված կրակի վրա փայտ էր ավելացնում: Չխնայեցիր քո սիրենի որդում: Ասում են՝ Արիմնը Որմիզդին հրավիրեց ճաշի: Օտար քշնամիների ճռորդ ծեզ կդատի: Այդ բոլոր մատյանները թարգմանեց ասորի լեզվով: Նրանց սուզը ուրախություն կդարձնեմ: Գետն անցմելիս նրանցից շատերը խեղմեցին: Եթր նա վախճանվեց, թագավորեց նրա որդին:

ավելացնել-յաւելով  
հրավիրել-կոչել

թարգմանել-կոխել, փոխարկել, յեղու  
խեղովել-հեղծնով

### ՆԿԱՐԱԳԻՐ ԾՈՎՈՒ (Հատուած)

Բարի և գեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայց<sup>1</sup> յալեաց և ի մրրկաց. ի պարզ և յստակ ժամանակի, յորժամ միտ եղեալ նայիցիս ընդ ծիծառել ջուրց նորա, որ յազգի ազգի գոյնս ցուցանեն զերկին երկին նարօտուց<sup>2</sup>, մերք ծիրանայ, մերք կապուտակի, մերք սև աներկ երանցաց. և յորժամ քաղցրաշունչ սողոս վէտս վէտս զմկանունս ճօճեալ ճեմնցուցանիցէ. յորժամ ոչ բռնութեամբ օդոյ յանդգնութեան<sup>3</sup> ծիկեալ կոծիցէ զերկիր՝ զիր յորացի, այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով զիրկս արկեալ պատեալ կայցէ զամաքան<sup>4</sup>: Առաջին գեղեցկորին ծովու այս է, զի նա է ակն մեծ խոնաւութեան ջուրցն քազմութեան<sup>5</sup>, և յաներսոյր յանդունը են զնացը իրոյ յորդութեան<sup>6</sup> որպէս յայտ առնեն փորուածք երկի և ցնցղածն երակը՝ որ են ի միջի նորա: Զի ջուրը ծովու փորեն ծակուտեն զերկիր, որ և զնան ի նմա մանուածապատ շրջանօքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչև քամին պարզին աղի ճաշակքն<sup>7</sup> և դառնութիւնը, և ապա բըրին ի ներքոյ ի վեր քաղցը և անուշ ճաշակօր, և առնին<sup>8</sup> ըմպելի ուրախարար ամենայնի՝ որ գերան յերկի:

Դարձեալ և ջերմկաց տեղիք նկատեալ են յերկի, և ի բազում ջերմութենէ՝ որ մթերեալ կայ ի սիրտ երկի, եռան ելանեն իբրև ջեռուցեալ հրատիւք, վասն բազմութեան ջերմութեան հրատիւն՝ որ իբրև հնոց բորբոքի՝ եռացուցան զնոսա: Եւ ի կղզին բազումս գտանին ըստ նմին օրինակի, և անորէն զերք ծովուն ընդ բազում տեղիս գտանին ջերմուկք: Եւ շուրջ զգեստովքն որ զնան ի ցամաքի՝ ջուրը ջերմկաց բղինեն խառնին ի ջուրսն ցրտաբուլիս. և 212

այսպէս յամենայն տեղիս զնոյն գտանես: Եւ պատճառք ճառիս այս են, զի ցուցից՝ թէ ամենն ին յամենայն տեղիս փորեալ ծակուտեալ է երկիր ի ջուրց ներքին անհնդրոց, որ զնոյն ծակուտեն և ի նմին զնան և ի միջի նորուն շրջին:

Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով..., վասն երազընթացն զնացից ջուրցն անդրոց, որ պայմանաւոր<sup>9</sup> չափով բաժանին բաշխին ընդ ամենայն կողմանաս, լինել հանգիստ ամենայնի: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական և հիւրամեծար է գետոց բազմաց, որ յամենայն տեղեաց մտանեն ի նա: Առնու ամփոփէ զամեննսին, և ինքն կայ ի նոյն սակի և ի նոյն սահմանի առանց բերութեան<sup>10</sup> և յաւելուածութեան: Բարի և գեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ակն գիտաւոր ջուրցն օրոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յանոնց ընդ աղօսու<sup>11</sup> և նորոյ ջերմութեամբքն քաղցրացուցանել զգուրսն քաղցրացուցի տապովն, որ ծգին ելանեն ի բարձունս վերինն: Եւ առնուն ջերմութիւն ի տապոյ արեգականն, և ապա դառնան հովանեօք ամպոց՝ որ զնոյն ընդունին ի շնչել հոռոնց ամպավարաց<sup>12</sup>... Եւ ապա գան հասանն ջուրքն, լինին յանձրես ս հրամանաւ Արարշին, թանան գերկիր և արբուցանեն զնա:

... Բարուր և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի. զի պնդէ ամբացուցն զկղզիսն՝ որ ի միջի նորա են, և պահին առանց վնասու՝ և առանց նենգութեան կերակրին ի նմանէ իբրև ի ցամաքի, և առնին<sup>13</sup> ի նմա գեղեցիկ օրուանք տեղուցէ ի տեղի, և ի հանգիստ այնոցիկ<sup>14</sup> որը շրջին ի նմա: Բարի է և գեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի, քանզի նովին ընտրին<sup>15</sup> և սահմանին աշխարիք ի միմեանց: Եւ է դարձեալ ճանապարհ յատակեալ<sup>16</sup> ի շահ վաճառականաց, և ամենայն կերպարանօք լցուցիչ է կարօտութեան մարդկան: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառսն ազգի ազգիս. դարձանին և կերպարիչ է աղքատաց, զի գտանեն ի պատճառու նորա զպէտս կարօտութեան կենաց իրեանց: Եւ ես զի՞ն իցեմ, տկար մի տառապեալ կալ<sup>17</sup> ճշգրտի պատմեն զմեծապայծառ գեղ վայելչութեան ծովու:

**(Բարսեղ Կեսարացի, գրես Ձ-ոռն., Բ, էջ 26-29)**

<sup>1</sup> հանդարտացեալ կայցէ-հանդարտկուս է

<sup>2</sup> երփն երփն նարօտուց-զույնզգույն

նարուտերի

<sup>3</sup> կերպարանը բանձրացականի փոխարեն

<sup>4</sup> զիրկս արկեալ պատեալ կայցէ

ցամաքան-գրկում-պատում է ցամաքը

<sup>5</sup> այստեղ՝ համ

<sup>6</sup> առնին-դառնում են, լինում են

<sup>7</sup> հրատ-բոցավառ կրակ

<sup>8</sup> պայմանաւոր-հավասար, չափավոր

<sup>9</sup> առանց բերութեան-առանց

պակասեելու՝ նվազելու

<sup>10</sup> աղօտ-մեղմ

<sup>11</sup> ամպավառ-ամպերը յորոց

<sup>12</sup> առնին. այստեղ՝ շինվում են

<sup>13</sup> ի հանգիստ այնոցիկ-նրանց

հանգստի համար

<sup>14</sup> ընտրին-բաժանվում են

<sup>15</sup> այստեղ՝ հարք

<sup>16</sup> ի պատճառու-շնորհիկ, միջոցով

<sup>17</sup> ավելացնություն է

## ԴԱՍ ԵՐԵՄՈՒՆԻՍՆԵՐՈՒԴ

### ԸՆԴ

**§ 196. Ընդ նախողիքը գործածվում է հայցական, սեռական, տրական, բացառական և զործիական հոլովների հետ:**

1. Հայցական հոլովի հետ արտահայտում է.

ա) **Հետ, հետ միասին իմաստները** (հատկապես հոգնակի հայցականի հետ). օրինակ՝ Աւար բազում ածին ընդ իրենան (Բ, Թագ., Գ, 22)=իրենց հետ: Գամբ ընդ քեզ (=քեզ հետ միասին) յաշխարհն քո (Թոռն., Բ, էջ 518): Վաճառականը ձեր խառնեն ջուր ընդ զինի (Եսայի, Ա, 22)=զինու հետ:

բ) Ցույց է տալիս գործողության ուղղությունը դեպի մի տեղ (ուղղության հայցական). օրինակ՝ Ապա հրաման տայր ընդ կողմանն կողմանն (=դեպի զանազան կողմեր) դեսպանն արձակել (Ազ., Ա, 22): Յորժամ ընդ արևելք (=դեպի արևելք) ընթանան (Եզնիկ, 1-ին, Գ):

գ) Տրական հոլովի իմաստ (նախողիք տրական). օրինակ՝ Հայեցեալ ընդ նա (=նրան կամ նրա վրա), զարհուրեցաւ (Գործ., Ժ, 4): Զարմանային ամենքեան... ընդ իմաստությինն (=իմաստության վրա) և ընդ պատասխանինն (=պատասխանների վրա) նորա (Ղուկ., Բ, 47): Նախանձեր նա ընդ փառան (=փառքին) Մանուկի (Բուզ., 5-րդ, ԼՇ):

դ) **Միջով, միջից, վրայից, վրայով, տարածությամբ իմաստները.** օրինակ՝ Ընդ եղեգան փող (=փողով, փողի միջով) ծովս ելաներ (Խոր., 1-ին, ԼԱ): Անցին ընդ հուրն և ընդ ջուրն (Ազ., ԶԳ, 636)=Անցան կրակի և ջրի միջով: Եւ հուեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտով (մեկ) ամենայն (Ազ., ՏԲ, 739):

ե) Գործիական հոլովի իմաստ. օրինակ՝ Կորեան ընդ քո ձեռն (Փարապ., 3-րդ, ՂԵ)=Կորան քո ձեռքով: Ծառայ որ ընդ ունկն (=ականջով) ոչ լսէ՝ ընդ մկանունս (=մկաններով) տան լսել նմա (Եզնիկ, 1-ին, ԺԵ):

զ) **Տեղ, որն աշխարհաբար թարգմանվում է տպկորաբար ներգոյական, տրական կամ հայցական հոլովներով.** օրինակ՝ Ընդ ամենայն կողմանն (=բոլոր կողմերով) զաւառացն դմէր հիմունս եկեղեցեաց (Ազ., ԾՇ, 831): Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեղս (Ղուկ., ԺԳ, 22)=Ծրջում եր քաղաքներում և զյուղերում:

է) **Անորոշ դերբայի և ժամանակ ցույց տվող գոյականների հետ ցույց է տալիս ժամանակ.** օրինակ՝ Ընդ ծագել (=ծագելու ժամանակ) արեգականն զգունդն յերիս մասունս քածանեալ ի բանակն արկանէին (Եղիշէ, էջ 66): Ընդ առաօտն (=առավոտյան) հանեալ տանէր զկապեալսն յապարանն իւր (Եղիշէ, էջ 152):

ը) **Եւ շաղկապով կրկնվելով արտահայտում է միջև իմաստը.** օրինակ՝ Միջի կորի ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիս իմ և ընդ հովիս քո (Ծննդ., ԺԳ, 8)=Թող չինի կոխվ իմ և քո միջն, իմ հովիվների և քո հովիվների միջն:

Այսպիսի կրկնությամբ ցույց է տրվում նաև առարկաների միասին վերջական լինելը, ամբողջականությունը. օրինակ՝ Ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ անի քան զշորեք հարիւր բիւր (Ազ., ԾԺԾ, 835)=Տղամարդ, կին և մանուկ մասին՝ ավելի քան չորս հարյուր բյուր:

թ) **Կախել բայի մոտ ցույց է տալիս այն առարկան, որից մի քան է կախված.** օրինակ՝ Եւ կախեաց զնոսա շուանաւ ընդ պատուհանն (Յեսու., Բ, 15)=պատուհանից:

ժ) **Կազմում է առանձին ոճեր՝ ընդ գիմիս մոտանել=զիմովնալ, համել ընդ ալուսիք մատնել, ընդ ակամք հայել=ծուռ աշքով նայել, ընդ այս ընդ այս=այս ու այն կողմ:**

ի) **Ընդ նախողիքը սեռական հոլովի հետ առանձին կամ փոխանակ բառի հետ միասին արտահայտում է փոխարեն, դիմաց, երբեմն էլ՝ համար իմաստները. օրինակ՝ Նա ինձ չար ընդ բարույ հատոյց (Բուզ., 4-րդ, ԾԴ)=Նա ինձ բարու փոխարեն (դիմաց) չար հատուցեց: Մահու պատիժ փոխանակ ընդ վատությանն կրեն (Եզնիկ, 1-ին, ԺԴ)=Վատության համար (դիմաց) մահվան պատիժ են կրում: Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման (Ելք, ԻԱ, 24)=Աչքի փոխարեն աչք, ատամի փոխարեն ատամ:**

ք) **Ընդ նախողիքը եզակի տրականի հետ արտահայտում է հետ, հետ միասին իմաստը. օրինակ՝ Դաշինս կուր ընդ նմա (Ազ., ԾԲԶ, 877)=Նրա հետ: Ընդ ո՞մ (=ո՞մ հետ) խօսեցայց (Երեմ., Զ, 10): Քացախ ընդ լեզույ (=լեզու հետ) խառնեալ մատուցանէին (Ազ., ԾԵ, 476):**

ր) **Ընդ նախողիքը բացառական հոլովի հետ, առանց ի նախողի, նշանակում է կողմից, կողմը (կողմում) կամ արտահայտում է միայն բացառական հոլովի իմաստ. օրինակ՝ Եւ եղն ջուրն պարիսպ ընդ աջմէ (=աջ կողմից) նոցա (Երք., ԺԴ, 22): Նինստ ընդ աջմէ (=աջ կողմը, կողմում) իմնէ (Մարկ., ԺԲ, 36): Այսպես էլ՝ ընդ կողման «կողմից», ընդ հարաւոյ «հարավից» և այլն:**

տ) **Ընդ նախողիքը գործիական հոլովի հետ նշանակում է տակ՝ տարածական, այլև ենթարկման, հնազանդման իմաստներով. օրինակ՝ Ոչ լուցանեն ճրագ և դմեն ընդ գրուանաւ (=ամանի տակ), այլ ի վերայ աշտամակի (Մատք., Ե, 15): Որ ոչ ընդ նովին օրինօր մտանէին (Եղիշէ, էջ 6)=Ովքեր չէին ենթարկում նույն կրոնին:**

**Վարժություն 171. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ի՞նչ նշանակությամբ է գործածված չնդ նախողիքը:**

Ընդ նտանել արևուն մտցէ ի բանակն: Զայլ ականաւոր և քաջ արս ի պարսիկ մարդկանէ հանին ընդ սուր: Եւ չոգաւ ընդ նմա թեկդ և ենուտ ի տուն նորա: Աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորիթեամբն և ընդ իշխանութեամբն եր: Դատաստան կայ իմ ընդ քեզ: Արդ աղաշն զքեզ և զամենեսեան, որ ընդ քոյով իշխանութեամբ են: Յայնժամ թքին

**ընդ երեսս նորա:** Առաքեցին ընդ ամենայն գալաքոն: Գնա՞լու ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհ, որ իշխանէ յերուսաղեմէ ի Գագա: Եւ եթէ տեսանիցես ընկերի քո անկեալ ընդ բեռամբ, մի՛ զանց առնիցես զնովաւ, այլ յարուսցես զնա ընդ նուա: Ծքչի ընդ անջրդին տեղիս: Տածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հոդով: Կոռեցամ տարի մի ընդ Աղուանից արքայի: Թոյլ տուր, անցից ընդ երկիր քո: Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաշեմ զձեզ: Ի ծագել իրում ելանէ ընդ հարաւ, և պատի ընդ հիւսիսի: Գտին զիս պահապանքն, որ շրջէին ընդ քաղքն: Մի՛ լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ: Եւ այլս անկաւ յերկիր բարուր, և ելեալ աճեցեալ տայր պլուու, և բերեր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վարսուն և ընդ միոյ հարեւր: Տրտմեալ ընդ մահ աղջկանն, տիրացեալ սօսայր:

**Վարժություն 172. Թարգմանել գրաքար՝ ընդգծված բառերը դնելով չնախյորով և հայցական հոլովով:**

Վիճում էին միմյանց հետ: Յանաք ելմելիս պատահեց նրան մի մարդ քաղքից: Ավետավորներ ուղարկեց իր երկրի բոլոր կողմերը: Նրանք էլ զնացին նրանց հետ: Անցան Հորդանան գետով: Բուսնելիս չորացավ: Խսկ Պարսից քավորը զարմացավ Սուշելի քարերարության և քաջորյան վրա: Նրանց համբավը տարածվեց ամբողջ աշխարհում: Այլ ճանապարհորով գնացին իրենց երկրը: Զարմացավ նրա խոսքերի վրա: Ձեր անասունները քող ուտեն հարդ գարու հետ խառնած: Երեսուն տարի կովեց իր քշնամիների դեմ: Մեծ վիշ կա մեղ միջն: Մի՛ նախանձիր նրա փառքին: Կախվեց երկնքի և երկրի միջն:

**Վարժություն 173. Թարգմանել գրաքար՝ ընդգծված բառերը դնելով չնախյորով և համապատասխան հոլովներով (սեռական, տրական, քացառական, գործիական):**

Նրա փոխարեն քագավորեց նրա որդին: Հաշովիր քո եղբոր հետ: Յագերին կտարացնի իր քն երի տակ: Ասա, որ սրանցից մեկը նստի քո աշ կողմում, իսկ մյուսը՝ ծախ կողմում: Նստեցին ծառերի տակ: Նրա քույրերը եկել էին նրա հետ: Իմ ծեռքի տակ ունեմ զինվորներ: Հայոց աշխարհն ընկավ պարսից անօրեն լիի տակ:

## ԴՐԵՆ

Եցէ<sup>1</sup> տեսեալ<sup>1</sup> յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի, զիարդ ցոլանայ քոցն և ծուխսն և անդր յերկինս կցի, և չիր որ ժողի մատշել և զարն շիզուցանել. այլ ամենայն որ ընդ անձին ճեախ<sup>2</sup> և զիւրն միայն գիտ. և հրդեհն ոչ մեղմով<sup>3</sup> այլ սաստիկ զամենայն ճարավեսից. և քազում անզամ ամենայն քաղքն շուրջ կայցէ և տեսողը և եթ չարեացն լինիցին, և ոչ զօրալիգն և օգնա-

կանք: Եւ անդ իցէ տեսանել զի ոչ ինչ օգուտն լինիցին որ շուրջն կայցեն, այլ իրաքանչիւր ոք զձեռս ձգիցեն և նոցա որ առ ժամայն<sup>3</sup> իցեն եկեալ՝ զտեղի ին ցուցանիցին, կամ ընդ պատուհանս զբոցն ցոլացեալ, կամ զգերանսն որ հապ<sup>4</sup> կիսայրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ զիոնորցն որ միանզամայն ի տեանցն և ի մուրից<sup>6</sup> գերծանիցին և յերկիրն կործանիցին: Իցեն թերևս և քազումք յանդգունք և ի վսեր եկեալը<sup>7</sup> որ և մօտ իսկ ժողիցին ի հրդեհ շինուածոյն հասանել, ոչ զի ծեռն տայցեն և զշարն շիզուցանիցին, այլ զի ցանկալի ին զտեսիլն համարիցին յորժամ ի մօտոյն ստոյց կարիցեն նշնարել, որոց մինչ ի բացեայն կային<sup>8</sup> չերևէր այնպէս: Եւ անտի զի<sup>9</sup>նչ օգուտ գտանիցին, քայր թէ միայն վնաս: Եւ եթէ գեղեցիկ և ս և մեծամեծ շինուածքն իցեն, զայն համարին եղուկ և ողորմ<sup>8</sup> քազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ տեսիլ, քանզի սիւնքն հանդերձ ախսաւեղազէս խոյակօքն մանրիցին և ի յատական կործանիցին. և իցէ ինչ քազում զոր ինքեանք բեկտիցին, կէսն ի հրոյն այբեսցի, և զկէսն շինողացն ծեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի և ս քան զն ս սաստիկ զամք<sup>10</sup> հրոյն լինիցի: Անդ իցէ տեսանել և զրազում պատկերսն զոր ազգի ազգի նկարութ քանդակեալ դպօշեալ, որք յորժամ ծեղունքն բանայցեն և մերկ յարկացն<sup>11</sup> լինիցին, քազում անշրջորեամք մնելկացեալ խանձատեալ նշանակ կայցեն. և զազգի ազգի զիանդերձսն, և զոսկեղէն և զարժարենու անօրսն, զոր յանկարծ ուրեք<sup>12</sup> տանուտէրն հանդերձ իրով միայն ամուսնովն տեսաներ, սապատր<sup>13</sup> հանդերձիցն և խնկոցն կալչարայր<sup>14</sup> ի նարմարակուու սենակսն յերկիներփն կճեիցն<sup>15</sup> դրուագացն՝ ամենայն միանզամայն ի միոյ երոյն գունիկ կաճառանոց<sup>16</sup> լինիցի: Եւ հասանէ տեսանել այնուինու աղքակիրս, որքաւորս<sup>17</sup>, թիատրս, զամենեսեան խառն և անհարց ի ներքս մտեալ: Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել՝ քայր միայն ջուր և հուր և կաւ և մոխիր և զիայտսն թերայրեացս:

(Յովհան Ուսկերերան. գլեւն Թոռն. Ա, էջ 165-168)

<sup>1</sup> վիս. իցէ<sup>1</sup> քո տեսեալ

<sup>2</sup> ծառել ընդ անձնին-ինքն իր համար

հօգալու շտապել

<sup>3</sup> այստեղ՝ դեռ նոր

<sup>4</sup> հապ-միանզամից

<sup>5</sup> այստեղ՝ պատշաճամք իմաստով

<sup>6</sup> մայր, մուքի, ից. նեցուկ, հենարան

<sup>7</sup> յանդգունք և ի վսեր եկեալը.

հոմանիշ բառեր եմ՝ վուանզի մեջ

ննտվորներ, համորգներ

<sup>8</sup> նղուկ և ողորմ. նույնանիշ բառեր եմ,

նշանակում եմ՝ ցավալի

<sup>9</sup> հոմանիշ է հաջորդ քամին

<sup>10</sup> ջամք- կեր, ճարակ

<sup>11</sup> վիս. ի յարկացն

<sup>12</sup> յանկարծ ուրեք-քիչ անզամ

<sup>13</sup> սապատ-արկդ

<sup>14</sup> կալչարայ (խնկոց)-խնկաման

<sup>15</sup> կում, կիճ-կարծ և փայլուն քար, մարմար

<sup>16</sup> գռեհիկ կաճառանոց-հասարակ (ուամիկ) մարդկանց հավաքատեսիլ

<sup>17</sup> որքաւոր-կողով տանող

§ 197. Ըստ նախդիրը գործածվում է հայցական, տրական և բացառական հոլովների հետ:

1. ա) Եղանել, անցանել, հանել և նման բայերի մոտ ըստ նախդիրը, դրվելով հայցական հոլովի վրա, նշանակում է դուրս, մի բանից այն կողմ, որն աշխարհաբար կարելի է քարգմանել նաև բացառական հոլովով. օրինակ՝ Կամեր քաջատրն ըստ քաղաքն (քաղաքից դրւու) ելանել (Ազ., Ի, 219): Եթ անպարհապատճեն ըստ սահման (Յովք., ԻԴ, 2)=սահմանից: Ոչ կարացին հանել ըստ ծորակն (Ազ., ՇԺԴ, 811)=այն ծորակից դուրս: Անցեք ըստ ջուրդ (Ք Թագ., ԺԵ, 21)=Անցեք այդ ջրից այն կողմ:

բ) Հայցականի հետ (հատկապես հոգնակի թվում) նշանակում է՝ ըստ, համաձայն, համեմատ, պես, նայելով. օրինակ՝ Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք (Յովք., Է, 24)=Աչքերի համեմատ (աչքերի տեսքով) մի դատեք, այլ ուղիղ դատաստան արեք: Կաց ըստ իս՝ և ես ըստ քեզ (Յովք., ԼԳ, 6)=Մնա ինձ պես, և ես՝ քեզ պես: Այն են ազգք որդուց Նոյի ըստ ծնունդու իրեանց, ըստ տոհմս իրեանց (Ծննդ., Ժ, 32)=Մրանք են Նոյի որդիների ազգերը՝ ըստ իրեանց ծնունդների և տոհմերի:

2. Տրական հոլովի հետ ըստ նախդիրը նշանակում է՝ ըստ, համաձայն, նման, որն աշխարհաբար կարող է քարգմանվել նաև գործիական հոլովով. օրինակ՝ Առեք զնա դուք, և ըստ ձերոց օրինացն (=ձեր օրենքի համաձայն, ձեր օրենքով) դատեցարուք (Յովք., ԺԸ, 31): Եթ տաճնեցին զնա տասն մարդ՝ ըստ հրամանի (=հրամանի համաձայն, հրամանով), քաջատրին (Ազ., Է, 74): Ըստ պատկերի (=պատկերի նման) Աստուծոյ արար զմարդն (Ազ., ԼԲ, 329):

3. Ըստ նախդիրը բացառական հոլովի հետ, առանց ի նախդիրի, ցոյց է տալիս հաջորդականություն. օրինակ՝ մի ըստ միոցէ=մեկ առ մեկ, ամ ըստ ամէ=տարեցտարի, օր ըստ օրէ=օրեցօր և այլն: Եթ օր ըստ օրէ բերեին իրը զգէ ընկենուին ի մեծ հրապարակին (Եղիշէ, էջ 139): Չսոցանէ, որ մի ըստ միոցէ ամուսնեցան քաջատրը (Թոռն., Ա, էջ 360): Այր ըստ առնել մոլորեցան (Եսայի, ԽԵ, 15)=Իրար ետևից մոլորվեցին:

### Ց

§ 198. Ց նախդիրը գործածվում է միայն հայցական հոլովի հետ:

ա) Ց նախդիրն առանձին կամ մինչև բառի հետ միասին, դրվելով հայցական հոլովի վրա, նշանակում է մինչև. օրինակ՝ Որ ցայժմ (=մինչև այժմ) կենդանի կայ (Եղիշէ, 1-ին, ԽԵ): Մինչև ցայժմ (մինչև այսօր) կենդանի պահեցեր զնոսա (Եղիշէ, էջ 143):

բ) Ասել, տայ, հարցանել բայերի մոտ ց նախդիրը, դրվելով հայցական հո-

լովի վրա, արտահայտում է տրական հոլովի իմաստ. օրինակ՝ Ասէ ցնա (մըրան) դատաւորն (Թոռն., Բ, էջ 112): Ֆնեց զի՞ հարցաներ (Եղիշէ, էջ 135): Նիզ՞ն եք մեզ հարցնում: Զքարսմունսն զոր ի ծեռին ուներ՝ ցորդին իր ցմրմար ես (Եղիշէ, 2-րդ, Ե)=Քարսմունքը, որ բռնում էր իր ծեռքում, տվեց իր որդում՝ Որմիզդին:

**Վարժություն 174. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ինչ նշանակությամբ են գործածված չափ և ց նախդիրները:**

Զամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Պահ դրւոն ի ներքս: Եթ յայնժամ հասուցէ իրաքանչիր ըստ գործս իր: Ըստ այսմ պատմենի հրովարտակ ե-հաս յաշխարհն Հայոց: Իրը ելին ըստ քաղաքն... ասէ Յովսէփի ցհազարա-պատուն իր: Ըստ կանաց քոց արա զինչ և կամիս: Սոքա են որդիք Քանայ յազգս իրեանց, ըստ լեզուս իրեանց: Որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լուսլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակաս: Եթ կատարեալ դահճացն գործն ըստ հրամանին Վեհենշապիոյ: Եթ զմիօրինակ զքագն օր ըստ օրէ իրեան և ննա քաջատրն Պարսից զարդ պատրաստէր: Ժողովեցին զամե-նայն զգերին քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ: Զայս ամենայն կարգաւ, մի ըստ միոցէ ոնով պատմեցից: Եթ ցնա զքաջատրու-թիւնն հազար ամ: Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի:

**Վարժություն 175. Թարգմանել զքարար՝ ընդգծված բառերը գնելով հա-մապատասխան նախդրով (ըստ, ց) և հոլովով (հայցական, տրական, բացառական):**

Տանջեցին նրանց տրված հրամանի համաձայն: Երբեք չեն անցնում ի-թենց սահմաններից: Նրա պես արդար մարդ չկա: Չեին կարողանում քաղա-քից դրւու ելնել: Ինչ որ պատմում էին այդ քաղաքի շինության մասին, մեկ առ մեկ զեց: Մի՛ անցիր այս բլուրից այն կողմ: Նրանց դատեցին իրենց գործե-րի համեմատ: Օրեցօր գրում և ցոյց էր տալիս մեծ հրապարակներին: Տարեց-տարի տոնում էին (տօնախմբէին) նրանց հիշատակը: Այդ բոլորը կատարեց իր սպոռության համաձայն: Նրանցից կրտսերն ասում է հորը:

### ՃԱՌ-Ք (Հատուած)

1. Եթ մի՛ զքարմանայցես, եթէ թեթև բնութիւնն զմարմինն ծանր եբարձ. նախ աստեն իսկ յայսմ արարածն՝ որ մեզս երսին, է՛ ինչ որ բնութեամբ<sup>2</sup> ծանր է, և է՛ ինչ որ յախտարակաց<sup>2</sup> թեթև է. և չէ ինչ ըստ ծանրութեան և ոչ ըստ մե-նայն ամառածին:

ծութեան, այլ ըստ իրաց բնութեան արարածոց, որպէս զիարդ և իցէ: Ընդէ՞ր ամենայն մայրք մեծամեծք, և թէ ամենայն խկ անտառը կոտորեսցին և ի ջուր անկանիցին, չընկղմեսցին. և զատեղն մի փոքրիկ կամ սակաւ ինչ քծուար՝ յերկարոյ՝ չկարէ ծով մեծ ի վեր ունել: Եւ այսպէս՝ ոչ ըստ մեծութեան ինչ է<sup>4</sup> և ոչ ըստ ծանրութեան, այլ յարաշին արուեստէ. բայց սակայն երկարոյ ուրոյն առանձին չէ հնար ի վերոյ ջուրց կալ, այլ թերևն իիիր<sup>5</sup> կայ ի վերայ ջրոց, և կրի տեղեաց ի տեղիս: Լճուն զնաւ մեծամեծն երկարով, և տանին յո և կամին. և քանզի թնքն է փայտի բնութիւն, բառնայ թերևն մ զժանրն: Առ նեւ ևս այլ օրինակ. մարդ չկարէ բազում ժամս ի վերայ ջուրց դողալ<sup>6</sup>. թէպէս և զարուեստն զիտիցէ, այլ քանզի չկարէ կարի ի տող ծգել<sup>7</sup> առանց հանգելոյ, աշխատիմ<sup>8</sup> բազուկն, և հարկ լինի ընկղմելոյ:

### (Սերերիանոս Եմեսացի. Վեհապատճեն, Ա, էջ 272-273)

- <sup>1</sup> փխ. յայս արարածն կամ յարարածն  
յայստիկ
- <sup>2</sup> այստեղ՝ ֆիզիկապէս
- <sup>3</sup> քծուար-մետաղի կտոր, քծուար
- <sup>4</sup> յերկարոյ-երկարի (բառացի՝ երկարից) կտոր  
ոչ ըստ մեծութեան ինչ է-ոչ մեծությունից

- կախում ունի և ոչ...
- <sup>5</sup> թերևն իիիր-թերևն բաներով, առարկաներով
- <sup>6</sup> դողալ, դողմ, դուրիմ-շողալ
- <sup>7</sup> ի տող ծգել(իմ)-երկար տևել շարունակել
- <sup>8</sup> այստեղ՝ հոգնելու նշանակությամբ

2. Զոր օրինակ յորժամ քժիշկն գերկարն ի գործ արկանէ և խարանս ի մարմինն դնէ, ոչ այնու ընդ մարդոյն կռուի, այլ ընդ ցաւս մարտնչի...: Մի՞՛ք տեսեր երեք զրժիշկ առ ցասման ժեւոն ի գործ արկեալ, կամ առ զայրացու ինչ ի խարանս մատուցեալ, կամ այլ ինչ նոյնախիսի. թէպէտ և հիւանդին՝ երեսըն քժշկին ահազին թուեսցին, այլ քժշկին օգուստ գործել կայ ի միտս...<sup>2</sup>:

Վիրածն<sup>3</sup> յորժամ տեսանիցէ զրժիշկն՝ զի կտրել զվերն կամիցի, ահազին համարի, և իրըն ի թշնամոյ խոսափէ. խսկ յորժամ քժշկեսցի, զոր երբեմն տեսանէր և զերեսս դարձուցանէր՝ յետոյ մօտ հայի և երկիր պազան: Երէ չզիտիցեմք խսկ, զի առ զայրացու ցաւոցն՝ թշնամանս դնեն հիւանդըն քժշկացն, և քժիշկն ներէ զայրացելոցն. քանզի զիտէ երէ ոչ ի կամացն են թշնամանը՝ այլ առ ցաւս: Խսկ յորժամ ապաքինին յախտն՝ և վարձ և ս տան նոցա, զորս անազորնս<sup>4</sup> համարէին. տան վարձս՝ ոչ իրըն պահանջեալը, այլ իմբնակամ յօժարութեամբ:

### (Սերերիանոս Եմեսացի. Վեհապատճեն, Ա, էջ 294-295)

- <sup>1</sup> սովորաբար՝ առ զայրուց-զայրոց, բարկությունից  
<sup>2</sup> կայ ի միտս-մտաղըլել է

- <sup>3</sup> վերը ունեցողը
- <sup>4</sup> անազորնս կամ անազորն-դաժան, անզոր

## ԴԱՍ ԶԱՐԱՄԱՍՈՒՆԵՐՈՐԴ

### ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 199. Բացի բուն նախդիրներից (առ, զ, ի, ընդ, ըստ, ց), գրաբարում կան նախդիրների դերով հանդես եկող այլ բառեր (վասն, յաղագ, առանց, զիետ, առաջի, զկնի, ի սակաւ և այլն), որոնք կոչվում են նախադրություններ: Դրանք ծագում են տարբեր խոսքի մասերից, մեծ մասամբ քարացած հոլովածն եր են և հաճախ գործածված բուն նախդիրների հետ (պատճառաւ, աղագաւ, ի ներքոյ, ի վերայ, իրըն զ, մերձ առ, մինչև ց և այլն):

Նախադրություններն ընդիանրապէս դրվում են իրենց խնդիրներից առաջ: Որոշ նախադրություններ (հանդերձ, զկնի, առաջի) կարող են գործածաւագի և նախադաս, և ետադաս, խսկ մի քանի նախադրություններ (պէս, չափ, աղագաւ) լինում են միայն ետադաս՝ որպէս ետադրություններ:

Ի տարբերություն բուն նախդիրների (բացի ց-ից), որոնք գործածվում են տարբեր հոլովների հետ, նախադրությունները հիմնականում պահանջում են միայն մեկ հոլովով խնդիր:

### Հայցական խնդրով նախադրություններ

Իրըն զ, որպէս զ (=ինչպէս, իրըն, նման, պէս). Իրըն զկելով նոան են այսոր քո (Երգ., Դ, 3): Եւ եղերով դուք, ասէ, խորագէտք իրըն զօծ (Ազ., ՀՀ, 602): Որպէս զեղբարս հարազատս... յանպատում որախութեան ուրախ լինեին (Քուզ., 4-րդ, ԺԶ):

Զամ զ. Այս նախադրությունը հայցական հոլովի հետ՝ ա) կազմում է ածականների համեմատական կամ բաղդատական աստիճանը, օրինակ՝ Հզօր և իմաստունն էր քան զիայրն (Եզնիկ, 2-րդ, Զ)=Հորից ավելի հզոր և իմաստուն էր չափ, օրինակ՝ Երէ ունիցիր հաւատս քան զիատ մանանիոյ (Սատր., ԺԵ, 19)=Երէ մանանեխի հատի չափ հավատք ունենար:

Ծանոթություն. Հաճախ քան զ-ից առաջ նախադրության նշանակությամբ զործածվում են մի շաբթ մակրայններ՝ արտաքրոյ, արտաքրս, ի ներքս, յառաջ, ի զերոյ և այլն: Այս դեպքում քան զ նախադրության խնդիրը թարգմանենք, ի վերոյ և այլն: Այս դեպքում քան զ նախադրության խնդիրը թարգմանենք, օրինակ՝ Հանին զնա արտաքրոյ կում է սովորաբար բացառական հոլովով. օրինակ՝ Հանին զնա արտաքրոյ կում է սպանեցին: Եւ Երէ էր ոք ի վեր քան զնա և քան զորին (Եզնիկ, 2-րդ, Ե)=Եվ երես նրանից և նրա որդուց ավելի վեր մեկը կար:

Մօտ ի(յ), մօտ առ, մերձ ի(յ), մերձ առ. Պատահեր նմա մերձ ի սահմանս Վրաց (Եղիշէ, էջ 75): Երբեալ նատէր մօտ առ դին (Քուզ., 4-րդ, ԺԵ):

Մինչն ի(յ), մինչև ց. Յարևմտից մինչև յարևմտւ ելս երքայ (Ազ., Է, 92): Ամերին ծանիցն զիս ի փոքրկանց մինչև ցանամեծն նոցա (Երը., Ը, 11):

## Սեռական խնդրով նախադրություններ

**Վասն** (=համար, պատճառով, մասին). Աղօթս մատուցանէր վասն նոցա փրկութեան (Ազ., Ի, 224): Հարցին և ցնոսա վասն նորա (Եղիշէ, էջ 133): Վասն ծերոյ յանառութեան եղն այլ ամենայն (Եղիշէ, էջ 161):

**Յաղագս** (=մասին, վերաբերյալ համար). Յաղագս շինուածոյ Երուան դաշտ քաղաքի (Խոր., 2-րդ, ԱՌ):

**Աղագս** (=պատճառով, համար). ունի ետաղաս գործածություն: Այն աղագս պատուիրել նմա (Եզնիկ, 2-րդ, Ե):

**Պատճառաւ, ի պատճառս** (=պատճառով, պատրվակով, նպատակով, համար). պատճառաւ նախադրությունն ունի միայն ետաղաս գործածություն: Եւ հատուածի պատճառաւ (=գաղրի պատրվակով) փախստական լինի յԱրտաշրէ (Խոր., 2-րդ, ՀԴ): Եղեաք առ ծեզ... և ոչ ի պատճառս ազահութեան (Աթեսաղ., Բ, 5): Առաքէ յԵրուասադէմ հանդերձ հեծելազօրու. իբր թէ ի պատճառս խաղաղութեան (Խոր., 2-րդ, ԺԹ):

**Առանց.** Ոչ է պատմութիւնն ճշմարիտ առանց ժամանակազրութեան (Խոր., 2-րդ, ԶԲ):

**Յետ** (=հետո). Եւ յետ ինն հազար ամի Որմիզդ քագաւորեսցէ (Եզնիկ, 2-րդ, Ա): Յետ այնորիկ եսոու զնա ընկենուկ ի խոր վիրապն (Ազ., ԺԲ, 136):

**Չետս** (=եւտի ից). Ծրջէին զիետ նորա (Ազ., ՃՇ, 818): Թողոց այր գիայր իւր և զնայր և երթից զիետ կնոջ իւրոյ (Ծննդ., Բ, 24):

**Զկնի** (=եւտի ից, հետո), Եկ զկնի իմ. և յարուցեալ զնաց զկնի նորա (Սատր., Թ, 9): Աղաղակեա զկնի նորա (Գ Թագ., ԺԵ, 10):

**Առաջի** (=առաջ, առջն). գործածվում է նախադաս, երեսն էլ ետաղաս: Ածեին զնա առաջի մեծի քագաւորին Խոսրովու (Բուգ., 3-րդ, Ը): Յորժամ քա առաջի զմատեան ընթեռնուցուն (Ազ., ՃԽ, 897):

**Ի մէջ** (=մէջ, միջն). Եւ նա էջ և սպան օառիւծն ի մէջ գրին (Բ Թագ., ԻԳ, 20): Եղն խաղաղութիւն ի մէջ քագաւորին Յունաց և ի մէջ քագաւորին Պարսից (Բուգ., 4-րդ, ԻԱ):

**Ի վերայ** (=վրա). լինում է նախադաս, հազվադեպ՝ ետաղաս: Յարձակեցան ի վերայ բերդիցն (Եղիշէ, էջ 68): Ոչ բողին բնաւ քար ի քարի վերայ (Բուգ., 4-րդ, ԾԵ):

**Ի ներքոյ** (=ներքն, տակ). Սնալով ի ներքոյ ծեանն գերիս տիս և գերիս գիշերու (Խոր., 2-րդ, ԼԶ):

**Յանդիման, յանդէա** (նաև՝ ի հանդէա, ի հանդիպէ), ընդդէմ (=դիմաց, դեմ). Եւ եհան զԱրամ, և բնակեցոյց յանդիման դրախտի (Ծննդ., Գ, 24): Բանակեցան յանդիպէ լերինն (ՆՀԲ): Սատի՛ր, յառաջեան ընդդէմ սրոյն (Եղիշէ, էջ 178):

**Ի ծեռն** (=ծեռով, միջոցով). Ոչ միայն ի ծեռն արանց, այլ և ի ծեռն կանանց սրբոց քարոզեցան աւետարանն (Ազ., ՂԲ, 684):

**Փոխանակ** (=փոխանակ, փոխարեն). գործածվում է առանձին կամ ընդ 222

անխցի հետ միասին: Փոխանակ իւր յդեաց զիւր արոռակիցն գխադ (Բուգ., 4-րդ, ԺԵ): Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարտյ (Սաղմ., ԼԵ (ԼԸ), 21): Զօրէն (=նման, պես). Զօրէն ազատ էրէոյ շրջէին ի մէջ ծաղկաբեր Երանց (Եղիշէ, էջ 194):

**Սակս, ի սակս** (=պատճառով, համար). ունեն թէ նախադաս, թէ ետաղաս գործածություն: Մի՛ կասկածեր ի կայսեր սակս այնը (Խոր., 2-րդ, Լ)=այր պատճառով (դրա համար): Այդպես էլ ի ծեր սակս=ծեր պատճառով. յորոյ ի սակս=որի պատճառով, ոչ ի մեղացն սակս=ոչ այր մեղքերի պատճառով և այլն:

## Բացառական խնդրով նախադրություններ

**Բաց, բայց** (=բացի). Ոչ ոք գոյր ընդ մեզ ի տանն քաց ի մէջ երկոցունց (Գ Թագ., Գ, 18): Չիք աստուած բայց ի նմանէ (Եղիշէ, էջ 163):

**Գաղոտ** (=գաղլտնի). Գաղոտ ի մօրէն երթայր յեկեղեցին (ՆՀԲ): Հեռի (հեռու): Հակատէր ոչ հեռի յիւրմէ բանակէն (Խոր., 2-րդ, ԽԶ): Նլատաւ Դենշապուի արտաքրյ բանակին... հեռի երկոտասան հրասախաւ (Եղիշէ, էջ 159):

**Մեկուսի** (=հեռու, մի կողմ, դուրս, զատ). Եւ առեալ զնա մեկուսի յամբոխտ անտի (Մարկ., Է, 33)=այն ամբոխից հեռու (մի կողմ): Այսպես էլ մեկուսի ի նանապարհեն=ճանապարհից մի կողմ հեռու, մեկուսի ի բանակէ=բանակից մի կողմ հեռու դուրս և այլն:

**Ուրոյն** (=բացի, առանց, զատ). Սովոր էր ուրոյն ի նոցանէ (=առանց նրանց) կալ յալորս (ՆՀԲ): Եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կողոցն (Խոր., 2-րդ, Խ)=բացի կուռքերից:

**Հետու** (=ի վեր, հետո). գործածվում է միայն ետաղաս: Խորա ի վաղնջուց հետու (=վաղուց ի վեր) էին իսկ կուրացեալք (Եղիշէ, էջ 55): Յայն օրէ հետու (=այն օրվանից ի վեր)... յուզեցաւ պասերազմ (Բուգ., 4-րդ, Ի):

## Գործիական խնդրով նախադրություններ

**Հանդերձ** (=հետ, հետ միասին, հանդերձ). գործածվում է և նախադաս, և ետաղաս: Գնայ յերկիրն Արարադայ... հանդերձ որդուվք իւրով (Խոր., 1-ին, ԺԵ): Հանդերձ նոցօք դիմեաց եմուտ ի բերդն Արտազերից (Բուգ., 4-րդ, ԾԵ): Խաղայր զնայր ամենայն զօրօքն հանդերձ (Ազ., ՃԸ, 778):

**Ծուրջ գ.** (=շուրջ). Եւ զօրսն ամենայն սփորդ տարածանէր շուրջ զքաղաքան (Եղիշէ, էջ 88): Եւ նստան շուրջ զքերդան ամիսը եղեքտասան (Բուգ., 4-րդ, ԾԵ):

**Չափ** (=չափ). ունի միայն ետաղաս գործածություն: Թէ ծեր չափ (=ծեր չափի) իմանայենք (Ցովք, ՂԲ, 12): Հինգ հարիւրով չափ (=հինգ հարյուրի չափ) յականէ յանուանէ ճանաշեն (Եղիշէ, էջ 199-200):

**Վարդություն 176. Թարգմանել, բացատրել, թե ո՞ր հոլովի հետ և ինչ նշանակությամբ են գործածված նախադրությունները:**

Յետ Արտաշիսի առաջնոյ թագաւորք Տիգրան որդի նորա: Համդերձ օգնականօր իրովք իշխանէր ի քաղաքն Սամսսատացոց: Լուցանելին ջահս ի վերայ աշտարակացն քաղաքին: Երբային զիետ նոցա երգովք և նուազարանօր: Լուարութ ամեներենան, զի նահ առն ինոյ վասն իմ եղին: Տիգրիս, նա է որ երբայ յանդիման Ասորեստանի: Երկիրն դրդայր ի ներքոյ նոցա: Յաղաց Չամիրամայ, թէ էր աղազա կոտորեաց գորդիս իր: Փոխանակ ցորենոյ բուացի եղինճ, և փոխանակ գարւոյ մորենին: Միրեցին զիսաւար առաւել քան զլյա: Եւ առեւծ իբրև զեզն յարդ կերիցտ: Բանակէր մօտ ի զեօյն: Քանզի եր սպանեալ նորա զիայր իր Վարդան՝ յաղազս ուրացութեան: Խաւար կալա զերկիր մինչև ցինն ժամ աւուրծ: Դուք ի ձեռն ծերոց սպասաւրացդ գործեց: Ամեներենան բերանաբաց հառաջէին զկնի նորա: Դի՛ք ուխտ ի մէջ իմ և քո, և ի մէջ հօր ինոյ և հօր քո: Բայց ի նախարարէ ումենմնէ՝ որոյ անուն Օտայ կոչիլիք: Ելեալ երբայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց: Զո առաջի այսօր տալոց եմ պատախանի: Երբ առ փարաւոն... և կացցես համդէա նորա: Ածեալ փոս զբանական իրենանց մօտ ի լեառնն ի Նպատ մերձ ի զետն Եփրատ: Կոռուք մինչև յամն կեցերող Արտաշիսի արքայի Հայոց, որդույն Վոռամշապեանոյ: Չիք այլ ոք բաց ի նմանէ, ոչ երկցազոյն և ոչ կրսերազոյն:

**Վարժություն 177.** Թարգմանել զրաբար, ընդգծված բառերն արտահայտել համապատասխան նախադրություններով (յաղագ, վասն, հանդերձ, յանդիման, քաց, ի վերայ, ի մէջ, զկնի, քան զ, մինչև ց(ի), իբրև զ, փոխանակ) և նրանց պահանջած հոլովներով:

**Նախարարների հետ միասին ներկայացավ (յանդիման եղև) թագավորին:** Իմ որդու պես սիրեցի քեզ: **Սեր հայրերի և եղբայրների մասին, որոնք քաջարար կովեցին իրենց հայրենիքի փրկության համար:** Իմ պատճառով կիալածն և կշարչարեն ձեզ: Այս վեմի վրա կշինեն իմ տունը: Կամենում էին խոռվություն զցել երկու քաջ ազգերի մեջ: Շատերը գնացին նրա ետևից: Առեգակը լուսնից ավելի մեծ է: Նրա մահվանից հետո Հայոց թագավորությունը քաֆանվում է երկու մասի (յերկուս): Իր փոխարեն նրա մոտ ուղարկեց իր ընկերոջը: Ծովից մինչև ծով էին ձգվում նրա տերության սահմանները: Բոլորը ցրվեցին, բացի նրանից: Մինչև երր պիտի լինեն ձեզ հետ:

## ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԻՍՈՒԷՎՑՈՅՑ

Ահա իրաման հասեալ (Եր) առ մարզպարէն Յովնան քարոզել Նշնուիի: Ե-  
մուս ի քաղաքն և ահեղ ձայն նորա խոռվեցոյ զամենեսեան: Քաղաքն հեքա-  
նուաց խոռվեցաւ ի ձեռն քարոզին Հեքրայնցոյ: ... Լուար քագատըն և տրտնմ-  
224

շա. ընկեց զքագ իր և խոնարհեցաւ: Լուան իշխանքն և տագնապեցան, և կիսանակ պատմումանի քուրծ զգեցան: Լուան ծերքն պատուականը և արդին մոխիր ի գլուխ իրեանց: Լուան մեծատոնք և բացին զգանձս իրեանց տրատաց: Լուան փոխատուքն և նորիհակա գրդենցին զարդարութիւն: Լուան փոխառուքն և փութապէս հատուցին զպարտսն: Ամենայն մարդ վասն անձին իրոյ խոկայր յարդարութիւն: Ոչ գոյր անդ մարդ խորամանկ, թէ որպէս զրկեսց: Ի պատերազմ ստուգութեան մտեալ էին. զի ամենայն մարդ զանձն իր շահեսցի: Յովնանու լուան գոյր և աւազակը, և զկապուտն դարձուցին տերանց իրեանց: Կողդապոյն տեարքն արհամարհեցին զինչս իրեանց, և աւազացն եղեն բռղջը: Ամենայն մարդ զանձն իր խոշտանգէր, զի բարկութիւն զամենեսեան կշտամբէր: Լուան սպանողքն և խոտովան եղեն, և արհամարհեցին զահ դատաւորացն: Լուան դատաւորքն և լուցին, զի կորեան դատաւուանքն ի բարկութենեն: Ամենայն մարդ զողորմութիւն սերմաներ, զի հնձեսց զիրկութիւն: Յովնանու լուան մեղալորք և խոտովան եղեն զմելու իրեանց: Լուան բանարքն աղտեղեալ և մերկացաւ զաղտեղութիւն իր:

... Յովնան իբրև առաքեցաւ յայն քաղաք, ի ճայն քարծը աղաղակեաց և ատ. Երեք աւուրք են և Նինու տապալեսից: Եւ ի ճայն նորա շարժեցաւ քաղաք և պատեաց զնա մեզ և մառախուու: Արտաքեկ և սրտակոտոր լիներ Նի-նու, զի եւտես զուն մարդարէին թէ ահազին էին և սաստիկ:

... Յարեաւ քազատը և կանայք իր, և ի բաց եղին գրազն ի զլսոյ քազատըն. զի լուսն թէ վաղին շիցեմք: Ամենայն քաղաքն միարան գոչեցին առ Աստուած, վասն զի ի գոչել հոդմոյն պտուտկէր զիոր երկին, զի երկինք յոռվեալ էն. աճար և մէզք զմիմեամբք պատեին, և զօրացեալ քանձրանայր նատխուղն: Փայլակն զփայլակն բախէր, որոտումն որոտումն պատահէր, կայ-ակունք զկայծակուն ստիպէին. դոդումն անդ և հիմանալ արտի: Ամենայն մարդ մնդ գտտին հայէր, թէ ահաւասիկ տապալի: Լային ամեներեան զմիմեանն ի կա-տարել աւուրցն: Եհաս ժամն այն. կացին ամեներեան յաստիճան մահու, բուռն եարին զմիմեամբք, վասն զի եհաս յուսահատութիւնն: Եւ ի լայն իրեանց հա-չին ընդ միմեանս, եթէ եկն զիշերս և երեր մեզ խաւար անմեկնելի. եկն զիշերս և ահա շիք մեզ տեսանել զառաւուն: Եւ ասէին, թէ յորո՞ւմ պահու կործանի. յե-թկորեա՞յ երբեք տապալի. եթէ առաւուուն կործանի. յորո՞ւմ պահու արդեօք զայ ծայն գութին: Կարծէին թէ յերեկորեայ տապալի, եկն երեկոյն և նա կայր կանզուն: Ակն ունէին եթէ ի զիշերի ընկըսնացի. եղն զիշեր և նա կայր և ս տա-կախին: Ակն ունէին եթէ առաւուուն կործանի. բացաւ առաւուն՝ բացաւ ողոր-մորեան և գքորեան դուսն Աստուծոյ ի վերայ քաղաքին: Զի յայն առաւսն եր-կիրն ի շարժման ոչ դադարէր, յայս վեց եօրներուրդսն երանի եր մեռելոց քան նոցա. կենցանի մեռեալ էին, և չին քաղեալ: Եղբայր երոր պատահէր, և ո՞չ ճանաշէր զկերպարան նորա. և ո՞չ ունկն կարա ի միմեանց մեկնել զձայն ի ծայնտ: Երես զիսանծող կրակի էին ի պահոց. մորք և ոսկերք լոկ մնացին:

(Եղիշեմ Ասորի. պետական, Բ, էջ 502-515)

# ԳՐԱԲԱՐԻ ՀԱՏԸՆԹԻՐ

ԿՈՐԻՒՆ (5-ՐԴ Դ.)  
ՎԱՐՔ ՄԱՇՅՈՒԹԻ  
(Հատուածք)

Եթե այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշտոց համերձ օգնականօքն, որոց առաջնութիւն Տիրայր անուն ի Խործենական գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ, համերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել, երթեալ իջանէր յ՛Ռոտաստակն Գողրան, յառաջին դաստակերտն իւր: Եւ կարգէր յամենայն գիլս գաւառին՝ դասս սրբոց վանականաց:

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիրմական աշխարհն ելանէր: Եւ ժողովնալ մանկունս առ ի նիւր վարդապետութեանն, առաւել զգազանմիտ զվայրենազոյն զիմանարարոյ կողմանցն, դայեկաբար սնուցանել և խրատել, ապա և զերկիրն Սիրենաց դասութ վանականաց լնոյր:

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ, հոգ ի մտի արկանէր և վասն բարբարոսական կողմանն: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին: Գրէր, կարգէր և օրինօք յարդարէր. և առնոյր ընդ իր գոնման լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ զնայր իջանել ի կողմանս Վրաց: Եւ երթեալ յանդիման լինէր բազաւորին, որում ամուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ նորա զիւր արթւեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յաճճն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել: Եւ զտեալ զայր մի բարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Զաղայ, այր զրագէտ և ծշմարտահաւատ. հրանան տայր այնուինտն արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց, և ի խառնադանց գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովնեան և տալ ի ծեռն վարդապետին:

Իսկ իբրև ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածապաշտութեանն, այնուինտն հրաժարեալ ի նոցան՝ դասնայր յերկիրն Հայոց և պատահեալ Սահակայ կաքուղիկոսին Հայոց, պատմէր նմա զողովրենէ եղելոց: Խորիուրդ առնէր այնուինտն վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ բազաւորին Հոռոմոց: Եւ փուրացեալ զնայր հանդերձ աշակերտօք բազմօք, անցանել ի կողման Յունաց: Հասանէին ի բազաւորակաց բաղարն Կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսմ, և մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ բազաւորացն և

հայրապետին: Եւ ապա ցուցեալ կայսերն զայտոյիցն զիանգամանս, և առաջ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերօք՝ կայսերազիր նշանակովք՝ վասն մանկուոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ: Գային հասանէին ի ժամադիր կողմանս, և անդէն վաղվաղակի պատանալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փուրայր վաղվաղակի զիրանն կատարել: Եւ իրեշտակս արձակեալ այնուինտն ի գաւառս կէս ազգին Հայոց յիշխանութեամն կայսեր, բազմութիւն մանկուոյ ժողովել:

Յայն ժամանակի եկեալ դիպէր նմա այր մի երէց աղուան ազգաւ, Բենիամէն անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբան աղուաներէն լեզուին, առնէր սպան նշանազիրս:

Եւս այնորիկ հրաժարեալ՝ բազում աշակերտօք գայր անցանէր ի կողմանս Հայոց Մեծաց. և հասեալ ի Նոր քաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և բազաւորին Հայոց, որում անուն Արտաշէս կոչէին: Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Մատուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ:

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ զնայր ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանիրհին և հասեալ ի բազաւորական տեղիսն, տեսանէր զուրք եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին բազաւոր, որում Արսակ էր անուն, առաջի եկեալ վասն որոյ եկեալն էր: Տային ևս հրանան ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեամն իրեանց, բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեամն ածել:

Եւս այնորիկ ուշ եկեալ երկոցունց երանելեացն՝ զիրեանց ազգին գրայութիւն առաւել յարգել<sup>2</sup> և դիրացուցանել: Ձեռն ի գործ արկանէր ի բարգմանէր և ի գրել մնձն Խսահակ՝ ըստ յառաջազոյն սովորութեամն:

Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացոց, զՅուլսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն, ի Կողը գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն զրեալս դարձուցն:

Իսկ բարգմանշացն հասեալ՝ ուր առաքեցան, և կատարեալ զիրամանս և առ պատուական հարսն առաքեալ անցեալ զնայր ի կողման Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, բարգմանիչս կարգելին ըստ հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ունաց եղբարց ի Հայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողման Յունաց, որ և Ղևոնէս առջնոյն անուն էր, և երկրորդն՝ Կորինս, և մատուցեալ յարէին յԵզնիկն. և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Եւս այնորիկ

հաստատում օրինակօր աստուածատուր գրոցն, զային երև ելով աշխարհին Հայոց, և առաջի դմէին հարցն զբերեալ կտակարանն:

Իսկ երանելոյն Սահակյա գեկեղեցական գրոց գումարութիւնն՝<sup>3</sup> կանչալի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնակա զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զքարզմանոթիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօր բերելովք: Եւ շատ ևս մեկնութիւն գրոց<sup>4</sup> բարզմանէին:

Եւ այնպէս զամնայն ժամանակս իրեանց՝ յընթերցուածս գրոց ծախտին հարբն՝ զտի և զգիշեր:

<sup>1</sup> սակեր-կայսերական նամակ: Հանդերձ սակերօր կայսերագիր նշանակելովք-կայսերագիր դրոշմած նամակներով հանդերձ այստեղ՝ մշակել, զարգացնել

<sup>3</sup> գրոց գումարութիւն. բառացի գրքերի ամբողջությունը, այսինքն՝ բոլոր, ամբողջ գրքերը  
<sup>4</sup> մեկնութիւն գրոց-Ա. Գրքի մեկնություն

## ՓԱՒՍՈՍ ԲԻՒԶԱՆԴ (Տ-ԲԴ Դ.)

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՇԱՅՈԾ

(Հատուած)

**Յաղագս ամօրէնութեան բազաւորին Արշակայ, թէ որպէս եսապան զորոյի նորոյ իւրոյ, որում անուն Գնել, ի բասութեան շարութեանէն Տիրիքայ.. կամ որպէս զմես ևս նոյզորութիւն Տիրիք կամ որպէս զիկնն Գնելայ արար իւր կիև կամ որպէս էած իւր կիև ի Յունաց զ՛ղիմային կամ որպէս երէցն Մրջինիկն անհուան դեղովն զնա ընդ օրէնս սպամանէր խորհրդով Փառանչեամայ:**

Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրունն, մի ի նախարարացն նահապետին Սիսնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ<sup>2</sup> կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնել պատանեակն եղրօրորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղջկան ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ բազմանայր և հենչէր: Ապա առ համբաւ ցանկութեան նուանն տրիեալ լինէր մին ևս հօրեղրօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիք կոչէր: Վասն որոյ անկանէր ի զաղտագործոնս՝, մինչ զի զնուն իւր տեսանել կարասց: Եւ յորժան կարացն տեղեանն որում ցանկայր, այնուհետև հնարս ինձրէր առն կնոցն կորստեան ո զիտ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիքն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որով զիւր շարախօսութիւնն յառաջ վարել կարասց: Եւ քիս ստորթեան զԳնելոյն նենգութեամբ առ բազաւորն Արշակ մատուցանէր՝ թէ «Գնել բազաւորել կամի և զրել սպանանել. և ամենայն մեծանեծք և նախարար և ազատը սիրեն զԳնել, և ամենայն աշխարհին նախարարը կամին զուրութիւն նորա ի վերայ իրեանց առաւել քան զրո: Արդ, ասեն, զիտեա՞ և տե՞ս, արքայ, զինչ գործեսցես. որպէս և կամիս, զիարդ մարթացիս ապել»: Եւ այսպիսի բանիք գրգրէին զքարտը Արշակ, մինչն հաստատին ի միտս բազաւորին զիւրեանց ասացեալս:

Ապա ոխացեալ բազաւորն ընդ պատանեկին Գնելոյ, և բազում անգամ հալածական առնէր. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհրդող բազաւորն Արշակ, կոչէր առ ինքն զպատանեակն Գնել և սպանանել: Ապա առաքէր զՎարդան զեղքայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդ մամք և նենգութեամբ կոչէլ կարասց, զի մի՛ խորհրդողն յայտնեսցի. գուց 229

փախիցտ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցտ մինչև ի տեղին մահուն: Եւ էր քանակ քագաւորին ի Հահապիվանի ի բուն քանակի տեղսն Արշակունեացն ի ներքոյ Սիւտեացն և ի վերայ ասպարիսացն: Եւ առաքեալ զՎարդանն՝ զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եզիտ զպատանեակն Գնել ի մօտադր տեղլոցն, այս ինքն ի զիլոն Առախտոց անուանեալ: Մեծաւ ուխտի և քազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իրով կնան և դրամբն՝ հաւանեցուցաներ երթալ հասանել ի քանակն արքունի. իբրև այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցտ քագաւորն, քազում խնդրանօք տարեալ հասուցանէր՝ երթ քագաւորն Արշակ ոչ կամնեալ զտօնս նաւասրդաց առանց քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի ըստ քանից շարախոսացն ոչ ինչ գտաւ ի քեզ շարութիւն. և եհաս ինքն ի վերայ, զի զուր այժմ ատէր զեզ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի եւ:

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իրով Գնել, երթեալ հասանէր ի քանակն արքունիզգիշերն ամենայն քազում փուրով տագնապաւ...:

Իսկ իբրև առաւոտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի քանակն արքունի. և մինչ Գնելն արքունական քանակին լիներ միջամուխ, ազդ լիներ քագաւորին եկն նորա: Ապա եղանէր հրաման յարքունուստ, արտաքս ունել և տանել սպանանել: Եւ մինչ դեռ զայր նա ընդ քանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իրում, իբրև մերձ եղն ի հրապարակն արքունի, և անդ ի յարքունուստ հասանէին քազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրատք սակրաւորք սուսաւորք և սպարակիրը հետոն ակը, որք մատուցեաց բուսն հարեալք ընկենուին յերիվարէ անտի զպատանեակն Գնել. և ծեսն յետս կապէին զնա, և առեալ զնային ի տեղի կառափելոյն: Եւ քանի կին նորա եկեալ էր ընդ ննա ժանուա, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իրում:

... Իսկ զպատանեակն Գնել առնուին զնային մօտ ի Սիւսն արքունի և անդն կառափէին ի սարակ լերինն որում տեղույն Լսին անուանեալ է, մօտ յորմածն արգելոցացն որսոյն երիոցն, ընդէմ մուրտաստանին աղբերացն քազուցացն արքունի, յանդիման քանակետեր թին:

Ապա հրաման եղն յարքայէն. «Ամենայն մարդիկն որ իցեն ի քանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ որ իշխեսցէ չերքալ. այլ ամենայն որ առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուն Արշակունի զպանեալն»: Իսկ ինքն քագաւորն զնացեալ ի լալիսն<sup>8</sup>, նստեալ լայր զենքօրորդիմ իր, որը ինքն նսպան: Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զպանելով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զիաներծման պատառեալ, զգէս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր. ծայն արկանելով ծէր, յորդս արտասուաց յաղիողորմ գուծի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ քագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տոփէր և ակն դնէր՝ առով զնա իր կնութեան:

Իսկ այն որ զնենգութիւն քսութեանց նիրեաց, և դատվ ի վերայ իրոյ հարագութիւնս<sup>9</sup> կատարեաց, վասն նորին կնոչն արար զայն. զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա: ԶՏիրիթն ասեմ, որ յառաջազոյն հարեալ ի կնոջն յանմիկ, վասն որոյ զնենգութիւնս սպանութեանցն քագաւորան գործեաց: Իսկ թոշն դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տոփանց: Պատգամ յուր առ կին մեռելոյն, ասէ զի «Մի կարի զանձն քո աշխատ ամեր այդշափ, զի այր-քարի ես եմ քան զնա. ես սիրեցի զրեզ, վասն այսորիկ նատնեցի զնա ի մահ, զի զրեզ առից ինձ կնութեան»: Արդ մինչ դեռ կոծ մոլոր քահակամբն ջայլէին, զայսպիսի պատզամս առաքէր Տիրիթն: Բոլոր քառնայր՝ թէ «Լուարութ ամեներեան, զի մահ առն ինոյ վասն իմ եղն. զի որ ինձ ակն եղ վասն իմ, զայր իմ ետ սպանանել»: Չիերն փետքէ, ճչէր ընդ կոծելն:

Ապա իբրև մեծ իրըն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն և ի ծայնարկութն ամենայն, եղն նա մայր ողբեցն, և ծայնարկութն ամենայն ի ծայն ողբեցն սկսան նուազել զիրսն տրվանացն Տիրիթայ, զակն դնելն, զբութիւնն, զինարս մահու նիրել զսպանումն, ծայնիքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի գինարսն մահու նիրել զսպանումն, ծայնիքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի գին կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ: Ի նուածել իրեանց մէջ կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ: Չոր իբրև լուար քագաւորն Արշակ, և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լիներ արմանայր ընտարմանայր, տրչացեալ ի միտ առնոյր զիրսն: Ապա խօսել սկսանէր քագաւորն, ծափս տրչացեալ ի մեծարծան սիրով հարաւ. Տիրիթն, առ յայն զայրիսն նիրեաց գինչն Գնելոյ զամարժան սիրով հարաւ. Տիրիթն, զոր գործեաց, ասէ. «Վասն զի ի զափի հարեալ մեծաւ զդզմամբ ընդ իրսն զոր գործեաց, ասէ. «Վասն զի ի կիրտէ կառափէին մինութեան կամարժան սիրով հարաւ. Տիրիթն, առ յայն զայրիսն նիրեաց գորութիւն, զոր և տարապարտ և զմեզ և ս արդար արքուն շաղախտեաց վասն իրոյ պղծութեանն, զեղրայրն իր ետ կորուսանել, և զամինարիմ շարիսն և զանէս որ ոչ անցանեմ ետ մեզ ժառանգել»:

Ապա իբրև հասանէր քագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմենեալ ծածկեցին անդէն ի տեղուցին յորում սպանան, և ատորք հարուստ անցին ի վերայ իրացն զործելոց, պատգամ յուր Տիրիթն առ քագաւորն: «Կամ լիցի, ասէ, թեզ արքայի, զի հրաման տացեսն զՓառանձեն կին Գնելոյ քոյ առ առ ինձ կնութեան»: Չոր իբրև լուեալ արքային, զոր և տարապարտ և զմեզ և ս արդար արքուն շաղախտեաց վասն իրոյ պղծութեանն, զեղրայրն իր ետ կորուսանել, և զամինարիմ շարիսն և զանէս որ ոչ անցանեմ ետ մեզ ժառանգել»:

Ապա իբրև հասանէր քագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմենեալ ծածկեցին անդէն ի տեղուցին յորում սպանան, և ատորք հարուստ անցին ի վերայ իրացն զործելոց, պատգամ յուր Տիրիթն առ քագաւորն: «Կամ լիցի, ասէ, թեզ արքայի, զի հրաման տացեսն զՓառանձեն կին Գնելոյ քոյ առ առ ինձ կնութեան»: Չոր իբրև լուեալ արքային, զոր և տարապարտ և զմեզ և ս արդար արքուն շաղախտեաց վասն իրոյ պղծութեանն, զեղրայրն իր ետ կորուսանել, և զամինարիմ շարիսն և զանէս որ ոչ անցանեմ ետ մեզ ժառանգել»:

Ապա իբրև լուար Տիրիթ, զաիի հարեալ յարքային, զոր գորութիւն, տայր հրաման յարքուն Արշակ պատզամս բանակին զինու լինել Տիրիթայ. զի իբրև քագաւորն Արշակ վասն տեսանէր զկինն սպանելոյն, տոփէր և ակն դնէր՝ առով զնա իր կնութեան, անդէն ի տեղուցին սպանցեան: Քազումք և քաջ զինու լինելին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի զաւառին բատենոյ ի մէջ մայրեացն. ի տեղուցին յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին:

Եւ յետ այսորիկ եւու իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն։ Եւ որչափ սիրեր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ ասելով՝ թէ «Թաւ է մարմնով, և թուխ է գունով»։ Ապա իբրև կինն ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց եած ամսի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմայի։ Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմային, և խնդրեր սպանանել զնա։ Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստիրմի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա, և ի չափ հասուցին։ Եւ իբրև ջրթափեաց և եղն հումկու, ետուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց։

Խսկ Փառանձեմն ի մեծ նախանձու և ոխուրեամբ գնայր ընդ Ողոմային, և խնդրեր սպանանել զնա դեղովք։ Իբրև ոչինչ հնարս մերենայից շկարեր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգոյշ կայր, մանաւանդ ի կերակրոց և յմպելեաց, բայց զիւրոց նածշտացն կերակուրս արարեաւ և կամ զնոցին պարգեալ զգինի ճաշակէր, և երեւ ոչ ինչ զտանէին հնարք դեղել զնա մահուան դեղօքն, ապա դրան երեց ոմն արքունի՝ որ էր ի ժամանակին յայն, որում անոն Մրջինիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն։ Տարօն գաւառէն, զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէն։ Չանարժանս զանկատար զանջնշելի զշարեացն մեղացն շմոռացական տաճանացն կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանլուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուս խառնելով, որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեք ի վերայ երկիր ոչ գործեցան։ Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման. երեցն Մրջինիկ անուն, տալով յեկենեցոցն Ողիմայիայ տիկնոցն ընծեռել զմահուն գործ, սպանանէր։ Ըստ շարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր. և յանօրէնն Փառանձեմայն պարզեւ առեալ շերիցուն զգեւն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անոն Գոմկունք կոչին։

#### (4-րդ ԺԵ)

<sup>1</sup> մահուան դեղուն ընդ օրէնսն-հաղորդաբերյան  
մեջ (խառնված) մահլան դեղով

<sup>2</sup> պատմական բացառական է, համապատասխան բայ-ստորոգայալ՝ ասէին,  
պատմէին, չի արտահայտված

<sup>3</sup> առ համբաւ ցանկութեան տրիեւալ լիներ-(այս)  
համբավից բորբռքվելով սիրահարվեց

<sup>4</sup> ի զարտագործսն անկանելիմն-),  
զարտնի հնարք որոնմ

<sup>5</sup> ենթական Վարդանը և նրա լրացումը  
ուղղականի փոխարեն դրված են հայցական հորովով

<sup>6</sup> այստեղ՝ գերդաստան, տուն ու  
տեղ իմաստով

<sup>7</sup> անցյալ դերքայը հոգնակի ենթակայի  
մոտ դրված է հոգնակի թվով, սովորականը  
եղակի թվով զործածությունն է

<sup>8</sup> լացողների մեջ  
<sup>9</sup> այստեղ ս-ն հոր է

#### ԵԶՆԻԿ ԿՈՂՄԱՑԻ (Տ-ՐԴ Դ.)

#### ԵՂԾ ԱՂԱՄՆԴԱՅ

(Հատուածք)

1

... Եւ երեւ զազանացն զազանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցտ նոց, զիտասցեն՝ զի կէսքն յանունոցն ի պէտս արարան, որպէս և արջան և ոչխար և ամենայն ինչ, որ ուտելի է և կրելի<sup>2</sup> է. և կէսքն վասն երկիւլ ի միտս մարդկան ծնուցանելոյ։ Զի թէ զազամբ ահազինք են, և վիշապք և օձք և այլ ծիր վնասակարք, և՝ մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ աստուծոյ երկիւլին սահմանս արտաքոյ ելեալ անսաստ, երեւ այնպիսի զարդութեցուցիք չէն՝ ո՞չափ և ս առաւել չկայր երբեք յակաստանի։

Նա և նորին իսկ, որ շարքն կարծին անմտաց, երբեք երբեք օգտակար լին և զերծուցիչը ի մահուան։ Զինչ չար քան զօծ կայցէ, և ի նման թերիսակ և ի սպանող դեղող, որք ի նենգութեն մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժ։ Երեւ բնութեամբ չար ինչ էր օծ, կամ շարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենն ին ի նմա օգտակար, և ոչ զգօնանայր երբեք ի զազանութեն անտի իւրմէ. նա աւանիկ<sup>4</sup> տեսանեմք ի հնարազիտութեն թովչաց զգնացեալ, և իբրև զշուան խաղալիկ է նոցա, և բազում անգամ բնակեալ ի տան՝ շնեղանշն բնակչացն։

Եւ արդ երեւանս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցտ, յանդիմանեսցի յիւրոց արուեստակցացն օճապաշտացն. որ այնչափ զգօնացուցանել<sup>5</sup>, որ զօծ զիտեն, մինչև կոչել՝ յուտքիք ի տունս, և կերակուրս մատուցանել, որպէս Բարիլացիքն վիշապին՝ զոր պաշտէիմն...։

Եւ երեւ մոզ իցէ, և շարի արարած զգազանսն վասն զազանութեանն ասիցտ. ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեսցի։ Զի երեւ զազանքն աշարի արարածը իցեն, և երկիր բարտոյ, զիա՞ն բարտոյն արարած շարին արարածոցն դայեակ մտեալ սնուցիչ լինիցի, որք ի նման կերակրին և ի ծոց նորա հանգչին. զի երկու հակառակ իրերաց՝ միմեանց ծախչիք են, որպէս յաւարի լոյս, և զեր սառնամանեաց։

Արդ երեւ զազամբ չարի արարածը էին, և երկիր բարտոյ, ծախչի պարտ եր զնոսա երկիր՝ և ոչ սնուցանել, սպասել և ոչ սերել. ապա երեւ երկիր և զգա-

զանսն սնուցանել և ոչ ապականել, յայտ է՝ եթե յորմէ արարչէ Երկիր լեալ է, ի նմանէ և զազանքն արարեալ են. և շիր ինչ չար բնութեամբ. քանզի շիր ինչ չար արարիշ բնութեամբ: Եւ մանաւանդ թէ և զազանք իսկ, զորոց ասէն՝ թէ ի չար արարչէ Եղեալ են, ցուցանեն թէ չեն ուստե՛ այլ յերկրէ, այնու զի յերկր կերակրին և ի նմա բնակեն, և անորէն ի նոյն շրջեալ հողանան:

Նա՝ թէ և ի չար ինչ էին չար արարեալը, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտաներ, այլ ամենն ին իսկ վնասակար: Իսկ արդ եթե տեսանեմք, զի կիսոց մորքքն պատսպարան մերկութեան մերոյ լինին, և կիսոցն ճրագուն դեղենիլ լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իրարանշիր մի ըստ միոցէ, յայտ է՝ եթե ի բարոյ արարչէ լենու են, վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա: Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորք և միս. այլ նոցա որպէս զմորքն զգենումք, և ոչ վնասէ, և զմինն եթե սիրու ուրութ անոյք<sup>6</sup> և ուստե՛ ոչ վնասէր. որպէս վարազի՝ որ զազանագոյն է քան զամնայն զազանս՝ ուսի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթե ուստե՛ ոք՝ չվնասէր:

Եւ յարջառ, զոր ասեն՝ եթե ի բարոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութին: Զցլու միս ուստե՛ դարման է մարմնոյ, բայց եթե զարինն որ ըմպիցէ՝ սատակի: Նոյնպէս և ի բանջարս՝ բժշկիշ պէսպէս ցաւոց լինի: Զմանրազորն եթե ոք լրկ ուսիցէ՝ սատակիշ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ բնածու լինի բնահատաց: Եւ զհազար՝ եթե ի տօր ժամանակի ուսիցէ ոք, քանզի զովացոցիշ է, գտապս ի փորոյն փարատ. և եթե ի հով ժամանակի ուսիցէ ոք, վնասէ. և եթե զորուն քամնալ անապակ ընայիցէ ոք, սատակի. և եթե զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկան: Եւ կանեփուկն բուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է, և նոյն դարձեալ կասեցուցիշ ցանկութեան: Եւ մողախինտոյ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի տպանող է, նովիմք զմաղն հնացեալ հնարին բժիշկը հատանել: Եւ կաղանչանան ազգ ինչ՝ առանձինն սպանող է, և խառնեալ ընդ այլ դերոյ՝ մաղձադեղի է բուժիշ ի մահուան:

Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթե չար ինչ բնութեամբ իցէ. բայց աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց զի և ի դարմանիչս մարթիցէ վայելել. և որք վնառափար կարծիցին, և անտի ևս հնարիք օգտակարութինս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբար անմտացն՝ թէ շիր ինչ որ բնութեամբ չար է:

(1-ին, ԺԵ)

<sup>1</sup> այստե՞ օրինակ, ինչպես օրինակ

<sup>2</sup> կրեի-կրոյ, քեա տեղափոխող

<sup>3</sup> այստե՞ բայց, իսկ

<sup>4</sup> ուստամիկ-ահա, մինչեւ

<sup>5</sup> գործածկած է դիմավոր բայի նշանակությամբ

<sup>6</sup> սիրու առնով- սիրտը վերցնել, սիրտը տանել, ախորժել

<sup>7</sup> ավելադրություն է

Այլ և վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ: Մին ասէ՛ թէ «Ի մերում գետ<sup>1</sup> ծովացով զկով գործեաց<sup>2</sup> և զգոչինն հանապազ մեք լսեմք ամենեթեան»: Եւ միսն ասէ. «Զպայն իսկ իմ աշօք տեսեալ է»:

Միրէ և զարախզէն ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և եթե յառաջին ժամանակսն արալելզ լիզէն զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցէն և ողջացուցանիցէն. ոչ նոյն պատրազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ յայնժամ, ասեն, դիցազունք էին:

Եւ մեք զդիցն իսկ պահանջեսուք ի նոցան: Մարմնաւո՞ք էին արդեօք ոփն, թէ անմարմինք: Եթե մարմնաւորք էին, յայտ է, թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին. ապա եթե անմարմինք էին, չեր մարք անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանք: Զի եթե այսն հնար ինչ էր, ոչ երբեք դաղարեր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել. զի որ անմարմին ոք է, նաև և անսերմն է. վասն զի մերսն մարմնաւորաց է, և ոչ անմարմնոց...»:

Այլ և վիշապք, ասեն, և նհանզը կեղծս ի կեղծս լինին<sup>3</sup>. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր:

Վիշապն՝ ոք մարմնաւոր է, զիր կերպարանսն ոչ կարէ փոխել: Զի եթե հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանսն լինչ և կամեր. այլ որպէս մարդոյ ոչ հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին:

Նաև և ոչ նհանզ ինչ անձնաւոր զոյ, բայց եթե դն ի տեղին բնակեալ իցէ, և մերք կերպարանիցի, և մերք վնաս գործիցէ: Եւ ոչ վիշապք զտոհմականս արդիանց<sup>4</sup> կրեն, և ոչ զրաստ զոյ նոցա՝ եթե զարդինս ի կալոյ ուրեք կրիցեն, և ի զոր է կալ կալն ասել ումեք ի կալն՝ և ոչ առ ան: Զի վիշապն որ ինքն զրաստ է, այնու զի անաստուն է, զիարդ՝ որ ինքն զրաստ է՝ զայլ զրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ ինչ բնութինս չէ՝ եթե ոչ օծի, այն յայտ իսկ է: Եւ զօծ յաղբանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչեն զիրք վիշապ. որպէս զմարդ յաղբանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօծ ցամարային անճոռնի, և զգազանն ծովական լեռնածն, զկիտացն ասեն և զետիփինաց, վիշապս անուանն. ըստ այսն թէ դր զախչախեցեր զգուխ վիշապացն ի վերայ ջուրց. և ետուր կերակուր ժողովորոց Երովացուց:

Տեսանե՞ս, զի զծկուսն մեծամեծն ծովածին՝ վիշապս կոչեն զիրք. և յայտ անսի է՝ թէ զծկանց ասէ, այնու եթե ետուր կերակուր սզգաց Երովացուց. թէ պէտ և աստ այլք ի սատանայ առակեցին զվիշապն, որպէս և զայն զոր Յորս

գրեալ է: Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օքք մեծամեծք ցամաքայինք, կամ ծկունք անարդիք ծովականք. զորոց ասեն, թէ լեռնաբերձը և մեծամեծք են. և որս և կերակուր նոցա մանր ծկունք են, որպէս և օքք մեծամեծաց մանր մանր ինչ ճճիք կամ անասունք: Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք իրքն մարդկան են նոցա ի բնակութին. և ոչ զոք ի բազատրազգեան և ի դիցազանց ունին կապեալ առ իրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնատրաց երկու և եր կան, ենովք և Եղիա:

Այլ որպէս զԱղեքսանդր խարէին զնքք-թէ կենդանի կայցէ, որոց ըստ եզիաւական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զղն ի շիշ, կարծեցուցնին, թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ. և զարուստն Քրիստոսի խայտառակեաց զիսարէութինն, և երարձ ի միջոյ զգայքակղութինն: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիցազաշտու Հայոց, երէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա եկանելոց և ունելոց զաշխարհս, և ի սմուտի յոյս կապեալ կան ամհաւատք...:

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ, և ի սմուտի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաշս մարդկան զվիշապս, զի յորժամ ահազինք երև եսցին ունանց՝ առնուցուն զնոսա ի պաշտօն: Կարծեցուցանէ թէ և նիհանզը ինչ իցեն գետոց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նիհանզի ինն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչեն թիւրեցէ: Զի երէ եր ինչ նիհանզն անձնատր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երև եր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոսու անկեալ՝ հեղծուցանէր. այլ կամ կին կին կայր, կամ փոկմ փոկ.

Նոյնպէս և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերք մարդ երև եր և մերք օծ, որով և զօճապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օծածն երև եր, և միւս անգամ մարդակերպ, որպէս յառաջադրյն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնատր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել:

Այլ թէ ի կալս զորիք և ուղտք երև իցին՝ դիւաց կերպարանք են այն<sup>5</sup>, և ոչ վիշապաց. և երէ ի դաշտս երազազանք ձգիցին, և հեծեալք իրքն զմարդիկ զիես երէոյ արշալիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշնարտութիւն ինչ իրաց. և երէ ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երև իցին, սատանայի կերպարանք են: Քանզի նիհանզ ինչ անձնատր չիք, և ոչ ի մարդ իբրև զղն մտանէ վիշապ, որպէս ունանք ի շշելոյ դիւահարին կարծեցին, քանզի մարմնատրի ի մարմնատր չէ հնար մտանել: Եւս երէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ երէ եղամքք ինչ անուանելով՝ այլ ծածուկ զօրութեամբ իսկը յաստուծոյ հրաման, զի մի՛ շոգին՝ մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օքից՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ 236

բրիորս գտանիցի՝ ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել, զի հայեցեալ ընդ քրագմ՝ ոչ մնանչիցէ մարդոյն օճն:

(1-ին, ԻԵ)

<sup>1</sup> ակրական՝ ի մերում գեղչ

<sup>2</sup> գրծնէ այստեղ՝ ծնել

<sup>3</sup> կողն ի կեղծս լինին՝ զանազան խարուկի կերպարանքներ են ընդունաւմ և նառականով ավելարություն եւ.

արտերիք թերքը

<sup>4</sup> օժանդակ բայր թվով համաձայնել է սովորոցելիական վերադրին, իսկ ենթակամ՝ այն, նզակի է

## ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (Տ-ՐԴ Դ.)

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՌԱՅՈՑ (Հատուածք)

Յատիրս Ժամանակացն այնոցիկ զօրաժողով լիներ իշխանն Գրաց, և բազում գորաց ժողովեալ՝ զայր տալ մարտ պատերազմի ընտ իշխանին Յունաց: Պատգամս յդէր օրինակաս այսուիկ, եթէ «Ընդէ՞ր» բնաւ եւանեմք խանճմիսի<sup>1</sup> ի պատերազմ՝ սպառել զօրս մեր, և վտանց և տագնաապ միանգամայն<sup>2</sup> աշխարհի հասուցանեմք. ես ասասիկ ախոյեան եւանեմք քեզ ի մերոց զօրաց աստի, և դու ինձ ի յունականաց այտի. հասցուր եկեսցուր ի մարտի տեղի. եթէ ես զրեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեցին ի ծառայոթին. և թէ դու ինձ յաղթեցես՝ մեր կեանք քեզ նուանեցին և հնազանդեցին. և առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն կողմանց երկոցունց»:

Եւ իրըն զայն ամենայն լուաւ թագաւորն Յունաց՝ երկեաւ. քանզի օրինօր կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձնն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարեր ունել յանձին, քանզի տկար էր յուսկերաց զօրթեամբ. սրտաթափ եղեալ զարդութեաւ, քանզի ոչ զիտէր, զինչ տացէ քանիցն պատասխանի:

Յայնմ Ժամանակի իրաման տայր թագաւորն՝ իրովարուակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան<sup>3</sup> իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի: Յայնմ Ժամանակի իշխանք և զօրք և նախարար առ նա հասանէին վաղվաղակի: Առնալ և Լիկիանէ գրուն գունդն որ ընդ իւրով ծեռամբն էր՝ փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման լինել թագաւորին, և Տրդատէս ընդ նմա:

Եւ մինչ դեռ գային գունդը զօրացն՝ դէաւ եղև նոցա զալ մտանել ի նեղագյուն տեղի մի, յառուամէջս այգեստանւոյն, ի փողոցամէջս համբարոցացն, առ դրուն քաղաքին. քանզի զորունս քաղաքին աղխեալ էր<sup>4</sup>, զի ժամ էր հասարակ գիշերոյ: Իրըն ոչ զտաւ խար երիվարաց զօրուն քազմութեան դարման կերակրոյ մինչևս ի մէջ զիշեր՝ հայեցեալ տեսանէին ի զուարափակ քաղաքորին միոց, զի խոտահամբար մթերեալ էր. և ոչ ոք կարաց ծգել զգեռն իւր վասն որմոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ և իշխալ՝ հոսէր ընկենոյր բարդու բարդու՝ ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի<sup>5</sup>: Նա և զիամբարա-

քանսն իսկ բազումս ի շանց յայսկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինըն մերեն ելեալ իշխանէր:

Զայն ամենայն ոյժ պնդութեան տեսեալ Լիկիանէս զարմացաւ: Իսկ իրըն պան զառաօտնի մերկացաւ՝ դրունք քաղաքին բացան, և զօրքն ամենայն առարակ ի ներքու մտանէին. և Լիկիանէս յանդիման լիներ թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրազուիչքն և իշխանքն:

Ապա կաց պատմեաց թագաւորն իշխանացն զամենայն պատզամս թագաւորին Գրաց: Յայնժամ խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. «Մի՛ թէ զարդութեացի սիրու տեառն իմոյ. զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իրքու այդ նովա վճարին<sup>6</sup>: Տրդատէս անուն նորա, ի տոհմէ թագաւորին Հայոց աշխարհին»: Եւ կաց պատմեաց զերեկորին զգործն քաջութեան նորա: Յայնժամ հրաման եւս, և ածին գՏրդատիոս յանդիման թագաւորին. և պատմեաց նաև կարգաւ զամենայն: Յայնժամ ժամ եւուն կազմութեան մարտի՝ առ ի ծամ վաղուի զմինեանս տեսանել պատերազմաւ:

Իսկ ի միւտում աւուրն ընդ այզն ընդ առաօտն հրամայեաց արկանել ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական, արկեալ զնովա միջան թագաւորութեանն. և ոչ ոք զիտէր վասն նորա. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց թագմութեան՝ ի ծայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցաներ մինչևս յանդիման թշնամեացն: Իրըն յանդիման նենս միմեանց կայսերակերպն և թագաւորն՝ մտրակ ի կոչտ արարեալ<sup>7</sup> երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերքակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր:

Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարզև ս ես նմա. թագ կապեաց ի զլուս նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու շքեղացուեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ծեռու նորա զօրս թագումս յօգնականութիւն նմա, և արծակեաց յիրական<sup>8</sup> աշխարհն Հայոց:

Եւ յետ մարտին յաղթութեան քաջութեանցն զոր արար՝ դարձեալ լիներ ի կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց Մեծաց: Խաղաց զնաց թագաւորն ի կողմանս Հայոց, և եկն եզիտ անդ զօրս թագումս Պարսից, զի զաշխարհն յինքանս զրաւեալ էին ի ծառայութիւն. զբազուն կոտորէր, և զբազուն փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. և զիայրենեացն տէրութիւն յինքն նուանեաց, և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա:

Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց զաւառ, ի գեւզն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ

զոհս մատուցեն. և իբրև կատարեցին օգործն անարժանութեան՝ իջին բանակեցան առ ափս գետոյն գոր Գայլն կոչեն:

Իբրև եկն եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ զինիս մտի՛մ հրաման ետ բազաւորն Գրիգորի, զի պասակս և քաւ ուստ ծառոց նուէրս տարցի բազմին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել ոյցն երկրպագութեան:

Յայնժամ խօսել սկսաւ բազաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այր մի օտարական և անաշխարհիկ՝<sup>10</sup> եկիր յարեցար ի՞մեզ, և զիարդ իշխես պաշտել զնստուածն զայն, զոր ես ոչ պաշտեն»: Եւ առ այս օր պահել հրամայեաց: Եւ ի վաղին անդր հրաման ետ, և ածին զԳրիգորիոս առաջի բազաւորին:

Խօսել սկսաւ բազաւորն ընդ Գրիգորի և ասէ. «Այսչափ ամք են, զի տեսի ես զբեզ, և յամենայն զօրութենէ քումտ ծառոյեցեր դոր ինձ միամտութեամբ. և ես զի էի զվաստակոց քոց և ունեի ի մտի կեցուցանել զբեզ. ընդէ՞ո ոչ առնես զկամս իմ»:

... Եւ մինչդեռ խորիէր Տրդատիոս խօսել և այլ ողոքով ընդ նմա, յառաջ մատուցեալ ոմն ի նախարարացն, որում անուն էր Տաճատ, փեսայ Արտաւանյ սպարապետի արքայի՝ սկսաւ խօսել և տալ տեղեկութիւն և ասել այսպէս վասն նորա, թէ «Զի այսքան ժամանակը են, որ առ մեզ բնակեալ է, և ոչ գիտէաք զաա. այլ դա է որդի Անակայ մահապարտի, որ սպան զիայր քո խոսրով, և արար խաւար Հայոց աշխարհիս և ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն. արդ՝ չէ պարտ կեալ դմա, զի որդի վրիժապարտի է դա»: Արդ՝ իբրև այնմ ևս հասաներ բազաւորն ի վերայ իրացն, եթէ արդարը որդի Անակայ Պարքն ի է, որ սպան զիսորով հայր նորա՝ հրաման տայր կապեալ ոտիքը և կապեալ ծեռօր և կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱրարատ գաւառ, և տալ զնա ի դեեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորութեամբ, մինչև անդէն մնոցի: Եւ եղն նա յայն վիրապի ամս երերտասան:

... Եւ զայն ամս երերտասան, որ եղն Գրիգորիոս ի բերդին բանդին և ի խոր վիրապին, կին ոմն այրի, որ էր ի բերդին յայնմիկ, հրաման առեալ յարհակաց<sup>11</sup> զի աւորն նեկանակ մի արարեալ պատրաստական ընկենով ի ներքս ի խոր վիրապն. և այնու կերակրեալ լինէր նա ի հրամանէն Աստուծոյ զայն ամս որ եղն նա անդ: Խսկ այն վիրապ, ուր ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի շնորհի Տեառն իրոյ: Խսկ այլ մարդկէ, որ միանգամ իջուցեալ էր անդր՝ ամեներեան մեռեալ էին վասն դժմդակ շարաշունչ դառնութեան տեղույն, վասն կարակուս<sup>12</sup> տղմին, օճախառն բնակութեան և խորութեան: Վասն շարագրծաց խսկ էր շիմեալ զայն տեղի և ի սպանումն մահապարտացն ամենայն Հայոց:

... Յայնմ ժամանակի զայր հասանէր դեսպան առ Տրդատ արքայ Հայոց Մեծաց, և յանդիման լինէր քագաւորին ի Վաղարշապատ քաղաքի: Եւ իբրև մտույց գիրովարտակն՝ առ ի ծեռանէ նորա խնդարով: Եւ էր պատճեն հրդարտակին օրինակ զայր.

«Խնդնակալ կայսր Դիրկղետիանոս, առ սիրելի եղբայր արքուակից մեր Տրդատ, ողջոյն:

«Գիտութիւն լիցի եղբայրութեանդ քում նիզակակցի մերում վասն շարեաս, որ անցանեն ընդ մեզ համապազ ի մոլար աղանդէս քրիստոնէից. զի յամենայնի դարսովեալ լինի տէրութիւնս մեր յուխտէ նոցա, և արհամարիեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ. և ինչ համեստութիւնս ոչ զոյ ի նոսա: Զի ինքանք զմեռեալ ուն զիսաշեալ պաշտեն, և փայտի երկիր պագանեն, և զուկրս սպանելոցն պաշտեն, որ զիւրեանց մահն, որ վասն Աստուծոյն իրեանց է փառս և պատիւս համարին: Եւ ի մերոց արդար օրինաց դամարտաբանալ լինին. վասն զի և զմեր զնախնիսն, զառաջին հարսն գրազաւորսն, դառնացն առնեալս ծանծրացուցին. զի մեր սուրբս բթեցան, և նորա ոչ զարիութեցան ի մեռանելոյ: Զի ինքեանք զիւս Հրեի ուրումն խաչելոյ մոլորեալ են, և զբացուրս անպատճեն ուսուցանեն, և զիսովին իսկ զպատկերս ոյցն զաստուածոց անարգել ուսուցանեն...»:

«Դէպ եղն տեսանել ինձ յաղանդոյ ուսման նոցա օրիորդ մի կոյս և գնդեցիկ, և կամեցայ առնով զնա ինձ կնութեան. սակայն և զայն իշխեցին խորամանցել յինէն: Եւ ոչ իբրև ի բազաւոր ցանկութեամբ փափաքեցին յիս. և ոչ ի սաստից սպառնալեաց յինց երկեան ինչ նորա. այլ առաւել ևս վասն աղանդըն իրեանց՝ աղտեղի և այնդ և գարշ համարեցան զիս, և սոնցիչ նորին դայեկան ի կողմանն ծերոյ տէրութեանդ փախուցեալս յուղարկեցին:

«Արդ՝ փոյք լիցի քնզ, եղբայր մեր, զի ուր և իցեն զկողմամբք զայրորիք՝ զիւսու նոցա գտանել մարքացես. և որ ընդ նմայն յիտն դայեկան հանդերձ՝ վրիժուց մահու արժանի արասցես. և զիրապուրեալն զքնարդագեղն ինձ ի սոյն այսրէն յուղարկեցես. ապա թէ հաճոյ թուեսցի քնզ տեսիլ գեղոյ նորա՝ այլորեն առ քեզ պահեսցես, զի ոչ երբեք գուա նման նմա ի մէջ Յունաց աշխարհիս: Ուշ իմը ոյցն պաշտամամբ ամենայն պատուվ»:

Եւ եղն իբրև ընթերցան զբուրքն հրամանաց հրդարտակին այնորիկ՝ հրաման տայր բազաւորն մեծաւ սաստկութեամբ պատուիրանաւ, զի զամենայն տեղին իշխանութեան իրոյ բննայոյց փութով խնդրեսցն<sup>13</sup>: Վաղվադակի դեսպան արձակէր ընդ կողմանն կողման, զի ուր և գոցեն՝ ի մէջ ածցեն վաղվադակի, և որ գոցէ զնոսա՝ մեծամեծ պարզնս հասուցանել խոստանայր:

Մինչդեռ յայն յոյզ քննութեան<sup>3</sup> էին յաշխարհին սահմանացն Հայոց՝ սովոր վկայքն այնորիկ եկեալ դողեալ էին յարքայական կայանին, ի նմին թագաւորականին ի Վաղարշապատ քաղաքի...:

Գտեալ լինէին նոքա ի հմձանս շինուածոցն...: Իսկ ի միւսում ատրին ընդ այզն ընդ առաւոտն, և ևս վաղագոյն, հրաման ելեալ ի թագաւորէ անտի, զի գերաննելին Հոփիսիմէ տանել յարքունիս, և զուրբն Գայիանէ անդէն պահել պարկեշտ ընկերօրն հանդերձ:

... Ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի ի տեղի անդր իշխանք թագաւորին, և դահճապետն դահճօրն հանդերձ ընդ նոսա, և ջահք լուցեալ առաջի նոցա: Եւ մատեան վաղվաղակի, կապեցին զնա (զՀոփիսիմէ) ծեռս յետս, և խնդրէին զի հատցեն զլեզուն: Իսկ նա իրովի կամօք բացեալ զբերանն՝ հանեալ մատուցանէր զլեզուն:

Եւ անդէն գիանդերձիկն պատառոտուն որ զմովաւն էր՝ ի քաց զերծուին ի նմանէ. և հարեալ չորս ցիցս ի գետինն, երկուս ոստիցն և երկուս ծեռացն և պրկեցին զնա. և մատուցին զկանթեղունան. այրէին և խորովէին զմարմինն նորա իրով կանթեղացն: Եւ քարինս վարեցին<sup>14</sup> ընդ գուս նորա և ի վայր վարեցին զայիս նորա. և մինչդեռ կայր կենդանի փորեցին զաշս երանելույն: Ապա անդամ անդամ յօշէին զնա և ասէին, եթէ «Ամեներեան որ իշխեսցեն անգունել և անարգել զիրամանս թագաւորաց՝ ըստ դմին օրինակի կորիցեն»: ... Իսկ ի վայի անդր մատուցեալ՝ առնդր հրաման դահճապետն վասն սրբյան Գայիանեայ սպանման:

... Արդ՝ ի քսան և ի վեց ամսոյն հոռի կատարեցաւ սուրբն Հոփիսիմէ դասուն սրբով, երեսուն և երեք նահատակակից ընկերօրն հանդերձ. և ի քսան և եօթն ամսոյն հոռի՝ սուրբն Գայիանէ երկու իրովով ընկերօրն, որք ընդ նմա պատերազմեալ պսակեցան և առին զպսակն յաղութեան:

<sup>1</sup> Խառնիխուռն կերպազ

<sup>2</sup> այսուեր միաժամանակ

<sup>3</sup> սեռականով ավելացրույն

<sup>4</sup> աղյսեալ էր (նոցա)՝(մրանք) վասկե էրն

<sup>5</sup> քարդս քարդս-դեզ-դեզ

<sup>6</sup> այսուեր կկատարվեն

<sup>7</sup> մտրակ ի կուշտ առնել-մտրակել

<sup>8</sup> իրական-իր

<sup>9</sup> պաշոնատար լինել երկրագործեան-երկրագոր

<sup>10</sup> օտարական, պանդուխտ

<sup>11</sup> արհավիրք, այստեղ՝ զարհութելի երազ, տեսիք

<sup>12</sup> կարակում-ցեխուոտ, ճահճոտ

<sup>13</sup> քննայոյց խնդրել-որոնել

<sup>14</sup> վարել, այստեղ՝ զցել, լցնել

## ՄՊՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (Տ-ԲԴ Դ.)

### ՊԱՏՄՈՒԹՔԻՆ ՇԱՅՈՅ (Հատուած)

Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց

Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց իշխատակի բամբասանաց թողով, այլ աստեն իսկ, ի սկզբան մերոյ գործառնութեանս, վասն նոցա կշտամբութեան յարմարել զրանս<sup>1</sup>: Զի թէ արդարն արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն, որք գրով և պատմութեամբ գիրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս<sup>2</sup>, և զգործս իմաստութեան և գրադութիւն իրաքանչիր արձանացուցին<sup>3</sup> ի վէպս<sup>4</sup> և ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ<sup>5</sup> և պարապեալքն այսպիսում զգնութեան<sup>6</sup> դիւնազիրք մատենից ներդողականաց ի մէնց արժանի ենեն ասից<sup>7</sup>. ի ծեռն որոց և մեք յընթեռնուզն զար<sup>8</sup> ի նոցանէ շարածս քանից<sup>9</sup> կարգաց իմաստնանալ ասիմք, և քաղաքականս ուսանել կարզս, յորժամ զայսպիսիս<sup>10</sup> ընթերցափրեցն իմաստութեան<sup>11</sup> ճառս և գրուցատրութիւնս<sup>12</sup>, որք են<sup>13</sup> Քաղդեացոց և Ասորեստանեայց, Եզիպտացոց և Հելենացոց. առ այսորից<sup>14</sup> և փափացիցնք և ս արդեօք<sup>15</sup> իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյք յանձին կալան. ապա ուրեմն ամենեցուն մնզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն<sup>16</sup> տիմարութիւն, և անկատարութիւն ոգույն քանականի: Զի թէպէտ և եմք ածու փոքր, և քուվ յոյժ ընդ փորու սահմանեալ<sup>17</sup>, և զօրութեամբ տկար, և ընդ այլով<sup>18</sup> յորվ անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն քազում գործք արութեան գտանին գործեալ<sup>19</sup> և ի մերում աշխարհիս, և արժանի գոյու յիշխատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենազրել: Արդ՝ այնորիկ, որ և ոչ անձանց յորդեցան քարի առնել, և անուն յիշխատակի աշխարհի թողով, զի՝ արդեօք և մեղադութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահից<sup>20</sup>, զևս մեծագոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա:

Այլ ասիցէ ոք արդեօք<sup>15</sup>, վասն ոչ լինելոյ զիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կոտ զմիմեանց զկնի ի վերայ գային: Այլ ոչ արդարն այսորիկ կարգեցեալ լինի. քանզի զտանին և միջոցը լեալ պատերազմացն. և զիր Պարսից և Յունաց, որովք այժմ զիւլից և գաւառաց,

ևս և իրաքանչիր տանց առանձնականութեանց<sup>22</sup> և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբար զրուցաց<sup>23</sup> մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն<sup>24</sup>: Այլ ինձ բովի, որպէս այժմ և առ իինսն Հայաստանեայց լեալ<sup>25</sup> անսիրելութիւն իմաստութեամբ երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս արանց անբանից, թուլամտաց, վայրենեաց ճառել:

Բայց ընդ քո<sup>26</sup> յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն<sup>27</sup>, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուս միայն գտար զայսպիսոյ մնձել իրէ բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել<sup>28</sup> - երկար և շահաբ գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդի՛ զբագատրացն և զնախարարականաց ազգաց և տոհմից թէ ո՞վ յումնէ, և զի՞նչ իրաքանչիր որ ի նոցանի գործեաց, և ո՞վ ոք ի ցեղից որոշելոց<sup>29</sup> ընտանի և մերազնեայ, և ո՞յք ունանք եկը ընտանեցեալը և մերազնացեալը. և զգործն և զժամանակս իրաքանչիր զորվ որոշմել, ի ժամանակէ ամկարդ ամբարտակին շինուածոյ մինչն ցայժմ.- գեղեցիկ զայս քեզ համարեալ ի փառս և անջան հեշտութիւն<sup>30</sup> ...:

(1-ին, 4)

- <sup>1</sup> փիս. զբան կշտամբութեան յարմարել
  - <sup>2</sup> փիս. հաստատեալ կարգեցին զիրեանցն զժամանակս-հաստատեցին
  - <sup>3</sup> իրենց ժամանակները
  - <sup>4</sup> այստեղ՝ արծանագրեցին
  - <sup>5</sup> վէպ. այստեղ՝ պատմություն
  - <sup>6</sup> բայտ նոցանէ-մրանց պէս
  - <sup>7</sup> այսիսուն ճնորժեան-այսպիսի ճնորժյամբ,
  - <sup>8</sup> այսպիսի ծամր աշխատանքով
  - <sup>9</sup> փիս. ներբողականաց ասից
  - <sup>10</sup> առ նախդիրը գործածված է որպես ավելացություն, իսկ զ-ն վերաբերում է շարած բառին. զայս ի նոցանէ շարած բառից-
  - <sup>11</sup> մրանց կորդից շարադրված զրվածքները
  - <sup>12</sup> այստեղ՝ աշխարհական, աշխարհիկ
  - <sup>13</sup> ծառս բարի լրացմնն է
  - <sup>14</sup> առ այսորիք- (սրանց) սրա հետ միասին
  - <sup>15</sup> այստեղ՝ գուցն
- <sup>16</sup> այստեղ՝ գիտություն
  - <sup>17</sup> ընդ փոքր սահմանեալ-սահմանափակ
  - <sup>18</sup> բազատրութեամբ բարի լրացմնն է
  - <sup>19</sup> գտանին գործեալ-կատարվել են
  - <sup>20</sup> ի ճան պատահեկ-հարմար լինել, հարմար գաև, հարմարվել
  - <sup>21</sup> գոտանին լեալ-ունեցել են
  - <sup>22</sup> սեփականություն
  - <sup>23</sup> այստեղ՝ պատմություն
  - <sup>24</sup> ի սեպհական ազատութեան պայազատութիւն-իշխանական, ազնվական ծագման վերաբերյալ
  - <sup>25</sup> դիմավոր բայի նշանակությամբ է գործածված՝ եղել է
  - <sup>26</sup> հեղինակը խոսքն ուղղում է իր մեկնասա Սահակ Բազրութունուն, որի թելարանքով գրել է իր «Պատմությունը»
  - <sup>27</sup> ընդ մտացդ ծննդականութիւն-քո մտքի բերմնավորության վրա
  - <sup>28</sup> մեզ առաջարկեցիր հետազոտություն
  - <sup>29</sup> կատարել
  - <sup>30</sup> այստեղ՝ բաժանված

## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Հատուած)

Վասն երկպառակութեան իշխանին Սիմեաց և ընկերաց իրոց

... Այս անօրէն Սիմեոներսնի, քանզի յառաջազրյան ստուգեալ<sup>1</sup> գիտէր զամարշութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի ևս յդէր և կոչէր զնա առ ինքն: Որպէս նորա իսկ յառաջազրյան զատեալ և որոշեալ էր ի միարանութենէն Հայոց, եկն և յանդիման եղն. և ստուգէր<sup>2</sup> զիր հաւատարմութիւնն և զՀայոց անրա ապատամբութիւնն: Յաւել և պատմեաց ևս առաելարանութեամբ զոր միշ էր գործեալ Հայոց, և կամէր ընտաներար ընդ միտ մտանել<sup>3</sup> անօրինին:

Բայց նա թէպէտ և ի ներքոյ յոյժ դպրովէր զնա, այլ արտաքին դիմօր մեծարեաց, և եղ առաջի նորա զմեծամեծ պարզեւ երկրաւոր: Եւ խոստացաւ նաև իշխանութիւն աւելի քան զոր ունէրն, և հայեցոյց<sup>4</sup> զնա ի կարծիս սնուտիս, որ ի վեր քան զիր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի բազատրական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեսցէ, թէ որպէս քակտեսցի միարանութիւն ուխտին Հայոց, և բազատրին կամքն կատարեսցին յաշխարհին:

Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երբալ զկնի կամաց նորա, զիտաց և ծերն դառնացեալ, եթէ բմբրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէն միարանելոցն. յոյժ միսիրարեցաւ ի միտս իր տրումնեալս, և էած զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմ որսալ յանզիտս կորուատն...:

Ձեռն էարկ կամակորութեամբ և ենուտ յորդէգրութիւն զիսապաշտութեանն, և եղն աման շարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ: Ի ձեռն էառ իբրև զվահան, և ազաւ զնա իբրև զգրահան, և եղն իբր զինուոր կատարեալ կամաց նորա: Մարտեալ հնարիդ ընդ իմաստուն, և յոյժ խորագիտութեամբ ընդ զիտուն, յայտնի ընդ անմեղս, և ի ծածուկ ընդ ինրիդականս. ձեռն էարկ և եհան զբազում ի զնուցն Քրիստոսի, և խառնեաց ինրիդական: Ձեռն էարկ և եհան զբազում զրուցաց առ ուղեցաւ և ենուտ իբրև զօծ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազում յազատաց և զբազմազրյան ի շինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայից....:

Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւն, և արար գունդ զօրաց բազմաց, զրեաց և եցոյց զբազումս ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով՝ որպէս աշակերտեաց ի մոլորութիւն խարեւութեան, և բաժանեալս և երկցեղս՝ երև եցոյց զօրսն Հայոց:

Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիարանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զախարին Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցաւայլ ընդ այլոյ ստորեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայն Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապէտ էր Ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հռոռոնց ի սահմանին Պարսից, և արտաքը էր օրինացն Աստուծոյ գործովք իրովք: Եզիտ այս Վասակ զայն Վասակ իր գործակից ի մեծամեծ չարիսն՝ զոր միաբանեցին երկոքեանն:

Գրեր նաև և ցուցանելու հանապազորդ, իբր թէ ամենայն Հայք զկնի իր միաբանեցին: Եւ զնոյն զիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանելի քազատրանիստ քաղաքն կայսեր. մինչև զուրբ եախսկոպոսացն զմիտս ևս ուժացոյց<sup>7</sup> ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկրայս արար յուխտէն:

Մանաւանդ զի ի ծեռն սուտ քահանայիցն պատրէր և խարէր իբրև ճշմարիտ մարդովք. աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սատանայական ստորթիւնն նորօք ծածկէր....:

Սոյնակէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց<sup>8</sup> աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարին Խաղութեաց. յղէր պնդէր, զի ասպնջականութեան որ արժանի մի՛ արասցէ:

Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել ևս ժամանակն երեք նմա զյաջողութիւն իրացն. զի ամենն ին արտաքուստ օգնական որ ոչ զուար զնոյն Հայոց, բաց յայնց Հոնաց, որոց բանս եղեալ էր<sup>9</sup>: Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այրուծին Արեաց, արգել և փակեաց զրյունս եին նոցա: Քանզի ոչ տայր դադար ամենն ին քազատրին Պարսից, այլ յղէր և կոչէր գունդս բազումս ի պահակն Շորայ....:

Զայս ամենայն իբրև արար և կատարեաց ըստ հրամանի քազատրին, օր ըստ օրէ գրեր և ցուցանելու մեծ հազարապետին Պարսից, որ դողեալ և քարուցեալ էր ի քաղաքն Փայտակարան: Համարձակեցաւ այնուինսն և նա ցուցանել զինքն բազում ազգաց, էր՝ որոց ահ արկանէր, և էր՝ որոց սիրով պարզէս բաշխէր: Կոչէր առ ինքն զՎասակ, և ոքք ընդ նմա իշխանքն ամենեթեան, բազում պարզէս շնորհէր նոցա յարբունուստ, և զօրացն որ ի նորա բանի էին: Տաներ զառաջեաւ և զուրացեալ եղիցունան. ցուցաներ. հաստատէր և յայտ առնէր, եթէ սորօք որսացայց զնոսա՝ քակտել ի միաբան ովստէն: Իսկ

ազարապէտն իբրև զայն լսէր՝ յոյժ շնորհակալ լինէր երկողունցն, և յոյժ ապաջի նոցա: «Եթէ լիցի մեր յաղթութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դրցա ցուցից քազատրին»:

Եւ այսպէս շարժեաց և շփորեաց զաշխարին Հայոց, մինչև զբազում եղարս հարազատս քակեաց ի մինեանց, ոչ երող միաբան զիայր և գորիի, և ի մէջ խաղաղութեան արար խոռվութիւն....:

Զայս ամենայն շարիս իբրև ետես ի նմա Սիհիներսէն, քան յանձն իր՝ առաւել ի նա էր յուսացեալ: Հարցանէր և ստուգէր՝ թէ քանի՞ այր կայ ի Հայոց աշխարհին ի զնոյն Վարդանայ ընդ ամենայն քազութիւնն: Իբրև լուաւ ի նանձն՝ թէ աւելի քան զվաքսուն հազար են, խնդրէր ևս ստեղեկութիւն վասն իւթաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի այն որ իցեն՝ որ սպառազէնքն իցեն, և կամ քանի այն որ իցեն՝ որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. տյնակէս և վասն վահանաւոր եետն ակացն....:

Եւ իբրև զայս ամենայն տեղեկացաւ ի նամանէ, կոչէր զամենայն զօրագլխանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատունորա լուիցեն ամենեթեան: Եւ զամենայն զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւազացն, որում անուն էր Սուշկան Նիւսալաւորտ:

Եւ ինքն խաղայր անդէն զնայր յերկիրն Արև եից. և յանդիման եղեալ մեծի քազատրին, պատուէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր<sup>10</sup> ինաստութիւնն և զՎասակայ խարերայ պատրանս հայրայրանացն<sup>10</sup>. որպէս զառաջն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակաց զգունդն Հայոց:

Իբրև լուաւ զայս ամենայն քազատրն ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իր, և ասէ անսուտ երդմամբ. «Եթէ ապրեսի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարզանօք տամ ընպէլ նմա զբաժակն դառնութեան մահու»:

(Եջ 90-97)

<sup>1</sup> այստեղ՝ ստույզ, հաստատ

<sup>7</sup> ամբական-ամուր  
<sup>8</sup> որոնց բանս եղեալ էր-որոնց

<sup>2</sup> ապացուցմ էր

<sup>9</sup> հետ խոր էր կապէլ

<sup>3</sup> ընդ միտանել-հանդյանալ

<sup>10</sup> հնարաւոր-հնարագտն

<sup>4</sup> հայեցոյց-ուշադրությունը բն եռեց

<sup>10</sup> խարերայ պատրանս հայրայրանացն-նյութած խարեւությունները

<sup>5</sup> երկցեղ-պատակուված, անմիաբառ

<sup>6</sup> ուժացոյց-սասացրեց, օտարացրեց

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՏԻ (Տ.ԲԴ. Դ.)

### ՊԱՏՄՈՒԹ-ԻՒՆ ՌԱՅՈՅ (Հատուածք)

1

Եւ զօրավարն Սիւնեաց Գդիեռվն փոլքացուցանէր ստիպով զգօրազլոյն Պարսից գնդին զՉապուն ասելով, թէ «Առն Վահանայ Մամիկոնէից փորձ քաջութեանն և դու առեր և ամենայն աշխարհն Արեաց. և ես իրաց և գործոց առն իմանալ ինչ եւ ոչ կարեմ. զի թերևս գունդն ամենայն ի Դունի առ ննա միաբանեալ էր՝ նա մեզ անդէն զիւր քաջութեանն գործ ցուցանէր. բայց արքայից արքայի քազն և Արեաց փառքն մեզ այնպէս յաջողեցին, զի նորա իր այնպէս դիպեցան, որպէս տեսարն, և մեզ քարի վճարումն եղև: Եւ արդ՝ տեսք, այշավ սակաւ արամքը զի՞նչ գործ գործէ այրն, և օր քան զօր նուազեցուցեալ զգունդն մեր և վատն: Արդ՝ թէ ուստեր ևս այլուստ կարէ զտանել օգնակամ՝ տեսչիք, զի նա ամօրով զմեզ դարձուսց և սակաւաւրու. այլ և դառնալոյ իսկ մեզ անդէն անվստահ եմ շատ: Բայց փուրա՛ և մի՛ տար առն հանգիստ առնով. գուցէ թէ մեք ծովանամք, և նա առնիցտ զմեզ աշխատ, և անշիցեմք: Եւ եթէ յիս միայն բողոք զնա՝ ցուցանեն ծեզ յաւուրս իննզ ինով իսկ զնդաւ, թէ որպիսի մատնեալ վատի կորուսանեն զնա և որք ընդ նմայն են»:

Եւ վասն զի ոչ էին գործը առն Գդիինի մաքուր հոգույ արժանի, այլ այսն այիդ որ էր ի ննա՝ գուշակէր նմին զանձնէ իրմտ. թէ յետ իննզ աւուր շար նահուամք սատակելոց ես ի յարանցն, որք են ընդ Մամիկոննին Վահանայ. քանզի քափուր գտեալ ամենն իմբ դիւնի յԱստուծոյ իննամոցն զայրմ՝ այնուհետև ննան Սաւուրայ ուր կամէր սպանանէր զնա: Եւ լուեալ զայս ամենայն քան զօրազլին Պարսից Շապիոյ՝ ոչ տայր դրվ անձինն և ոչ զօրացն որ ընդ նմայն էին, այլ փոլքով գիտս առն երթայր սրտմտեալ. և հասեալ ի տեղի քանակէր. կարծէր ի տեղիսն ուրեր անյայսու գետառուին թաքչել:

Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի և իր ևս զօրուն որ ընդ ննա, գունեալ զայն զիշեր հանգստի յագեալ քնով, և հաւանեցուցեալ զարսն ի գեղջ Երիզայ. քանզի ամենայն անձն երկիւղի և կամաւ լսէր հրամանի նորա, իրք քազաւրի, որ կարգեալ իցտ յԱստուծոյ ի վերայ երկրի. և ինքն Աստուած ընդ ննա էր յամենայն ի գործ՝ ուր և ուղդէր զկամս իւր: Եւ առեալ ընդ իր զարս զուսն իւրոյ և զշինականն զերիզացիսն՝ զայր հասանէր ի վերայ դակշին ի զիշերի. և սպարափակ արարեալ Երիզացօքն գտեղի կուոյն իւրեանց, և ին-

թանք ըստ նմանութեան տեղատարափ շառաչման՝ նետածից սաստկութամք զգունդն Պարսկացն ահարեկին: Եւ խառնեալ ընդ միմեան զամբան զօրացն որ ի դակշին էին այլ ևս արաւել ինքեանք զինքեան Պարսկէ ասաքուր հարեալ կոտորեին. և իննէր ծայն լալոյ և ծայն գուծի ի բանակէ անքինացն: Բայց ի Հայոց զնդէն Գարաղ միայն, սեպուն Գարեղեան, կամապութեամք կորուեալ և մեծ արութիւն ցուցեալ՝ խոցեցաւ...:

(Կրուագ Գ, գլ. 2Բ)

2

Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան դարձեալ ի կոտորածէ թշնամացն՝ երբեալ հանգչէր զմնացեալ մասն ի զիշերոյն յլլիին գեղջն, զոր Շունայ ամուանեն, ի գոմն տեղեացն, մինչն յառաւօտուն ծագել. և ի ծագել լուսոյն՝ երբեալ բանակէր ի զիլն Շուեյ: Եւ մինչ կամեցեալ հանգչէլ առ վայր մի զօրացն Հայոց Վահանայ Մամիկոնէի ի ծանրութեն զիշերոյն աշխատութեանց՝ զաշ ի վեր առեալ տեսանէին, և ահա հասեալ կայր ի վերայ նոցա զօրագլուխն Պարսից Շապիոհ. զայրազնեալ սրտի մոմայր իրքն զազամն: Վասն զի առաւել քան զամենայն աւուրց՝ այն զիշերոյն վնասը շաբաթեան առաւել բուէր ննա և կարեն որ. որ եղևն իսկ արդարն այնպէս, այլ ոչ ինչ նման առաջիկայ մեծ բեկմանն, զոր առժամայն էր տեսանելոց և ի սպառ թվանելոց: Եւ տեսեալ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի զանկարծահաս դիմեցունս զօրագլիխն Պարսկաց Շապիոյ ամենայն բազմութեամք զօրուն ի վերայ նոցա, թէպէտ և անպատրաստ տեսաներ զիւր գունդն ի ժաման և կամ ի նուազու, ըստ սաստկութեան թշնամեաց զօրուն՝ սակայն զանգիտէր և բնաւ իսկ ոչ. այլ հրաման տուեալ փուրանակի կազմէր որքան իսկ էին. ի ծայն բարձր գոչէր առիւծաբար, ասելով, թէ «Մարդոյ հաւատացելոյ միուն յերկուց վրիպակ անհնար է<sup>1</sup>, և դիպմունք երկորեան մեծարգը են և պատուական. այլ սակայն մինն յերկուսնան առաւել և ս մեծ ի վեր է և բաղդակի քան զմիւն. և ոչ անյօժարը և անխորհուրդ դիմունք, որում և պատահեմք յերկոցունց. և որ ցանկացայր կեալ ժուժկալութեամք և մեռանել յուսով, այլ կեալն և մեռանելն մասն է պարծանաց. և մեռանել ի վերայ ուխտի սրբոյ վիճակ է մարտիրոսութեան...:

Եւ ասացեալ զայս ամենայն քանս զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոննի, քաժանեալ որքան իսկ էին առք զօրուն ընդ ննա՝ տայ իւրաքանչիր զօրագլուխն, զորոց կարծէր եթէ ի դէպ է և պատշաճն: Եւ մինչ դէռ ևս նն կազմէր յարձակմանն, և զօրքն Պարսից ճակատեալք կարզմամք զայրն սաստկապէս ի պատերազմ՝ հայեցեալ տեսանէ, զի գունդն ամենայն Հայոց, դարձուցեալ զերեսս յոխտէն երդմանն Աւետարանին և ի իւրատու զօրավա-

ին Հայոց Վահանայ Մամիկոնէի՝ երթային փախստեայք ամենեքեան: Եւ մնաց ինքն և յովստապահացն Մուշեղ ի տոհմէն Մամիկոնէից և երեքեան Կամսարականքն, որդիք երանելոյն Արշաւրայ, ինքեանց երկուր կամ երեք դայենկօք, և այլ բուռվ արք, որք ի յազատաց և որ իր իսկ ի Մամիկոնէից տանեն, ընդ բնաւ որպէս թէ քառասնից կամ նուազից ևս: Որոց ևս տեսալ զփախստատն ամենայն գնդին Հայոց առհասարակ և զարհուրեալք՝ ասէր ոնն ցզօրավարն Հայոց ցՎահան Մամիկոնեան, թէ «Յուշ, տէր, յուշ». այսինքն թէ հնար ինչ է ի ժամուս տեղի տու և անձին զգուշանալ: Եւ զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի տեառնազրեալ զինքն՝ բարձր ծայնի ասէր, թէ «Ցի արդ ոք յուշ մի՛ ասէք. զի ինձ յուսալ ի մարդ և կամ պարծել մարդով՝ քա՛ լիցի, բայց միայն ի խաչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Եւ քաջարար ի մէջ ամենայն զօրացն Պարսից յարձակէր հանդերձ լաւ ովստապահ արամբքն սակաւուք, որ մնային առ նմա: Եւ աաշէեալ ընդ ահատր աներկիւ ուժին զօրավարին Հայոց Վահանայ և ընդ այլ սակաւ այնքան արանցն որ ընդ նմա, զօրազիսին Պարսից Շապիոյ՝ ճեպով ցիշխան Սիւնեաց առ Գդիհոն յղէր, ասէ. «Ձե՛ռն տորը յիս կողմն, վասն զի իրս անպատումն իմն և նորոց ցուցաւ. զի թէ արդարն զօրուրիւն իմն աներևոյ այլ է, որ օգնէ նոցաւ և մեզ չերևի՝ զայն ես ոչ զիտեմ. բայց եթէ անմտուրեամբ ցանկան անձնամահք լինել՝ ապա ի մէջ արարեալ զամենեսեան զնոսա այսօր ծերքակալս առնենք»: Եւ իշխանն Սիւնեաց Գդիհոնն խնդալից եղեալ ընդ կոչն Շապիոյ՝ նշկահելով փուրանակի ի տեղին արշաւէր: Եւ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան, հանդերձ ընդ իր միասիրտ սակաւ արամբք, օգնութեամբ աջոյ հզօրին յարձակեալ՝ հերձաներ զբովանդակ գունդն Պարսից, որպէս յորդահոսանք քազմուրիւնք ջրոց, որ հեղեղատեն գերկիր և անցանեն: Եւ ինքն հզօրաբար քաջ ովստակցօրն նման աղիւծու ընդ մէջ ամենեցուն յայնկոյս ելանէր. և սպանեալ իր և արանցն որ ընդ նմա բազում արս հզօրս պատերազմուն ի զօրացն Պարսից՝ հարեալ խոցէին նիզակաւ ընդ անուր կարէվէր և զփարտ իշխանն Սիւնեաց գԳդիհոն, և զահաւրալուր ամրուրիւնն զինուն, յոր պանձացեալ յուսայր անօրէնն՝ ցելեալ վեր ի վայր քափ ընդ լեարդն զիզգակատէզն հասուցանէին: Որոյ դառնակոռոչ չարալլուկ հեծնամբ յաւուրս սակաւս վճարեալ զոգին՝ պատակէր անխոստովան. որ պարծէրն ամբարտաւանուրեամբ և ասէր, թէ «Ես ընդ Վահանայ և ընդ այլ Հայերդ ոչ եթէ նետի կոռիմ, այլ գդզրկով պուղեալ զբոյորս ցնդէմ, օ՞ն և անդր ցիր և ցան արկից ծորոցդ և դաշտացդ»: Եւ եղն բան հպարտուրեան նորա բեկունն նմին. զոր մատնեալ Աստուծոյ ի ծեռս արանց զօրուն Վահանայ Մամիկոնէի մի անգամ և երկիցս զիշխանն Սիւնեաց գԳդիհոն, և դարձեալ երկայնամտեալ ի նա Աստուծոյ իբրև զնարդասէր՝ ներէր խնայելով, զի թերևս ս զջացեալ գոտէ ժամ դարձի և ապաշխարութեան, և կեցցէ: Եւ իբրև ոչ զգաստացաւ, այլ բնաւ ամենն իմք արհամարհեաց զջմարտուրիւն և եղեալ անպատասխանի յաստուածային հարցմանն ընկալաւ զսատակումն ամօրոյ իրոյ

զստիս և զիանդերձելոցն: Եւ զօրքն Պարսից զկնի փախստէիցն Հայոց անցանդ երթային, յորոց և արս բազում սպանին ի բուլացեալ նեղկացելոցն:

Բայց զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնենի հանդերձ իրովք գործակցօքն զգործ քաջուրեանն վճարեալ Աստուծոյ զօրութեամբն՝ երթայր այնուենու յանհոգս, որպէս թևակից զօրուն Պարսից. և գունդը ամենայն զօրացն Շապիոյ և հայել ի նոսս լոկ ոչ իշխէին: Զանջի այնպէս արկեալ էր Աստուծոյ զահ և զերկին զօրավարին Հայոց Վահանայ Մամիկոնէի ի վերայ զօրացն Պարսից, զի կարծէին, թէ ի հայեցուածէ լոկ առն Մամիկոնենի և յանհոցն որ ընդ նմայն էին՝ զգերծանիցին առանց վտանգի...»

(Դրուգ գ, գլ. 24)

նարոյ հաստացելոյ միում յերկուց  
վիպել անհնար է-անհնար է, որ երկու

բանից մնկին հակատացող մարդը սխալի

## ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

1

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծ.

Մըրկեալ ալիք՝ թշնամին ինձ յարուցան.

Նաւապետ բարի, լե՛ր անձին ինոյ աաշաւէ:

Ի համբառնալ իմում առ թեզ զաշ իմ՝ օգնեա՝ ինձ, տէր:

Ի յօրինորին նոր օրինեսցոք զեզ, Զրիստոս փրկիչ մեր:

Այցելու մեր և փրկիչ, կեցը զանձինս մեր:

(Մեսրոպ Մաշտոց)

2

Խորհուրդ մեծ և սքանչելի,

Որ յայս աւուր յայտնեցաւ,

Հովհիքն երգեն ընդ հրեշտակ:

Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ

Ի բերդեկմ քաղաքի,

Որդիք մարդկան, օրինեցէք,

Զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւեկմ երկնի և երկրի

Ի խանձարուս պատեցաւ.

Ոչ մեկնելով ի հօրէ:

Ի սուրբ այրին բազմեցաւ:

(Ծովսէ Խորենացի)

## ՅՈՎՀԱՆ ՍԱՍԻԿՈՆԵԱՆ (7-ՐԴ Դ.)

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՈՆՈՅՑ (Հատուած)

... Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Պալունեաց, քարեան ի ծորս ուրեք և առաքեցին զոմն ի Մեղսի, թէ փութացէ՛ք զալ ի վերայ դրցա: Եւ ինքեանք առաքեցին արս Շ(100)՝ գրգռել զօրոսն. զորս իբրև տեսին զօրքն Պարսից, գոռի<sup>1</sup> ետուն զիեւտ, և մի մի հասանեին: Իբրև հասին Հարիւրքն առ Սմբատ և եկին ի բլուրն, և զօրքն Պարսից սկսան բազմանալ ի վերայ Սմբատայ և Վարազայ. և նոցա ծունը կրկնեալ<sup>2</sup> յօնճականութիւն կոչելով սուրբ Կարապետն, ասելով այսպէս. «Յիշեա՛ զմեզ, սուրբ Կարապետ և զմեր երախստիսն, և որպէս օգնեցեր ի հեռաստանէ, օգնեա՛ և ի մօտոյ»: Եւ եհաս ի թիկունս օգնականութիւնն աստուծոյ:

Եւ փողոց տուեալ<sup>3</sup> ի վերայ բլերն Սմբատ յաջ թեն և Վարազ յահեակ, և ըսկըսան արեամբ քարաւեկ ինքեանք և երիվարք իրեանց: Եւ մածեաւ սուրն ի ծեղին Սմբատայ և ոչ կարաց հանել, զի մածաւ արիւն ընդ սուրն, և ընդ ծեռնատեղին կոտորեցաւ: Իբրև տեսին պարսիկքն զի մածեալ էր ծեռն ընդ սուրն և կոտորեալ, և չկարաց փոխել այլ սուր, ծայն տուեալ միմեանց. «Փութաչի՛ք, զի մածաւ սուր քաջին, և սուրն, որ ի ծեղին նորա, կոտորեցաւ»: Եւ պատեցն զնա յանինայ. իբրև զշոր փայտ, որ ի ծեղերէն ճարճատէ, այնպէս ճարճատին ի վերայ զիխոյ նորա զէնք նոցա: Իսկ նա ասէր ճայնին քարձը. «Վայ՛ քաջութեան ծերոյ և արութեամբ, զի ոչ կարացէր հերծով զգլուխ իմ»: Զայս ասաց, զի յիշելիք լիցի բանն: Քայց գիտաց, եթէ կարի սաստկանայ, ծայն քարծեալ ասէ. «Ո՞ւ ես, քազուկ քաջ և հզօր ընդդէմ թշնամեաց, գաւազան իմոյ ծերութեանս, իշխանն Պալունեաց, յառաջ մատիր իբրև գքաջ արծին, զի անզեղք և բուէք պատեցին զիս»: Իսկ նորա թողեալ զահեակ թեն յորդին իւր ի Վահան, որ զՎահանովիսն շինեաց, և որպէս զարծին կանչեաց ի վերայ նոցա, որ և ի դողման հարեալ<sup>4</sup> երիվարացն, և անդէն ի թիկունս հասեալ օգնականութեամբն աստուծոյ, և բախսեալ զուէզն ի վերայ պարսկին թիկանն, և անդէն եհան ընդ յոդն երիվարին. և այլ ոչ ժամանեաց<sup>5</sup> հանել, և անդէն մեռաւ:

Իսկ Սմբատայ եկեալ յեզր պատերազմին, հրամայեաց բերել պարսիկ մի. և ետ զենուլ ի վերայ ձեռինն, զի իջու ջերմ արիւնն և քուլացուցէ զբնատե-

թի: Եւ նորա փոխեալ այլ սուր և հեծեալյայլ երիվար: Իբրև հեծաւ, եստես զի լից հազար այր պատեցին զնոսա, և ի մէջ առին զիինզ հարիւրն: Եւ գիտաց, թէ կացեալ են երիվարքն, եհար զմի պարսիկն և ընկեց, և ասէ. «Հեծի՛ր, իշխանն Պալունեաց»: Եւ նորա հեծեալ. և այնպէս արարեալ ի մէջ ահատը պատերազմին՝ փոխեին զերիվարս իրեանց. զի որչափ գործն բազմանային, նոքա յանհոգս լինէին ի մէջ նոցա. այնչափ կուտեցան ի վերայ, որ տեղի անգամ ոչ զտանէին որք յեզերսն էին:

Եւ սկսան ոմանք երկմտել ի զօրացն Սմբատայ: Իսկ ըստ տեսչութեանն աստուծոյ տեսին զմիս Սմբատ, զի զայր, որ էր իշխան Հաշտենից. և ածեր զվահան Կամսարական, զորդին Սմբատայ, և վեց հազար այր ընդ նմա: Չոր տեսեալ Վարազայ իշխանին ասէ. «Քաջ որդի Վահան, ո՞ւ իւր, որ այլ վաղ չկիր յօնի»: Իսկ Վահան ծայն բարձեալ ասէ հանդերձ արտասուօր. «Կա՞յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր՝ ի հանգիստ»: Իսկ Սմբատ լուեալ ասէր. «Սուրբ Կարապետն ինձ ի թիկունս հասաներ, և ես ի պարսից մեռանէի»: Իսկ նորա գոհացեալ յաստուծոյ, և ի դիմի հարեալ և կորեալ փողոց<sup>6</sup>, անց ի ներքս. և պարզեաց զմիս թեն նա և միւսն իշխանն Հաշտենից: Եւ յինքեանս աղին և սկսան կոտորել զպատերազմազլուիսն. և ի վերայ շրջեալ բրոյրեցին. և ի մէջ առեալ զգօրս Պարսից և սկսան կոտորել յանինայ մինչն ի մուտս արևուն: Եւ մնաց ի Պարսից Գն այր, որք ընդ միջոցս եկեալ փախստական եղեն. և զի մնացին երիվարք նոցա, երթեալ մտին ի ծոր մի և քարեան. մնչեցին խոյս տուեալ մինչն ցմիս օրն օրինասարակ<sup>7</sup>: զոր եկեալ զօրացն Հայոց զարթուցին զնոսա և ջուր ցանեցին և տարան ի Մեղսի, որ և անուանեցաւ ծորն այն թըմրածոր: Իսկ Սմբատ հրամայեաց զմեռեալ դիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլեր մի, և անուանեցաւ Վարազակայ բլուր: Եւ ինքեանք եկեալ իշխն ի վանացն զեւդն. ընդ յառաջ եղեն (նոցա պարաւորքն) և երգս առեալ քազում իրաց գովէին. որ և յետոյ ի հոտել դիականցն շէր հանեալ<sup>8</sup> ասէին.

Կերան զազամն զմարմինս դիականցն և գիրացան.

Կուու կերեալ ուռեաւ որպէս զարջ.

Եւ աղուն հպարտ եկն քան զառեւծ.

Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտեմ<sup>11</sup>.

Զմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ.

Անգեղը, քանզի ազափ էին, նստան

Եւ այլ ոչ կարացին վերանալ.

Սկունք, քանզի շատ կրեցին ի ծակսն,

Ոտքն մաշեցան:

Զայս ամենայն ասացին. և ի դեպ եկն վասն իրացն, որ և կոչեցաւ գեղջն  
Շիրանիկը անուն:

(Եջ 238-247)

- <sup>1</sup> կամ զրոհ
- <sup>2</sup> ծունը կրկնել-ծնրադրել
- <sup>3</sup> փողոց տալ-ճանապարհ քաց անել
- <sup>4</sup> ի դողման հարկանել(իմ)-դողալ, սարսել
- <sup>5</sup> ոչ ժամանեաց. այստեղ՝ չկարողացալ
- <sup>6</sup> փոխել(իմ) առ տէր-մեռնել

- <sup>7</sup> ի դիմի հարկանել(իմ)-հարդահարել
- <sup>8</sup> փողոց կտրել տես 3. փողոց տալ
- <sup>9</sup> կեսօր
- <sup>10</sup> շէր հանեալ- երգելով
- <sup>11</sup> Ա-Ա հոդ է

ՍԵԲԷՌՈՒ (7-ՐԴ Դ.)

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**  
(Հատուած)

Հրաման դարձեալ ի կայսերէն ժողովել զօրս ի Հայոց և առաքել ի Ճեռն  
Մահակայ Մամիկոնենի և Մմբագայ Բագրատունոյ դատնալ Մմբագայ  
մադրէն յեւս և խորհուրդն ապստամբութեան: Մմբագ ըմբռնի և ածի ի Կոս-  
քանանուպոյիս հայրանի վայրի ի վերայ նորա արկանել ի կիւնիկն: Նահա-  
գակուրիմք Մմբագայ և գրանել ողորմութիւն զկնի աքսոր նորա յԱվրիկէ:

Յայնն ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն վերստին քննել  
և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զի արս ընտիրս սպառագէնս ԲՌ հեծե-  
լոց. և տալ յերկուս<sup>2</sup> արս հաւատարիմս և արձակել մեծաւ ստիպով:

Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՌ սպառագէնս և եսուն երկու  
հազար յերկուս արս հաւատարիմս, մի հազար զՄահակ Մամիկոնեան և մի  
հազար ի ծեռն Մմբագայ Բագրատունոյ, որդոյ Մանուէլի: Եւ ոչ ընդ մի ճա-  
նապարհ արարեալ նոցա զչուն, այլ զՄահակ Մամիկոնեան արձակեն միով  
հազարաւ ընդ Սեբաստիա, և զՄմբագ Բագրատունի միւսովն ընդ կողմանս  
Խաղտեաց: Եւ Մահակ գնացեալ տանի հասուցանել զգօրն ի պաղատն, և  
յանդիման լինի թագաւորին:

Իսկ Մմբագ հասեալ ի Խաղտիս՝ բռնանայ. քանզի երկեալ զօրն ի ճանա-  
պարիի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն զիետ թագաւորին խնդրոյ: Ազդ լի-  
նի թագաւորին եղեալ իրքն. ապա ի ծեռն իրովարտակաց և հաւատարիմ  
իրեշտակաց երդմանք խոստանայ՝ մեծաւ պատուվ փութանակի արձակել  
յերկիրն իր: Եւ զօրուն խոստանայր պատիս մեծամեծուն և ինչս, այնպէս ողո-  
քեալ ածէ ի հաշտութիւն: Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինեին  
թագաւորին: Եւ թագաւորն սպառագին զգօրն և զարդարէ և գումարէ ի սահ-  
մանս Թրակացոց, և զՄմբագ մեծաւ պատուվ յուղարկէ անդրէն հասանել  
յերկիրն իրեանց թագում ստացուածով:

Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, և  
խնդրէին ի քաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել ի-  
րեանց թագաւոր, զի մի և նոցա հասց մեռանել ի կողմանս Թրակացոց, այլ

կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ուներ՝ զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ շոգմոգութեամբ՝ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորտեալ խուսափեին:

Յայնմ ժամանակի հասանէին դեսպանք արքունականք հրովարտակօք, և կալեալ զՄբատ հանդերձ այլովք ոմանքք եւրն արամքք և տարան յանդիման թագաւորին: Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանեկ-ե ընկենով ի կիւնիկն:

Եւ էր սա այր անհեղեղ անձանք՝ և գեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով<sup>6</sup>: Յայնժամ հզօր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիր քաջութիւնն և զբոնութիւն<sup>7</sup>: Այս է զօրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց և զօրատր ծառոց, ի վերայ յաղթանամ և հզօր երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանօքն<sup>8</sup> և ոտիլր զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանօքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զօրացն տեսեալ ահարեկ լինէին ի զարմացման:

Եւ արդ՝ մերկացուցեալ զնա կ ագուցեալ ամդրավարտիս և ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի զազանաց:

Եւ արձակեալ ի վերայ նորա արջ: Եւ եղն՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջը՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բուռն իւրով զճակատն, և անդէն սատակէր զնա ի տեղլոցն:

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բուռն հարեալ զեղչերացն ցլուն... գելոյր զպարանցն և խորտակէր զերկոսին եղջիւրս ի վերայ զլսոյն. թուղանայր ցուլն և յետս զնալով ի փախուստ դառնայր: Իսկ նորա զիետ ընթացեալ՝ բուռն հարկանէր յազին և ի կծղակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զկծղակս՝ մնայր ի ծեռին նորա: Եւ ցուլն զնայր ի նման փախստական, միով ոտամբն բոկ:

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առեւծ: Եւ եղն՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այճպէս իմն յաջողեալ նմա ի տեսանէ, բուռն հարեալ յականչ առիւծուն՝ ինձաւ ի վերայ նորա: Եւ անդէն բուռն հարեալ զխոչափողիցն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ աղաղակ բազում ամրութին զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

Եւ նա կաստակեալ ի մարտին՝ նատէր ի վերայ առիւծուն մնոնլոյ, զի փոքր մի հանգիցտ: Անդ և կին թագաւորին անկեալ առ ոստ նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեզիրս: Եւ նա զարմացեալ ընդ զօրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ պաղատանաց կնոշն և ամենայն

բողատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն: Յայնժամ տարան զնա ի լուացումն ի բաղանիս. լուացին զնա և զգեցութիւն, և կոչեցին զնա յընթրիս արքունի, դարմանեցին զնա կերակըովք: Եւ ըգ-լովի սուր ինչ անցելոց, մանաւանդ երէ ոչ ի շար ինչ կամաց թագաւորին, այլ յախսանձորդաց չարախօսութենն, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքտուն ի կրօխս հեռաւորս. և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ...:

(ԺԼ)

<sup>4</sup> շոգմոգութիւն-թանսարկություն  
<sup>5</sup> անձն. այստեղ՝ մարմին  
<sup>6</sup> բուռն և ցամաք մարմնով-ուժնող և պիրկ մարմնով  
<sup>7</sup> այստեղ՝ ուժը  
<sup>8</sup> անտառախիտ-տերևն ախիտ, աստրախիտ  
<sup>9</sup> երանք. այստեղ՝ ազդեցիր նշանակությամբ

## ՂԵՒՌՆԴ (Ց-ՐԴ Դ.)

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (Հատուած)

Իսկ ի գալ զարմայնոյն գունդ կազմէր իշխանն<sup>1</sup> Խսմայելի ի վերայ երկրին Հայոց. և գումարէր զընտիրս հեծելոց իրքն արս ԼՌ. ընտիր երիվարաւ և կուռ սպառազինութեամբ ի տոհմ՝ Խորասան զնդին, և տայր ի ձեռս զօրավարի միոյ որում անունն էր Աճր. և առաքէ զնա յինքեն ի լայնանիստ և ի հոչակատր անուն քաղաքէն, զոր շինեաց ինքն Արդյա ապաւէն ամրութեան հօրագոյն և անառիկ պարսպով ամրացեալ, որ անուանեալ կոչէր Բաղրադ:

Եր համբարձեալ զօրավարին ի կողմանցն Ասորոց՝ գայր հասանէր յաշխարիս Հայոց ի քաղաքն Խլաք, մեծաւ զգուշութեամբ և քազում պատրաստութեամբ զինուց: Իրքն մտանէր ի քաղաքն՝ տեղեկանայր ի քաղաքացոցն անտի զորայիսութիւն զօրացն Հայոց, եթէ քանիք և եթէ ո՞յք իցեն զօրազուխը, և եթէ միաբանք իցեն ի սէր միմեանց եթէ երկրայք, եթէ քաջայա՞ղք իցեն եթէ յամբեղք<sup>2</sup>, եթէ ունիցին պատրաստութիւն զինուց եթէ ոչ: Զայս ամենայն տեղեկացեալ՝ պատրաստէր ըստ նմին զօրագլուխս զօրաց իւրոց:

Իսկ Աշոտ որդի Սահակայ, զի էր ի քաղաքին յայնմիկ՝ զեկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց. զի ուր ուրեք և իցեն, ի մի վայր գումարեսցին կեալ և մեռանէլ ի վերայ միմեանց: Իսկ նոցա անհաւատայի քննեալ իրք իրովարտակին՝ համարէին, (թէ) դաւոյ խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իրք մտերիմ զինքն ցուցանէլ Խսմայելացոցն<sup>3</sup>. և զայս առեալք ի միտ՝ անընկալք եղեն քանից նորա, այլ տակաւին զառաջի արկեալն իւրեանց խոկային կատարել: Ապա յետ այսորիկ գումարէին նախարարք ազգին Արծրունեաց զգօրս Վասպուրական աշխարհին, Համազասպ և եղբարք իւր և որք ի տոհմ՝ Ամատունեաց և զօրքն որ ընդ նուա: Կոչէին ի թիկունս օգնականութեան<sup>4</sup> զՎասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տոհմ՝ Բագրատունեաց և զգօրսն նորին. և խաղեալ յառաջ երբային ի վերայ Արծէշն աւանի՛ բրել զնա ի հիմանց և զգօրս որ ի նմա՝ հարկանէլ սրով:

Եր իրքն հասանէին ի զաւառն Առբերանի ի զիւղն Բերկրի՝ մնային միմեանց զումարութեան: Եր զքազումս յաշխարհականացն իրապութեալ զինի

